«Ալյոշկան» կտրուկ կերպով վեր բարձրացավ։

— Ես չեմ մնա սրանց մոտ, ընկեր, կվախչեմ։ Ավելի լավ և, թող ճանապարհին խփեն—սպանեն, քան թե մնալ սրանց մոտ։ Իսկ դու, չե՞ս ուզում վախչել։

Նա յերկար լուռ եր։

— Ինչպե՞ս չեմ ուզում։ Միայն պետք և ամեն բան լավ չափել, ձևել։ Զարժե դնդակի բերանն ընկնել։ Տեսնենք առավոտն ինչ ցույց կտա։

Դանդաղ ձգվում եր գիշերը։

★

Լուսաբացին «Ալյոշկան» ննջից։ Հիրայանի հուսրակային հրահրեց տանուլ տալ նրան անվից ցատկել։

— Այս ի՞նչ է,— տագնապով հարցրեց նա։

— Դուշե մերո՞նք են դրոհում,— բարձրացավ տարիքավոր հուսրանոցը։

Բոլոր դերիները վոտքի վրա էին։

Դեպի փողոցը տանող պատի մնչ փոքրիկ ճեղք կր յերևում։ Տարիքավոր մարտիկը կպավ այդ ճեղքին։

Ալացնող պայթյունը ցնցեց ախոռի պատերը։ Բոլորն ընկան գետնին՝ ականջ դնելով փողոցից լսվող աղաղակին։

— Մերոնք են։ Ի հարկե մերոնք են մոտենում,— արագ ձչնջաց հուսրանոցը,— Քնդանոթից են կրակում։ Սպիտակները խուճապի մնչ են։ Գժի նման են փողոցներում վազվզում։ Դե, յեղբայրներ, հիմի միայն թե մերոնց մոտ հասնենք։

— Ձլինի, թե մամոնտովականները նահանջելիս մեզ վոչնչացնեն։

Մի ինչ վոր տեղ հեռվում թրխթրխկաց գնդացիրը։ Ցուրաքանչյուրն ուզում եր ինքը տեսնել այն, ինչ վոր կատարվում եր պատի հետևը։ Մարտիկ հերթով, շտապ կերպով կոչում եյին ճեղքին։

Դարձյալ յերկու արկեր պայթեցին մեկը մյուսի հետևից։ Ախոռի դռան մոտ մարդկային ձայներ լսվեցին։ Ինչ վոր մեկը շտապ բաց եր անում կողպեքը։ Դերիները խմբվեցին, պատին կպան։ Դրսից ներս թափվեց արևի պայծառ լույսը, և շեմքին յերևաց սպան։

— Շո՛ւտ, դուրս յեկե՛ք,— գոռաց նա, և նրա ձայնի մնչ ղողջին հնչյուններ լսվեցին։— Շարքի՛։

Գահակախտումբը շտապ չրջապատեց հուսրանոցներին։ Սպան շտապեցնում եր, վոր շուտ շարժվեն։

Ցերբ սպան գնաց և բոլորը հետևեցին նրան փողոցի յերկարությամբ, «Ալյոշկան» պարզ հասկացավ, վոր սպիտակները նրանց իրենց հետ են տանում, ըստ յերևույթին, ցանկանալով մի վորևե բան դուրս կորզել դերիներից։

Փողոցը շարժվում եր տագնապի մնչ։ Հարվածելով ձին-

բին՝ ուր վոր սլանում էին ձիավորները. անիվների թըրխկ-թրխկոցով շտապ գնում էին դամակի սայլերը, բակերում և անկյուն մոտ դլուխը կորցրած մարդիկ դես ու դեն էին վազվզում։

Հրացանաձգությունը մոտենում էր։ Նա գալիս էր Ալեք-սանդրովսկայա կայարանի կողմից։

«Ալյոշկան» ուշադիր նայում էր շուրջը, դիտում էր բա-կերն ու բաց դարպասները։ Նա դրությունից դուրս գալու յոլա էր փնտռում, ուզում էր րոպե վորսալ, վորպեսզի վախչի մի վորևե կողմ հեռու, կամ թաղնվի մամոնտովականներից՝ մինչև յուրայիններն գալը։

Տարիքավոր կուրսանտը սեղմեց նրա մատները։ Գլուխը դարձնելով նրա կողմը՝ նա ընդհատ-ընդհատ կամացուկ ասաց.

— Մաքսովդ չանցկացնես վախչել։ Մերոնց կրակի տակ կընկնես։ Գյուղում մնալը վտանգավոր է։ Այնտեղ, ավելի հե-ռու կընտրենք տեղը։

Բայց խոսքերը չհամոզեցին նրան։ Զգում էր, վոր անկա-րելի յե սպասել, վոր ձգձգելը կորուստ է սպառնում, բայց յելք չէր գտնում, չգիտեր ինչ ձեռնարկել։

Կողքին, շատ մոտ մի արկ պայթեց, այնուհետև յերեսաց, թե ինչպես՝ դողալով յերերաց բարձր, բարակ զանգակատունը և նրա մի մասը դղրդալով փլվեց դետնին՝ բարձրացնելով սպի-տակ թանձր փոշի։

Մարդիկ մի կողմ նետվեցին, վայրկ ճիչ արձակեց ճղմված դամակայինը, և աչքի առաջ վայրկենաբար յերևաց արյու-նոտված ձին, վորի մեջքը ջարդել էր արկի բեկորը։

Բաց դարպաս... լայն բակ... և, շատ չմտածելով, թե ինչ է անում, «Ալյոշկան» արագ շուռ յեկավ դեպի դարպասը և կարուկ շարժումով թռավ բակը։ Փոքրիկ սպիտակ տունը տեղավորվել էր նրա վերջում, իսկ դարպասի մոտ բարձրանում էր մեծ գերանակապ մի տուն՝ լայն արտաստանդուխքով։

«Ալյոշկան» դես ու դեն ընկավ։ Արտաստանդուխքի մոտ կա-պած կանգնած էին թամբած ձիեր։ «Ալյոշկան» մոտ վազեց նրանցից մեկին և թռավ նստեց թամբին ու սանձը քաշեց։ Մեջքի առաջ ցավից նրա դիտակցությունը մթագնեց։

Ձին, անծանոթ հեծյալին զգալով, կարուկ հետ-հետ գնաց

և ամբակներով ծեծից արտասանելուիքը։ Ավլոյիկան ձգում էր սանձը, վոտներով սեղմում էր ձիու կողերը։ Բայց ձին թռչկոտում էր տեղում և, ցանկանալով ցած ձգել հեծյալին, ծռում էր լինում ու բարձրաձայն խրխնջում։ Անակնկալից Ավլոյիկան դնդին ընկավ։ Տանից աղամարդկանց ձայներ լսվեցին, ղարպասի հետևը մեկը կրակից հրացանը, լսվել էր, ինչպես խառնակության մեջ կոշիկներ էին դոփում։

Հավաքելով վերջին ուժերը՝ Ավլոյիկան բարձրացավ դնդից և վոտքը սպիտակ մնակի մոտով կուացած վաղից դեպի կանաչների խիտ թավուտը։

Ճղքերը զարկվում էին յերեսին, կաշին քերծում, խակ նա վազում էր չարունակ հետու, մինչև վոր ուժասպառ ընկավ բարձր հյութալի խոտի մեջ՝ խիտ թփուտի տակերում։

Գիտակցությունը կորցրեց։

Յերբ նա ուշքի յեկավ, արևն արդեն բավական բարձրացել էր յերկնակամարի վրա։ Գլուխը բարձրացրեց և յերկար ժամանակ չէր կարողանում հասկանալ, թե ինչ է պատահել իրեն և վորտեղ է ինքը։

Հրացանաձգությունը լսել էր, հետացել, և մոտիկ լսվում էին միայն հատ ու կենտ կրակոցներ։

Ժամանակ առ ժամանակ վոչ հետու ինչ վոր տեղ դոփում էին ձիերի սմբակները և մարդկային ձայներ էին լսվում։ Ավլոյիկան յերկար ժամանակ ականջ էր դնում՝ աշխատելով հասկանալ, թե ինչի մասին էին դատում։ Բայց թե ո՛վ էր դատում՝ դժվար էր հասկանալ։ Նայեց չուրջը։ Ներան ամեն կողմից շրջապատում էր խիտ թփուտը, և նրա միջով վոչինչ չէր յերևում։ Նա ընտրեց ամենից մոտ կանաչներ և մտավ նրանց տակը։

Մթնշաղի մեջ իրարանցին լրեն մոտիկ Ավլոյիկան ճրթճրթոց լսեց։

Մեկն ղժուշորեն և դանդաղ դալիս էր դեպի թփուտի խորքը։

Շունչը պահած նա հայացքը չէր հեռացնում անշարժ տերևներից։ Հանկարծ տերևները շարժվեցին, և նրանց միջից յերևաց տղամարդու կապույտ շապիկ։ Լսելի էր, թե ինչպես

մարդը կանգնեց նույն տեղում, իսկ հետո զգուշ պառկեց խոտի վրա։

«Ալյոշկան» կլսավ դնտնին, գլուխն ավելի թաղեց։ Բայց այդպես պառկած ավելի զարհուրելի էր։ Այն ժամանակ նա գլուխը բարձրացրեց և նրա հայացքը հանդիպեց մի զույգ խոշոր, դրշդաղույն աչքերի հայացքին։

Առաջին ցանկությունն եր՝ նետվել մի կողմ և փախչել։

«Ալյոշկան», աշխատելով չշարժվել, ուշադրությունը լսեց։ Նրա ականջին հասավ մի խուլ շշնջոց.

— Ընկե՛ր։

Լարվածությունը մխանգամից վերացավ։ «Ալյոշկան» նըստեց խոտի վրա և ձեռքերով իր մոտ կանչեց մարդուն։ Նա յերիտասարդ եր, ուներ կլոր դեմք, կզակին սպիտակ ազվամազ և հարդի գույնի խճճված մազեր։

Նա արագ մոտ սողաց, պառկեց փորի վրա և թեթև ժըպտաց։

— Ճես ու կլինս տեսանք տնակից, թե ինչպես փախար դու, ինտուում եյի, բայց վոչ մի կերպ շեյի կարողանում գտնել,— շշնջյունով ասաց նա։— Եհ, այդ ինչպես են դեմքդ ջարդել,— ցավով ավելացրեց նա,— կապտյոններից դեմքդ չի կարելի հանձել։ Ի՞նչպես կենդանի մնացիր։

Մարդը հառաչեց և գլուխն որորեց։

— Ինձ մոտ կտանեյի՞ք քեզ,— վերջապես ասաց նա,— բայց այնպիսի կին ունեմ, վոր ինձ ել կմատնի, յերկյուղալի յե։ Ուտել ուզո՞ւմ ես,— հանկարծ առաջարկեց նա։

«Ալյոշկան» իրը պատասխան գլխով նշան արավ։ Միայն այժմ նա պարզ զգաց, վոր քաղցած է։

Մարդը արագ կորավ կանաչների մեջ և շուտով վերադարձավ, հետը բերելով հաց, վարունգ, կվաս և թուքուն։ «Ալյոշկան» հարձակվեց ուտելիքի վրա, իսկ հետո հաճույքով ծխեց։

— Ովքե՞ր են այստեղ,— հարցրեց նա և գլխով նշան արավ փողոցի կողմը։

— Մամոնտովի հետախուզությունն է շրջում։ Ահ, ինչպես եյին առավոտյան կարմիրները գրոհում Ալեքսանդրովկայից։ Ջշեցին նրանց։

— Իսկ ի՞նչպես են ձեզ հետ սպիտակները։

— Հենց վոր կկան, յերևք դյուղացու կախեցին, իսկ քանիմ֊ն մորսկահար արին— հաշիվ չկա։

Ցերկար ժամանակ լուռ եյին։ Վերջապես մարդը բարձրացավ, կամացուկ ասաց.

— Ցերբ կմթնի, աղա, այ, այնտեղ,— մատով ցույց տալով ուղղությունը,— բանջարանոցը կվերջանա, խրճարանը կդառնաք։ Այնտեղ կսպասեմ։

Ցերբ բոլորովին մթնեց, «Ալյոշկան» դանդաղ աղայց վերցրեց խրճարանը։ Դառն մտա սևին ևր տալիս մարդկային մի կերպարանք։ «Ալյոշկան» արագ ներս վազեց խրճարանը, անցավ նրա հետևվոր ծայրը։ Դուռը կամացուկ ծածկվեց և լսելի յեր, թե ինչպես կողպեքով փակում եյին այն։

Բռնկվեց սպիտակը... Իսկ յերեք հանկարծ մանկ. Սպասանան դիտե, թե ինչ աղա յե։ «Ցեվ խոսքն էլ հանդստացրեց իրենց». հիմա էլ բան չեն կարող անել։ Ինչ լինելու յե, թող լինի։

Նա խոսքն վերջացրեց և անմիջապես քնեց։ Մյուս դիշերը քնի մեջ լսում ևր, թե ինչպես պատի հետևը վոռնում ևր քամին։

★

Վաղ առավոտյան կողպեքը չրխկաց դռան մեջ։

«Ալյոշկան» վեր թռավ վախեցած։ Ամբողջ դիշերը տղամարդը սպասում ևր նրան. նրան թվում ևր, թե սպիտակները դառել են իրեն, նորից ծեծում են ու ծաղրում։

— Ե՛յ, դո՛ւ, աղա, բոլորովին քնակոխ ես յեղել։ Մամոնտովականները գիշերը նահանջել են,— դռտաց շիմքից յերեկվա ծանոթը,— մերոնք յեկել են։ Գնանք, յես քեզ շատ կսպասեմ։

«Ալյոշկան» տեղից շարժվեց և ալ վոտքի ցավից քիչ ևր մնում ընկներ, վոտքը ցավեցրել ևր ճիսուց ընկնելիս։ Ինսա կողպալով և դեմքը կնճռոտելով, նա դեպի բանջարանոցը դուրս յեկավ։

Վոչ հեռու մի ինչ վոր տեղ կանչում եյին աքաղաղները, հարևան բակից լսելի յեր «կռունկի» ճռնչոցը։

Ցնծալ դրանից սկսան արտասուքը կկոցով անհանգստացավ։ Ամբողջ մարմինը լցվում էր բուռն ուրախությամբ, ուզում էր թռչկոտել, դոռալ և բարձրաձայն ծիծաղել։

Փողոցի յերկարությամբ դարբնատներին դանդաղ մոտենում էին ձիավորները։ Բոլորի առջևից աչխատ ձիու վրա գնացողը հրամանատարն էր, որին ճանաչեց «Ալյոշկան» և բարձր դոռաց։ Հրամանատարը շուռ յեկավ նրա կողմը, մորակեց ձիու դավակին։

— «Ալյոշկա»,— ուրախ կանչեց նա և, բոլորովին մոռ գնալով, կռացավ դեպի աղջիկը։— Ուրեմն դու կենդանի՞ յես։ Իսկ դերությունից վախած տղաներն ասում էին, թե քեզ սպանել են։ Լսել են, ինչպես էին կրակում։ Կեցցե՛ս աղջիկ,— ասաց հրամանատարը խփելով նրա ուսին։

— Աղջի՛կ,— զարմացած հարցրեց կողքին կանգնած դյուղացին։— Աղջի՛կ։ Իսկ յես նրան տղայի տեղ էի դրել։

ՄԱՐՈՒՍՅԱ[1]

Կատերինոդարի շատ բոլշևիկներ հիշում են Մարուսյային՝ կուսակցական քաղաքային կոմիտեի վիճակագրին։ Նրա աղգանունը, դժբախտաբար, վոչ վոք չի հիշում։ Բանվորները — ձիթագործներն ու աննպատրծները,— կոմիտեում յեղած ժամանակ չեյին հետաքրքրում ասանց նրան ժպտալու և մի քանի ջերմ խոսք ասելու։ Նրանք Մարուսյային դիտեյին նրա մոտիկ անցյալի աչխատանքից։ Նա նրանց արհեստակցական միությունների քարտուղարն էր յեղել։

«Մալոմաշ» գործարանի բանվորի աղջիկ Մարուսյան նոր էր ավարտել քաղաքային ուսումնարանը։ Փետրվարյան հեղափոխությունից հետո նա մտավ բոլշևիկների կուսակցությունը։ Այժմ արդեն վորպես կուսակցության անդամ նա աչխատում էր

---

1 Ընկերների հիշողությամբ։

արհեստակցական միությունում և պայքարում էր ամեհաղ մենշևիկների ունեցած ազդեցության դեմ։ Բանվորները դնում էին Մարուսյային հետևից։ Ինչ նոր անդամներ չբերեց նա բոլշևիկների կուսակցության մեջ։

Ամենից շատ նա լինում էր միտինգներում։ Այնտեղ մշտապես վճռեր էին դնում պատերազմի ու խաղաղության մասին, բոլշևիկների ու մենշևիկների մասին, կուրանի կազակների և ավշաքաղաքացիների միջև յեղած բարդ ու խճճված փոխհարաբերությունների մասին, իշխանության մասին, հողի մասին։

Վոտանդը հետամուտ էր բոլշևիկյան ազիտատորին։ Կարող էին և՛ ծեծել, և՛ ինքնադատաստան կատարել նրա վրա։ Այն յուրայիններն էլ չարքերում, վորոնք Մարուսյայի հետ խորհուրդներին իշխանություն տալ էին պահանջում և յելույթ էին ունենում պատերազմի դեմ, վխտում էին և դավաճաններ...

Միտինգներ էին քաշխատում սպաներ, վորոնք վարժվել էին դատապատան տեսնել իրենց քրի դատով յուրաքանչյուրի հետ, ով համարձակվում էր «խաղաղություն» խոսք արտասանել։ Համառ կերպով նայում էին լուռեներըը ազիտատորների դեմքերին։

Հուլիսյան դեպքերի նախորյակին կուսակցական կոմիտեն Մարուսյային վերադրեց Նովորոսիսկ։

Նա դարձավ Նովորոսիսկի կոմիտեի տեխնիկական քարտուղարը։

Այդ ժամանակ կոմիտեի քարտուղարի դործունեությունը բազմապիսի էր ու պատասխանատու։ Մարուսյան հսկայական կուսակցական աշխատանք էր կատարում, վերաբերում էր կոմիտեի անդամներին, լուրջ հարցեր էր վճռում, հանձնարարություններ էր տալիս։ Միևնույն ժամանակ չէր մոռանում նաև տեխնիկական աշխատանքը։

Հուլիսյան որերին Մարուսյան յելույթ էր ունենում ցեմենտի դործարաններում բանվորների առաջ և մերկացնում պրովոկատորներին ու պրոպատիչներին։ Գործարաններում առեղծվում էր կուսակցական ուժեղ ակտիվ՝ շրջապատված բոլշևիկներին համակրող հարյուրավոր անկուսակցական բանվորներով։

... Ցեմենտիննողարում տեր ու տնօրեն էին սպիտակները։

Նովորոսիյսկը, ծովին սեղմված, իր ուժերին ներածի չափ ռընուքիյուն եր ցույց տալիս կարմիր զորամասերին Արմավիրում և Կավկազսկայում։ Հյուսիսային Կովկասի միացյալ կարմիր դվարդիայի կողմից Ցեկատերինոդարի վրա համատեղ հարձակվելու հարցն եր վճռվում։

Մարուսյան Նովորոսիյսկում տաճկական ճակատից վերադարձած դինվորներին եր հավաքադրում։ Նա նրանցից ջոկատներ եր կազմում և Ցեկատերինոդարի մոտ ճակատ ուղարկում։

Տասնութ թվի ոգոստոսին Ցեկատերինոդարը սպիտակների ձեռքին և։ Տամանի բանակը, վորին ուղեկցում էին հազարավոր փախստականներ, կռվով անցնում եր Սևծովյան ափերով՝ Հյուսիսային Կովկասի բանակի գլխավոր ուժերի հետ միանալու։

Մարուսյան մի քանի անգամ դնաց տամանցիների մոտ։ Խոսում եր մարտիկների հետ, զորամասերում դրույցներ եր անցկացնում, բացատրում եր կուբանում ստեղծված դրությունը։

Որերցոր աճում եր մարտիկների ու հրամանատարների վճռականությունը՝ անցնել Թշնամու ոդակը պատռելով։

Բանակի ճանապարհն ընկած եր Նովորոսիյսկի, Գելենջիկի, Տուապսեի վրայով։ Ցերբ տամանցիները Նովորոսիյսկ մտան, ծովի վրա ինտերվենտների հածանավեր յերևացին։

Նրանք կանգնած եյին խարսխակայանում, և նրանց թնդանոթներն ուղղված եյին քաղաքի վրա։ Իսկ կուբանը քաղաքից բաժանող լեռների հետևում ծանր վորոտում եյին Նովորոսիյսկի վրա յեկող սպիտակ-գվարդիականների թնդանոթները։

Քաղաքում բանվորների ժողովներ եյին տեղի ունենում։ Կուսակցության անդամներն ու անկուսակցականները, ծերերն ու յերիտասարդությունը լցվում եյին Տամանի բանակը, վորպեսզի նրա հետ միասին անցնեն դեպի Արմավիր։ Մարուսյան պատրաստվում եր գնալ բոլորի հետ միասին, բայց կոմիտեն վորոշեց.

— Դու կմնաս Նովորոսիյսկում։ Դու կուսակցության բոլոր անդամներին դիտես, քեզ համար հեչտ կլինի ընդհատակյա աշխատանք ծավալել։ Վերջին րոպեին քեզ ցուցումներ կտրվեն։

... Տամանցիները արդեն անցնում էին ցեմենտի գործարանների հետևը: Սպիտակ-դժարդխականները մնդակոծում էին քաղաքը: Վորտուում էր հածանավերի հետևակը հրետանին: Քաղաքում վազվզում էին մարդիկ, չսիլ պղելով աւրում էին ձիավորները, ով ով չէր կարողանում սպրդ, հասկանալի տակ, թե ինչ է կատարվում և ո՛վ ո՛ւմ և հարվածում:

Հիվանդանոցում դանվող վիրավոր կարմիր մարտիկներից պատվիրակություն էկավ: Նրանք հրահանգներ էին խնդրում:

Այդ ժամանակ կուսակցական կոմիտեում կատաղի կերպով պնդում էր հետևյալն դանդը: Մարտյան պատասխանում էր հետևյալ բովանդակը, վորպեսզի կոմիտեի անդամներից վորևե մեկի հետ կապվել, վորպեսզի նման, թե ինչ ուղղություն տա հետագոյներին:

Բայց կապանը չէր պատասխանում:

— Ախր ի՞նչպես անենք մենք,— հարցրեց դռանը կանգնած, ձեռքը վիրաբանդ նավատուն: Նրա հետևից սանդուխքների վրա խռնվել էին էլի մի քանի վիրավոր մարդիկ: Մեզ էլ կարելի հիվանդանոցում մնալ—սպիտակները բոլորին կկոտորեն:

Մարտյան արագ կերպով հասկացավ կուսակցական գործերն ու վիրաբանդները: Շատ էր, ամենն շատ, քան ինքն էր ենթադրում: Բայց յեթե այդ գործերը դարսվեն բակում կանգնած սայլի վրա, մի յերկու մարդ կարող են դնալ նրա հետ:

— Շո՛ւտ,— հրամայեց նա նավատուն,— տանենք:

Նրանք դուրս բերին գործերի մի կապոց և դարսեցին սայլի վրա:

— Ո՞վ և ձեղանից ամենաթույլը,— հարցրեց Մարտյան:— Նստեք:

Հետո դառնալով նավատուն՝ ասաց.

— Փաստաթղթերը կոտոր... դուս գիտես թե ում:

— Իսկ դո՞ւ,— հարցրեց նավատուն:

— Ինձ էլի մի գործ է մնում:

Այդ ժամանակ մի ինչ վոր տեղ բոլորովին մոտիկ ճրթճրթաց դնդացիրը:

— Շո՛ւտ,— հրամայեց Մարտյան:— Շուտ, շարժվի՛ր,

ուղղակի ցեմենտի գործարաններին հետևը. այնտեղ դեռ տամանցիներ կան։

Ցեխ տանդուխքներով վազեց վեր։

Կոմխումբի ընդը խաղաղ էր ու դատարկ։ Մարուսյան մի անգամ էլ պատեց հետախոսի բունակը, վոչ մի պատասխան։ Նա աչքերը հառեց սենյակին։ Կարծես վոչ մի առանձին կարևոր բան չէիք մոռացել. հին լրագրերը, յերկու հրացան անկյունում, անզգույշ դղրոցում մի քանի փամփուշտակալներ՝ վամպուշաններով։

Ցեխ հանկարծ Մարուսյան պատուհանի տակ լսեց սմբակների դոփյուն։ Ցերևացին ու անցան կուբանցիների բաշլուղները։ Սպիտակ-գվարդիականների հեծելապարեկը պտտում էր վտղոցով՝ գիմելով ուղիղ դեպի ցեմենտի գործարանները։

— Կա՛ց, կա՛ց,— ինչքան ուժ ուներ դուռց Մարուսյան՝ լայն բացելով պատուհանը։— Այստեղ բոլշևիկներ են, այստե՛ղ է նրանց կուսակցական կոմխումբն։

Նա վոչնչից չէր վախենում։ Այն միտքը, վոր ծագել էր նրա գլխում, նրան թվաց շատ հաջող։ Գլխավորն է՝ ուշացնել հեծելապարեկին, վորպեսզի նա հենց առաջին վտղոցը ծուխ-լուսն պես վրա չհասնի կուսակցական միասնաթղթերով տղային։

Հեծելապարեկի հրամանատար սպան չուռ տվեց ձին։ Շըշխոթված կանգ առան կազակները։ Դիմացի պատուհանում յերևաց մի ինչ վոր դեմք, վոր չարաճճիորեն կերպով քմծիծաղ էր տալիս։ Այդ մարդու աչքերը հանդիպեցին սպայի աչքերին, և նա դրական նշան արավ գլխով։

Մարուսյան հեռացավ պատուհանից։ Նա հանգիստ կերպով վերցրեց լցրած հրացանը։ Կողքին կանգնած յերիտասարդ հրացանը դրեց անկյունին։

Սանդուխքների վրա զնդում էին խթանները։ Ագռաքին դուռը յերիտասարդի թրխկոցով ծածկվեց։ Մի քանի մարդ էր բարձրանում։

«Այ քեզ մի ուռմբ լինե՛ր», մտածեց Մարուսյան։ Բայց ուռմբ չկար։ Նույնիսկ նռնան չկար, վոր, ինչ խոսք, ավելի հարմար է մութ սանդուխքի վրա կռվելու համար, քան սահնդին հրացանը։

Սպիտակները չրթապատեցին տունը։ Այդ պահին Մարու-

այդ մեծագույն վատահության զգացմունքով էր բռնված իր նկատմամբ։

Պետք էր դիմանալ, մոլքան կարելի չէ յերկար, և գրանով խոկ չեղել Թշնամու ուշադրության։ Մարուսյան կրակից հրացանն այն թողելին, յերբ դռների մեջ յերևաց ոստան։ Եերկրորդ կրակոցը լսվեց երբեմն պատուհան այն կողակից հայհոյական խոսքի, որը քայլ արեց ոտքի վրայից՝ նպատակը ձեռքին։ Կողակը վռնդեց հատակին. կրակոցը համարյա կվտ ցրիվ տվեց նրա գլուխը։

— Դարա՛ն, յեղբայրնե՛ր,— գոռացին ներքև, սանդուխքի վրա։— Շղթայիր տունը, կրակիր պատուհանների վրա,— գոռում էր ջարդված քթով յենիչառյան։

... Մարուսյան կրակելով պաշտպանվում էր մի սենյակից։

Նավթոսխյակի փողոցներում այդ ժամանակ դաժան կռիվն սեռնում կարմիրների հետ։

Մանր վիրավորված կարմիր-վիարդիականներին դուրս էին չորտում հիվանդանոցներից։ Փամփուշտները խնայելով՝ սպիտակները վիրավորներին կարատում էին թրերով, վոտնահար էին անում ձիերի սմբակներով, դցում էին չողնքարչի անիվների տակ, խեղդում ծովում։ Դա չնաղայլի կատաղություն էր։

... Մարուսյակի վիամփուշտները վերջացան։ Նա պառկած էր արյան մեջ, համարյա թե առանց դիտակցության։ Երան վիրավոր վիճակում դուրս քաշեցին փողոց ու ձգեցին ոչան սպսի մոտ։ Դահիճները հայհոյելով դիմաթրկները թևթևակի կողքի ծալած, չարվեցին Մարուսյակի առաջ։

Երանց համազարկը վախկոտ էր ու անկարգ։

Գոան թվի զարունն էր։

Կարմիր զորքերը դենիկինյան բանդաների մնացորդները չըպըտելով ծովը՝ գրավում էին Նավորոսխյակը։

Այն չնչքի մոտ, մորտեղ մի ժամանակ կուսակցական կոմիտեն էր գտնվում, կանգ առան յերեք մարտիկներ։ Երանցից մեկը, մի նավաստի, հանեց անհուսար գլխարկը գլխից։

— Ախտեղ,— մռայլ կերպով ասաց նա,— այս տեղում երբանք սպանեցին մեր Մարուսյային։

Մարտիկները բացեցին դլուխները։ Նավաստին շարունակեց։

— Ինչո՞վ սողունները։ Նրանք կարծում էին, թե այն դործը, վորի համար վոտքի էին կանդնել մելիոնները, այն դործը, վորի համար մարտնչում եր Մարուսյան, կարելի յե վոչնչացնել։

Ա. ԻՄԲԱՒ

ՆԵՐՄԱ ՇԱՊՇՈՒԿՈՎԱ.[1]

Բանք սլանում էին արագ, վոտքով դպչելով տաքացած ձերին։

Տղամարդկանց բեչմեռների վրա արծաթե քանդակած գոտիները և կանանց բազմագույն պճնահագուստը վառվում էին արևի տակ։ Բարձր կնճռոտ դեմքով մի ծերուհի, սև ալ-ուան մորթուց փափախը դլխին սլանում եր ուղտի այունաչարի առջևից։ Ծերկար բեխերը նրան զայրույթի առամանի տեսք էին տալիս։ Ծերուհու հետևից ձի նստած դնում էին ուղտի լավագույն մարդիկ։ Ձիու վրա վառ դույնի բեչմեռը հագին հանդիսավոր կերպով բազմել եր կուսակցության մարդկոմի հրահանդիչը։

Ձերնողեմլի ուղտի առաջին շարքերում սլանում եր դյուղխորհրդի նախագահը— Բուլդան Դերտեևան։ Նա վստահ կերպով եր բռնել սանձն իր ձեռքում, առնական ձեռքով, և ձիու հետ ձուլված, փորձված, վարժված ձիավարուհու նրա կերպարն աչքի յեր ընկնում մյուսների շարքում։

Գաուշդամբի մոտից անցնելիս, վորտեղ կանդնած էին մարդի ղեկավարները, նա բարձրացավ սապանդակների վրա և աչք ածեց, կարծես ստուգելու, թե արդյոք ուղտի այունաչարում կարգի՞ն է ամեն ինչ։

---

[1] Այս պատմվածքի մեջ բերված են զգալի չափով նյութեր, վոր վերցված են «Կալմիկիայի դուստրերը» ժողովածվից, Կալմհրատի հրատարակություն, ք. Ելիստա։

— Դուք խորհրդի լավագույն նախագահին բոլշևիկյան վողջույն,— դառացին վերևից:

Դերասանն ժպտաց և ձեռքը թափահարեց՝ լ նշան վողջույնի:

Ամեն կողմից մարդիկ դրծիկոմի դիմացի հրապարակին էլին հավաքվում:

Ջերնոզեմելյան ուշաբ ներկայացուցչը— կարի նման սև բեխերով ծերուկին՝ ուրախ, բոպեյի հանդիսավորությունից հուզված՝ վողջույնի ճառ էր սուում.

«Սև հողերի մարդիկ, հողերի, վորտեղ յերբեք սառույց ու ձյուն չի լինում, վողջունում են այստեղ հավաքված բոլորին, բոլոր բարեկամներին, ընկերներին և յեղբայրներին: Ցեվ Չերնոզեմելյան կալմիկների առաջին վողջույնը նրան, ով շողում է մեզ վրա վորպես արև, ով լուսավորում և ժողովուրդներին ճանապարհը, մեր առաջին խոսքը՝ ընկեր Ստալինին:

Մեր ջերմ վողջույնը ընկեր Վորոշիլովին, վորը պահում և խորհրդային ամրոցի բանալիները և սարսափ և աղդում մեր միության թշնամիներին»:

Դրոշակները ֆռֆռում էլին ուժեղ քամուց: Դրոշակներից նայում էլին այն մարդկանց դիմանկարները, վորոնց մասին խոսում էր կալմիկը: Դրոշակակիրները բարձրացնում էլին կարմիր կտավները, ցնծում էր ամբողջ ժողովուրդը: Շքախյուններն անցնում էլին չարքերով դրծիկոմի առջևից: Հաղար յերկու հարյուր ձիեր տանում էլին իրենց վրա անվեհեր ձիավարներին ու ձիավարուհիներին: Ձիերի հետևից— մեքենաներ, իսկ հետևից՝ ծանրաբարո յերևում էլին ուղտերը:

Մյուռների շարքում վոգրիկ բրդոտ ուղտի վրա խորամանկ ժպիտը դեմքին բազմել էր արևակեզ, բոլորովին ձիթապտուղի նման յերկար տարեկան Եդիկ Նարմաևը՝ ոլիմպիադայի ամենակրտսեր մասնակիցը:

Վասիլիյ Յոմուտնիկովը՝ դրծիկոմի նախագահը, կալմիկական առաջին կարմիր դնդի հրամանատարը, հաղիվ էր պահում իրեն, վոր ցած չվազեր պատշգամբից, չթռչեր ձիու վրա և չխառնվեր ձիավորների խմբին: Պատշգամբում Յոմուտնիկովի կողքին կանգնած էր մի կին՝ խակի բաճկոնը հագին:

Կարմիր առաղի չքանչանը ցոլում էր նրա կրծքի ձախ կող-

մում։ Նրա աչքերը վառվում էին։ Նա վողջույնի խոսքեր էր արտասանում։

Բուլդոն Դերամեևայի հայացքը հանդիպեց նրա վառվող հայացքին։ Նա ձեռքը բարձրացրեց և հնչեղ դռռաց.

— Վողջո՛ւյն Նարմա Շապշուվուվային։ Վողջո՛ւյն առաջին բուդդոնովական կալմիկուհուն։

★

Գարնանը հրաշալի չի ու պճնված անծայրածիր տափաստանը։ Խոտերի հուշող, բարի հոտ, մաքուր ոդ և տաք արև։

Փոքրիկ, կայտառ Նարման սիրում էր այդպիսի օրերին մենակ թափառել տափաստանում, հավաքել պայծառ կաթի կակաչներ և նրանցով զարդարել իր հասարակ հագուստը։

Նարման վորբ էր մնծանում։ Նրա հայրը, վոր Դոնի կալմիկ էր, չքավոր— հողագործ, յերկար տարիներ ապրեց օտարյան տափաստաններում, Բաթալպաշայա ստանիցայում։

Նա ապրեց բառարակի ծանր կյանքի ամբողջ դառնությունը, և նրա ամենամեծ բաղձանքն էր՝ մի դեղեցիկ ծաղկափթիթ այգի ունենալ։ Նա մեռավ, յերբ Նարման մնկ տարեկան դարձավ։ Այդպես էլ չիրականացավ նրա նվիրական յերազը։

Շուտով մեռավ և մայրը։

Նարմային և նրա անողնական, ի ծնե կույր ՈՒՀԻր յեղբորը ապաստարան տվին ազգականները։

Բայց ազգականները Նարմայի և կույր ՈՒհիի համար ոտար, չար մարդիկ էին։ Հինգ տարեկան հասակում նա արդեն արածացնում ու պահում էր ապեները, վոչխարները, իսկ յերբ մի քիչ մնծացավ, նրան վստահեցին նաև կովեր ու ձիեր։

Լուսաբացից մինչև ուշ գիշեր Նարման դրծում էր դաշտում. կովեր էր կթում, արոտատեղ դնում, Սակ դեռում ջրում էր վոչխարներին, աթար էր հավաքում, ուսափայտերով ջրով լի ահագին դույլեր էր կրում։

Փոքր հասակից նա ձի յեր հեծնում առանց թամբի։ Ճիշտ և, շատ անգամ նա վայր էր ընկնում և դառը լաց լինում, կուչ գալով մի վորևե մութ անկյունում, բայց հետո լավ սովորեց ձի քշել, և հավատարիմ ձին, արագաշարժ աչքերով աղկա չո-

յանքին հնազանդ, ամենուրեք դնում եր նրա հետևից, ինչպես մի յերեխա։ Նարման տալիս եր ձիուն և հացի վերջին պատառը և նույնիսկ չաքարի կտորներ, վոր նա հաղվադեպ եր կարողանում ձեռք ձգել։

Տաճհինդ տարեկան հասակում Նարման արդեն այնքան եր աճել ու ամրացել, վոր առանձյակի տղաներից քչերն եին սիրտ անում կռիվ կպչել նրա հետ։

Թեև տեսքով նիհար եր ու թուլլ, բայց նա ուժեղ եր, տոկուն ու համառ։ Նրան հաճախ եր վիճակվում մեն-մենակ, առանց մի պատառ հացի, դիշերով տափաստան դնալ՝ կորած ապուռները վերադարձնելու։

— Դնա՛, դնա՛, աչխատի՛ր,— տանը միայն այս եր լսում նա իր կուշտարար հորաքրոջից։

Նարման զվարճություններ չեր տեսնում։ Ջրասանքների և ընտանեկան յերեկույթների, վորտեղ հավաքվում եր առանձյակի վողջ յերիտասարդությունը, նա չեր դնում։

Այնտեղ դնալու համար նա վոչ շոր ուներ, վոչ ժամանակ։

Աղջկանները ժլատ եին, և վո՛չ սիրալիր։ Նարման ուզում եր տովորել, բայց ուսման մասին խոսք անելիս չեր կարող լինել։ Նրա միակ բանվականությունն այն եր, վոր նա տափաստանում յերդում եր իր սիրած յերդերը, վոր ինքն եր հորինում։

Նա դնում եր վոչխարներն հետևից և յերդում.

Իմ սիրելի ծնողներ—
Իմ հարազատ մայր,
Հայր իմ հարազատ,
Ինչո՞ւ թողիք դուք ինձ,
Ինչու հետացաք ինձնից.

Ջրմանալով վշտին՝ նա լալով ընկնում եր տափաստանի խոտերի վարքին դորդի վրա, և տափաստանն ընդունում եր նրան իր գիրկն ու հանգստացնում։

Ցերեկն աղջկանները Նարմային տանում եին կալմիկական տաճար։ Նա չեր հասկանում, թե ինչո՛ւ յեն մարդիկ հավաքվում այստեղ և յերկրպագում ինչ վոր խորհրդավոր առարկաների։ Կալմիկական տաճարում նրան հետաքրքրում եր մի բան. նա տեսնում եր, թե ինչպես աղոթողները գավաթնե-

րի մեջ պղնձե դրամ էլին գցում, տեսնում եր, թե ինչպես մանչիկները այդ դրամները վերցնում են իրենց...

Ծանր եր դեռահաս Նարմայի վիճակը: Ծնծն ու անընդհատ աշխատանքն եր նրա բաժինը: Մի անգամ նա չդիմացավ և, երբ հորաքույրը խոսեց Նարմային, նա կծեց նրան և տափաստան վազեց:

Նարմային դուռն, և հետո գրպի քեռինց սիրտն ուշածի չափ վորձեց նրա մեջքին իր ճեռքերի ճարպիկությունն ու մորակի ամրությունը:

... Գյուղում արտառոտվոր բաներ սկսեցին տեղի ունենալ: Սկզբում այսպես եր: Ճակատից գալիս էլին գինվորները՝ խեղանդամ, վիրավոր: Հետո, անհանգստացած թուչուններին պես բոլոր յեկան հարևան Պլատովկայա ստանիցայում տեղի ունեցող բունտի մասին:

Տափաստանում յերևացին պարտիզանական վոգրիկ ջոկատներ: Ամեն տեղ խոսում էլին կարմիրների ու սպիտակների մասին, բայց թե ինչ տարբերություն կար նրանց միջև և ո՛վ ու ինչի՛ համար եր կռվում— Նարման չգիտեր:

Ավելի ու ավելի տագնապալից եր դառնում ստանիցայում: Մի անգամ տասնյոթ տարեկան Նարման տեսավ, վոր ամենուրեք— վողոցում, տների մոտ— գինվորականներ էլին հրացաններով: Առում էլին, վոր դա պարտիզանական ջոկատ է:

Նարման իմացավ, վոր ստանիցաներում չքավորները վոտքի յեն կանգնում հարուստների դեմ: Մեծ պատերազմ և ըստ կըսվում: Այն ժամանակ նա առաջին անգամ իմացավ, թե ովքեր են սպիտակները: Փոքրիկ ջոկատներով նրանք հարձակվում էլին տափաստանի վրա, անասուն էլին փախցնում, հանդիպող չքավորներին ծեծում էլին մորակներով և սպանում:

Առաջին անգամ նրա մեջ առաջ յեկավ այրողատելություն դեպի սպիտակ բանդիտները, դեպի բոլորը, ովքեր չքավորներին չեյին Թողնում ապրել:

Որեցոր աճում եր տագնապը, վոր գոնել եր ամբողջ տափաստանը: Որ չեր անցնի, վոր Բատլայեվսկայա ստանիցայից մոչ հետու չլսվեր հրացանի համազարկը և գնդացրի յերկար ու ձիզ ճռճռոցը: Սպիտակ-գվարդիականությունը սեղմում եր

ամեն կողմից, աշխատելով ճշմել բանվորական յերկուատասրդ իշխանությունը։

Զքաղոր կաղտակները չարժվեցին ու լցվեցին կարմիր պարտիզանական ջոկատների մեջ։

Բատալեանկայա սանձիցայի մոտերը յերեաց այդպիսի ջոկատներից մեկը— Մարտունկինի ջոկատը։

Մի անգամ Նարման հանդիպեց այդ ջոկատի սանիտար կանանց։ Նրանք սկսեցին համոզել, վոր դնա իրենց մոտ։ Նարման սիրտ չարեց միանգամից դնալ։ Նա դնաց խորհրդակցելու բանիմաց կանանց հետ։

— Նատիր տանը,— ասացին նրան,— Մի՞թե հիվանդանոցները կուիլ են անում։

Այդ օրերին նա հանդիպեց կարմիր-գվարդիական Մաքսիմ Շապշուկովին ու սիրեց նրան։ Նրա հետ միասին Նարման ճակատ դնաց։

Նարմայի համար սկսվեց նոր կյանք— լուսավոր ու անամպ։

Նա տեսավ՝ յերկուատասրդ խորհրդային իշխանությանն անձնվեր կերպով նվիրված արվ մարտիկներին, անվեհեր ճակատներին։

Նա ճանաչեց Բուդյոննու կարմիր հեծելազորի վառապանծ բոլշևիկ-զորավարներին՝ Գորոդովիկովին և ուրիշներին։ Նա իմացավ, թե ինչի՛ համար և կուում խորհրդային իշխանությունը, ի՛նչ և բերում նա չքավորությանը։ Նարման դեռ վատ եր հասկանում տեղի ունեցող բարդ դեպքերը, բայց կարմիկ հրամանատարներ Վասիլիյ Ֆոմուանիկովի, Մարտի Կանուիկովի զրույցն ու ընկերական վերաբերմունքը նրա մեջ ցանկություն առաջ բերին՝ իր բոլոր ուժերը նվիրելու մեծ գործի պայքարին։ Իր ամուսնու՝ Մաքսիմի հետ միասին նա հերոսաբար եր տանում պատերազմի բոլոր ծանրությունները։

Նարման այժմ չեր բաժանվում իր նժույգից, լավ եր տիրապետում նագանին, թրին ու հրացանին։ Տղամարդու դիմվորական հագուստով, ճկուն ու արագաշարժ՝ նա նման եր ժիր արդարի։ Գնդում նա միակ կինն եր։ Ցեվ բոլոր մարտիկները նրան վերաբերվում եյին բացառիկ ջերմությամբ ու բարեհամբույր։

Նրա անունը դրել էին Մանյա, Մարուսյա և այս յերկրորդ անունը դարձավ նրա համար մտերիկ ու հարազատ։ Անհայտ կալմիկուհի Նարմա Մարկինային պարտիզաններից վոչ վոք չեր ճանաչում, բայց Մարուսյա Շապշուկովային դիտեին բուդյոննովական Առաջին հեծելազորի բոլոր ջոկատներում— և՛ Ցարիցինի տակ և Ստավրոպոլում։ Նարման չարունակ ուղեկցում եր իր ամուսնուն՝ կալմիկական հեղափոխական հեծելազորային դիվիզիայի 2-րդ եսկադրոնի հրամանատարին։ Մարտերում, հեծելազորի ժամանակ միշտ նրա հետ եր, եսկադրոնի գլուխն անցած։

Հերոսական դունդը՝ իր դլուխն ունենալով փորձված բոլշևիկ-հրամանատարներ՝ զարմանալի խիզախություն եր ցուցաբերում խորհուրդների թշնամիների դեմ մղած պայքարում։ Ցեխ շարքային մարտիկ Նարման յերբեք չեր վախենում մարտական յերթային դժվարին կյանքից։

... Ուստ-Մեդվեդիցկայա ստանիցայի Բոլշոյ ուլան ազատարակի մոտ տեղի ունեցավ կալմիկական դնդի մարտը՝ դեներալ Կոնովալովի հեծելազորի հետ։

Տաք կռվի ժամանակ վեց ոպիտակ-գվարդիականներ դուրսանից հարձակվեցին 3-րդ եսկադրոնի հրամանատար Ուսադչենկոյի վրա։ Նարման ու Մաքսիմը մյուս եսկադրոնում եյին։ Տեսնելով թե ինչպիսի փորձանքի մեջ է ընկել Ուսադչենկոն, նրանք նետվեցին նրան փրկելու։ Կարուկ խթանելով ձիուն՝ Նարման նետվեց մարտի ամենաստաք տեղ և, հանելով նագանը, կրակեց սպիտակ սպայի վրա, վորն արդեն պատրաստվում եր թուրն իջեցնել Ուսադչենկոյի գլխին։ Ուսադչենկոն փրկված եր։

Մարտից հետո ընկերները չրջապատեցին Նարմային, և հրամանատար Յոմուտնիկովն ամուր սեղմեց նրա ձեռքը։

Ստավրոպոլում, Սուլտանովո դյուղի մոտ, կալմիկական դունդը անողոք մարտ բռնվեց գնդապետ Վասիլչենկի բանդայի հետ։ Այդ կատաղի կռվի ժամանակ Վասիլչենկի մեկ ու կես հազար հեծյալները ջարդվեցին ու ոչնչացվեցին։

Մաքսիմ Շապշուկովը գրոհի յեր գնում իր կնոջ հետ կողք-կողքի։ Նրանցից առաջ սլանում եր գնդի հրամանատարի ոգ-

նական Ալիմ Սահաննկոն, իր հետևից տանելով բոլոր մարտիկ-ներին:

Նա առաջինը խրվեց սպիտակների շարքերը: Սահաննկոյին շրջապատեցին ամեն կողմից: Սպան վրա բերեց իր Թուրը նրա դլխին: Կողքից մերկացած սուսերը ձեռքին նրան էր մոտենում մի կազակ:

Շապշուկովը, որ կռվում էր նրա կողքին, կարողացավ միայն գոռալ.

— Նարման, մրկիր Ալիմին:

Նարման մի ակնթարթում դուրս քաշեց նագանը և դիպուկ կրակոցով տապալեց սպիտակ-գվարդիականին: Սահաննկոն ա-դատվեց՝ մնայն թևքև քերծվածք ստանալով:

Ինչպես պատրիզանուհի Մարուսյա Շապշուկովայի համբա-վը թնդում էր ամբողջ տափաստանում: Մերկացրած Թուրը ձեռքին՝ նա սլանում էր ամենատաք հոլի մեջ, իսկ կարճառև հանդամի որերին նա բոլոր մարտիկների հետ միասին զնդան ձայնով յերդում էր անմոռանալի մարտական յերդերը:

Նարման Շապշուկովան մարտում կանուսուիա սահցավ: Նա, ինչպես միշտ, սլանում էր ջոկատի առջևից: Ուղիղ իր առջև տեսավ նա կազակ սպայի սպաստաքերի դեմքը: Նարման վրա բերեց Թուրը: Բայց ինչ որ մի բան սոսկալի ազմուկով Թռավ-անցավ նրա մոտից: Աջկից խլացած՝ նա ձիուց վայր ընկավ, և ընկերները հազիվ կարողացան նրան մարտից դուրս բերել:

Յերկար ժամանակ Նարման պառկած էր հիվանդանոցում: Կանուսուիան լուրջ էր: Սիրտը տկցավ և հիշողությունը Թու-լացավ: Յերկար որեր ու գիշերներ պառկում էր նա հիվանդա-նոցային սպիտակ սենյակում և աշխատում էր հիշել անցած ո-րերը: Բայց բոլոր հիշողությունները միաձուլվում էին, և նուիրնիկ մերձավորուհուն բարեկամների ու ընկերների դեմ-քերը ընկնել էին նրա հիշողությունից:

Նա հիվանդանոցից դուրս յեկավ Թույլ ու նիհար: Վերա-դարձավ հայրենի գյուղը: Գնաց գյուղխորհուրդ: Այնտեղ նրան վատ չընդունեցին. նստեցրին, թեյ խմացրին: Բայց գյուղխոր-հրդում ինչո՞վ կարող էին ոգնել: Յեվ նա ի՞նչ կարող էր ա-նել անդրագետ ու հիվանդ տեղով:

Այն ժամանակ նա սկսեց դիր առլորել, սկսեց դպրոց հա-

ճախել: Նա նստում էր փոքր յերեխաների կողքին և տառեր կարդում, բայց ուսումը նա դժվարությամբ էր ձեռք բերում, հիշողությունը թույլ էր: Այդ կանտուղիայի հետևանքն էր:

Մեծ ու բուռն կյանքն ընթանում էր նրա կողքով:

Ինչպիսի՛ հրճվանք զգաց Նարմա Շապշուկովան, յերբ նրա մասին հիշեց հարազատ մարդը:

Այդ մարդը կալմիկական դործիսմի նախագահ Վասիլիյ Ոմոուսնիկովն էր:

Շատ տարիներ էր անցկացրել նա Կալմիկիայից հեռու:

Վերադառնալով՝ ամենից առաջ նա փնտռեց ու դտավ իր մարտական հավատարիմ զինակիցին:

Նարման կարդում էր Վասիլիյ Ոմոուսնիկովի նամակը և լաց էր լինում զգացված, շնորհակալ արցունքներով:

Նա յերկար դնում էր անծայրածիր փոշոտ տափաստանով: Ալծկլները պատռվում էին նրա դլխավերևը, և փոքրիկ դետնասկյուռները կտրում-անցնում էին նրա ճանապարհով:

Տափաստանում առաջ էր յեկել կալմիկական նոր մայրաքաղաքը՝ Ելիստան:

Նարման տեսավ քարե տները, Լենինի արձանը: Ճիվ ահա Վասիլիյ Ոմոուսնիկովը դուրս է դալիս նրան ընդառաջ, պինդ գրկում և տուն է տանում: Ինչպե՛ս է փոխվել Նարման: Նա հազիվ ճանաչեց Նարմային...

Այժմ Նարմայի համար հանդիստ կյանք սկսվեց: Նրա մտքին հոգում էին, նրա նկատմամբ խնամք էին տանում, նրան բժշկում էին, վորպեսզի գործարար ու լիարյուն կյանքի վերադարձնեն: Վասիլիյ Ոմոուսնիկովը յերբեմն կարեկցությամբ հետևում էր իր ասնուհուն: Այդ վաղաժամ պատռված հիվանդ կինը այնքա՛ն քիչ էր նման մարտական, խիզախ բուդյոննովական աղջկան:

... Առաջին հեծելազորի տարեդարձի որերին նրանց՝ Ոմոուսնիկովին ու Շապշուկովային կանչեցին Մոսկվա:

Նարման առաջին անդամն էր տեսնում բազմահարկ տներ, տրամվայ... Հսկայական քաղաքի աղմուկը նրան բոլորովին չշմեցրել էր: Վորքա՛ն նման չէր այդ քաղաքը անմարդաբնակ, անապատային տափաստանին:

Բայց ամենաքանչելին դեռ առջևն էր:

Նրանց մյուս մեքենա մատուցեցին և տարան կրեմլ... կրեմլի դահլիճներից մեկի պատի վրա Նարման մի մեծ նկար տեսավ: Զրահածումը սեղմեց նրա կոկորդը: Հիսուր կալմիկները պատում էին Քինամիների վրա: Ճիվ ջոկատի առջևից սուրում էր նա— յերիտասարդ, առույգ և ուժեղ Նարման:

Այո... Այդպիսին էր նա... Պարծանք բանակում լուսավորից նրա հիշողությունը: Ճիվ նա հիշեց տղերքը... և այն հեռավոր մարտական որերը, և յերդերը, և ձիերի դուխյանը, և մարտի աղմուկը...

Վասիլիյ Յոմոտանիկովը բռնել էր նրան, բայց նա այդ բոպեին կարիք չէր զգում նեցուկի: Ճերբ նա մտավ դիսավոր դահլիճը, նա իրեն յերիտասարդ ու առույգ էր զգում, ինչպես այն մարտական որերին:

ԿԳԲ–ի նախագահ Մ. Ի. Կալինինը բարձրաձայն ասաց.

— Նարման Շապշուկովա:

Նա մոտեցավ: Ընկեր Կալինինը հանձնեց նրան մի փոքրիկ բացած տուփ: Մարտական կարմիր շքանշանը փայլում էր սպիտակ թավիշի վրա: Նա վերցրեց տուփը, և ձեռքերը դողացին:

Այն ժամանակ Քինինաձեն յերկար ընչացքներով մի դինվորական մոտեցավ նրան, ծնծաղելով սեղմեց նրա ձեռքը, հանեց շքանշանը և ամրացրեց նրա կրծքի ձախ մասում:

Նա ճանաչեց Նարմային, բանակի հրամանատար Բուդյոննին ճանաչեց վարժ ձիավոր կնոջը, վոր սուրում էր ջոկատի առջևից: Նա լավ չէր լսում, Քե ինչ էին ասում իրեն: Նա միայն տեսավ, վոր բոլորը վեր կացան և փողկռնեցին նրան: Բուդյոննին շտապեցավ ժպտում էր նրան: Իսկ Վասիլիյ Յոմոտանիկովը տաքացած ինչ վոր բան էր պատասխանում: Նարմայի գլուխն այրվում էր: Ճեվ Նարման այնպես յերջանիկ էր, ինչպես յերբեք չէր յեղել կյանքում:

Ի. ԿՈՆՈՆԵՆԿՈ

ՊԱՏԸՃԸ

Դենիկինյաններն երեմնէուղը շրջապատելով գրավեցին քաղաքը։ Ջարդը յերիկամ որ շարունակվեց։ Սպիտակները ներխուժում էին տները, կողոպտում, կանանց բռնաբարում, դնդակահարում և կախում։ Հրեական բնակչությունը թաղնվել էր նկուղներում։ Աչխատավոր հրեաներին խնայել չկար։ Ներանցից շատերը զոհվեցին։ Վերջապես ջարդը դադարեց, և քաղաքում կարծես թե հանդիստ տիրեց։ Հին տերերը վերադարձան առաջ աղբյուրած իրենց ճեռնարկությունները։ Սկսեցին հին կարգերը մտցնել։ Լեհաստանից, Փարիզից յեկան այնտեղ փախած աղնվական– կալվածատերերը։

Գյուղերում՝ մոլեգնում էին պատժիչ ջոկատները։ Որը ցերեկով դնդակահարում էին անհնազանդ գյուղացիներին։ Գիշեր տանում էին վերջին անասունը, կողոպտում էին։ Կոնտրիբուցիա դրին կալվածատերերի քանդված տնտեսության և մեռածների համար։

Սպիտակները տիրակալում էին՝ ինչպես իրենց կողմից դրավված Թշնամու յերկրում։

Գիշերը, յերբ գյուղը քնած եր, գյուղացիները դնդակահարվածներին թաղում էին քարափի մեջ և թարմ հերիմների առաջ յերդվում էին պայքարել սպիտակների դեմ։ Աստատներում մեկը մյուսի հետևից պարտիզանական ջոկատներ էին առաջանում։

Գեներալ Դենիկինի քրիստոսասեր զինվորականությունն ըղբաղված եր գլխավորապես սպեկուլյացիայով, կաշառքներ վերցնելով և գողությամբ։ Ինչ վոր տեղից յերևացին սպիտակ սլյուր, նպարավաճառային ապրանքներ, ամեն տեսակի կանոբարանդա։

«կյանք չի, այլ բարեկենդան է», սկզբի չրջանում հրճվում էին քաղքենիները։

Ցուրաքանչյուր անկյունում, յանկապատների վրա յերևում էին «մխանականի, անթաժանելի աղատարարները»՝ Դենիկինի և Կոլչակի դիմանկարները։ Գլականեր՝ դյուղացին ու դինվորը դրկված— «Ցեղրայլնե՛ր, վրիեցնք սուրբ Ռուսիան»— և կողքին բոլշևիկների վրա կատարվող սոսկալի դատաստանի մի նկար։

Սոլիտակները «կարդ» էին մացնում։ Գինչերները քամին Դնեպրից կրակոցներ էր բերում— դնդակահարում էին բարձր դատիճների մատ։

Կրեմենչուգի կոմյերիտականների մեծ մասը հետացավ կարմիր բանակի հետ։ Ընդհատակյա կոմիտեում մնացին միմիայն աղջիկները։ Ամբողջ աշխատանքն ընկած էր նրանց ուսերին։

Կոմիտեի խնդիրները բարդ էին ու վտանգավոր. պետք էր դրականություն տարածել, կապ պահպանել պարտիզանների հետ, ագիտացիա մղել դենիկինյան դինվորների մեջ։ Ընդհատակյա կոմիտեի քարտուղարի,— Գոտլիբի տանը դիշերները տեղի էին ունենում կոմյերիտականների դաղտնի խորհրդակցություններ։ Լուսաբացին, յերբ «Ամուդիտորիա» թատրոնում վերջանում էին կամավորական բանակի ոգուն տրված բարեդործական յերեկույթները, կոմյերիտականները աներն էին ցրվում հոգնած, բայց հաղթանակի հավատով տոգորված։

Ընդհատակյա աշխատանքի կենտրոնը գտնվում էր Գրիցևլուկու և Ռաբինովիչի մախորկայի դործարաններում։

Հին ժամանակ այդ դործարանները մեծ չահույթ էին տալիս իրենց տերերին։ Կրեմենչուգը ծխախոտ-մախորկային տրանք էր մատակարարում համարյա ամբողջ Ռուսաստանին։

Առավոտյան աշխատանքի գալով՝ բանվորները հաճախ իրենց դազդյահների վրա գտնում էին թարմ, դեռևս ներկի հոտ արձակող ընդհատակյա «Դելո ռեվոլյուցիի» թերթը։

Մի անդամ Ռաբինովիչի դործարանի ցեխերում թուդվիլներ ցրվեցին։ ՌԿ(բ)Կ և ՌԿԳԵՄ ընդհատակյա կոմիտեն կոչ էր անում բանվորներին՝ դործադուլով նշել Հոկտեմբերյան հեղափոխության յերկրորդ տարեդարձը։ Գործարանը հուդվեց։ Բանվորներն ու բանվորուհիները սկսեցին խմբերով հավաքվել

բակում։ Աղմկում էին մախորկա լցնողները՝ սեղմ կերպով շրջապատելով իրենց ղեկավարներին— հատաքճակ, կայտառ Գոտլիբին, նիհար ու ամաչկոտ Ժենյա Լողներին և բոլորովին դեռահաս, տասնվեց տարեկան, այտերին թաքախտավորի կարմրանիշներ ունեցող Գալյաերին։ Ցերեկ ապշիկներն էլ վայելում էին իրենց ընկերուհիների սերն ու հարգանքը։ Կոմյերիտուհիների չուրջը բազմութիյունը շատանում էր, աճում.

— Ընկերներ,— դոչում էր Գոտլիբը, բարձրանալով իրար վրա դարսած թուքունի հակերի վրա։— Գյուղերում գյուղացիներն ապստամբում են։ Նրանք պարտիզանական ջոկատներն են մտնում, որպեսզի ոչնչեն կարմիր բանակին, որը մեզ կազատի չուտով... Գործադուլ հայտարարենք։ Մեր գործադուլը կլինի ապստամբած գյուղացիութիյան հետ համերաշխութիյան արտահայտութիյուն...

Վախեցած կառավարիչը հրամայեց շշակը ժամանակից շուտ տալ։ Բանվորները ցրվեցին իրենց տեղերը։ Մխինդը խանգարվեց։

Մոտիկ, Բրյանսկի զորանոցներից հրապարակում տեղի էր ունենում Դենիկինյան բանակին ուղարկելու նորահավաքների ուսուցումը։

Ցերը խաստավարժութիյունը վերջացավ, զինվորները հավաքվեցին Գրիցևսկու գործարանի մոտ, մախորկան լցնելու քաժանմունքի պատուհանների տակ։

— Աղջկերք, մախորկա տվեք ծխելու։

Բանվորուհիները կատակ անելով սկսեցին լարացանցի միջով հոտավետ մախորկան տալ նրանց։ Ցուրաքանչյուր կապ փաթաթված էր բոլշևիկյան թռուցիկից— դենիկինյան բանակի զինվորներին ուղղված կոչի մեջ։ Կապլունը, Գորդոնը և Բրյանսմանը հարցուփորձ էին անում զինվորներին, թե վո՛ր գյուղերից են նրանք, ճի՞շտ է արդյոք, որ գյուղերում ապստամբել են գյուղացիները և քշել կալվածատերերին։

Հանկարծ մախորկա լցնելու քաժանմունքը վազեց ինքը՝ Գրեցևսկին։

— Գողե՛ր... խարդախ կողոպտիչնե՛ր...— գուժում էր նա։ — Մի՛վ և մախորկա քաժանել զինվորներին։

Բաժանմունքը մխանգամից սկսվեց։ Բանվորուհիները լուռ ու ջանասիրությամբ լցնում էին վաթեքները։

— Ի՞նչ ասվեց մասորկան։

Բաժանմունքն առաջվա պես լուռ էր։ Կատաղած տերը իր մտոից հալշվեց հինգ բանվորուհիների։

— Դուք ինձ մոռ այլևս չեք աշխատի... Հաշիվներդ ստացեք և կորեք գրողի ծոցը։

Ազմուկ բարձրացավ։ Վրդովված բանվորուհիները թողին աշխատանքը։ Հինգ րոպեյից հետո ամբողջ գործարանը կանգ առավ։

Գրեցեվսկին վոտները խփում էր գետնին, բանում և գլխակահաբությամբ էր սպառնում։ Տեսնելով, որ այդ չի ոգնում, նա ասեր փոխեց և սկսեց աղաչել՝ չքայքայել իրեն։

Գործարանի դարպասներից դուրս յեկող բանվորներին շրջապատեցին կազակները, վորոնց տերը հասցրել էր կանչել։ Մարտկոցով հարվածելով աջ ու ձախ՝ կազակները սկսեցին բանվորներին հետ քշել բակը։

Գրեցևսկու արձակած հինգ բանվորուհիներին կալանավորեցին և պահակախմբի ուղեկցությամբ տարան։

Ոարինովիչի գործարանում միխինդից հետո տաղնապալից էր։ Գործադուլի կոչը խռովել էր բոլոր բանվորներին։ Ինչպես Ա միշա, ամենից շատ ազդում էր լցնելու բաժանմունքը։ Մյուսներից բաժան լուռ նստած էր բանվորուհի Սմիչենկոն։ Նա չէր սիրում լցնողներին, վորոնք փոխում էին կոմկերբատականներին հետ։ Սմիչենկոն զնդեցիկ աղջիկ էր, աշխատում էր լավ հագնվել և միշտ իրեն հետու յեր պահում գործարանային բնակերուհիներից։

Թռչնիքը, Լոզները և Գալպերը տաք-տաք բացատրում էին բանվորներին քաղաքական գործադուլի իմաստը։

Անապատելի կերպով գործարանի բակը մտան զինված զինվորներ։

— Շրջապատե՛լ,— հրաման տվեց սպան, և զինվորները շղթայի մեջ առան բակում գտնվող բանվորներին։

Ձերբակ աղջիկներին էլ— Թռչիքին, Լոզներին և Գալպերին, այնուամենայնիվ, հաջողվեց աննկատ կերպով անհայտանալ։

— Ինդրեմ մեկ-մեկ դուրս յեկեք— լողները, Գոռուչիկ, Գալ-պեր...

Գորուչիկը ցուցակը կարդաց, բայց բազմութիւնը անշարժ մնաց, ոչ ոք առաջ չեկաւ: Սպան մատուցերը հանեց, սկսեց պատնաշել, բայց բանվորները եւի չմատնեցին կոմիտիտուհիներին: Այն ժամանակ կառավարիչի ցուցումով բազմութեան մէջից վերցրին ու ձերբակալեցին տասնհինգ մարդ: Սեմիչենկոն ցանկանալով ինչ որ բան ասել՝ չարժուամ արեց, բայց բանվորուհիները նրան խցկեցին բազմութեան խորքը և չթողացին, որ լուռ մնա, թէ չէ նրա բանը վատ կլինի:

Աշխատանքից հետո դարպասի մօտ կանգնած դէնիկինեանները խուզարկեցին բոլոր գործից դուրս յեկողներին, սակայն ոչ մի կասկածելի բան չգտնվեց: Ընդհակառակն, յերբ դիշերային հերթափոխը յեկաւ, ամենուրեք աչքի ընկնող տեղերում սպիտակին եկին տալիս գործադուլի կոչերը:

★

Բանվորուհիները Սեմիչենկոյին չրջապատած տարան մինչև տուն, հանդիմանելով այդ որվա նրա վարմունքի համար: Ներանց հրաժեշտ տալիս Սեմիչենկոն, որ ամբողջ ճանապարհին լուռ էր, խոստացաւ ուղղել իր սխալը: Հեռուից-հեռու կանանց հետևելով գնում էր սևազգեստ բանվոր Յուդինկոն: Թաքնովիչի մօտ աշխատելու հետ միասին նա ծառայում էր նաև հակահետախուզութեան:

Դեռ նոր էր աղջիկը հրաժեշտ տվել իր ընկերուհիներին, յերբ նա մոտեցավ նրան, ծանոթացավ և առաջարկեց զրուցանքի գնալ: Սեմիչենկոն սիրով համաձայնեց: Ներանք ուրախ անց կացրին յերեկոն. յեղան կինոյում, ապա ընթրեցին «Ռուսախան» Տաշտրանում: Սեմիչենկոն շատ խմեց, նրա գլուխը պտտվում էր: Նրա ընկերակիցը նրան առաջարկեց աշխատել հակահետախուզութեան մեջ: Նա ամենահրապուրիչ ձևերով էր նկարագրում այդ աշխատանքը և վերջապես աղջիկը տվեց իր համաձայնութիւնը: Ուշ գիշերին նրանք խավարի մեջ կատարեցան այն տունը, որտեղ հակահետախուզութիւնն էր տեղավորված: Ներս մտան հետևի դռնից:

Գետը, որի կաթինամը բերին Սեմիչեհկոյին, չափից դուրս սիրալիր հանդիպեց նրան։

— Մեզ քաջ, անվեհեր կամայք են պետք։ Մենք ձեզ լավ պիտենք։ Դուք աղնիվ աղջիկ եք, և մենք դնահատում ենք այդ։ Մենք ձեզ վոսկու մեջ կթաղենք։ Դուք ամենալավ հագուստները կունենաք և մեր փայլուն բանակի մի սպայի կին կլինեք։ Վաղը դուք մեզ պետք և ողնեք դործարանից վերցնելու ամենապլխավորները։

Հակահետախուղության պետի խոսքերից Թև առած՝ Սեմիչեհկոն մանրամասն պատմեց Դոսկերի և մյուս կոմկերիտուհիների աշխատանքի մասին։

Ուղեկցելով նրան մինչև տուն և հրաժեշտ տալով՝ Յուդիենկոն նոր լրտեսուհուն փող տվեց։ Սեմիչեհկոն փողից հրաժարվեց։

★

Ռաբինովիչի դործարանի լցնելու բաժանմունքը մյուս ցեխերի մեջին եր դանվում։ Ցերբ լցնելու բաժանմունքը կերդում եր, ամբողջ դործարանն այդ կերդին ձայնակցում եր՝ խլացնելով մեքենաների աղմուկը։ Այսոր կերդում եչին բոլոր աղջիկները, նույնիսկ— Վասիլիսա Սեմիչեհկոն։

Կաղակները, ձիերը թողնելով դարպասի մոտ, մտան դործարան։ Բռնեցին բոլոր մուտքերը և ներս խուժեցին լցնելու բաժանմունքը։ Խուդարկություն սկսվեց։ Ամեն ինչ տակն ու վրա արին... կոպիտ կերպով խուդարկում եչին կանանց։ Մադափունջը կախ կաղակը նագայկայով պատուհ այն բանվորուհու այտը, որը փորձում եր բողոքել։

Լոգների մոտ արկղի տակ թերթիկներ և լրագրեր դտան։ Բոլոր կասկածելիներին ձերբակալեցին։

— Ներողամտեցեք, այս թղթերը ձերն են։ Ձեզ վոչինչ չի լինի,— խորհուրդ եր տալիս խուդարկությանը ներկա դտնվող հակահետախուղության պետը։ Լցնողները լուռ եչին։ Ներանք լուռ եչին նաև այն ժամանակ, ցերբ կաղակներն սկսեցին ծեծել նրանց։

Լրտեսուհի Սեմիչեհկոն աննկատ կերպով մատնացույց արեց յերեք կոմկերիտուհիների վրա։ Կաղակները չրջապատեցին

աղջիկներին, սկսեցին ծեծել մտրակներով և հրացանի կոթերով։ Աղջիկները վայր ընկան։ Նրանց բարձրացնում էին ու նորից ծեծում՝ հարցաքննելով։

Ցերեկը դարպասը բաց արին, որ ձերբակալվածներին տանեն, այնտեղ, կազակներով շրջապատված կանգնած էին Գորդոնը, Եդյա Բրանտմանը և Կապլունը։ Գրիցևևսկու դործարանի այդ բոլոր յերեք բանվորուհիներին էլ մատնել էր լրտես Յուդինկոն։

Կազակները հետ, դեպի ցեխերն էին քշում մտայլ, արյունոլ ծածկված բանվորներին։ Լցնելու բաժանմունքում հեծկլտանք էր լսվում։

Չի նստելով՝ դենիկինյանները բոլոր վեց աղջիկներին քշեցին տաքացած, փոշոտ ճանապարհով։ Արևը կիզում էր։

— Ե՛յ, դո՛ւք, չհուդներ, արագ շարժվեք,— գոռում էին կազակները՝ չրխկացնելով մտրակները։

— Ո՞ւր եք տանում մեզ,— հարցրեց Գասլիը։

— Լռի՛ր,— կազակը վրա բերեց որ հարվածի, բայց պետը հաջողությունից դուհ՝ կանդնեցրեց նրան։

— Վանդակ, բոլշևիկյան թուչնիկներ։

Գասլիը սկսեց «Ինտերնացիոնալ» յերգել։ Ընկերուհիները խռպոտ ձայներով յերդակցեցին նրան՝ դլուխները բարձր պահելով։ Ցերեկվով նագայկաններին հարվածների տակ՝ տանջված, ծեծված աղջիկները յերդում էին։

Մեկ-մեկ ներս էին տանում նրանց հակահեղափոխության պետի մոտ։ Հարցաքննությունը տարվում էր զազրելի կատանքի յենթարկելով։

Գորդոնի շորերը հանեցին, մերկացրին, այնքան, ծեծեցին, մինչև որ նա կորցրեց գիտակցությունը, ապա նորից սենյակը քարշ տվին և բռնաբարեցին Գասլունի աչքի առաջ։

Բայց վոչ մի բան չեր կարող դուրս կորզել կոմկերխուհիներից այն, ինչ վոր պահանջում էին դահիճները։ Աղջիկները լուռ էին՝ ժամանակ առ ժամանակ ընկնելով ուշակորույս։ Կատաղած պետը դես ու դեն եր նետվում առանձնասենյակում՝ վառած ծխախոտով այրում եր կալանավորների դեմքերն ու ձեռքերը։

Գիշերը կիսակենդան վիճակում նրանց բանտ տարան։

★

Մերունի Դոստլերը քննիչին ասեց իր ամբողջ խնայողությունը, որ տանի ու ազատի աղջկանը։

— Բիչ է, ծերուկ,— կատակում է քննիչը՝ վերցնելով նրանից հազուստի վաճառքից ստացած վերջին կոպեկները։

Մերունն այնպես էլ չտեսավ իր աղջկան։ Նրա բնակարանը խուզարկեցին դևնիկինյաններն։ Այն ժամանակ վեց աղջիկների ծնողները դնացին ռաբբինի մոտ՝ ատածուց ողնություն խնդրելու։

— Մենք հրեա ենք,— պատասխանեց ծանրակշիռ ռաբբինը,— մի ժողովուրդ, որին միշտ և ամենուրեք ծեծում են ու հալածում։ Մենք հալածական ենք այս անպետք աշխարհում, որտեղ ապտում են մեզ, հրեաներիս։ Մեր յերկիրը պաղեստինն է։ Մեզ հարվածում էին բոլորը՝ մախնովականները, հայդամակները, բանդաները։ Դենիկինյաններն էլ հարվածում էին, մի քիչ հարվածում էին։ Բայց նրանք մեզ ճանապարհ տվին դնալ առնուրը։ Ցնվ յուրաքանչյուր աղնիվ հրեա կարող է իր համար մի վոքր առնուր անել, վորպեսզի քիչ վող կուտակի Պաղեստինն դնալու համար։

Ռաբբինի վամփիրիկ ձեռքը դրված եր Թալմուտի վոսկեզոծ կազմի վրա։

— Ռեբ Մոյշե, բայց մեր յերեխաները մեղք չունեն Ռեբ Մոյշե, փրկեցեք նրանց։ Դուք ծանոթ եք պարոն Ռաբինովիչի հետ, նա մեզ կոգնի,— խնդրում էին ծերերը նրան։

— Պարոն Ռաբինովիչն անիծել է ձեր յերեխաներին։ Ընդրանք ամբողջ գործարանը բունտ են դնել, ամեն որ վնասներ... Կարմիրները մոտիկ են... Վաղը—մյուս որը գործարանում գործադուլ կլինի։ Ամբողջ քաղաքը գործադուլ կատրի։ Ձեր յերեխաների պատճառով Ռաբինովիչը հրաժարվեց ոգնել չքավոր հրեաներին, մեզ և մեր ատածուն։— Ռաբբինի աչքերը փայլատակեցին, նա բարկությունից կարմրատակեց։ Մերունիները դլուխները կախ, լուռ եյին։

— Աղոթեցեք, և դուցե ատված կփրկի ձեր յերեխաներին։ Ցնվեք մխաին աղոթենք։

Ռեբ Մոյշեն բացեց Թալմուտը։

★

Վերակացուն մի անծանոթ յերիտասարդ սպայի ներս թողեց այն կամերան, վորտեղ նստած եյին վեց աղջիկները: Նայելով դռանը՝ սպան սկսեց խոսել:

Հասարակ ձևով, մարդկայնորեն նա պատմում եր իր մասին, իր հեղափոխական անցյալի մասին: Նա ավեց կուսակցական կոմիտեի այն ընկերների անունները, վորոնք հիանում եյին աղջիկների արիությամբ: Ներկուտը եր տալիս, թե ինչպես պիտի պահեն իրենց հարցաքննության ժամանակ: Շշնջյունով հաղորդեց, թե ինքն աշխատում է վորպես կարմիր բանակի հետախույզ և այժմ, ահա, կարողացել է նրանց հետ տեսակցություն ստանալ, վոր փրկի նրանց: Շոյող խոսքերը քննում եյին կասկածները:

— Ձեր արիությունը մեր կուսակցության ու կոմյերիտմիության հաղթանակն է,— տաք-տաք խոսում եր սպան:— Թանկագին բարեկամներ, դուք հեղափոխությանը պետք եք, և յես ձեզ կփրկեմ: Ասացեք, ի՞նչ հայտնեմ ընկերներին: Ահա մատիտ, թուղթ: Գրեցեք...

Այժմ նրա ձայնը դնդում եր, ճառը պաթետիկ դարձավ: Նա աղջիկներին համեմատում եր ֆրանսիական հեղափոխական կանանց հետ, նրանց համեմատում եր Շարլոտտե Կորդեյի հետ:

Դարպասը սևեռուն նայեց սպային.

— Շարլոտտա Կորդե՞... Նա սպանեց Մարատին, Փարիզի չքավորներն ատելությունը ցրնդին: Ֆրանսիական հեղափոխության պատմությունը վատ պիտեք դուք, պարոն սպա: Դուք նույնպիսի հակահեղափոխական եք, ինչպես վոր Շարլոտտա Կորդեն:

— Ձեմ հասկանում,— չտատանվեց սպան:

— Դուք ատում եք, լրտե՛ս,— հանդիստ կերպով պատասխանեց Կապլունը:

Տեսնելով, վոր ինքը դիմահարդծ և յերեխայական, պրովոկատորը կաղակներին կանչեց կամերա և հրամայեց ծեծել կալանավորներին:

— Ասացեք կուսկոմիտեի ու ապստամբ տեղը, թե չե ծեծելով կսպանեմ ձեզ, գոռում եր սպան կատաղությամբ:

Աղջիկները պատասխանում էին միայն ասելությամբ լի հայացքներով։

Ճերմակասյրդ սպան տանում էր հակահետախուզության պետի հետ բռնած դրացը։

★

Անցնում էին մռայլ, բանտային որերը։ Կոմերիտուհիները վոխադրվեցին ընդհանուր կամերան։ Այդ որերի ընթացքում աղջիկները բանտում շատ բան հիշեցին իրենց կարճառև կյանքից։ Նրանցից ավագը, Գորդոնը, վոր կուսակցության անդամ էր և ընդհատակյա աշխատանքի փորձ ուներ արդեն, քսանյերկու տարեկան էր, իսկ ամենակրտսերը, Գալյաները՝ տասնվեց տարեկան։

Գալյաները բոլորովին հիվանդ չերմով բռնված պառկած էր վատած հատակի վրա և զառանցում էր։ Նա չարժվել չէր կարողանում, նրա ամբողջ թմրած մարմինը անքուն էր ծեծից։

Բայց կիսակենդան աղջիկների նկատմամբ ծաղրանքն ու նրանց տանջանքը դեռ չէր վերջացել։ Մի անգամ դիշերով հարբած սպանների բազմությունը խուժեց կամերան։ Նրանք անարգեցին աղջիկներին ու դնացին՝ թողնելով հատակին տարածված վեց անդամ դիակներ։ Միայն Գորդոնն էր դիտակցությունը վրան։ Ինչպես յերազի մեջ՝ նա լսեց, վոր ծերուկ վերակացուն դուռը փակելիս ասաց.

— Ժամը յերեքին ձեզ բոլորիդ տանելու յին պատանելու։

Ծանր դուռը փակվեց, բանալին ղրնչաց, և ամեն ինչ լռեց։

Ժողովելով վերջին ուժերը՝ Գորդոնը բարձրացավ, ծանծկեց ընկերուհիներին և, անկյունում դտնելով աղյուսի մի կտոր, նրա սուր կողմով պատի վրա դժվարությամբ ճանկռտեց.

«Գիլերը մահվանից առաջ կամերայումն էին կոմերիտուհիներ Գոռելիը, Լոշները, Բրանտմանը, Գալյաները, Կապլունը, Գորդոնը»։

Գիլերը յեկան նրանց տանելու, դուրս բերին բանտի դարպասից և սայլակ նստեցրին։ Սպայի հրամանատարությամբ զորականների մի ջոկատ ուղեկցում էր նրանց։

Ամպի յեր ու խաղաղ։ Կրեմենչուգը քնած էր։ Սայլակը

ապմկելով դղրդում եր մութ, խուլ քարքարոտ վողոցներով։ Դռվում էին կազակների ձիերի սմբակները։ Հետու մի ինչ վոր տեղ շուն եր հաչում։ Գոտկիրը իր պատառոտված հագուստից պաղատարար կատրներ եր պոկում և թափում ճանապարհին, վորպեսզի բարեկամները հետո իմանան, թե ուրենք վորտեղ են գտնվել։

— Դահլճները, ո՞ւր եք տանում։

— Այստեղից չի յերևում, որիորդ,— քմծիծաղ տալով և ապիրատի հետ արձակելով՝ պատասխանեց մոտիկից դնացող կազակը։

— Նախածեղի մշուշի մեջ մի ինչ վոր մեծ, մռայլ բան եր սևին տալիս։ Աղջիկները ճանաչեցին։ Դա լայն Դնեպրի յերկու ափերը միացնող յերկաթուղային կամուրջն եր։ Լապտերը լուսա եր արձակում, աղմուկով հառաչում եր ճանապարհին կանգնած շոգեքարշը։ Սայլակը կանգ առավ կամրջի բարձր յերկաթե կամարների առակ։

— Ո՞ւր կհրամայեք տանել, պարոն պարուչիկ։

—Լապտերների մոտ։ Մեջ տեղը։

Ասվարից դուրս պրծնելով՝ մոտեցավ մի ինչ վոր ծերուկ՝ լապտերը ձեռքին։ Աղոտ լուսյակ սահեցրեց աղջիկների դունատ դեմքերով, սևեռուն նայեց և քրքջաց։

— Ա՛, ընկերներին բերել եք լողացնելու։

Արևելքում շառագունեց արշալույսը, սկսվում եր առավոտը։ Գամին սվսվում եր կամրջի բացվածքներում։ Աղջիկների մարմնով սառցե դող եր անցնում։ Ծերուկ պինվորներ պահել էին Գալալերին— նրա դլուխը կախ եր ընկնում, նա չարունակում եր զառանցել։

— Մնաք բարո՛վ, ընկերներ՛ր,— հանկարծ ուժերը հավաքելով կանչեց Գոտկիրը խավարի մեջ։— Մնաս բարո՛վ, հարազատ կոմսոմոլ...

Մենք Լիզային դուրս հանեցինք դեռահաս կաղակուհու պես: Նրա քսակի մեջ թուրքիկներ դրինք, իսկ վրայից՝ չորացած ամբրամիկներ: Ցերիաթուղով պետք էր գնալ մինչև Սֆիսոկայա կայարանը: Հետո Լիզան պատմում էր մեզ, թե ինչպես էր նա անցել պարտիզաններին մոտ: Գնացքներում խուզարկություններ էին լինում: Սալնատակ-դվորդիական պահակները դասալիքներ էին փնտրում, վաստակաթղթերն էին պահանջում և տուգում, թե ուղևորներն ինչ են տանում: Նայել էին Լիզայի քսակը և վերցրել մի կապոց ամբրամիկներ: Լիզան, տեսնելով, որ դործը վատ է, ուզել էր նրանց հետ կատակներ անել, շեղել նրանց ուշադրությունը: Նա սիրուն էր: Դենիկինյաններն սկսել էին խաղալ նրա հետ: Թեև չէր դուր գալիս, բայց պետք է տանել: Ուղեցել էին էլի ամբրամիկներ վերցնել,— սակայն Լիզան բողոքել էր:

— Ի՞նչ եք անում: Ինձ բան չի մնա:

Պահակը նրան հանդիստ էր թողել, և նա բարեհաջող կերպով հասել էր մինչև Սֆիսոկայա կայարանը: Այստեղ նա նըստել էր մի սայլ և յերեք ռուբլիով հասել մինչև Սմոլենսկայա: Այնտեղ նա թուրքիկները հանձնել էր Տիխոն Բոնդարևին:

— Հայտնեք Նաստյային,— ասել էր նա Լիզային,— թող դեղորայք ճարեն: Շատ հիվանդներ ունենք, իսկ բժշկելու համար վոչինչ չկա:

Թեև դեղորայք ճարելը դժվար էր, բայց մեզ հաջողվեց այդ անել մի ծանոթ բուժակի միջոցով:

Դեղորայքն էլ Լիզան տարավ Բոնդարևին: Բայց թուրքիկներ մենք այլևս չկարողացանք բաց թողնել, վորովհետև հարբեցող գնդապետի փոխարեն մեջտեղ յեկավ տպարանի նոր տերը: Այդ ժամանակ մենք սկսեցինք տառերը տանել ընդհատակյա տպարանի համար, վոր վորոշել էինք կազմակերպել: Հատուկ կտոպա տարբեցինք ճամբուկի նման, վորի մեջ մենք տառեր էինք դողանում նաև ուրիշ տպարաններից:

Մենք տանջվեցինք մեր ընդհատակյա տպարանի պատճառով: Նոր-նոր սկսում էինք բերած տառերը լոկել, տանուտեռ

բերը դուրս էին անում մեղ բնակարանից։ Այսպես չեղավ մի քանի անգամ։ Հարկադրվեցինք մեր տպարանը փոխադրել քաղաքից դուրս, այդիները, վորտեղ հիմա կալինինո դյուղն է։ Ցեխ այնտեղ չկար դնում։ Աբհաստական վոտքս շեր թույլ տալիս այդպիսի հեռավոր ճանապարհորդություններ կատարել։

Որվա ընթացքում աշխատանքից յես այնպես էլ հոդնում, վոր յերբ տուն էլի գալիս, մեռածի նման ընկնում էլի մահճակալին։ Իմ բնակարանն ընկերների այցի վայր եր, ինձ մոտ անցաղրեր էին պահվում։ Գալիս էին ընդհատակյանները, հաճախ ապտյի կամ կազակի հագուստով։ Ինձ էին դիմում ամեն տեսակի տեղեկանքների համար։ Տաննինները թվին սկսվեցին ընդհատակյանների ընդհանուր ձերբակալություններ։ Մի ամբողջ շարք ընկերների ձերբակալեցին։ Ցեխ բոպե առ բոպե ապատում էի, թե ինձ էլ կտանեն։ Ստիպված յեղա անլեգալ վիճակի անցնել։ Ցեխ դաղարեցի տպարան հաճախելուց։ Բնակարանից հեռացա և սկսեցի ծանոթներիս մոտ ապրել։ Այդ ժամանակ ձերբակալեցին շատ շատերին, դրանց թվում և հին բոլշևիկ, կազմարար, կուսակցական կոմիտեի անդամ Ալիմ Անտոնովիչ Լիմանսկուն։ Ընկերների մի փոքր խումբ մնայն մնաց աղատ։ Մեր տպալման մեջ հանցավորն եր պրովակատոր Աբրոսիմովը։ Ցերևալով Ցեկատերինոդարում՝ նա ներկայացավ մեղ, թե իբր ինքը յեկել և Ռոստովից՝ կապեր հաստատելու համար։ Հենց դրանից հետո էլ ձերբակալություններն սկսվեցին։ Բայց մենք մեր աշխատանքը շարունակում էինք առաջվա պես։ Վրոշեցինք Թռուցիկներ տպել մի կոոպերատիվ տպարանում։ Այդ մասին համաձայնության յեկանք մի անկուսակցական բանվոր դրաշարի հետ։

Առաջին Թռուցիկը բաց Թողնելու հենց հաջորդ որը դեներկինյանները յեկան տպարան և բոլոր դրաշարներին ու տպագրիչներին ձերբակալեցին։ Այսպիսի մոմենտ եր։ Դրաշարներից մեկը վազել եր տպարան և տեսել, վոր բոլոր բանվորներին քշել, հավաքել են մի տեղ և նրանց հսկում են տորժնիկները։ Տպարանում շրջում է գնդապետը, նայում է դաղդյահների տակը, դիտում է շարվածքը։ (Այն բանվորը, վոր շարում եր մեր Թռուցիկը, խնդուն հասկացել եր, թե բանն ինչումն է, և ժամանակին Թաղցրել եր շարվածքը)։ Շենքը մոտ ընկերը տեսնե-

լով, վոր գործը վատ է, իրեն պատվիրատու չեր ճանաչել և բարձր ձայնով հարցրել.

— Պատվերս պատրաստ է:

Նրան պատասխանել էին՝ վոչ:

— Դե լավ, չես մի ուրիշ անգամ կանցնեմ:

Այդպես էլ գնացել եր: Բայց նրա տանն արդեն նամած եր տրամաժնիկը, վորը նրան, աշխատանքային, տարել եր:

Թեև Թուրցիկը չդտան, բայց ցեխի վարիչն ու ապագրիչները մի խումբ բանտարկվեցին: Նրանց ազատ արձակեցին կարմիրների գալուց մոտ յերկու շաբաթ առաջ միայն: Մեր ընկերներին բանտում շարունակ տանջել էին: Հարցաքննությունների ժամանակ անողորմ կերպով ծեծել էին: Ընկերներից շատերի տատամները ջարդված էին: Կալանավորված բանվորների մեծ մասն անկուսակցական եր: Այդ ժամանակ Բեկատերինոդարի ամենատաղտկալի սպիտակ տերրորն էր տարում: Դենիկինյանները կալանավորներին սովորաբար գնդակահարում էին Ջմահվան—կղզի— ավազոտ ցամաքալեզվակի վրա, վոր մտնում է Կուբան գետի մեջ: Համարյա ամեն առավոտ, վաղ արշալույսին, կարելի յեր լսել, թե ինչպես և գետի վրա ճրթճրթում գնդացիրը: Սպանվածների դիակները թափում էին գետը:

Մեր աշխատանքը չեր դադարում:

Կուսակցական կոմիտեն առանձնացրեց առանձին ակտիվ բոլշևիկների, և բանվորների հետ կապ ունենալու համար կըցեց նրանց գործարաններին: Մեր հիմնական կանոնն եր՝ ամեն կերպ վնասել թշնամուն: Ահա մի որինակ: Մետաղամշակման գործարանում սպիտակ-գվարդիականները փորձեցին վոսմփուշտներ պատրաստել: Առաջ, գերմանական պատերազմի ժամանակ, այստեղ արկեր էին պատրաստում: Բանվորները՝ բոլոր մինչև ներով աշխատում էին խանգարել այդ արտադրությունը: Զուրվանջք պատրաստելու ժամանակ ձուլողները ծածուկ կերպով այնտեղ ինչ վոր մի վոչի էին ավելացնում, վորի հետևանքով բաղադրությունը դյուրաբեկ եր առացվում, արտադրության համար— անպետք: Վարչությունը խիստ հսկողություն սահմանեց ձուլման ամբողջ պրոցեսի վրա: Այն ժամանակ բանվորները սկսեցին ասել, թե վոսմփուշտներ ձուլելու համար արուզը

և հարկավոր: Սպիտակ-դվարդիականները ինչ վոր մի տեղից տրուդ ճարեցին: Ի՞նչ անել: Հո չի՛ կարելի վտամփուշտներ արտադրել սպիտակների համար:

Մեր տղաները մի նոր մանյովր հնարեցին: Բանվորներն աշխատում են ամբողջ որը, բայց ընդմիջում մի քանի վտամփուշտ են չինում: Այդ ժամանակ խոսակցություններ ափսիեցին այդ մասին, թե մեր դավդյահները չափազանց պրիմիտիվ են, անհրաժեշտ է արտադահմանից դուրս դրել: Ահա այս ձևով մենք խանգարեցինք վտամփուշտների ճուլումը: Այս բոլորն արվեց բանվորների նախաձեռնությամբ:

Ընդհանրապես սպիտակներին քիչ հոգս չեյին պատճառում բանվորները: Դենիկինյանները՝ գրավելով Ցեկատերինոդարը, դարձարաններում իջեցրին բոլշևիկների որով կատարված քանոտոկոսային հավելումը: Բանվորները, ի նշան բողոքի, խոտչական դարձադուլ հայտարարեցին: Դալիս եյին աշխատանքի. ցեխերումն եյին քարշ դալիս, բայց վատտորեն վոչինչ չեյին անում:

Սպիտակները, տեսնելով, վոր իջեցումից բան չի ստացվում, այդ հավելումը թողեցին:

Պրոֆմիությունները ջանջամլել եյին: Սպիտակ-դվարդիականները ներս եյին խուժում չինքերը, տեղաններն ու աթոռները ջարդում, գրքերը պատառոտում, վոչնչացնում ամբողջ դարձավարությունը: Դա բեկում առաջացրեց նույնիսկ մենշևիկներեն տրամադրված բանվորների մեջ:

Տրամվայի աշխատավորները, յերբ փորձ արվեց նրանց զրկել բոլշևիկների կողմից ահմանված մի շարք արտոնություններից, կանգնեցրին տրամվայի շարժումը քաղաքում:

Գեներալ Շկուրոն իր մոտ կանչեց տրամվայի կառավարչին: Սա խորհուրդ տվեց, վոր ինքը՝ գեներալը խոսի բանվորների հետ: Շկուրոն իր մոտ կանչեց մի խումբ բանվորների և մտրակը ձեռքին ւվնեց նրանց վրա գոռալ.

— Ենթելով սպանել կտամ բոլորիդ:

Սպառնում եր, հայհոյում, վոտները դետնին խփում: Սակայն տրամվայի բանվորներն անձնատուր չեղան և իրենցն արին:

Ցերբ, վերջապես, սպիտակներն սկսեցին նահանջել, Ցե-

հատերինոդարի մոտ իսկական մարտեր տեղի չունեցան: Սպիտակները կրակում էին միայն իրենց նահանջը քողարկելու համար: Դենիկինի նահանջի լուրը տարածվեց մինչև Նովորոսիյսկ: Մինչ այդ մենք արդեն պատրաստել էինք կազակներին ուղղած կոչերը: Մենք այն վակցրինք քաղաքում: Կոչերում ասվում էր, որ բոլշևիկները վրեժ չեն առնում: Բոլոր նրանց, ովքեր կամավոր կերպով կներկայանան, ներում կշնորհվի, ով կըցանկանա՝ տուն կարձակվի: Մի՛ք գնա սպիտակ-գվարդիականների հետ, մի՛ք կրակի, զենքերը հանձնեցեք»:

Ցերը կարմիր բանակը Ցեկատերինոդարն ազատագրեց զենիկինյան բանդաներից, յես կուսակցական աշխատանքի անցա:

Մ. Շ ե ց կ ո

ՍՊԻՏԱԿՆԵՐԻ ՉՆԳԱՆՈՒՄ

Գրի առավ՝ Վ. Սախնո

Ի նչ, մի թուլլ կնող, ձերբակալելու յեկան վեց դինված մարդ: Այդ Սևաստոպոլի նահանգի Ուրոժայնո,ե գյուղումն եր, տասնինը թվին: Մենք հենց նոր էինք վերադարձել բանջարանոցից; վեց կին էինք՝ մայրս, յերեք հարսները, քույրս և յես: Հենց նոր էինք բակը մտել: Սպիտակներն ինձ հրամայեցին հեռանալ իրենց; փոքր աղջիկս վազ եր տալիս մեր յեռանից ու լաց եր լինում, խնդրում եր իրեն վերցնեմ, բայց սպիտակները հրացաններն ուղղեցին մերոնց ու սկսեցին գոռալ՝ «Հեռացի՛ք, կկրակենք»: Աղջիկս պատասխանեց՝ «Թեկուզ սպանեք, յես մայրիկիս հետ կգամ»:

Ցերը ինձ բերին շտաբ, այնտեղ չորս սպա կային նստած: Նրանց ուսադիրները ամբողջովին փայլփլում էին: Ուղեկցող զինվորները նրանց զեկուցեցին ինձ բերելու մասին: Հարցրին՝ ինչպես և իմ ազգանունը: Ինձ տարան ու բանտ գցեցին: Ինձ մոտ բերեցին Սոկոլովա Տատյանային և Գուլաևային: Մենք մի ամիս նստեցինք:

Սպիտակները կռվում պարտություն կրեցին։ Ցեխ ահա, առավոտյան մեզ սկսեցին ծեծել։ Ինձ պատկեցրին յերեսն ի վայր, մեկը նստից դվխես, մյուսը՝ վոտներիս։ Զենիները հրաժարվեցին ծեծել, հայտարարելով, թե իրենք դյուղացու արյուն չեն ծծի։ Նրանց ծեծեցին ու վռնդեցին։ Ցերեկ սպիտակ կապակ սկսեցին ծեծել ինձ յերեկ մարակով։ Զախ կողմը նստել էին սպաներն ու զնդապետը— ընդամենը ութ մարդ։ Ցերը ծեծում էին, յես հեծեծում էի։ Նրանք ծիծաղում էին։ Սկսեցի խնդրել՝ «Սպաներեք ինձ, բայց մի տանջեք»։ Բայց նրանք բարբարաճայն ծաղրական քրքջում էին և ասում. «Մենք քեզ կխրատանք, թե ինչ է նշանակում կոմխարշա լինել։ Պատվիրիր կոմխարշաներին, որ բոլորի հետ էլ նույնը կլինի, ինչ որ քեզ հետ, սիրելիս»։

Ցերը ծեծը վերջացրին, յես վեր կենալ չեմի կարող։ Կապակը մարակով յերկու անգամ խփեց դեմքիս՝ պլխախառն։ Ամեն ինչ արնաշաղախ եր յեղել։ Կաշիս ու միս-ծվեն-ծվեն կախվել եր։ Ինձ դցեցին բանտը, ուղղակի հողե հատակին փըռած մուշտակի վրա։ Իմ վերքերից արյուն եր հոսում և յես, առանց վերքերս կապելու պատված մնացի չորս որ։ Վրայիս հագուստան ամբողջովին արյուն եր ծծել, սառակ կեղմում էր։ Ջուր չէին կարողանում, շրթունքներս ցամաքել էին ու չորացել։ Ձեռքով մոտ կանչեցի պահակին։ Նա զաղտնաբար ջուր տվեց ինձ. կես դուլլաչափ սառը ջուր խմեցի։ Իմ ազգականը դարձյալ եր սպիտակների կողմից և պահակ եր կանգնած։ Մայրս մի կերպ գնում է նրա մոտ և հայտնում, թե՝ մորքուրդ ծեծված ընկած է բանտում և մեռնում է։ Ազգականս խնդրում է զնդապետին, որ թույլ տա ծեծված, մեռնող մորքրոջը տուն տանեն ու թաղեն։ Գնդապետը թույլ է տալիս։ Մայրս մի սայլակ է ճարում և ինձ համարյա թե մեռած, դնում են սայլակի վրա։ Սայլակի յետևից յերկու պահակ է գալիս՝ հրացաններով։ Տանը հավաքվում են մեր բոլոր ազգականները, ծանոթներն ու հարևանները։ Շատ ժողովուրդ է յեկած լինում ինձ թաղելու՝ բակն ու խրճիթը լիքն է լինում։ Բայց յես չմեռա։

Ուրիշը որ ուշադրության մեջ էլի: Արևաշաղախ հագուստս հանեցին կաշվի ու մսի հետ միասին,— չես այդ ժամանակ սաստիկ թուլությունս ու ցավ զգացի և քեզ խնդրեցի: Սոսկալի ցավեր էին զգում: Պառկել չէին կարողանում և ինձ քևերիս տակից, կրծքիցս ու վոտքերիցս կապած կախեցին: Այդպես էլ սրբիչներից կախված մնացի: Դեղատներից դեղեր չէլին տալիս:

Ինձ բժշկում էլին սեփական մկնոցներով: Կտավատե ձեր գտան, ծածուկ կերպով կարտոֆիլի ալյուր ու ծծմբի փոշի բերին: Դրանով սկսեցին բժշկել ինձ, մինչև վերքերս փակվեցին:

Մեկ ամբողջ ամիս յերեսունիվայր կախված մնացի սրբիչներից: Կամաց-կամաց սկսեցի առողջանալ, սեննյակում մարդ տալ: Պահակը յեկավ ու հայտնեց, վոր մեզ աքսորելու յեն Կրասնովոդսկ, կասպից ծովից այն կողմը: Վորոշեցի փախչել: Առավոտյան ժամը յոթին, վոտաբոբիկ, կիսամերկ, դլխիս մի չթի թաշկինակ, թաղնվեցի, մի կտոր հաց վերցնելով հետս: Նույնիսկ հարազատներս ու յերեխաներս չգիտեին վորտեղ եմ պահվում: Ցերեկ հեռանում էլի, մայրս բակից հորթերն եր քշում արոտ, իսկ պահակը շարունակում եր կանգնած մնալ իր պահակակետում: Հենց յալ կազակները ձիերը սրընթաց քշելով, մեր բակը յեկան... Սկսեցին պահակին հարցնել, ո՞ւր է Շեյխոյի կինը: Պահակն, արդարանալով ասելի առաջ, պատասխանում է, վոր յերբ ինքը յեկավ, նա տանը չեր, շուկա յեր գնացել և սպասում է նրա վերադառնալուն:

Կազակները պահակի հետ յերկար սպասում են և տեսնելով, վոր յես չեմ գալիս, յերկրորդ պահակն են թողնում, իսկ յերեկը սկսում են ինձ վորոնելու շուկայում: Շուկայում նրանք հանդիպում են մի կնոջ, վորը նման է լինում ինձ և քիչ է մնում ճիու տակ տրորեն նրան:

Ցերեկ ժամ վորոնում են ինձ շուկայում: Բայց հարևաններդը պատասխանում են՝ «Մենք չենք տեսել, վոր շուկա դա, իսկի քեզ հիմա վորտեղ է, չենք իմանում»: Մեկն ասում է, վոր կոմա յե գնացել: Նրանք սկսում են այնտեղ, մահու չափ վախեցնելով յերեխաներին ու հարևաններին: Մերոնց մոտ յերեք պահակ են դնում՝ մեկը դարպասի մոտ, մյուսը՝ տան յե-

տևի կողմը։ Ցերեկորդ որը մորս տանում են շատ հարցաքննության։ Մայրս ասում է՝ դնաց չուկա, իսկ ինչ գործ նրան ինչ ևք արել, չեմ իմանում։ Մորս պատանի են պահում իմ վրեժխնդրին։ Նա խնդրում է բաց թողնեն տուն գնա, բայց բաց չեն թողնում։

Մի պահակ են ուղարկում տայլով, վոր յերեխաներին տանի։ Ցնա յերեք յերեխա ունեյի։ Բոլորն էլ աղջիկ՝ մեկը տասը տարեկան եր, մյուսը վեց, իսկ ամենափոքրը՝ յերեք տարեկան։ Նադյան, տասը տարեկանը, կողպեքով փակում է տան դուռը, բռնում և փոքր քույրերի ձեռքից ու տանում է նրանց տալի միջով, վորով ջուր եր հոսում։ Ցերեկ հարևանուհի դուրս են գալիս յերեխաների առաջը, մի-մի յեփած ձու յեն տալիս նրանց ու սկսում են հայհոյել պահակին՝ «Դու հարատատ մարդ ես, ինչպե՞ս չես ամաչում, այս յերեխաները վոչ հայր ունեն, վոչ մայր, նրանք առանց այն էլ քաղցի յեն մատնված, իսկ դուք բոլորովին ուզում եք սպանել անմեղ յերեխաներին»։ Պահակը շարունակ հրաժարվում է աղջկանց՝ «Գնանք մեզ հետ, այնտեղ լավ է, շատ կանֆետ կաց»։ Բայց աղջիկս պատասխանում է՝ «Ցես վոչ մի տեղ չեմ գնա, մինչև տատիկը չգա»։ Ցերեխաները գնում են դյուղից դուրս, այդտեղը։ Մտնում են մի հավարտան և այնտեղ քնում։ Քնում են ամբողջ գիշերը։ Գիշերը տատին բաց են թողնում։ Նա տուն է գալիս, տեսնում է դուռը փակ է, յերեխաները չկան։ Բոլոր հարևաններն ու տատն ընկնում են յերեխաներին վրտռնելու, բայց չեն գտնում։ Ամուսնուս քույրն, առավոտյան այդի գալով, հավանոցից յերեխայի հազ է լսում։ Վախենում է, կանչում է հարևանուհուն և յերկուսով մտնում են հավանոցին։ Մեծ քույրը գրկած վոքրերի պարանոցները, նստած են լինում գետնին, հավանոցի դռանը։ Բոլորը ցրտից կապտած, անդգայացած են լինում։ Ցուրտ գիշեր եր, սաստիկ քամի յեր փչում։ Ցերբ յերեխաներին սկսում են կանչել խրճիթ, նրանք այնպես սարսափած են լինում, վոր իրենց հարազատներից անգամ վախենում են և արտասվելով ասում են, վոր դուրս չենք գա, թե չե իրենց կբռնեն— կսպանեն։

Հայտնում են տատին,— նա գալիս և և տուն է տանում։ Տատը, իմ մայրս, թոռներին գտնելուց հետո, սկսում է

վորոնել նաև ինձ, վոր անհայտ կորել էի։ Ցերկու շաբաթ հետո, դիշերը յես տուն յեկա։ Բակի յերկու կողմից պահակներ էին կանգնել ու հսկում էին։ Բայց յես ներս մտա յերրորդ կողմից՝ մի քանցքի բաց դռնից։ Դրանից հետո յես մի ամբողջ տարի թաղնված մնացի և հարազատներս դիտեին իմ տեղը, ուտելիք էին բերում։ Ստիպված էի լինում դիշերել տուների մեջ, խոտերում և հողապատնեշի տակ։ Ցերբ առաջին անգամ վախենում էի, յես Թուա մարդահատակ վոսկ վրայով, վորտեղ կարտոֆիլ էր պահվում և ընկա հին, լցված ջրհորը։ Ջրհորում սողացի հողաթմբի տակը, պատկեցի ու ծածկվեցի փշերով, վորպեսզի չերևամ։ Նստել եմ ջրհորում թաղարդեն ընկած նապաստակի նման։ Ցերկրորդ որը մայրս մարդից դարման էր վերցնում և լաց լինում։ Հարազատ մորս լացի ձայնն առնելով՝ յես հաղացի։ Մայրս քնում ուշադրությամբ լինձ դուրս հանեցին ջրհորից։ Ցես այդպես էլ աքսոր չգնացի, թաղնվեցի, մինչև Սատրախանից կարմիր բանակը յեկավ։ Սպիտակներին չհաջողվեց լինձ վոչնչացնել։

Մինչև հիմա էլ կենդանի յեմ։ Ցես կոլտնտեսուհի յեմ։ Դաստիարակել եմ իմ այն յերեք աղջիկներին և թոռներին էլ ամուսնացրել եմ։ Աղջիկներս արդեն ամեն մեկը մի քանի յերեխա ունի։ Մեծ աղջիկս, վորը հավանոցում թաղնվելով ազատվեց, ներկայումս նույնպես կոմունիստուհի յե։

Տ. ՍՈԿՈԼՈՎԱ

ԵՏԱՊՈՎ.

Գրի առավ Վ. Սախնո

Ես, Տատյանա Ռոմանովնա Սոկոլովա (հայրական ազգանունով՝ Տարաբռնովա) ծնվել եմ Լևոկումսկի շրջանի Ուրուժայնոյե գյուղում։ Հայրս գյուղացի յե, չքավոր։ Տասներեք թվին ամուսնացա Սոկոլով Իոսիֆ Լեոնտևիչի հետ։ Ամուսինս չքավոր գյուղացու ընտանիքից է։ Տասնութ թվին իմ ամուսնուն Ուրուժայնոյե գյուղի ընդհանուր ժողովը դելեգատ ուղարկեց Տորհուրդների զավառական համագումարին Սուրբ խաչ քաղաքը։ Այնտեղ ամուսնուս զինվորական կոմիսար են ընտրում։

Իմ ձեռքին մնացին յերկք յերեխաներս, վորոնցից ամենամեծը հինգ տարեկան եր։

Սպիտակները սկսեցին հարձակվել։ Ուժեղ կռիվներ յեղան։ Անընդհատ ճըթճըթում էին գնդացիրները։ Կարմիրները նահանջում էին դեպի Վելիչայեվկա։ Ամուսինների հետ նահանջում էին կանայք և յերեխաները՝ վոմանք սայլերով, վոմանք վոտքով։ Հազիվ էին կարողանում մի կտոր հաց վերցնել հետները։ Վաղ էին տալիս սայլերի հողքից, յերեխաներին տանում էին շալակած։ Այդ զատկին եր, առաջին որը։ Մենք գնում էինք այդիներով, իսկ դյուղում արդեն կռիվ եր։

Սպիտակների առաջին հարձակումը յետ մղվեց և բոլոր գաղթականները վերադարձան լրիվ տները։ Անցան ամառն ու աշունը։

Մեկ անգամ, ձմռան մի ղիշեր, մեր ամբողջ ընտանիքը հավաքված եր տանը։ Մենք բոլորս քնած էինք։ Հանկարծ վազ տալով յեկավ մեր հարևանը և ասաց, վոր հիմա գալու յեն մեզ Թալանելու։ Այդ Թալանիչները, տասը հոգի՝ արդեն յեղել էին նրա տանը, Թալանել էին և բռնաբարել քրոջը՝ տասնյոթ տարեկան մի աղջիկ և յեղբոր կնոջը։ Տասնհինգ րոպե անց մեզ մոտ յեկան յերեք հոգի, հարբած։ Սկսեցին ծեծել լուսամուտները ու դռները։ Ամուսինս հենց անկողնուց, սպիտակեղենով դուրս թռավ լուսամուտից և գյուղի միջով փախավ այդիները, բրաունինգից կրակելով։ Նրանք ընկան նրա յետևից և նույնպես կրակում էին նրա վրա։ Յերբ ամուսինս Թաքնվեց, նրանք յերեքն էլ վերադարձան ինձ մոտ, կոտրեցին դուռը և անխնայ Թափվեցին։ Նազանը բերանիս դեմ արած՝ ուզում էին խմանալ վորտեղ է ամուսինս, ով է նա։ Կանգնեցրին ուղղակի անխայտում— պատի մոտ, իսկ յերեխաները՝ յերեք փոքրիկները՝ աղաղակում էին վախարանի վրայից։ Ինձ անարգեցին... Հեռացան, տանելով տնային իրեր։

Առավոտյան փոխադրվեցի ծնողներիս մոտ, իմ խրճիթը բախտի կամքին Թողնելով։ Այդ բանդիտները առավոտյան վազվզում էին բոլոր տները, հարցուփորձ անելով, վորտեղ եմ գնո, բայց հարևաններս ու ծնողներս ինձ Թաքցրին։

Ամուսինս Թաքնվում եր հարևան գյուղերում, ապրում եր յեղեգնուտում։ Նա գիշերները յեղեգնուտից գաղտնաբար տուն

եր գալիս ուտելիք վերցնելու։ Մեր բնակարանը խիստ հսկողության տակ եր։ Բայց ամուսնուս մի կերպ հաջողվում եր տուն գալ, ուտելիք վերցնել և անփորձ հեռանալ յեղեգնուտը։ Հենց նա գնում եր, հայտնվում էին ավխատակներն ու աշխատում խմանալ, վորտեղ և թաղնվում նա։ Ուտելիքի գալիս էին յերկուսով, ընկեր Շեյկոյի հետ միասին։ Ամուսինս չորս կողմը նայելով տուն եր մտնում գաղտագողի, իսկ ընկեր Շեյկոն պահակ եր մնում առվի մեջ, վորպեսզի վտանգի դեպքում նշան տար։

★

Տասնիններ թվի գարնանը մի անգամ յեղբայրս հանդիպեց ինձ և ասաց, վոր յես թաղնվեմ եր մոտ։ Բայց յես յեղբորս չլսեցի և տուն գնացի։ Տանն ինձ ձերբակալեցին և բանտ տարան։ Բանտը յերկաթյա վանդակներով լուսամուտներ ուներ, դրսից վրա մեծ կողպեք կար, յուրա մի չենք եր, տախտակյա թախտերով։ Պահակ եր քայլում ու պահպանում։ Ցեխ մենակ չեյի, այլտեղ եյին Շեյկոյի կինը՝ Մատրենան և սպանված Համիսար Գուլաևի կինը։

Գուլաևան ութ ամսվա հղի յեր։ Մեզ վակեցին մի սենյակում։ Ցերկրորդ որը բերին քսան տղամարդ և վակեցին մյուս, հարևան սենյակում։

Սկզբում մտրակներով ծեծեցին տղամարդկանց։ Տալիս եյին հարյուր, յոթանասուն հինգ և հիսուն մտրակի հարվածք։ Ցերկրորդ որը— կիրակի որ, մարդիկ դուրս եյին գալիս յեկեղեցուց, իսկ ինձ ու Շեյկոյի կնոջը ծեծում եյին մտրակներով ու հարցնում, թե վո՛րտեղ են մեր ամուսինները։ Որվա ընթացքում ծեծեցին յերեք անգամ, ամեն անգամ մտրակի հիսուն հարվածք։ Գուլաևան վախից ու տանջանքից ժամանակից առաջ ծնեց յերկվորյակ՝ յերկուսն էլ մեռած։ Ծեծվելուց հետո մենք ընկած եյինք բանտում, չոր տախտակների վրա։ Ծեծից մարմինս ապտակ ցավում եր, մինչև ծնկներս պատառ-պատառ յեզած վոտներս արյունաքամ եյին լինում։

Ժայրահեղ ծաղրանքի եյին յենթարկում, ջուրն ինչ ե, ջուր էլ չեյին տալիս մեր չորացած շրթունքները թրջելու համար։

Հետո մեր մայրերն սկսեցին աշխատել մեզ պատեպատ. սպասներին կարագ էին տանում, կաթ, հավ, ապուր: Սպասները վրդովեցին, վոր մենք, մխիթարելու և, մեռնելու չենք և մի քանի որից մեզ բաց թողին: Մեզ տարան մեր հարազատները: Տանը չես մեկ ամբողջ ամիս անշարժ պառկած մնացի: Վերքերս թարախակալեցին, բժիշկներ չկային, բժշկում էին պատահական մրջոցներով: Լիքը դուլլերով դնդին կավ էին բերում և փայտյա կամիկական թասով վերցնում դուլլից ու լցնում վերքերիս վրա: Սաստիկ տաքությունից կավը չորանում եր, մայրս պոկում եր ու վերքերիս վրա թարմ տաը ջուր եր լցնում, մեջը կավ լուծած: Այդ բժշկությունից հետո չես մի փոքր թեթևություն զգացի: Փոքր ինչ կազդուրվելով սկսեցի վեր կենալ և հենակներով մոն գալ: Շուտով ինձ ձերբակալեցին և յերեք յերեխաներիս հետ ուղարկեցին Սուրբ խաչ: Մեզ տանում էին զինված կազակներէ ուղեկցությամբ: Ճանապարհին մեզ տանում էին դյուղերի բանտերը, ուր պահակները փոխվում էին: Պահակները հենց յալ էին, ձիերով:

Ճերմորդ որը մենք դժվարությամբ հասանք Սուրբ խաչ: Այնտեղ մենք պահակներէ հսկողությամբ մնացինք յերկու շաբաթ:

Վորոշեցին ինձ յերեխաներիս հետ կարմիր խաչից աքսորել Կրասնովոդսկ, Գորա-Գեորգիևսկի վրայով: Ուրբաթյանց ինձ հետ յոթ ընտանիք ել կային: Մեր հարազատները սայլերով դալիս էին մեր յետևից, բայց ցույց չէին տալիս, թե ուղեկցում են մեզ: Սուրբ խաչում նրանք կանգ էին առել քաղաքի ծայրամասում ծանոթների մոտ և նրանց միջոցով մեզ ուտելիք էին ուղարկում: Տաներկու-տասներեք տարեկան մի աղջիկ՝ Վերա Սախնոն միշտ պահակ եր կանդնած և կատարում եր հանձնարարությունները: Բերում եր մեր հարազատների ուղարկած կապոցները: Ճերմեր ընտանիքի Սուրբ խաչից հետ ուղարկեցին, իսկ մեզ, չորս ընտանիքի, տարան: Ջնեցին կայարան, նստեցրին ապրանքատար վագոնները և պահակների հսկողությամբ աքսոր ուղարկեցին: Ճուրբաքանչյուր կայարանում

մեր վագոնն արձակում էլին դնացքից և շարունակ հետ ու առաջ էլին քշում. ցնցումներն այնքան սոսկալի էլին, որ վագոնում կանդնել չեր լինում— ամեն բան ցած եր թափվում ցնցումներից: Վագոնը ճռնչում եր, մարդիկ հառաչում էլին, յերեխաները լաց էլին լինում: Ութերորդ որը մեզ, վերջապես, հասցրին Պորտ-Պետրովսկ: Բայց այդ ութ որը մեզ հարյուր-մյակներ թվացին: Տնքում էլին ծեծված տեղերի վերքերը, վիրավորանքի արցունքներ էլին կուտակվում կոկորդում, խեղդում: Պորտ-Պետրովսկում պահակների հսկողությամբ տարան քաղաք: Պետք եր բարձրանալ բլուրը: Բերին մեզ մի յերկհարկանի տուն և չորս ընտանիքն էլ միասին լցրին մի սենյակ: Պատրաստվում էլին կրասնովոդսկ ուղարկել: Մյուս որը սպայական հաղուստով մի մարդ յեկավ մեզ մոտ և պահանջեց մեր բոլոր վաստաթղթերը, նայեց ու այրեց, իսկ մեզ ասաց. «Ձեզ-նից ուշ չէ, փախեք այստեղից»: Մենք հարցրինք նրան, ինչպես կարող ենք դուրս գալ, քանի որ պահակների հսկողության տակ ենք գտնվում: «Ձեռ ձեղ կսովորեցնեմ ինչպես դուրս գաք այստեղից: Հավաքեցեք ձեր իրերը և դնացեք. վոչ թե կայարան, այլ ծովափ»: Այդ ժամանակ Դերբենդի շուրջը կռիվներ էլին տեղի ունենում: Ոմանք մեզ նախազգուշացրեց. «Ձեթե հարցնելու լինեն ովքեր եք, ասացեք, թե դաղթականներ եք Դերբենդից»: Կրասնովոդսկից սպիտակները շատ վիրավորներ էլին բերում: Ձերբ նավահանգստում նավերից վիրավորներին ափ էլին իջեցնում, մենք արդեն յերեխաներով և իրերով նստած կապից ծովի ափին էլինք գտնվում, բայց յերկինքն տակ: Մութն ալեկոծվում եր, քամի յեր սուլում: Սպայական հաղուստով նույն մարդը մոտեցավ մեզ և ասաց. «Ինչպե՞ս հետացաք: Ձեր բախտից է, որ Կրասնովոդսկում այժմ կռիվ է, այլապես դուք ուղարկվելու էիք այնտեղ: Իսկ հիմա դուք ձեր իրերը բռնած տվեք վոչ թե մինչև այն կայարանը, որտեղ պիտի իջնեք, այլ կես ճանապարհին»:

Մենք լսեցինք սպայական հաղուստով այդ մարդուն: Ասվոտյան արդեն մենք, որպես դաղթականներ, վագոն նստեցինք և Դերբենդից յեկած իսկական դաղթականների հետ միասին ուղևորվեցինք Մոզդոկ: Դեռ Մոզդոկին չհասած, իմացանք, որ վորոնում են բոլոր վագոններում: Մեզ էլին վորոնում,

նկարագրելով մեր նշանները, բայց այնպես էլ չգտան։ Մոզդուկին մոռնալով, իրար գնացքը դանդաղ էր գնում, մենք ընթացքի ժամանակ ցած թռանք վագոնից և սկսեցինք վերցնել յերեխաներին, որոնց տալիս էին վագոնից։ Հետո վոտքով գնացինք կայարան։ Այդ էլ մեզ նույն սպան էր սովորեցրել։ Մենք տեղավորվեցինք պլատֆորմում, կայարանի վերջին մասում։ Վագոններից սկսեցին բոլորին դուրս չպրտել։ Խավար դիշեր էր։ Մեզ որոնում էին, լապտերով լուսավորելով յուրաքանչյուր ճամփորդի և պտուտելով բոլորի փաստաթղթերը։ Մոտեցան նաև մեզ, բայց մենք ցույց տվեցինք, թե քնած ենք։ Ներանցից մեկը պահանջում էր արթնացնել և ստուգել փաստաթղթերը, բայց մեկն ասաց, որ այս մարդիկ մինչև գնացքի դալը քնած էին այստեղ։ Յերբ դենիկինցիները հեռացան, մենք սկսեցինք անցնել կայարանի յետևը։ Կանդ առանք կայարանի ծայրին յետևը։ Յերկու կին գնացին ծանոթներ գտնելու։ Մինչև լուսը բացվելը մենք արդեն նրանց տանն էինք, քաղաքում։ Այդտեղ մնացինք յերկու որ։

Յերրորդ որը չունայում յերկու սայլակ վարձեցինք։ Տեղավորվեցինք ու ճանապարհ ընկանք։ Ճանապարհն՝ ինչքան աչքդ կտրում է, լայն ու արձակ տափաստան էր։ Ճանապարհ ընկանք վաղ առավոտյան և դիշերվա ժամը տասներկուսին հասանք Ստեպնոյի դյուղը։ Սայլապանները մեզ իրենց տունը տարան։ Առավոտյան մի կնոջ ուղարկեցինք Ուրուժայնոյե՝ հայտնելու, որ մենք աքսորից փախել ենք։ Ստեպնոյում մենք տեղավորվեցինք մի մեծ հյուղակում, առանց տանիքի, առանց լուսամուտի և դռների, ներսը անպետք խոտ էր կանաչել։ Մենք այդ խոտերը քաղեցինք, անկողնի տեղ փռեցինք և յերեխաներին քնացրինք։ Գետ չորս որ սովի մատնվեցի։ Իվան վորդուս (այժմ կոմյերիտական է) ուղարկում էի վաղորմություն հավաքելու։ Հարկադրված էի լինում ինքս էլ վաղորմություն խնդրել։ Վորդիս ու յես հաց և ձմերուկ էինք բերում և այդ հավաքածով ապրում էինք չորս հոգի՝ յերեք յերեխաներս և յես։

★

Ուրուժայնոյում իմացան մեր փախուստի մասին։ Մեր հարազատները յերկու սայլակով յեկան մեր յետևից։ Զիերն ա-

բազ էլին քշել, վորպեսզի չուտով փրկեն փախչողներին և հետքերը թաղցնեն։

Սահմանից մենք անցանք խուլ տափաստանով, թաթարական աուլներով։ Սայլերը քշում էինք վոչ թե ճանապարհով, այլ ուղիղ, բարձր խոտերի մեջով։ Մեզ ընդունեց յեղեգնուտը, այնտեղ էլ մենք բնակվեցինք աքսորից վերադառնալուց հետո։ Այդտեղ վրաններ խփեցինք, կալմիկական կիբիտկաներ դրեցինք և յերեխաներով անդավոթվեցինք կիբիտկաներում։ Մեր չորս կողմը կարմիր պարտիզան-կամիշականները պահակ էին կանգնել։ Մենք կղզու վրա էինք դանվում— չորս կողմը յեղեգնուտ եր, Աձդրկասպյան հարթավայրի մերձակա լճերի ջուրը, կումա դուրը։ Այդտեղ էլ ապրում էինք աքսորից վերադարձողներով և մեզ հետ էլի վաթսուն ընտանիք, վորոնք նույնպես սպիտակ գահինեներից թաղնվել էին յեղեգնուտում։

Մենք պարտիզանների սպիտակեղենն էինք լվանում, հաց էինք թխում, խնամում էինք վիրավորներին։ Մեր կողքին չորս կողմից պաշարել էին սպիտակները։ Գնդացիրները ճըթճըթում էին, թնդանոթների գնդակներ էին պայթում՝ հողը չորս կողմը ցրելով։ Կամիշականները կռվի ժամանակ դրավեցին սպիտակ դվարդիականների դումակը բժշկական պարագաներով և յերկու բուժակից։ Մենք շատ պաշար, հրացան, փամփուշտ և գնդացիր ունեցինք։ Շատ ծանր կռիվներ էին։ Շատ կարմիրներ ու սպիտակներ սպանվեցին։ Բուժակներն իրենք մնացին վիրավորներին ոգնություն ցույց տալու։ Վերջին կռիվը վճռական եր։ Գերի վերցրին տասը կազակ և վեճիչայեվսկու ուրյադնիկին։ Ուրյադնիկը համաձայնվեց մնալ մեզ հետ, իսկ կազակներին մութ գիշերին կղզուց նավակներով լճափ հանեցին և ազատ թողին, ուր ուզում էին գնան։ Մեզ հետ մնացած ուրյանդնիկին սկզբում խոհարարի ոգնական եր, հետո նրան գիշեր ժամանակ պահակ նշանակեցին։ Գիշերը, նա, նավակը վերցնելով, փախչում և Վելիչայեվսկ, սպիտակներին մոտ և մատնում նրանց կարմիրների դասավորությունը կղզում։ Նրա փախուստից հետո յերկրորդ որվա առավոտից սպիտակները սկսեցին թնդանոթ թնդանոթի յետևից կրակել, գնդացիրը խաչաձև կրակ եր թափում։ Սպիտակ դվարդիական սպան ուզում եր վոչնչացնել կարմիր կամիշականներին։ Բայց դրա

վոխարեն ինքը կարմիրների ճեռքը գերի ընկավ։ Մենք նրան պատեցինք և կախեցինք նույն այն դիտանոցից, վորտեղից նա հետևում էր կռվին։

★

Ցերեկ որ կռիվ էր գնում։ Կամիշականների հեծելազորը շրջապատյալ էր։ Պարտիզանական հետևազորը խրամատներում էր։ Հենց այդ պահին էլ մեզ խփեցին։ Հրամանատարն ուղեց խրամատից նայել, տեսնել վոր կողմից են պատյում թնդանոթները։ Արկի բեկորը կպավ ուղիղ նրա կրծքին։ Սկըսվեց ճեռնամարտը։ Սպանվածներն ու վիրավորները թափվում էին լիճը, սառը ջրի մեջ։ Մայրերը յերեխաներով և վիրավորներից ներանք, ովքեր կարող էին քայլել, դնացին սառցի վրայով, բայց սառույցը չդիմացավ, կոտրվեց,— մարդիկ լող էին տալիս ջրում, կանայք շալակել էին փոքր յերեխաներին։ Պարտված պարտիզանական ջոկատը մի քանի խմբի բաժանվեց և նահանջեց դանազան կողմեր՝ վոմանք Վելիշայեվկա, իսկ վոմանք էլ Ուրոժայնոյե։ Նույն այդ կղզում կռվի ժամանակ յերեխաների մեջ մնաց իմ փոքր քույրը կոմիսար Մոսիենկոյի յերեխաների հետ։ Իսկ յերեխաներից մեկը՝ տասը տարեկան տըղան ինձ հետ յեկավ։ Քույրս յերեխաներին թողնում է յեղեգնուտի մեջ և գալիս է պարտիզանական շտաբը՝ հացի։ Բայց շտաբում արդեն սպիտակներն էին և նրան գերի յեն վերցնում, իսկ յերկու աղջիկները՝ ութը և վեց տարեկան՝ մնում են կըղզում, բախտի կամքին։

Մի վիրավոր պարտիզան հասկելիս է լինում յերեխաներին։ Մենակ նա յե տեսնում յերեխաների տանջալից մահը սովից ու ցրտից։

Մեծ աղջիկը պոկում էր մատղաշ յեղեգի մաղմղուկները, ինքն ուտում և տալիս էր փոքրիկ քրոջը։ Այդ յերեխաներն այնպես էլ մեռան յեղեգնուտում՝ քաղցից ու ցրտից։ Մենք էլ յերեխաների հետ անցանք դեպը, մինչև կոկորդներս ջրի մեջ։ Մեզ վրա գնդացրային կրակ էր թափվում, յերգում ու ճչում էին գնդակները, ցուրտ քամի յեր փչում։

Մենք մոտենում էինք սպիտակ գվարդիական շղթային։

Մերոնցից վոմանց բռնեցին, բայց յես յերեխաների հետ չափազով անցա աննկատելի։ Ուրժայնոյում ինձ դիմավորեց մայրս և վերցրեց իմ յերեխային։ Իսկ յես գյուղի հեռուն կողմով, ցանկապատերով, մարագներում և դոմերում թաղնվելով, հասա քրոջս տուն և յերկու դիշեր թաղնված մնացի այնտեղ։

★

Հայրս իր սայլով մոբիլիզացիայի յեր յենթարկվել և գնացել էր Լևոկումա։ Հենց նույն դիշերը նա տուն վերադարձավ։ Ցեղներին նույնիսկ հանգիստ չտվեցին։ Տոպրակների մեջ ցորեն ու հարդ լցրին (ջրաղաց գնալու անցաթուղթը մայրս արդեն պատրաստել էր), ինձ նստացրին ֆուրգոնի մեջ, վերևից տոպրակներով ծածկեցին և ճանապարհ ընկան՝ իբրև թե ջրաղաց։ Ինձ տարան ազգականներիս մոտ, Պրավոկումսկ գյուղը (Սոլոնցի)։ Ցերեխաները մնացին ծնողներիս մոտ։ Պրավոկումսկումի մի շաբաթ չափ թաղնվում էի, բայց հետո բռնվեցի։ Մեկը մատնել էր այդ գյուղի ուրյադնիկին. ինձ մոտ յեկան ու տարան, ասելով՝ ՀՀՀը, սա կամիշևկան է»։ Ուրյադնիկից խնդրեցի թույլ տա դուրս գնալ, նա մի պահակ ավեց և յես դուրս գնացի։ Պահակին խնդրեցի կանդնի ու սպասի, հավատացնելով, վոր խելույն կվերադառնամ։ Վերարկուս հանելով տվեցի պահակին՝ պահի։ Բայց արտաքնոց գնալու փոխարեն ցանկապատով թռա և առվի միջով, խոտերի արանքով սողացի ջերևիմանատուն։ Մի մեռած մարդու համար այնտեղ վոս էր փորված։ Մտա այդ վոսը և նստած մնացի մինչև դիշերը։ Ցերը մթնեց, վոսից դուրս յեկա ու թաղնվեցի ծանոթներիս մոտ։ Թաղնված մնացի մինչև մերոնց դալը։ Կարմիրները սկսեցին մոտենալ Ստորախանից։ Կարմիր բանակը գրավեց Պրավոկումսկը։ Իմ հարազատները յեկան և ինձ տուն տարան։

Ցերը առաջին անգամ ինձ ձերբակալեցին, բայց դեռ չկրին ծեծել, մի քանի անգամ կանդնեցրին պատի մոտ գնդակահարելու, տանում էին կախաղանի մոտ և շարունակ հարցաքննում, թե ուր է իմ ամուսինը։ Իմ քույրը, վորը կոմիսարի յերեխաների հետ եր և վորը կղզում դերի ընկավ սպիտակների ձեռքը, տոկալի մահով մեռավ։ Նրան պահակներով բերին

Ուրուժայնոյե. դուրս բերին մեծ հրազարակը, կանդնեցրին և այնպես ցույց տվին, իբրև ուզում են դնդակահարել, իվ հետո տարան դպրոց և սկսեցին տանջել: Կարեցին նրա յերկու ծծերը, կտրատեցին մատները, քիթը, ականջները, հանեցին աչքերը, իսկ հետո արդեն դլուխը կտրեցին:

★

Ցերեխաներս, այնուամենայնիվ, կենդանի մնացին: Այն ժամանակ, յերբ ինձ տուլրակների տակ թաղցրած ջրաղաց հանատարհեցին, սալիտակները վրա յեն թռչում մերոնց մոտ: Ցերեխաներս մնացել էին ծնողներիս մոտ: Սալիտակները վորոնում էին ինձ, «կոմիսարի կնոջը»: Մայրս որտեղից չտապով վերցնում և թռուցիկը և, մահճակալի վրա նստած, թաղցնում է իր շրջազգեստների տակ: Մեծ յերեխաներին ծածկում, են բարձերով: Հարկադրված են լինում թաղցնել և տակառի մեջ, և նկուղում: Սալիտակներին պատասխանում են՝ «Զդիտենք վորտեղ է կինը և կոմիսարը, մենք նրանց հետևից չենք ման գալիս»: Որ ու դիշեր այդպիսի չուբկալներ էին լինում: Բոլորն աշխատում էին վոչնչացնել մեզ, բայց վոչինչ դուրս չեկավ:

Տղաներիցս մեկը չդիմացավ բոլոր այդ զարհուրանքներին ու մեռավ: Ներկայումս իմ մյուս վորդին՝ Իվանը կոմյերիտական է, աղջիկս ամուսնացել և ոդաչուի հետ, իսկ ամուսինս Բուդյոնովսկ քաղաքի դործկոմի նախագահի տեղակալն է:

Ս. ԿԱԼԱԲՆՈՎԱ

ԵՆՑԱՆ ԳՆԱՑԸՑԻՑ

Գրի առավ Վ. Սախցո

Յե ազգությամբ հայ եմ, Ծնվել եմ Սուրբ խաչ քաղաքում: Ինքս չքավոր եմ: Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո ամուսինս աշխատում եր Արտակարգ հանձնաժողովում: Հակահեղափոխական սաբոտաժության ժա-

մանակ ամուսինս չոկատի հետ նահանջեց: Ձեռ յերեխաներիս՝ վնց և ուզեի տարեկան յերկու աղջիկներիս հետ մնացի:

Գիշերը մենք գնացինք ամուսնուս ծնողների մոտ և այնտեղ ապրում էլինք մի վոջրիկ շտեմարանում: Ամառն էր դա, լավ յեղանակ էր: Մյուս որը յես և ամուսնուս մայրը յերեխաներով գնացինք տեսնելու մեր բնակարանը: Դեռ բնակարանին չհասած՝ տեսանք, վոր դլխավոր փողոցով հեծյալներ են դնում սրերը մերկացրած: Մոտենալով մեզ, հարցրին, վորտեղ են ապրում կալաբեկովն ու Պրիման: Մենք պատասխանեցինք, թե չդիտենք և վերադարձանք:

Քաղաքում դնդակահարություններ սկսվեցին: Սպանեցին ընկեր Գրիդորցին: Քանհինդ հոդի մեր բնակարանն են դնում, նիզակներով կոտրում են դուռը և խուզարկում: Վոչինչ չեն դտնում:

Խուզարկությունից հետո պահանջում են ընտանիքին. ուղում էլին մեզ բոլորիս նիզակահար անել: Բայց հարևաններն սկսում են պաշտպանել: Ցես այն ժամանակ— ինչպես և այժմ, դեղատունը դանձապահումն էլի: Սպիտակներն ինձ վորոնում էլին: Ցես յերեխաներիս հետ կծկվել էլի չտեմարանի հեռավոր մութ անկյունում: Մայրս սկսեց ձայն տալ ինձ: Ցերբ դուրս յեկա, յերեք դինված, աչքերն արյունակալած մարդիկ սկսեցին կոպիտ կերպով հարցնել ինձ, վորտեղ է ամուսինս: Պատասխանեցի, վոր չդիտեմ:

Շուտով սպիտակներին դուրս քշեցին, բայց վոչ յերկար ժամանակով: Տասնիններդ թվին նրանք կրկին յեկան: Ամուսինս նորից նահանջեց կարմիրների հետ: Նա քաղաքի պարետն էր: Քաղաքում արդեն դտնվում էր սպիտակ հետախուզությունը: Ցես տասներեք որ թաքնված մնացի: Մեծ աղջիկս թաքնվել էր քրոջս մոտ, իսկ յես փոքր աղջկաս հետ՝ ծանոթներիս մոտ: Մեկ անգամ իմ թաքնված տեղը յեկան ինքը հակահետախուզության պետը, ոգնականը և յերկու դինված մարդ: Ինձ ասացին՝ «Դուք ձերբակալված եք և մի ժամից կգնդակահարվեք»: Ցես պատասխանեցի կոպիտ՝ «Դե, դնդակահարեցեք թեկուզ այս րոպեին»: Սկսեցին հարցաքննել, թե վորտեղ է ամուսինս, վոր կողմն է նահանջել:

Խուզարկություն կատարեցին, բնակարանում ամեն ինչ

տակն ու վրա արին և ոչինչ չդտնելով, հրամայեցին ինձ հրաժեշտ տամ յերևելիներիս։ Ինձ տարան մահապարտների տունը։ Տարան ու փակեցին մի փոքրիկ խցում։ Մի ժամ անցած՝ մի կարմիր բանակայինի ներս հրեցին ինձ մոտ, խուցը փակեցին և դուռն մոտ պահակ դրեցին։ Հողն հատակն ամբողջովին արյունով եր ծածկված։ Այդ բնակարանը դանվում եր հակահեղափոխության շտաբին կից։ Մեզ մոտ յեկան քառհինգ հոգի և սկսեցին դորդոռալ՝ «Դուք ե՞ք հոմխարչան»։ Ցես ասացի, վոր ոչ, յես չեմ։

Սկսեցին հարցաքննել կարմիր բանակայինին։

Նա տենդում եր։ «Ինչո՞ւ յես դողում, ցո՞ւրտ ե։ Մենք ֆուկուչն քեզ կտաքացնենք»։ Ցեվ պետի ոգնականը հրամայեց հաղակին՝ «Հնձա, Թրերը բեր»։ Ցես խնդրեցի Թուլլ տան ինձ մյուս սենյակն անցնել։ Կարմիր բանակայինին մերկացրին, թևվերից կախեցին և սկսեցին Թրերով կտրտտել։ Նա սեղմել եր ատամները և տնքում եր. նրան կտոր-կտոր արին։ Հետո ինձ ել հրամայեցին մերկանալ։ Ցես խնդրեցի՝ «Միանդամից դնդակահարեք»։ Մահից առաջ ինձ հարկադրեցին ասել ինչը վորտեղ և դտնվում։ Ցես հադուստներս եմ հանում և պատմում եմ՝ մնծ յերեխայիս Թողել եմ քրոջս մոտ, իսկ փոքրը, ինքներդ տեսաք վորտեղ մնաց։ Շինելը կախած և դուռն յետևը։ Սպիտակեղենը անդուկի մեջն և, իսկ մնացած բաները՝ սենյակում։ Հանկարծ վաղելով յեկան մի քանի սպա, ծեծում են դուռը՝ «Կալաբալովան այստե՞ղ ե»։ Նրանց պատասխանեցին՝ «Նա արդեն մահվան և դատապարտված»։

Սենյակում յեղած սպաները դահիճներին հրամայեցին հեռանալ, ինձ մերկ փակեցին, իսկ իրենք դնացին, պահակ Թողնելով։ Մեկուկես ժամ տևեց նրանց խորհրդակցությունը։ Ցես սպասում եյի իմ վիճակին մի տակ անթև չսպիկով, մի վոտքիս կոշիկ։ Ցուրտ չեյի զդում— տաքություն եր յեկել վրաս, այրվում եյի։ Ցեկավ ոգնականը և ասում է՝ «Մենք պատասխինք ձեր կյանքը»։ Ձեռքով խիեցով ուսիս՝ հրամայեց հագնվել։ Հադուստը դցեցի վրաս, մի կրկնակոշիկս հագա, իսկ ձախ վոտքիս կոշիկը բռնել եյի ձեռքիս։ Նա ինձ փողոց դուրս բերեց։ Ցես համարյա ուշագնաց դրության մեջ եյի։ Մոտացել եյի ուր և վոր կողմը դնամ, չեմ հիշում՝ վորտեղ եմ դտնվում։

Մեր փողոցից մի ծանոթ վազեց ինձ մոտ և պրծացած հարցրեց՝ «Սասուա Մակարուկա դու կենդանի՞ ես։ Ինչ համար ամբողջ փողոցը վոտքի յելավ»։ Ես պնում եյի, հարևանս՝ յուանչցա։ Գնացի այն բնակարանը, վորտեղից ինձ տարել եյին։ Բոլորը լաց յեղան, աղջիկս տեսնելով ինձ՝ սկսեց արտասվելով դրկել ու համբուրել ինձ։ Ես անկողին մտա և յերկու ժամի չափ պառկած մնացի ուշազնաց։

Ցերեկոյան մի կազակ յեկավ մեզ մոտ և ասաց, վոր պետը պահանջում է ինձ։ Պարզվեց, վոր հակահետախուզները դանվում եյին իմ ամուսնուս հոր մոտ և բոլորն էլ հարբած եյին։ Ինձ տարան պետի մոտ։ Նա նազանը իմ կրծքին դեմ արեց և պահանջեց հարյուր մանեթ փող տամ իրեն։ Աղջկանից փող վերցնելով բերի ու տվեցի նրան։ Փողը նա շաղ ածեց սենյակում և հրամայեց ինձ հանվել։ Նա չերկեսկայով եր, մինչահասակ, բեխավոր, չեկ։ Ես հանվեցի։ Այն ժամանակ նա հրամայեց հանել իր կոշիկները։ Հարսս հայերեն ասաց ինձ, վոր ոչնականը հրամայել է պետին պառկեցնել անկողնում և ծածկել վերմակով։ Ես հանվածք եյի։ Հակառակվել բանի եյությունը, յես մի բան դղեցի վրաս և, վոտաբոբիկ, ձեռքի մեջս, դուրս թռա տնից։ Վազեցի մինչև հարևան տունը, իսկ նրանց դռան վրա կողպեք եր կախված։ Մյուսներն էլ ներս չթողեցին, ասացին, վոր կազակներ կան իրենց մոտ։ Ես վազում եյի բարձր ցանկապատի յերկարությամբ, իսկ յետևից սկսեցին կրակել։ Դժվարությամբ բարձրանալով ցանկապատով, ոտաբոբիկ վազեցի մյուս փողոցը։ Համարյա ուշաթափ վիճակում հասա մի ինչ վոր չքավոր ընտանիքի տուն։ Ներսից խրճիթն ամբողջովին լիքն եր տիֆով հիվանդներով։ Իմ ձեռքերն ու վոտները վախացել եյին։ Տանտերն ինձ ձեռով չփեշով՝ պահեցրին հիվանդների մեջ։ Լուսամուտները փակեցին։ Ցերը յես փախա, պետն սկսեց կրակել, աղմուկ բարձրացնել, աղջականներիս հետ կռվել։ Կրակոցների վրա վազ են տալիս, սկսում են վորոնել ինձ, բայց դատն միայն մյուս որը ցերեկը։ Սպիտակները թալանեցին մեր ամբողջ բնակարանը, սենյակում ամբողջ ժամանակ կազակներ եյին ապրում։ Մեկ ամբողջ տարի սենյակում գնդացիր եր դրված։ Գեներալը շտաբում ինձնից ատրաղրություն վերցրեց և հսկողության տակ եյի

զանվում։ Ամեն գիշեր ժամը յերկուսին մեր տանը խուզարկություն էին կատարում։

★

Սոլա Բոլոդայեվը շատ ուշադիր մարդ էր, վոր նա նահանջելիս կվոշնչացնի իմ ամբողջ ընտանիքը։ Ցերը քսան թվին հայտնի դարձավ, վոր կալաբևկովը կարմիրների հետ հարձակվում է Սուրբ խաչի վրա, յես յերեխաներիս հետ յերկու շաբաթ առիվոված էի ապրել նկուղում։ Նկուղը ցուրտ էր, մնծ, և մայրս ինձ այդտեղ կերակուր էր ուղարկում։ Կարմիրներն արդեն դրավել էին բոլոր տեղերը։ Կարմիրները քաղաք մտան առավոտյան, իսկ յերեկոյան դնացին Գոկոյնայա և այնտեղ լուռան վրա դիրք բռնեցին՝ խրամատներ փորելով։ Ցերեկ որ քաղաքում իշխանություն չկար։ Սպիտակ գրահազնացքը ամբակոծում էր մեզ կայարանից։

Գումիները դնում էին փոփոխակի հաջողությամբ։ Հարկավոր էր ժամանակավորապես նահանջել։ Ցերեխաներիս թողնել՝ մի աղջկա մոտ, իսկ մյուսին՝ քրոջս մոտ։ Հրաժեշտ տալով նրանց՝ մենք նահանջեցինք Գրոմկի։ Ցերկու շաբաթից մերոնք դրավեցին Սուրբ խաչը և մենք արդեն ընդմիշտ վերադարձանք տուն։

Ֆ. ՄԱԿՈՒՇԵՆԿՈՎԱ

ՑԵՂԵԳՆՈՒՏՈՒՄ

Գրի առավ Վ. Սախցո

Կադետները մեզ մոտ յեկան վաղ առավոտյան, ամուսինս, վորը կարմիր գվարդիական էր, թաղնվել էր յեղեգնուտում։

Ցնս յերեխաներիս հետ՝ յերկու աղա— մենք տասներեք տարեկան, իսկ մյուսն ընդամենը հնս տարեկան՝ նույնպես թաղնվել էի։ Աթարի գետի մեջը քանդել և այդ անցքումն ել ապրում էի։ Ջորս կողմից աթար էր դարսված։ Ջուրը իմ յե-

բնախաներին միշտ պահակ եր դնում։ Ցերեկ խաղաղ եր լինում, բայց եր անում անցքը յես դուրս եյի գալիս, կերակրում եյի յերեխային ու կրկին մտնում իմ բունը։

Այսպես եյ եր պատահում։ Հենց դուրս եմ գալիս յերեխային կերակրելու, վողջոյն արդեն աղմուկ-աղաղակով կաղնիներ են ալանում գազանների նման։ Նետում եյի յերեխային ու թաղնվում առաջին պատահած տեղը՝ յեղեղների մեջ, խրձերում, նկուղում։ Ամբողջ ամիս յես այդ ձևով թաղնվում եյի։ Սպիտակները վորոնում եյին ինձ գիշեր ու ցերեկ։ Այլևս դյուղում թաղնվել հնարավոր չեր։ Ցերեխաներին Թողեցի քրոջս մոտ ու գնացի յեղեղնուտը։ Դուրս յեկա ուշ գիշերին։ Տեսնում կարեւորական պահակախումբ է կանդնած։ Գլուխս փաթաթեցի մեծ շալով, կռացա, պառավ ձևացա։ Իսկ յես բարձրահասակ, լիքը, գեղեցիկ կին եյի։ Պահակները հարցնում են ինձ՝ «Ո՞ւր ես գնում, տատի»։ Ասում եմ՝ «Ցերեխան ձին տարել է ջրելու, բայց մինչև հիմա չկա, գնում եմ վորոնելու»։— «Իսկ անցաթուղթ ունե՞ս»։ Ձիու տանձ կար ձեռքիս։ Ցույց եմ տալիս՝ «Ի՞նչ անցաթուղթ։ Գնում եմ յերեխային և ձին վորոնելու»։ Այդիներով վազեցի մինչև գումա գետը, ձիու վոտնաձայն լսեցի։ Թաղնվեցի առվակում։ Սպիտակները եյին գալիս, չորս հոգի, հրացանները պատրաստ բռնած։ Նրանք անցան իմ կողքով։ Դուրս յեկա թավուտից և կածանով գնացի կղզու կողմը, մեն-մենակ։ Մոտեցա լճին։ Ձայն եմ տալիս՝ «Ցեպլինդան»։ (Ամուսնուս մականունը)։ Պատասխան չկա։ Կանչում եմ նորից։ Լսում եմ, ամուսինս ձայն է տալիս՝ «Ի՞մ ես դուս»։— «Ցես Իսմիխան եմ։ Իսկ դո՞ւս»։— «Ցեպլինդան»։— «Ցերեկ այդպես է, ասա նավակն այստեղ բեր»։ Ամուսինս նավակով մոտ յեկավ։ Նա տեսնելով տանձն իմ ձեռքում, հարցնում է՝ «Ինչո՞ւ յես մենակ յեկել, առանց յերեխաների»։ Պատմեցի ինչպես եմ փախել ու նստեցի նավակը։ Գնացինք կղզին։ Լճակի այն կողմը պարտիզանական պահակ եր կանգնած՝ յերիկ հոգի հրացաններով։ Հարցնում են ամուսնուս՝ «Ո՞ւմ ես բերում»։— «Կնոջը»։ Պահակները հարցնում են ինձ՝ «Ինչո՞ւ յես յեկել»։ Պատասխանում եմ՝ «Գազանների եմ փախել։ Կանանցից մի քանիսին արդեն աքսոր են ուղարկել»։ Նավակը Թողեցինք պահակներում և գնացինք կամիշականների շտաբը։ Կանայք քրջապա-

ասեցին ինձ, բոլորը հարցնում էին՝ վինչպես է այնտեղ, տա-
նը»։

★

Ճես հիվանդացա տիֆով, յերեք շաբաթ պառկեցի։ Սկսեցի առողջանալ։ Այդ ժամանակ կաշխաներն սկսեցին յեղեգնուտի վրա հարձակվել։ Մեղանում, կղզու վրա սկսեցին թնդանոթի ղնդակներ պայթել։ Լիճը բարակ սառույցով էր ծածկված։ Կանայք մեզ մոտ յեկան լճի միջով, աշխատելով հասնել մեր չատրին։ Մինչև կոկորդները թրջվել էին, դողում էին։ Գետնախորերում կրակ վառեցինք ու սկսեցինք նրանց տաքացնել ու հագուստները չորացնել։ Հաղիվ էինք չորս կնոջ հագուստները չորացրել, տեսանենք յոթը հոգի ել յեկան ծծի յերեխաներով։ Մեզ հայտնեցին, վոր պարտիզանական չատրը վոչնչացված է։ Դրանից հետո մեկ որ ել ապրեցինք կղզում։ Հետո մենք, յերեսուն կին, հեռանում ունենալով քառասուն հինգ յերեխա, վորոշեցինք գիշերը գնալ գյուղ։ Մեր տղամարդիկ մեզ բաց չէին թողնում։ Մենք ամբողջ հագուստը դարսեցինք հինգ սայլի վրա և մտանք լիճն ու առաջ գնացինք։ Ջուրը հասնում էր մինչև մեր կուրծքը։ Մեր տղամարդիկ ասրասափում են՝ «Ո՞ւր ես գնում», մխիթարեն և, մեկ անգամ ենք մեռնելու։ Մենք նրանց չենք լսում։ Գայլում ենք ջրի միջով շարանով, ծոծրակ-ծոծրակի։ Յերեխաների լաց, ճիչ, աղաղակներ։ Ջուրը սառցի պես կարում է։ Մենք յերեխաներին վախեցնում ենք՝ «Լռեցեք, մեզ չեն կաղնտները կխփենք»։ Այդպես ջրի միջով գնացինք չորս վերստ, դուրս յեկանք նորից մի չոր կղզի։ Ճես ջրի միջով գնում էի հիվանդ-հիվանդ և հետո էլի ընկնում, ուժասպառ եյի յեղել։ Ինքրեցի թողնեն ինձ, բայց թևերիս տակից բռնած տարան ու հասցրին խրճիթը։ Կանայք արդեն խարույկներ էին վառել, խրճիթում տաքանում էին ու հագուստները չորացնում։ Ինձ տաքացրին։ Ճես շատ ամուր քնեցի։ Արթնացա, յերբ համարյա բոլորը գնացել էին, մնացել էին միայն յոթը հոգի, վեց յերեխա և մի տղամարդ։ Մենք գնացինք շավիղով։ Ճեղեզ, անտառ, ճիշտ, մազախոտ։ Մոտեցանք խորխորատին, անցանք գերաններով, տուն ենք գնում. կրկին մոտեցանք

յերկրորդ խոբխոբատին։ Այնտեղ կադեատական պահակախումբը նր կանգնած։ Պահակները ձայն տվեցին՝ «Կանգնեցեք, կամիշականները, կկրակենք»։ Մենք՝ «Կրակեցեք, մեզ, մխենուշն է, մահ և սպառում»։— «Դե, անցեք այս կողմը, չոր տեղ»։ Մենք ղևրաններրի վրայով անցանք։ Պահակները կանանց խուղարկեցին և տարան դյուղ։ Տարան մեղ ճանապարհով։ Մեղ, Բրջված, հասցրին դյուղի տակն ու հրամայեցին գնալ դյուղի վերջում յեղած խրճիթները և դյուղ չմտնել։ Մենք դենացինք, ով վորտեղ կարող եր։ Ցես Թադնվեցի առվի մեջ։ Մինչև գիշերը նստած մնացի ղողալով, Բրջված հազուստներով։

Գիշերը գնացի տուն, հարազատ մորս մոտ։ Անկողին ընկա։ Հարևանները ոպխտականերին հայտնեցին, վոր կամիշական է յեկել։ Մյուս որը վաղ առավոտյան յերկու հեծյալ ոպխտակ գևվարդխական յեկան մեր տուն։ Նրանց մեզ մոտ եր ուղարկել հարազատ քեռիս։

Մտան խրճիթը։ Տանը յերկու քույրս եյինք և պառավ, յոթանասուն տարեկան մայրս։ «Իսկ ո՞ւր է ձեր կամիշականը»։ Մայրս ցույց տվեց՝ «Ահա պառկած է հիվանդ»։ Կաղակը հրացանն ուղղեց ինձ՝ «Աատ, վո՞րտեղ է ամուսինդ, Թե չե՝ կկրակեմ»։ Ցես՝ «Կրակիր, ինձ համար մխենուշն է։ Կգա ժամանակը՝ ձեզ վրա կկրակեն»։ Կադետը զայրանում է, լռում։ Նա հատա չրթունքներով է, մեծ քթով, սև, լայնևրես։ «Մենք քեզ յերեխաներիդ հետ կտանենք դյուղից դուրս և կղնդակահարենք»։ Իսկ հետո՝ «Փողերդ տուր»։ Պառավ մայրս կանգնել ու լաց և լինում, արցունքներն և մաքրում։ Տղաս կանգնել ու լաց և լինում՝ «Ո՛յ, մայրիկ, մայրիկ, ինչ ենք անելու մենք, յերբ մեզ տանեն գնդակահարելու»։ Ցես հանգստացնում եմ նրան՝ «Սուս արա, տղաս, Թող կրակեն։ Նրանք էլ չեն խուսափի այդ պատժից»։ Կադետը բարկացած հարձակվում է վրաս, տանս Թալկոտում է՝ «Ատում եմ քեզ, փողերդ տո՛ւր»։— «Ցես փող չունեմ»։— «Դե՛, հագուստներդ տուր»։— «Հագուստներս արզեն տարել են»։ Կադետը բարկանում է... «Սուտ ես ասում։ Մեզ մի կին ասել է, վոր քո հագուստները գրոշդ մոտն են»։ Գաւյրս մոտիկ եր ապրում, կադետները գնացին նրա մոտ։ Վերցրին հագուստները, լցրին տոպրակներն ու նորից յեկան

ինձ մոտ։ Կրկին սկսեցին կռչել ոճիքները։ «Ուզիր դու ասում է– յիր հաղուստներդ տարել են, բայց մենք գտանք»։ Ինձ հրամա– յեցին հագնվել. «Մենք քեզ կտաննենք դնդակահարելու»։— «Ցնծեք ուղում եք, ինձ այստեղ դնդակահարեցեք»։

Իակում աթարի դեղ կար։ Այն հաստատունչը քարուքանդ– արեց բոլոր աթարները, վոչինչ չդտավ։ Մայրս մոտեցավ նրան և ասում է՝ «Աթարը քեզ խանգարում է, ի՞նչ է»։ Նա մռնչում է՝ «Հեռացիր, մխենուշն է, քեզ էլ ենք դնդակահարելու, գյա– ռավ չադուշ»։ Մտավ խրճիթին ու ասում է՝ «Փող տուր, հա– դուստներդ քեզ կտանք»։ «Փող չկա։ Շուտ դնդակահարեք, մի տանջեք»։ Խրճիթ մտավ տղաս։ Հաստատունչը նռգանր դեմ տ– րեց նրան ու բղավում է՝ «Ասա, վո՞րտեղ է փողերը»։ Տղաս՝ «Փող չկա»։— «Ասում ես, մարդկով կծեծեմ»։ Սկսեց կռչել գյառավին։ Ձեռքը տարավ գյառավի ծոցը, հանեց հարյուր հիսուն մանեթ։ Փողն էլ վերցրեց, հաղուստներն էլ։ Ցես խընդ– րում եմ՝ «Գոնե մի հաղուստ և մի թաշկինակ տվեք, թե չե մեռնելիս բան չի լինի, վոր հագցնեն»։ Վոչինչ չտվեցին նը– րանք ինձ։ Հենց այդտեղ էլ սկսեցին բաժանել թալանը։ Գաչ– քըշում են միմյանց սենյակում, մեկն անդրավարտիկի մի փողկը բռնած, մյուսը՝ մյուս փողկը, բայց հաստատունչը բոլորն ին– քը հագավ։

կարծում էի լավ օրերի չեմ հասնի։ Իակ այժմ այդ ա– ձիծյալ անցյալը միայն յերազ է թվում։

Մ. ՄԵԼՆԻՇՈՒ

ԻՆՉ ՑԵՐԶԱՆԿՈՒԹՅՈՒՆ Ե, ՎՈՐ ԱՑԴ ՁԻ ԿՐԿՆՎԻ

Գրի առավ՝ Վ. Սախնո

Տասնութ թվի վերջերին, յերբ կարմիրները նահան– ջեցին, իմ ամուսինն էլ նրանց հետ ավազներով ու ճանճաղուտներով հեռացավ Աստրախան։

Այդ ժամանակ յես մենակ մնացի չորս յերեխաներիս հետ, վորոնցից ամենամեծը տասներկու տարեկան եր։ Ցերեխաների

հետ նստել էինք սենյակում։ Դռները ու լուսամուտները բերված էին ժամը 10-ից փակ էին։

Սպիտակները սկսեցին սեղմել դուռը, կոտրեցին ու ներս թափվեցին։ Հարցնում են ինձ՝ ո՞ւր է ամուսինդ։ Պատասխանեցի, որ չգիտեմ և ընդունել։ Սպիտակները սպառնում էին զինքով, հարկադրում էին կին բոլշևիկներ գտնել նրանց համար։ Բայց չես հրաժարվեցի, հայտարարելով, որ տղամարդներին չեմ ճանաչում։ Այն ժամանակ ինձ տարան ցուրտ սենյակը և սկսեցին անարգել։

Հետո ծեծեցին մարակով։ Հագուրդի առնելուց հետո թողին ինձ կիսամեռ վիճակում. տղայով հագիվ հասա բերեխաներիս մոտ։ Բերեխաները վառարանի վրա հավաքված, լաց էին լինում, մորն էին կանչում։ Բոլոր դռները կրնկի վրա բաց էին։

Գնացի Ուրժայնոյե դյուղը։ Ուրժայնոյում ամբողջ ժամանակ կռիվներ էին։ Սպիտակ դվարդիականները քնդանոցներ բերեցին ու սկսեցին ռմբակոծել կարմիր կամիշականներին։

Ամուսնուս եղբայրը յեղեգնուտումն էր գտնվում։ Իմ մեծ տղան նրան մի շշ ուտելիք և սպիտակեղեն էր տանում։ Սպիտակեղենը հագցնում ենք բերեխային, հագուստի տակից և կապկպում, որ նկատելի չլինի։ Ճեթե բռնում էին վրան մեկին, որը կամիշականներին ուտելիք էր տանում, կախ էին տալիս յեկեղեցու մոտ։

Ճերը կամիշականներին ճնշեցին, բերեխաս յեղեգնուտումն էր գտնվում։ Կամիշականներն սկսում են հեռանալ։ Սաստիկ տանջամանիքներ էին։ Տղաս չի դիմանում դժվարին ճանապարհին, վայր է ընկնում ու սառչում։ Գյուղացիները գտնում են նրան, բերում են գյուղ և ձյունով չփում։ Այժմ նա կոմունիստ է. միքը տղաս էլ կոմունիստ է, աղջիկս՝ կոմերիտուհի։

★

Ամբողջ ժամանակ ստիպված էի անլեզայ ապրել։ Մի անգամ խրճիթ յեկավ մի պինված կազակ, իսկ դարպասի մոտ արդեն սայլ էր կանգնած ու տասը ձիավոր։ Կազակն ասաց ինձ՝ «Հավաքվիր յերեխաների հետ և բանալիները տուր»։ Ճեռ տվի բանալիները, նրանք սկսեցին ամեն ինչ հավաքել ու դարձել սայլի վրա։ Գողն էլ կապեցին սայլից։ Ինձ յերեխաներիս

հետ, պահակները հսկողությամբ, բանտ գնացին։ Ութ տարեկան աղատ ախտած հարևանների մոտ։ Փոքրիկ աղջիկս, վորին դիրքը չէր առել, սեղմվեց կրծքիս։ Մյուս աղջիկս վռազից կուշիկը դուրս չհկավ ու խրվեց ցեխի մեջ, նա աստմ է՝ «Մայրիկ, կուշիկս կորցրի»։ Բայց պահակները դռռացին՝ «Ձխռռել»։ Հրացանի կոթով խփելով իմ մեջքին և հրելով աղջիկս, շտապեցրին առաջ գնալ։ Աղջիկս, արտասվելով, քայլում էր ցեխի միջով, մի վոտքը բոբիկ, սայթաքում էր, ընկնում։ Խավար և ցուրտ դիշեր էր։

Ճանրին մի ցուրտ խրճիթ, գնդապետ Իվանովի մոտ։ Ճերեքդ որ նստած մնացինք այնտեղ։ Հետո, այնուամենայնիվ, բաց թողին։ Ճերբ սպիտակները հարձակվեցին Ուրժայնոյի վրա, մենք կարմիրների հետևից նահանջեցինք Վելիչևսկա։ Մեզ վրա գնդացիր էին կրակում։

Վելիչևսկան լիքն էր դաղթականներով։ Ինձ, վոր հիվանդ էի տիֆով, տարան ինչ վոր մարդկանց մոտ։ Ճես մեռնում էի աղջիկս կրծքիս վազմած։ Մեկը բանկաներ դրեց և ես թեթևություն դդացի։

★

Ճերկրորդ անգամ մենք նահանջեցինք Ռոբրովկա՝ Ուրժայնոյից տասներկու վերստի վրա։ Ճերեք որ մնացինք Ռոբրովկայում։ Հետո մեր հետախուզությունը հայտնեց, վոր սպիտակներին քշել են և մենք վերադարձանք տուն։ Ճերբ կարմիր բանակն Ատրախանից Ուրժայնոյի կհկավ, ես հարևանի հետ ու հացով դիմավորեցի նրանց։ Կանայք և յերեխաները ցնծությամբ ընդառաջ յելան կարմիր բանակին հնծյալներին։ Դա կարմիր հետախուզությունն էր։

Ամուսինս նույնպես մի շաբաթով հյուր կհկավ։ Հետո յես նրան ճանապարհ դրեցի Սուրբ խաչ քաղաքը, ուրբ նա գնում էր իր զորամասը՝ Բաքու։ Մազայսկու անտեսության մոտից անցնելիս նա ինձ ասաց՝ «Թե կենդանի մնամ և վերադառնամ, այստեղ կմնանք հհմնենք»։ Գոան թվի վերջերին ինձ դբրվեցի կոմունայում։ Ամուսինս դեռ այդ ժամանակ ռազմաճակատից չէր վերադարձել։ Նա տուն կհկավ միայն քսաներեք թվին։ Ճես յերեխաներիս հետ արդեն կոմունարուհի էի Մազայսկու անտեսության մեջ։

Դա շատ մեծ կոմունա էր՝ քսան ընտանիք, հինգ հոգու չափ։ Բացառապես ճակատայիններըի ընտանիքներ էին։ Մեր ձերունի հայրերը, մենք, կանայք ու յերեխաները, հաշմանդամները՝ բոլորս ընդհանուր անտեսություն կատուցեցինք։ Այժմ մեր կոմունան զարձել է կոլտնտեսություն։ Այն բոլորը, ինչ յեղել է, այժմ հիշվում է ինչպես վաղուց անցած կոշմար։ Ինչ յերջանկություն է, որ այն չի կարող կրկնվել։

Վ. ՄԱՑՑՈՒՇԻՆԱ

ԿՈՒՇԱԿՈՒՀԻ

Յես ինքս կալուգայի նահանգից եմ, Գերեմիշևսկո գավառից, Կուրինսկոյե գավառակի Ապրաքինովկո գյուղի գեղջկուհի։ Աղքատ յերինջ ապրում։ 1908 թվին գնացի Թիֆլիս բախտ վորոնելու։ Բայց այդպես էլ բախտ չգտա։ Մինչև տասնութ թիվն ապրում էի Թիֆլիսում, իսկ տասնութ թվին յեկա Ստավրոպոլի նահանգի Սուրբ խաչ գավառի Վորոնցովո-Ալեքսանդրովսկ հարուստ գյուղը։ Մենք այն ժամանակ կարմիր գվարդիա ունեյինք։ Վորոնցովո-Ալեքսանդրովսկ գյուղի հարուստները սկսեցին կազմակերպել իրենց սպիտակ ջոկատները։ Կազակները սկսեցին հարձակվել կարմիրների վրա։ Սկսվեցին կռիվները։ Հետո մերոնք կրկին յեկան և բոլոր հակահեղափոխականներին ջնջեցին, հարուստները թաղնվեցին։

Մենք դիմացանք մինչև տասնինը թվի սկիզբը։ Սպիտակները յեկան Ջրարհնեքի որերին։ Այն ժամանակ նահանջող կուրանցիներից ուժը հոգի ինձ մոտ յեկան։

Հարցնում եմ՝ «Ի՞նչպես ես, տղերք»։ Նրանք ասում են՝ «Վատ ես»։ Ծես նրանց ճանապարհ դրեցի, հոտևոտ յեփեցի, պաքսիմատ տվի։ Մեկին միայն կարողացա հիշել, անունը՝ Սերյոժա յեր։

Հետո մեզ մոտ յեկան սպիտակները, վեցի առավոտյան վաղ, Ջրարհնեքի որը։ Սկսեցին; իհարկե, յեկեղեցու առաջ ա-

դրքել աստծուն: Հարուստներն ասում են՝ «Մերոնք յեկան, բոլայկներին քշեցին»: Սպիտակները խոստացան եժան չիքմալ, շաքար, քեյ: Ցես չուկայից դալիս եմ հետևից, ասում եմ. «Վալ, կնանիք, վաճուվ բարձ են գնում, չլինի քե կոչտ քնեք»: Նրանք ինձ մոսկովական էլին անվանում, ասում էլին՝ «Դուք բոլորդ այդպես եք»:

Մնացին նրանք մինչև գաղիք, գաղիից առաջ սկսեցին քալանով դրաղվել: Սկսեցին լավ ձիեր պահանջել. չեք տա՝ կըգնդակահարենք:

Գրիկումակից այն կողմը յեղեղնուտ կար: Մերոնցից յերկու հարյուր պարտիզան գնացին յեղեղնուտը, իսկ տասնութ հոգի մնացին անտառում: Մենք, մի քանի հոգով, մնացինք դյուղում:

Ցես կռիվներին չեյի մասնակցում,— ղևնք բանեցնել չէի՛տեմ: Վորոշեցի ոդնել, ինչով կարող եյի: Նախ և առաջ վորոշեցի դուշակուհի դառնալ: Հենց վոր մարդու հոդին հանդիստ չի լինում, դուշակուհու մոտ է դալիս: Կանայք դալիս էլին ինձ մոտ, չեյին վախենում:

Տեսնեմ՝ Բրիչկան դալիս է ինձ մոտ, արտասվելով: Ասում եմ՝ «Ի՞նչ է պատահել»:— «Դուշակիր ինձ համար»: Ասում եմ նրան՝ «Ցես նշանավոր դուշակուհի յեմ: Գիտեմ, վոր պատերազմ է, նշանակում է, գիտեմ ինչպես դուշակել»: Ասում եմ՝ «Բարիինջի քաղավորին մահ եր սպասում, բայց կխուսափի նըբանից»: «Սիրելիս, կխուսափի՞»: Ասում եմ՝ «Կխուսափի»: Հարցնում եմ, ինչումն է բանը: «Գիտես, մերոնցից տասնութ հոգի ընկել են սպիտակների ձեռքը, և գիշերը նրանց գնդակահարելու յեն»: Ցես ասում եմ՝ «Հարկավոր է ոդնել, ազատել»: Նա՝ «Սիրելիս, բայց ինչպե՞ս: Հիմա անտառում մենք տասնութը պարտիզան ունենք, բայց յես ի՞նչպես գնամ: Այստեղ ինձ բոլորը ճանաչում են, կհարցնեն՝ ո՞ւր ես գնում: Ինձ էլ կբռնեն»: Ասում եմ՝ «Դու ինձ պատմիր, յես կգնամ»:

Հագա կանաչ, հին վերարկուս: Վերցրի տոպրակը, վայտը, իբրև մուրացկանուհի յուն եմ անում: Նա ինձ պատմեց, ինչպես պիտի գնամ, վորտեղ չուռ դամ:

Մոտենում եմ այդ տեղին: Ներանք բոլորն անմիջապես հարձակվում են ինձ վրա, յես բացականչում եմ՝ «Ցուրային եմ, յուրային»: Մոտենում եմ՝ «Ինչպե՞ս եք, տղերք»:— «Այս-

պես ու այսպես»: Ասում եմ՝ «Մեր պարտիզաններն ընկել են ավիտահինների ձեռքը, տասնումը մարդ, նրանց ուզում են գընդակահարել»: Նրանք լինճ ասում են՝ «Իսկ ի՞նչպես անել: Թե վոր մեռնել ե, բոլորս միասին մեռնենք»: Ցես ասում եմ՝ «Իհարկե: Մի կերպ ապասենք մինչև գիշերը, հարձակվենք բանտի վրա, նրանց ազատենք»:— «Իսկ ո՞ւր տանենք նրանց»: Ցես ասում եմ՝ «Իհարկե, ինձ մոտ: Ցես յեկվոր մարդ եմ, ինձ վոչ վոք չի ճանաչում»: Իմ մասին ասում էին, վոր դաղթական եմ, բայց յես ինքս էլի յեկել:

★

Գիշերը ժամը տասներկուսին նրանք ինձ մոտ յեկան: Այդ տարի յես բանջարեղեն չէի ցանել, բարձր խոտ եր կանաչել: Այնտեղ հոր վորեցին. հորի մեջ կարելի յեր լավ թաքնվել: Վազեցինք կարմիր վողոցով, յերկրորդ, յերրորդ վողոցով, հասանք մինչև Կումիկա գետը: Գետի ափով վազեցինք,— վոչինչ չկար:— «Դե,— ասում եմ,— տղերք, օկսենք»: Թռանք, վազեցինք այն տան մոտ, վորտեղ նստած էին մերոնք: Մուրաշկո Ցյոդոր Իվանովիչն առաջինը վրա հասավ: Հերթապահ ապտն պատվել եր սեղանի վրա: Մուրաշկոն խփուշն հարվածեց նրա գլխին: Սպան ցած գլորվեց: Պահակը ննջում եր: Մենք նրան բռնեցինք: Պահակներից վոչ մեկին չսպանեցինք, մխայն հերթապահ սպային:

Ազատեցինք: Գնում ենք խավարի մեջ, ղղուշչ: Մենք նըրանց հացի մեջ տոմո էինք դրել, վոր գիշերն ազատելու յենք, նրանք չպետք և քնեին: Մենակ Ստեպանն եր քնած: Ցերբ նըրանց դուրս բերինք, նա, քունը գլխին, կարծեց գնդակահարելու յեն տանում: Հենց նոր էինք հեռացել, նա նեռվեց վախենալու: Մենք չհասկացանք, վոր փախչողը նա յեր, կարծեցինք պահակներից մեկն ու մեկն եր, վազեց իմաց տալու, վոր մենք նրանց տարանք:

Հաջող փախանք և տղաներին անտառ տարանք: Ցես, իհարկե, նորից մնացի գյուղում: Ցես յերկաք յերեխա ունեյի: Գուշակությամբ զբաղվելը թողեցի:

Դրանից հետո սպիտակներն սկսեցին մաքել խրճիթները, շուրջկալներ անել: Հայտարարեցին՝ «Վորին գտնեն և լինելու, վորին մահ: Տասնումի մարդու փոխարեն յոթհարյուր հոգի կախ

վտանգ»։ Ցնվ խոհտես, յոթ հարյուր չքավոր գյուղացի կամ ավելին, վորոնք վոչ մի բանի խառը չեյին յեղնել։ Ուղղակի բռնում եյին առաջին պատահած չքավորին և տանում եյին կախ տալու կամ դնդակահարելու։ Մենք մի հարևան ունեյինք Կուբրակա ազգանունով։ Նա փոքրիկ խանութ ուներ, իսկ դրանից հետո դնդասիտի աստիճան սոսկալ այդ դնդակահարություններին համար։ Դուրս յեկավ, վոր այդ Կուբրական ավիտակ կամավորական բանակին և մտել և սկսեց բոլորին մատնել։ Նա բոլորին ճանաչում եր։ Առաջ նա ուրյադնիկ եր, իսկ այժմ նրբան դնդասիտ դարձրին։

Մեր աղատած պարտիզաններից միայն յերկու հոգի ընկան ավիտակների ձեռքը՝ Պավլուշկա Լիսովինովը և յերկաստորդ պարտիզան Ստուկալոն։

Ցես մի անդամ հանդիպեցի Կուբրակային, մոտ եյինք ապրում։ Ասում եմ՝ «Իվան Ֆեոդորովիչ, անհարմար չե՞։ Ինչո՞ւ յեք անմեղներին բռնում։ Ինչո՞ւ յեք անպաշտպան գյուղացիներին բռնում, նրանք յերբեք վոչ մի բանի չեն մասնակցել»։

«Մի՛ևնույն է, նրանք մեզ հետ չեն լինի, այլ ուրիշների հետ կլինեն»։— «Իսկ դուք մահից չե՞ք վախենում»։ «Մի՛ևնույն է, ինձ էլ չեն խնայի»։

Դրանից հետո շատ դնդակահարություններ յեղան։ Ջատկի նախորյակին անսասում չուրջկալ արեցին։ Ցերեկ պարտիզան բռնեցին։ Նիղակահար արին նրանց։ Նրանք արյունաքամ յեղան։ Հետո նրանց տանում են։ Կաղակներից մեկը, ազգանունը չեմ հիշում, Թեպետ ծառայում եր ավիտակների մոտ, բայց կարմիր եր։ Կաղակներն հարցնում են, «ով սիտի հակի ձերբակալվածներին։ Իսկ նա ասում է. «Դուք ձիերը ջրեք, իսկ յես կըհակեմ։ Ինչ հակելու բան կա, քանի վոր նրանք հալից ընկած են»։ Ցերեկ կաղակները հեռանում են, նա ասում է դերիներին՝ «Դե, տղերք, սխալեք, թե չե ձեր վերջն է լինելու։ Նրանք սխալում են, իսկ կաղակը կրակում է մեկ վերև, մեկ կողմը, բայց նրանց նշան չի առնում։ Մինչև ավիտակների ձի հեծնելը, պարտիզանները թաղնվում են կղմինդրի գործարանի վառարանի մեջ։ Վառարանը քանդված եր, նրանք ներս են վազում այնտեղ միայն ավիտակներով։ Գտնված մնում են այնտեղ մինչև գիշեր։ Մինչև յերեկո վտռնում են նրանց և չեն

կարողանում դառնել: Պարտիզանները հենց վոր մտնում են այդ վառարանը, անցքը շարում են և նրանք չեն յերևում: Ցես պլենացի այնտեղ, բայց չդիտեյի վոր կողմից մոտենամ: Հետո, տեսնեմ, դալիս է ինձ մոտ Մուրաշկոյի կինը, լաց լինելով ընկնում է վրաս՝ «Տյոտյա Վարյա, յեկել են, բոլորը վիրավոր, վերքերը թարախակալել են»: Իմ վառարանը վառած չեր. լուսամուտները ծածկեցինք տաք վերմակով: Վառարանը վառեցինք խյուսով: Ցեկան մեր ողանները, յես սկսեցի նրանց վերքերը կապել: Նրանց բժշկում եյի կապարաջրով և ցինկի ապեղանիով: Մեր բանջարանոցում, դետի մոտ, փոս եր փորած: Փոսի մեջ ծղնոտ եր փռած: Այդտեղ ել թաղցրի պարտիզաններին:

Ցերեկոյան լոյա նրանց մոտ, փոսը: Վերցրինք կարմիր վերմակ, յես մոմը վառեցի: Մուրաշկոն փոսը ծածկեց, իսկ յես սկսեցի վերքերը կապել:

Ցերկու շաբաթ կերակրեցի նրանց այնտեղ և վերքերը կապեցի:

Այդ ձևով պահում եյի յես նրանց այնտեղ: Նրանք վոչինչ չեն ուտում, լուսյ չկա, ոդ չեն շնչում ամենևին: Մեկ անգամ գնացի Պյատիդոլոկ: Վերադառնում եմ, մատ վաղոնը՝ վոչ վոք չկա: Նստեցի այնտեղ յերեխաներով: Հանկարծ ներս են դալիս վեցը սպա գնդապետի հետ: Սկսեցին ինձ հարցնել՝ «Դու կարմիր բանակայի՞ն եսց»: Իմ կարմիր բանակայիններն ահա դետ որորոցումն ենն,— ցույց եմ տալիս յերեխաներին, իսկ նրանք դետ փոքր եյին, ուղ տարեկան:

Սպաները նստեցին, սկսեցին իրար հետ խոսել: Սպաներից մեկն ասաց՝ «Հարկավոր է Գետրովսկ ել գնալ: Ասում են, այնտեղ մի ինչ վոր պաշտոնաթող գնդապետ կեղծ փաստաթղթեր է պատրաստում, պետք է նրան բռնել»:

Մտածում եմ, ինչպե՞ս գնամ այնտեղ: Վերցնեմ Թեկուղ մենակ Ֆեդկային, մարտական տղա յե: Գետրովսկը մեղնից յոթ հարյուր վերստի վրա յե: Կերակուր որը ամուսինս յեկավ ինձ մոտ: Նա աշխատում եր յերկաթուղում, Մենեալնիկյե վոդի կայարանում, մեզանից ութսուն վերստ հեռու: Ցես հանեցի նրա յերկաթուղային փաստաթուղթը: Այդ փաստաթղթով վո-

բաշխել սանձել Ֆեոդոր Մուրաշկոյին։ Նստեցրի նրան վառ-նում, ծածկեցի վերմակով և դնացի Պետրովկ։

Տախտինք ինչ վոր ունեյինք յես ու նրա կինը։

Դայրաններից մեկում սառչում են փաստաթղթերը։

Նա, իհարկե, պառկած է, յես նրան ծածկել եմ վերմակով, իսկ ինքս ցույց եմ տալիս սմուանում և իմ առաջը։ «Սա,— ասում են,— ո՞վ է»։ Ասում եմ՝ «Սմուանին է, հիվանդ է»։ Մեկը վերմակը բաց արեց։ Յես այն ժամանակ լավ սերտ ու-նեյի, ամենևին չվախեցա։

Վերմակը բաց արեցին. նա մորուքով է, դունատ։ Նայեցին ու կրկին ծածկեցին։

Մի կերպ հասանք Պետրովկ։ Յես սկսեցի հարցնել, վոր-ամե՞ն է ապրում դնդապետը։ Մի ինչ վոր մարդ ցույց տվեց տեղը։ Յես նրան հարցրի՝ «Դուք չդիտե՞ք, այստեղ կա մի ինչ վոր պաշտոնաթող դնդապետ, փաստաթղթեր է կեղծում»,— այդպես էլ հարցրի։ Նա, այն դնդապետը բոլորի համար էլ հիանալի կերպով կեղծ փաստաթղթեր էր պատրաստում։ Ի-հարկե, կմտացուկ եմ հարցնում։ Իհարկե, ամենից շատ հա-դուստն էս նայում. ով չլյապով էր, յես նրան չեյի մոտենում, բայց բանվորին մոտենում եյի։ Մեկն ինձ ասում է՝ «Յես լսել եմ, չուկայումն է ապրում, յերեք չեմ սխալվում, № 20 տունը։ Առաջ ձանիներով բլուրը վոր բարձրանաք, այնտեղ հարցրեք»։

Յես չուռով գտա դնդապետին։ Ֆեդկային թողի կայարա-նում։ Մոտեցում եմ, դուցե չհաջողվի փաստաթուղթը կեղծել, դուցե, դնդապետը թակարդ է սարքել, թող մենակ ինձ բռնեն, իսկ Ֆեոդորն անվտանգ կմնա։

Դնդապետին գտա։ Նա ասում է՝ «Ո՞ւմ համար եք դուք ուզում կեղծ փաստաթղթերը։— Յես ձեզ կասեմ։ Մի տերտե-րի տղա հեղաշրջման ժամանակ կորցրել է փաստաթուղթը, իսկ հիմի փաստաթուղթ ստանալը դժվար է— հեղափոխություն է։ Յեթե կոմավորական բանակը բռնեց նրան, կասեն դու բան-դիտ ես, իսկ կարմիրները կասեն՝ «սպիտակ ես»։— «Իսկ նա ձեր ի՞նչն է»։— «Նա իմ հեռավոր ազգականն է»։ Մեր դյուղի տերտերի ազգանունը տվեցի։ Դնդապետը յոթանասուն մանեթ վերցրեց և իսկական պատպորտ սարքեց. կազակական, հար-կե, կոմավորական։

Ձեզնից մնաց արդեն այնտեղ աշխատելու։ Մենակ վերադարձա։ Սկսեցի մտածել, ինչպես ձերկեմ մյուսներին։ Ներանց էլ մենք մի կերպ այս ու այն կողմ ուղարկեցինք։ Իսկ ամուսինս չդիմեց, վոր չես գողացել եմ նրա փաստաթուղթը։ Ի՞նչ հիմարն էլի, դրա համար ամուսնուս կղնդակահարեին, չեթե իմանային։

Մյուսներին մենք ճանապարհ դրինք յեղեգնուտը. մեղանից քառասուն վերստ վրա էին նրանք։ Դրանից հետո իմ գործը հնչացավ։ Իսկ Կուլբակոն չարունակում և իր արարքները։ Մեղանում ամեն մի ծառից յոթ-ութ մարդ եր կախված։ Դրանից հետո յես գնացի Ոսկաղնոյե գյուղը, ութ վերստի վրա. այնտեղ ծանոթներ ունեյի։ Գնում եմ յես այնտեղ և ասում՝ «Դաշնակա, այսպես ու այսպես և մեղանում»։— «Մեզանում էլ նույնն ե»,— ասում և նա ինձ։ Ես ասում եմ՝ «Ի՞նչ աննենք այդ Կուլբակոյի հետ։ Չենք բանեցնել չդիմեմ, կսպանեյի յես նրան, քանի հայր աղատած կլինեմ յերեխաների համար»։

Ես ահա լսում ենք, վոր կարմիրները մտեննում են մեզ։ Կերոսն արդեն գալիս եր Ղզլարից, Աստրախանից։

Այդ ժամանակվա ընթացքում մեղանում յեղեգնուտում յոթ հարյուր պարտիզան եր հավաքվել։

Այդ ժամանակ մերոնք սկսեցին սպիտակներին քշել։ Ես ընկ որ մերոնք կանգնած էյին Վորոնցովկայում, իսկ սպիտակները Ֆեոդորովկայումն էյին՝ դետն եր մենակ բաժանում։ Կամուրջների վրա դնդացիրներ էյին դրված։ Ես երկ որ կռվեցին։ Հետո նրանց քշեցին և ինչպե՞ս քշեցին։ Ես վորոշեցի ոգնել մերոնց։ Ես ահա մենք Բրիչկին պապի հետ մտածեցինք. ծանծաղ տեղով վոչ մի կերպ անցնել չեր կարելի, վորովհետև այնտեղ դնդացիրներ կային և լեռնային թնդանոթ, իսկ վորտեղ խորն եր, այնտեղ վոչ մի պահակ չկար։ Մենք այդ մասին ասեցինք մեր պարտիզաններին։ Նրանք յերկու ծառ կտրեցին և այդ ծառերի վրայով յերեկոյան ժամը ութին մերոնք անցան և բավական յեղավ միայն մեկ անգամ «ուռռա» գոռալ։

Այսպես ահա ազատեցին նրանք մեզ սպիտակներից։

Ա. ՌՑԱԺԵՆՑԵՎԱ

ՇԿՈՒՐՈՑԻ ՃԱԿԱԿԵՐՈՒՄԸ

Ես ծնվել եմ 1889 թվին, Ռյազանի նահանգի Զերնիշևսկա գյուղում, հայրս գյուղացի էր. ես խաուում էր մի պես ծխափողիկ:

Ծերեխա հասակումս ինձ վոչ վոք չեր դուրգուրում և չեր խղճում: Տատս միշտ ասում եր.

— Գոնե շուտ մեռնեյիր:

Տասներկու տարեկան հասակումս մտա մի վարպետուհու մոտ սովորելու: Շատ եյի ուզում սովորել: Ցեվ վո՛չ մեկին արհամարհում: Տանհինգ տարեկան արդեն վարպետուհի եյի: Տիրուհուցս ծածուկ սովորում եյի կիբակնորյա դպրոցում: Տիրուհիս իմացավ այդ և լավ ծեծ ավեց ինձ, խլեց իմ բոլոր դրքերն ու խստորեն պատվիրեց «Քողնել այդ գործը»:

Ահա իմ ուսումը՝ մի տարի սովորել եյի գյուղում, մի քիչ ել՝ կիբակնորյա դպրոցում: Ճշմարիտ և, ես շատ եյի կարդում, համարյա բոլոր կլասիկների գործերը կարդացի:

Ավելի ուշ ինձ ավեցին դերձակուհու մոտ սովորելու: Մայրըս ինձ հետո առած, արհեստանոցից արհեստանոց եր գնում, բայց ինձ վոչ մի տեղ չեյին ընդունում. շատ կարճահասակ եյի: Հիշում եմ, շրջեցինք ամբողջ Ռուսաստովը,— վոչ վոք չի վերցնում: Ցեվ յերբ մենք արհեստանոցից—արհեստանոց եյինք շրջում, ես լաց եյի լինում,— այնպես դառն եր Թվում ինձ այդ դրությունը: Մտնում ես արհեստանոց, իսկ տիրուհին ասում է.

— Ինձ աշկերտուհի յե հարկավոր, ես յերեխա ունեմ, հարկավոր է յերեխային ել նայել: Հապա, բալ ծրացրու կեղտաջրի դույլը:

Իսկ ես ուժ չունեյի դույլ տանձաշնելու:

Տասնվեց տարեկան հասակում ինձ ամուսնացրին։ Դեռ տասնյոթ տարեկան չկայի, բայց արդեն մայր էի։ Ամուսինս տասնվեցամյա բանվոր էր։ Ցերեկու տարի ապրում էինք թեպետ աղքատ, բայց կարելի չէ ասել, լավ։ Ցես նույնպես աշխատում էի քիչ-շատ վաստակել։ Ցերեխաներ ունեցանք։ Տասներկու յերեխա յեմ ունեցել, բայց մնացել է ընդամենը վեցը. մյուսները մեռան։

Ամուսինս սկսեց հարբել։ Սկսվեց ծեծ ու հայհոյանք,— ծանր դառն կյանք։

Տասնչորս թվին ամուսնուս տարան պատերազմ։

Հեղափոխության հենց առաջին որվանից ակտիվ մասնակցություն եմ ունեցել հեղափոխական շարժմանը։

Հիշում եմ իմ առաջին յելույթը կիսլավոդսկում բաղմամարդ միտինգում։

Տասնյոթ թվի մարտ ամսին էր։ Կանչնել եմ ամբոնի վրա կիսլավոդսկի կուրորտում։

— Իմ հայրն ողի յեր խմում, ամուսինս ի՛լ ավելի յե խըմում։ Իսկ քի՞չ կան ինձ նմաններըը,— նետում եմ յես բազմությանը։— Ողին մեր պատուհասն է։ Իսկ մեղանում ամեն մի անկյունում ցարական մոնոպոլականներն ողի յեն ծախում, ժողովրդին հարբեցնում։ Զուշենամ էլ, խմել կսկսես։

Շարքերում խրախուսական շշուկ է անցնում։

— Մեր յերեխաները մոլախոտերի նման են աճում։ Ամեն մեկը նրանց ճնշում է ու տրորում։ Հարուստներն իրենց յերեխաների համար կանֆետ են բերում, իսկ մենք մեր յերեխաների համար ծեծ ու ապտակ ենք պատրաստում։ Ո՞վ է հոգ տանում մեր յերեխաների մասին։ Վո՛չ վո՛ք։

— Ինչպես նման են մեծանում,— բացականչում է մեկը բազմության միջից։

— Իսկ ճանճերի նման կոտորվում են,— ավելացնում է մյուսը։

— Ցերեխաների մասին պիտի հոգան ծնողները,— ծանրախոհ ասում է մի չլյապավոր մարդ։

— Ծնողնե՞րը,— դառնում եմ նրան։— Իսկ ի՞նչ կարող եմ ասել յես իմ յերեխաներին։

— Հարկավոր է աշխատել,— խիստ պատասխանում է շյալապավոր մարդը։

— Իսկ մի՞թե մենք չենք աշխատում։ Այդ դեպքում, հապա ո՞վ է աշխատում, յերեք մենք չենք աշխատում։

Հնչում է ծափահարություններ, բացականչություններ, ծիծաղ։ Հասարակության հավանություններից խրախուսված, շարունակում եմ.

— Հարուստները մեր հյութն են քամում, իսկ տերտերներն այդ ժամանակ խարում են մեզ։ Նրանք ալ ձեռքով ցույց են տալիս աստծուն, իսկ ձախով աշխատում են մեր դրպանը մրոնել։

Ծերը յես խոսքս վերջացրի և ամբոխից իմա, ամեն կողմից շրջապատեցին ինձ։ Ձեռներս են սեղմում, շնորհակալություն են հայտնում, ինչ վոր բաներ են բացականչում հեռվից։ Թաշկինակները յերին թափահարում։ Դրանք բոլորը կանայք յերին— հայ, ռուս, հրեա, վրացի, բազմազգի քնակչություն ունեցող Կիսլավոդսկի վողջ չքավորությունը։

Մի խոնդներում յես հաճախ եյի յերկույթներ ունենում։ Կիսլավոդսկի աշխատավոր քնակչությունն ինձ լավ եր ճանաչում և սիրում եր։ Ծերը քաղաքային խորհրդի ընտրություններն սկսվեցին, յես ընտրվեցի քաղաքային խորհրդի ձայնավոր։ Այնտեղ հարկ եր լինում պայքարել բուրժուական դամա–պատրոնեսաների դեմ։

Տեղի ունեցավ Հոկտեմբերյան հեղափոխությունը և յես ամբողջովին կլանվեցի հասարակական աշխատանքով։

Կազմակերպվեցի տնային սպասուհիների պրոֆմիություն։ Վորպես այդ միության նախագահ՝ յես կրկին հարկադրված եյի պայքարել բուրժուական դամոշկաների դեմ։

Տանջինները թվի հունվարի սկզբներում Կիսլովոդսկը անհանգիստ որեր եր ապրում՝ չոապով եվակուացիայի պատրաստություն եր տեսնվում։ Սպիտակները հարձակվում եյին քաղաքի վրա։

Յես տիֆով հիվանդացա։ Սաստիկ տաքություն սկսվեց, դառանցանք։ Այդ ժամանակ Կիսլովոդսկն սպիտակ տերրորի

սարսափ եր ապրում։ Անխնա դատաստան էլին տեսնում բանվորների, կոմունիստների, կարմիր դվարդիականների ընտանիքների հետ։ Ում վրա վոր բոլշևիկներին համակրելու ամենաչնչին կասկած եր ընկնում, ամեն տեսակ տանջանքների յեր յենթարկվում։ Ներ եչի ծանր հիվանդությունից վեր կացել, վոր խուզարկության յեկան ինձ մոտ։

— Ո՞ւր ե ամուսինդ։

Իսկ ամուսինս կարմիր բանակումն եր։

— Խուզարկել բնակարանը,— հրամայեց սպան։

«Վորոնեցեք,— մտածում եմ,— բոլոր փաստաթղթերը հոտած են դնոնում»։ Բայց և այնպես սիրտս խփում եր և ձեռներս դողում էլին։

Զինվորները խուզարկեցին անկողինը, բարձերը ներեցին հատակին։ Բնակարանը տակն ու վրա արին։

Սպան կարգադրություն ուներ՝ անկախ խուզարկության արդյունքից, Ռյաժինցևային ձերբակալել։ Սպիտակների համար սարդ եր, վոր յես համակրում եմ բոլշևիկներին։ Բացի դրանից, մեր կողքին ապրում եր Տկաչևը, վոր կոմունիստ եր, կիսլովոդսկի կարմիր պարեսը։ Չկարողանալով քաղաքը թողնել, Տկաչևը թաղնվել եր ուր վոր։ Սպիտակները յենթադրում էլին, վոր ինձ հայտնի յե նրա թաղնված տեղը։

— Ծույլ տուր հասպա, այդ ինչ բան ե,— հրամայեց սպան զինվորին։

Զինվորը պատվի բռնելով, սպային մեկնեց մանկական մատրոսական ոճիքը։

— Վորտեղի՞ց ե այս ոճիքը։

— Ցերեխայի ոճիք ե։ Վաղուց ե այստեղ ընկած։

— Ստում ես։ Գետնական նշան կա վրան։

Այդ ժամանակ զինվորը յերկու դիրք դտավ։ Սպան ակնոց թերթել։

— Ռևկ–ի ծրածիրը։ Ա՜հա։ Ա՜հա՛ ինչ— «Ցերեխայի կրո՞նկ»։ Դե, մենք ձեզ յերկաթե կրունկ ցույց կտանք։ Ջերբակալել։

Որտվելով, հատակին թափված իրերը տրորելով, մոտեցա որորոցին, ծծկեր յերեխայիս հետս վերցնելու։

— Վերցնե՛լ նրան,— ճչաց ոստան։— Լակոտին թողնել տանը։

Ես յերեխայիս դրեցի մեծ աղջկա գիրկը։ Յերեխաները, լաց լինելով ու գոռոզալով, հրշտապատեցին ինձ։

Սպայի հրամանին յենթարկվելով, զինվորներն ուժով պոկեցին յերեխաներին ինձնից։

Ճանապարհին ասացի ինձ ուղեկցող զինվորներին.

— Ախ, հիմի դուք ինձ տանում եք... իսկ ձեր կանանց հետ, կարծում եք, լա՞վ են վարվում։

Զինվորները մռայլ կին ու լուռ։

★

Ինձ տարան հակահետախուզության, ձերբակալվածների խուցը։ Շատ և շատ ողն ի խփում մարդու դլխին։ Սենյակը մարդկանցով լիքն է։ Տղամարդիկ ու կանայք պառկած են թքուած, կեղտոտ հատակին, նստած են կծկված։ Հոգային դրշտություն դեմքեր, բորբոքված աչքեր, դղրդված մազեր։

Ես չուրջս նայեցի, չիմանալով վորտեղ տեղավորվել։ Ինձ շրջապատեցին ու սկսեցին հարցեր տեղալ։

— Ինչո՞ւ ես լսվում։ Ի՞նչ դրություն և ռազմաճակատում։ Մխախոտ չունե՞ք։ Ինչո՞ւ յեն ձերբակալել։

Գաղի տակ «հարմար» տեղ դտնվեց, վորտեղ և յես տեղավորվեցի։

Գիշերն լինալ։ Առաստաղից կախված նավթի լամպերն աղոտ լուսավորում էին խուցը։ Ծուրտ եր։ Ուզում եմ պառկել, հանդիստ տալ հոգնած մարմինս, բայց ցեմենտի հատակը սառցի պես պաղ է։ Վոչ բարձ կա, վոչ վերմակ։ Առնեք՝ բարձ ու վերմակ ձերբակալվածներից շատերը չունեյին։ Շատերը քնել էին հատակին, իրար մոտ կծկված, իրենց մարմիններով ջերմացնելով միմյանց։

Առավոտյան ինձ քշեցին վերև, հետախուզության չենքը մաքրելու։ Ես ուրախ էի դրան. աշխատանքը հանդստացնող ազդեցություն է ունենում։

Առիճանների վրա ծանր վոտնաձայն լսվեց։ Սենյակ մտան զինվորները՝ ձեռների վրա յերկու հին բերելով։ Կանանց դրե-

ցին հատակին ու դնացին: Մնաց պահակը: Ես սկսեցի լաքի կտորով յեռանդով մաքրել հատակը՝ պատված կանանց մոտ, վորպեսզի լավ տեսնեմ նրանց: Նրանց դեմքերն ինձ ծանոթ թվացին: Մայրը ու աղջիկ էին: Աղջիկը տասնվեց տարեկանի մոտ, իսկ մայրն այժմ անճանաչելի էր: Մի քանի որ առաջ նա դեռևս յերիտասարդ մուշ մաղերով կին էր: Իսկ այժմ հալահետախուզության մեջ պատված էր մի բոլորովին ծերացած, ուժասպառ պառավ:

Պահակը հորանջեց և դուրս գնաց սենյակից: Ոգտվելով դրանից՝ ես խոնարհվեցի սալիտակահեր կնոջ վրա:

— Այդ ի՞նչ են արել ձեզ: Այդ յես եմ, Ռյաժենցևան, դուք ինձ ճանաչո՞ւմ եք: Ես նույնպես ձերբակալված եմ:

Ինձ նայում էին վայրկ, բորբոքված աչքեր: Աստիճանաբար նրանց մեջ միտք ծագեց: Կինը ճանաչեց ինձ: Ամբողջ մարմնով դողալով, ցավելու աստիճան սեղմելով ձեռքս, նա խոսքատած բացականչում էր հատ-հատ բառերը: Այժմ պարզ դարձավ տեղի ունեցածի սոսկալի իմաստը. աղջկան բռնաբարել էին: Մոր աչքի առաջ սալիտակ սրիկաները բռնաբարել էին աղջկան: Այժմ նրանց յերկուսին էլ բերել էին այդտեղ «հարցաքննության»: Աղջիկը պառկած էր հատակին անշարժ, կիսամեռ, դունատ: Նրա աչքերը փակ էին և միայն արտանուքներն էին ցնցվում արագ-արագ:

Պահակը վերադարձավ և յես չտասցեի հեռանալ կնոջից: Իմ անձնական տանջանքները նսեմացան այն բանի առաջ, ինչ իմացա: Ես հասկացա, վոր չորս կողմը լի յե այս կնոջ նմաններով և ներքուստ սկսեցի պատրաստվել հուսահատ պայքարի՝ սալիտակ դահիճների դեմ:

Ծերևկոյան կողմը հակահետախուզականները խուցը հրեցին իմ բոլոր յերեխաներին: Առաջինը յերևաց մեծ աղջիկս, Կլավան, վորը յերեխան ղրկին: Նրա յետևից, մեկմեկից բռնած, նեցս մտան մյուս չորսը: Պարզվեց, վոր Կլավիչան բոլոր յեղբայրներին ու քույրերին վերցրած, դալիս է հակահետախուզության՝ պահանջելով՝ «Մորս բռնեցիք, մեզ էլ բռնեք: Ի՞նչ եմ անելու յես սրանց»:

Արտասովոր տեսարանից հուզված, խցի ընկերները շրջապատեցին յերեխաներին: Բոլորը դայրացած էին:

— Սա չլսված պաղանութիյուն է. ծծկերը յիրևխային բաժանում են մորից:

— Աչխարհում այնպիսի որենք չկա, վորպեսզի մանր յիրևխաներին կատվի ձագերի նման անտեր թողնեն:

Կամերան վորոչում ընդունեց՝ պահանջել չտալ կարդով քննել Ռյաժինցևայի դործը: Մերժման դեպքում հայտարարել հայտարարել:

Մի քանի ժամից հետո ինձ կանչեցին հարցաքննութիյան:

Առաջին իսկ խոսքերից ինձ համար պարզ յերևաց, վոր սովետակ դվարդիականներն ուղում են ինձանից իմանալ Տկաչևի տեղը:

— Դուք պետք է մեղ ասեք բոլորը, ինչ վոր դիտեք նրա մասին,— հայտարարեց ինձ ժանդարմական ասան:

Ես դիտեի, վոր Տկաչևը թաղնված է կարտոֆիլի հորում և մայրը նրան այնտեղ ուտելիք է տանում (այդ հորում նա նստած մնաց մոտ մի տարի), բայց յես պատասխանեցի ժանդարմին.

— Տկաչևի մասին յես վոչինչ չդիտեմ:

— Չի կարող պատահել, վոր դուք չիմանաք: Նա ձեր կողքին է ապրում:

— Ես իմ հարևանների հետ գործ չունեմ:

Սպան աչքերը կկոցելով կասկածով նայեց ինձ: Նրա ձեռքը դրված եր ատրճանակի կոթին:

— Մենք դիտենք, վոր նա չի կարողացել փախչել, վոր նա թաղնված է այստեղ, Կիսլովոդսկում: Վատ էլինի ձեզ համար, յեթե մենք իմանանք, վոր դուք նրան թաղցնում եք:

Ես լուռ եյի: Տիֆից, այդ դիշերվա հուզմունքից հետո իմ ծնկները դողում ու ծալվում եյին, ականջներս խշշում: Բայց յես արդեն հաստատ վորոշում եյի ընդունել՝ կմեռնեմ, բայց Տկաչևին չեմ մատնի:

— Ինչ եք լռել: Մենք ձեզ կհարկադրենք խոսել և ասել մեզ, վորտեղ է դտնվում Տկաչևը: Դուք լավ կանեք ձեր յերեխաներին խղճաք, քան Տկաչևին: Մենք ձեզ կվտանգենք հակահեղափոխութիյան մեջ:

— Կամքը ձերն է, պարոն սպա: Փոխանակ ռազմաճակատ դնալու, դուք նստել եք այստեղ և մեզ հետ, կանանց հետ եք կռվում...

— Լա՛ռ,— ասաց կրճատեց առաջինները, աչքերն արյունով լցվեցին:

Այդ ժամանակ առանձնասենյակի դուռը բացվեց: Զինվորները ներս հրեցին կարմիր բանակային Վանիա Կատեդինի մորը:

Սպիտակները գալու ժամանակ նա ընկերոջ հետ փախել էր լեռները ու թաղնվել այնտեղ:

Հենց այդտեղ, հարևան սեղանի մոտ սկսվեց Կատեդինի հարցաքննությունը: Հակահետախուզականները պահանջում էին, որ մայրը մատներ որդուն:

Տատապած, բայց համառ ձակ կինը բացականչում էր ի պատասխան.

— Սրիկանա՛ր եք դուք: Ի՞նչ եք ինձ տանջում:

— Քոռան հինգ հարված տվեք նրան,— լսեցի յես իմ յետևից:

Ողում մտավ ծանր մարտիկը: Կատեդինան ճչաց: Ինձ այնպես թվաց թե իմ մեջքն են կտրատում:

— Ցեղի Տիպչևը ձերբակալվի,— ցածր ծայնով և չարաշուք ասաց ժանդարմական սպան, դառնալով ինձ,— դուք կկախվեք նրա հետ միասին:

— Կամքը ձերն է, թեկուզ հիմա կախեցեք... Մենք ձեր ձեռքումն ենք:

Լռվեց ազմուկ, ծանր մարմնի ընկնելու ձայն: Ցեղ գլուխը շուռ տվեցի և տեսա, որ Կատեդինան պառկած է հատակին ու նրա սպիտակ կոֆտան արյունով է ծածկվել:

Բայց յես զգացի, որ իմ ձայնն ամուր և հնչուն, որ իմ ձայնում վոչ մի տարակուսանք չկա: Ըստ յերևույթին, դա աղդեցություն ունեցավ սպայի վրա: Նա դանդաղարեց և բարկացած նետեց ներս յեկած հերթապահին.

— Աղտոտի՛ր:

Հարյուրի նման որոտալով, սարսափով ու ատելությամբ լցված, գուրս յեկա սոսկալի տնից: Բայց հակահետախուզության ինձ հանգիստ չթողեց: Ցերեք-չորս որը մեկ ժանդարմները հայտնվում էին իմ բնակարանում ու կրկին շուռ ու մուռ տալիս իմ աղքատիկ կահկարասին, մանրակրկիտ խուզարկություն էին կատարում:

Կախ էլին տալիս տղամարդկանց ու կանանց, քանվորների, նավատուներին, գոմչերիտականներին— ամենի շատ չերիտասարդներ։ Կախ էլին տալիս հրապարակով։ Ժողովուրդն ամեն կողմից հավաքվում էր կախաղանների մոտ։ Կախեցին Գևենյա Գևչին։

Ճերը հրապարակը դատարկվում էր, կախաղանի մոտ մընում էլինք մենք, կարմիր բանակայիններն ու կանայքս։ Մենք միմյանց հետ պայմանավորվել էլինք, ինչպես հանենք կախված ընկերոջ տղին և հողին հանձնենք։ Դրա համար հարկ էր լինում ամեն անգամ իշխանություններից հատուկ թույլտվություն առնել։ Հարկավոր էր շատ մեծ դժուարությամբ պրծնել՝ կասկածի չենթարկվելու համար։

Մեչա ևեր հաջողվում մեզ ընկերների մարմինն առնել։ Նավատուներին, որ նախ թույլ չէլին տալիս կախաղանից հանել և թաղել։ Նրանք կախված մնում էլին այնքան ժամանակ, մինչև պարանը կտրվում էր։ Ճեվ այն ժամանակ նրանց կիսաքայքայված մարմինները կտոր-կտոր քաշքշում էլին քաղցած շները։

Ջնայած բոլոր դժվարություններին, ինձ և կարմիր բանակայիններին կանանց հաջողվեց հողին հանձնել ապիտակ տերորի ավելի քան հարյուր զոհ։

Հակահետախուզության զոհ դարձավ Շալաբկովսկին՝ մի կոմչերիտական, կիսլովոդսկի խորհրդի ակտիվ աշխատակից։ Նա վերադառնում է ապիտակ կիսլովոդսկը։ Կատապանը պատահմամբ ճանաչում է նրան և մատնում հակահետախուզությանը։

Տանջված մայրը, կիսլովոդսկի իշխանություններից մերժում առնելով վորդուն ազատ արձակելու, մեկնեց Պյատիգորսկ և մեծ դժվարությամբ հաջողվեց տեսնվել ժանդարմական պետապետի հետ։

Ելեգանտ պետապետը Շալաբկովսկային ընդունում է ոչխարի։ Մայրը արտասվելով աղերսում է խնայել վորդու չերիտասարդ կյանքը։ Պետապետն ուշադիր, համարյա կաբեկցիաբար նայում է Շալաբկովսկային։

— Հանգստացեք,— ասում է նա հանգիստ բարեհոնով,— Ձեր վորդին կազատվի։

Զհավատալով իր երջանկությանը, ուրախությունից արտասվելով և ջերմագին շնորհակալություն հայտնելով գնդապետին, Շալաբկովսկայան դուրս և գալիս առանձնասենյակից։ Նա չի կասկածում, վոր իր դուրս գնալուց անմիջապես հետո գնդապետի կողմից շտապ հեռագիր և ուղարկվում Կիսլովոդսկ՝ «Ձերբակալված Շալաբկովսկուն անհապաղ կախել»։

Իսկ հարևան սենյակում, ընդհանուր դրասենյակում այդ ժամանակ երջանիկ մայրը կարգադրություն և տանում բոլոր տորթագրություններով ու կնիքներով, վորդու ազատման մասին։

Ճիշտ այն մոմենտին, երբ Շալաբկովսկայան վազելով իջնում և կիսլովոդսկի կայարանի կառամատույցը, ժողովրդի հսկայական բազմություն շրջապատում և կախաղանը։ Հոսված եր ամբողջ Կիսլովոդսկը։ Բոլորը ճանաչում եյին երբեմն սպրդ, անբեխ պատանուն, վորն այժմ տղը վղին կանգնած եր կախաղանի դերանի տակ։ Նա մեծացել եր տեղական քնակիչների աչքերի առաջ։ Բայց մայրը դեռ վոչինչ չգիտեր։

Կիսլովոդսկի հակահետախուզության մեջ նրան հրավիրում են պետի առանձնասենյակը։ Պետը թուղթը յետ և տալիս նրան և ասում, աշխատելով զսպել ժպիտը.

— Այս թուղթն ուշացել և։ Մի ժամ առաջ ձեր վորդին տարվեց Պյատիգորսկի շուկան, դատավճիռն ի կատար ածելու համար։ Շտապեցեք այնտեղ։ Գուցե դեռ հասնեք...

Դժբախտ մայրը դեռ ուժ և ունենում շարժվելու։ Նրա հետևից հնչում և ժանդարմների մխիթարող դիվական քրքիջը։

Փողոցում, հակահետախուզության շենքի մոտ մայրը վայր և ընկնում։ Նրա ձեռքում չղաձղրեն սեղմված եր գնդապետի ստորագրած թուղթը։

★

Մեկ անգամ Տոպոլեվյան ծառուղիով անցնելիս, լսեցի ձիերի դոփյուն, բարձրաձայն յերդ, բացականչություններ և ուռելոց։ Դա «մայրի դիվիզիան եր»։ Առջևից տանում եյին սև դրոշակը։ Հարբած, կարմրադունչ հուսարների ձիերով եյին և տեղերով, վորոնց վրա գայլի գլուխներ, դանդիր, ինչ վոր մազերի փնջեր եյին կախված։ Ցեխ կտնդ առա նայելով այդ հոր-

դային, և հանկարծ սարսափից սառեցի։ Գլխիցս մեկի ծայրին որոշվում եր կարմիր բանակային վանկա կատիպինի դլուխը լայն բացված, ապակեցած աչքերով։ Գլուխն անհայտացավ ծառուղու վոլորանում, բայց յես, անկարող տեղից շարժվելու, շարունակում եյի նայել հետևից։ Վերհիշեցի հակահեղափոխությունը, կատիպինայի հառաչանքները ու արյունը... Վոչ, վանյային չէիրկնց իր մոր հերոսությունը։

Հետո յես իմացա ինչպես եր սպանվել կատիպինը։ Կիսլովոդսկից ուղարկված ջոկատը չորեքսաաուն և այն ձորը, ուր թաղնվում եյին Վանյան և իր ընկերը։ Կատիպինը հիանալի նշանառիդ լինելով՝ յերկար ժամանակ մոտ չի թողնում չկուրսանտներին։ Վերջապես բոլոր փամփուշտները սպառվում են և յերկու քաջերն ընկնում են սպիտակ գահիճների ձեռքը։ Կատիպինի մարմինը կտոր-կտոր են անում, նրա ընկերոջ մարմնի վրա տասնութ վերք է լինում։

Ծերեկոյան, վերադառնալով աշխատանքից, հոգնած ու ճնշված, յես անցնում եյի Կիսլովոդսկի կենտրոնական փողոցներով։ Ինչ արագությամբ և վերածնվում հին, անծայրել կյանքը։ Ռեստորաններում յերաժշտություն և թնդում։ Սեղանների մոտ նստած են ներկված կանայք, սպաներ ու վաճառականներ։ Փողոցները վխտում են պոռնիկներով։ Բուրժուազիան հաճախանում, քծնում և գինովցականներին։ Ի պատիվ վոսկեհատորդ-բարոնը «հերոսների» ճոխ բանկետներ ու յերեկույթներ են կազմակերպվում։ «Հերոսները» պարարտանում են, խմում են անզգայության աստիճան, ցոփություն են անում։ Աղբճանակ են կրակում հայելիների, լաքեյների, իրենց հովանավորող բուրժուազիայի, իսկ յերբեմն էլ միմյանց վրա։

Աննկուն յեն լսում յես ռեստորաններից հնչող աղմուկն ու ճայները։ Արյունաթրուն։ Ծերեկը դեռ նման արյուն են թափում, իսկ գիշերը խեղդվում են գինու մեջ։

★

Քոռ թվի հունվարը։ Կիսլովոդսկի փողոցներով ձգվում են պարեհով, զենքով, հանդերձանքով, զգեստավորությամբ բեռնված յերկար դումակների շարաններ։ Այդտեղ կան նաև պա-

բոնակալ սպանելի Թալանած ալևաալ դուլքը: Այդ սպիտակներն են վախչում Կիևլովոդսկից: Տառապած չքավորության կողմից ցնծագին դիմավորվելով՝ մերոնք մտնում են քաղաք: Անցավ Շկուրոյի տիրապետության կոշմարային ժամանակը:

Բոլշևիկների դալուց յերեք շաբաթ հետո յես մտա կոմունիստական կուսակցության շարքերը:

Լ. ԱՐԳՈՒՏԻՆՍԿԱՑԱ

ՏԱՏԱՍՆԵՐ ՍՈԼՈՄԱՒՆԻ

Իմ գրասեղանի վրա ընկած է մի մուգ դունչի Թղթակալ ակղբից մինչև վերջը գրված յերեք հատ բարակ տետրակներով:

Առաջին տետրակում հավասար, խոշոր, պարզ ձեռագիր է, յերկրորդում ձեռագիրը մանր է, առես հուլունք լինի, յերրորդում՝ լայնարձակ, կանացի, բառերի վերջավորություններըը չամփողջացած:

Թղթակալի ներսը մի լուսանկար է կպցրած: Ճես յերկար նայում եմ փոքր ինչ կողքի Թեքած, դանդուր մազերով շրջնանկված կուսական նուրբ դեմքին, Թեթևակի կկոցված խորամանկ աչքերին և փոքրիկ նեղ շուրթերի նույնպիսի ժպտին: Աղջիկը հագած է ուկրաինական ասեղնագործած հագուստա, սմբուղ կուրծքը հուլունքներով է զարդարված, իսկ ուսից մինչև բարձր կրունկավոր փոքրիկ ներքոդեղ կիսակոշիկներն իջնում և խոպոպավոր հատա հյուսը:

Ճեվ յես ուզում եմ պատկերացնել մեկ այլ դեմք, դունատ և տառապած, մեծ, խիտ, վառվող աչքերով, ջսերեվի քուրիկի դեմքը, ինչպես անվանում եր նրան Նիկոլայը, ովքոր փայլուն կերպով կարողացավ մեռնել հեղափոխության դործի համար»:

Ու կրկին բաց եմ անում տետրակը և կրկին կարդում եմ այդ անմոռանալի սոսկալի պատմությունը:

Վ.ուշափ էլ ամոթ է ինձ, բայց ջղերս չդիմացան և ասա, գիտեիր ժամը մեկին յոթ, ինչ պատահեց, Տատյանայի չեղբայրը, Նիկոլայ Սոլոմախի, լաց լեղա:

Ախսոսացի ճուռն, բանկագին Ռուդիկիսա,
(Նիկոլայ Սոլոմախի Եամակից):

Առաջին տետրակ

Տանյայի հետ մենք մաերիմ էինք ապրում:

Հիշում եմ նրան, յերբ նա դեռ բոլորովին վոջքրիկ ապլիկ եր, կարճ հագուստով, վոտաբոբիկ, արևից այրված, վոջքրիկ հյուսը ծոծրակին:

Ամեռը նա գրաղված եր գալոշում, յերեկոները դասերն եր պատրաստում, իսկ գարնանը և ամառը մեզ հնարավոր չեր տանը պահել: Վեր էինք կենում լուսաբացին, վերջնում էինք մի–մի կաոր հաց, կարթերը և վաղում գետը՝ խեցգետիններ ու ձկներ վոբսալու:

Դա մեր սիրած գրաղմունքն եր: Նստում էինք գետ խոնավ, ցողածածկ խոտի վրա, և աչք չկտրելով լողանից, ժամերով նայում էինք Ուրուպի դանդաղ հոսանքին:

Ցերբեմն էլ Տանյան նետում եր կարթերը և մենք սկսում էինք խաղալ այն խաղերը, վոր նա ինքն եր հնարում: Մերթ մենք հնդկացիներ էինք դառնում, մերթ անհայտ աշխարհներ էինք մեկնում ոդանավով, վորոնք գևկավարում եր Տանյան ինքը, մերթ մինչև ծնկները թափառելով Ճահիճում, հին, ավերված քաղաքներ էինք վորոնում:

Ցես առանց առարկության յենթարկվում էի գրոշ: Միակ բանը, վոր խանդարում եր ապրել՝ դա կազակ յերեխաներն էին: Տանյան պատմում եր ինձ, վոր նրանք որ շեն տես իրեն գալրացում, ծաղրում են, անվանելով գեղջկուհի: Տանյան հաճախ տուն եր վերադառնում ջարդված աչքով, չանկռատած գեմքով և նիհար ձեռներն ամբողջովին կապտած: Ցես հարց ու փորձ էի անում, թե ինչ է պատահել և նա, ծիծաղելով, պատմում եր, վոր կռվել է տղաների հետ: Ցես միևն տղաներից էի խմռնում մանրամասնությունները: Ցերբ Տանյային ծաղ-

լսում էին, նա բռունցքներով նետվում էր կազակ տղաների վրա։ Բայց տղաներից յերբեք չէր դանդաղում հայրիկին։

Մեկ անգամ մենք դնացինք դետը լողանալու։ Գարզ ոը էր, զեփյուռն որորում էր սեզը, և ամբողջ տափաստանը վայելում էր արևի ճառագայթներից։ Մենք յերկար լողում էինք։ Տանյան ճչում էր, ջուրն էր ցնցղում և բավական էր յես դուրս գայի ջրից, իսկույն նետվում էր ինձ վրա, պլորում ավազի մեջ և ամբողջովին թաթախում մուդ լպրծուն ցեխի մեջ։

Իսկ ավելի ուշ, յերբ մենք ձուկ վորսալով էինք զբաղված, հինդ կազակ տղա մոտեցան դետին։

— Հապա, կորի՛ք այստեղից,— բացականչեց նրանցից մեկը, վոր դլխին կուբանյան մուդ դույնի վուշախոց էր ծածկել։

Տանյան հետ նայեց, և յես տեսա, ինչպես բոցավառվեցին նրա այտերը։

— Ցեթե լողանալ ես ուղում— գնա ցածի կողմը, իսկ մենք չտապելու բան չունենք,— բարկացած նետեց նա։

— Ա՛յ քեզ նորություն,— նորից բացականչեցին կազակ տղաները։— Դուք պետք է այստեղ ձեր դեղչկական կեղտը լվանաք, իսկ մենք ձեզանից հետո պիտի ապականվենք։ Թե վոր չգնաք, միևնույն է, կքշենք։

Ես դեռ ուշքի չէյի յեկել, վոր Տանյան վրա պրծավ, մի քար վերցրեց ու նետեց կանգնած տղաների վրա։ Նրանք փախան։ Քարերի տարափ տեղաց մեզ վրա։

Մենք նետվեցինք դեպի Թումբը։ Ցես քարեր էյի հավաքում, Տատյանան, նշան առնելով, նետում էր հարձակվող տղաների վրա։ Մեկի նետած քարը դիպավ Տանյայի աչքին, արյունը բարակ չիթով վազեց այտով, բայց նա ուշադրություն չդարձրեց դրան և կրակոտ «պաշտպանվում» էր։ Ցերբեմն դլուխը դարձնում էր իմ կողմն ու կարճ հրամայում.

— Շա՛տ քար տուր, չո՛ւտ բեր։

Մենք, այնուամենայնիվ, հարկադրված յեղանք նահանջել։

Ցես փախա առաջինը, այդպես հրամայեց Տանյան, իսկ ինքը, Թմբերի ու Թփերի յետև թաղնվելով, դանդաղ հետ էր քաշվում, շարունակ քարերով պաշտպանվելով։

Միայն մեր տան մոտ մենք նստեցինք հանդստանալու։

Շրթունքով ցաված տեղերն ու արյունը դեմքին քսելով, նա խիստ և ազդու ասում էր.

— Ձերբեք դերի չընկնես։ Ցնթին դրությունն արդեն վատ է, լավ է նահանջել, բայց այնպես, որ նրանց համար այնքան էլ հաճելի չլինի։

Ցնվ, փոքր ինչ մտածելով, ավելացրեց.

— Թեպետ աղջիկներին բանակ չեն տանում, բայց կես չորը մեծանամ, անպայման հրամանատար եմ դառնալու։

★

Գարշ, դեղեցիկ որերին լավ է տափաստանը, բուրավետ են դիշերները, ծղրիտների ճըռճըռոցով ու թռչնակների դայլայլներով լի։ Դուրս ես գալիս գյուղից, չուրջդ ես նայում և միրջ չունի դեպի կապույտ հորիզոնը վազող կանաչը։ Իսկ դիշերները տափաստանը զնգում է ճպուռների ծղրտոցով։ Տարածվել էլին այնտեղ առանիցաները կաղակական ամրապլինդ սպիտակ անոթով, կազակ և չեչոր չքաղորների ծոված խրճիթներով, գարբնոցների մոտ լսվող մուրճերի հարվածներով, չերեկոյան մթնշաղին հնչող չերգերով ու հարմոշկաներով։

Հորս ընտանիքն ավելի ու ավելի մեծանում էր։ Հայրս չերեկը առանիցայի չերեխաներին էր դաս տալիս, իսկ հետո մինչև ուշ դիշեր աշխատում էր սարայում, բանջարանոցում և անդադրաշնակ բզզացող մեղվանոցում։

Իսկ ամառը տափաստանից խոտի բուլր էր փչում և ծուլլ չեղներ լծած հսկայական սայլերն էլին դանդաղ չարժվում գալի առանիցան։

★

Ցերեկոյան ամբողջ ընտանիքը հավաքվում էր սեղանի շուրջը։

Հայրս կոշիկ էր կարում, մայրս սպիտակեղեն էր կարկատում։ Մենք, չերեխաներս, շունչներս զսպած, աչք չէինք կտրում Տանյայից։ Գլուխն ափերին հենած՝ նա կարդում էր բարձրաձայն։ Ցերեկն հայրիկն ընդհատում էր աշխատանքը և

յերկար, սևեռուն, առանձին սիրով նայում էր աղջկան և ինձ թվում էր, որ նա բոլոր յերևանեցիից ամենից շատ Տանյային և սիրում։ Բայց չէի նախանձում։ Այդպես էլ պիտի լիներ։

★

Ճերը Տանյայի տատներկու տարին լրացավ, նա ավարտեց դյուղական դպրոցը և հայրիկը նրան տարավ Արմավիրի դիմնազիայում սովորելու։

Ճես յերկար կանդնած մնացի դյուղից դուրս։ Աչքն ես հայտացել էր սայլի բարձրացրած փոշին, իսկ յես դեռ նայում էի դնդնած տափաստանին։

Ինչե՜ր չէի տա, յերթե կողքիս լսելի քրոջս բարձր, հառնուն ծլծաղը։

★

Ամառն ինձ համար դարձավ տարվա ամենալավ յեղանակը, վորովհետև ամառային արձակուրդներին պլիչիս էր Տանյան։ Վորքա՜ն հետաքրքիր բաներ էր պատմում նա։ Ճե՛վ քաղաքը, և՛ ամբողջ աշխարհն արտատովոր վառ կերպով էին պատկերանում ինձ։ Սկզբում Տանյան իր մուդ հինամոնազուլն հագուստով, և սև գդակոցով ինձ ոտար էր թվում, բայց հետո մայրիկը նրա դպրոցական տարազը խնամքով դարսում էր սնդուկում և կրկին ինձ հետ նախկին Տանյան էր։

Մեկ անգամ, տուն վերադարձած որերին, նա առանձնապես տարվեց դիմնազիայի համար հավաքածու կազմելով։ Ճես նրա հետ գնում էի ծաղիկ հավաքելու, ողնում էի նրանց չորացնելու գետի ավազում, թիթեռներ էի վորսում և թռչուններիք բներից ձվեր էի հանում։

Մեկ անգամ մենք գնացինք ձու բերելու։ Մի տեղ յես այնպիսի ձվեր գտա, վորոնք առանձնապես դուր յեկան Տանյային։ Բայց թռչունը չեր թույլ տալիս վերցնելու։ Այն ժամանակ, առանց յերկար մտածելու, յես վոլորեցի թռչնակի գլուխը և, ձվերը գլխարկիս մեջ հավաքելով, հաղթական տեսքով լքա ցած։

Մտի մոտ արդեն կանգնած եր Տանյան։

— Ինչո՞ւ դու բոլոնն ավերեցիր,— բարկացած հարցրեց նա։

Ցերբ մեկ ձու կես վերցնում, մայրը չի նկատում։ Իսկ դու ի՞նչ արեցիր։

Նա տեսավ գլուխը վոլորված Թուչնակը, կռացավ և զգուշությամբ մատներով չոյեց նրա գղգղված, թաց փետուրները։

Ես չգիտեի ուր թաղցնել իմ կարմրատակած դեմքը։

— Դու անպիտան ես, չար ես, խոստասիրտ,— բացականչեց Տանյան լացող ձայնով։— Ձի՛մ սիրում քեզ— և հանկարծ տեսավ իմ կարմրած, քրտնած դեմքը։

Նա նստեց գետնին, դանակով փոս փորեց, Թուչնակը դրեց փոսի մեջ և հողով ծածկեց։

— Ցերբեք չպետք է ձուր տեղն արյուն թափել,— կամացուկ ասաց նա, ապա տեղից վեր կացավ և դնաց անտառի խորքը։

Մի քանի ժամ կես չգիտեի ինչ անել։ Բայց յերեկոյան մենք նորից հաշտվեցինք և, հողաթմբի վրա նստած, յերկար ժամանակ յերգեր եյինք յերգում։

★

Ես շատ աղոտ եմ հիշում, թե ինչպես անցավ հինգ թիվը մեր ստանիցայում։ Մի բան վառ է մնացել հիշողությանս մեջ։ Լայն վողոցով անցնում եյին ստանիցայի բնակիչները։ Մարդիկ զարդարված եյին կարմիր բանտերով, հուզված յերգում եյին և ինչ վոր բացականչում բարձրաձայն։ Իսկ բոլորի առջևից գնում եր հայրիկս և նրա գլխի վերև բարձր ծածանվում եր կարմիր դրոշակը։ Ես յերբեք չեմ տեսել հոբս այնպես յերջանսարդ և գեղեցիկ։ Ցեվ տարօրինակն այն եր, վոր կաղակները գնում եյին յեկվորների հետ թևանցուկ, բատրակները իրենց տերերի հետ։

Այդ ամառ կես չճանաչեցի Տանյային։ Նա բոյ եր քաշել, կոշտ ու կոպիտ պատանուց դարձել եր բարձրահասակ, վայելչակազմ, հասո ու յերկար հյուսով աղջիկ։

Առաջին գիշերը Տանյան մինչև լուսաբաց նստեց հայրիկի հետ։ Մահճակալի վրա պառկած և չունչս դադած՝ կես լսում եյի նրանց խոսակցությունը։ Տանյան հարցնում եր հեղափոխության, ցարական կառավարության ճնշման մասին։ Հայրի-

կը բաց եր անում հաստ տետրակն ու կարդում նրանից իր դրի առածները։

— Կեղտում է ինձ առանիցան,— առաջին անգամ խոսում եր նա աղջկա հետ վորպես հավասարի,— քաղաք պետք է դընալ։ Գյուղացիությունն առանց բանվորների վոչինչ անել չի կարող։ Իսկ քաղաքում ինձ պաշտոն չեն տա։ Ուսուցչության իրավունք առանալու քննություն չեմ տվել, իսկ պահանջներն այնտեղ մեծ են։ Մանր է առանիցայում։ Ով գիտե գնում յերբ է նա տեղից շարժվելու։

Տանյան լուռ լսում եր։ Առաջին անգամն եյի տեսնում նրան այդպես լուրջ։

Մյուս որը նա հայրիկից մի ինչ վոր դիրք վերցրեց և դիրքն առած՝ յերկար մանը եր գալիս տափաստանում։ Գետ հեռվից հետևում եյի քրոջն՝ վախենալով խանգարել, և ինձ թվում եր, վոր յես կորցրի իմ բարեկամին։

Բայց մի քանի որից նա ինձ կանչեց իր հետ անտառ գնալու։ Մենք պառկեցինք բարձր, բուրավետ խոտերի մեջ և Տանյան սկսեց մեղմ ձայնով պատմել պոետ Շեվչենկոյի մասին։ Նա խոսում եր այն մասին, ինչպես պոետն իր ամբողջ կյանքում պայքարել և ճնշված ժողովրդի համար, ինչպես տանջել ու հալածել են նրան, իսկ նա յերբեք չի վախեցել և դրել և իր աքանչելի բանաստեղծությունները, վորոնք ժողովուրդը յերդիր յե վերածել։

Յերբեք յես Տանյային այդպես հուզված չեյի տեսել։ Նա հենվեց արմունկին, և հետոն ընթացող տափաստանին նայելով, սկսեց Շեվչենկոյի բանաստեղծություններն արտասանել կամացուկ։ Ցավ այնպիսի ուժ ու հաստատակամություն կար նրա ձայնում, այնպիսի վճռականություն կար նրա լայն բացված աչքերում, վոր յես սոսկում զգացի նրա համար։

Հետո մենք յերկար պառկած մնացինք լուռ։ Գետ վերջը ինչ բարձրացա ու նայեցի նրա դեմքին։ Նրա դեմքը դունատ եր ու խիստ։

— Տանյա, ինչի՞ մասին ես մտածում,— յերկչոտ հարցրի յես։

— Ինչի՞ մասին,— հանկարծ ժպտաց նա։— Ահա այսպես, նայում եմ հեռու-հեռու յերկնքին և աշխարհն ինձ թվում է

հակայական ու անսահման։ Իսկ յերբ յերկինքում ամպերը են լողում, յես ուզում եմ թռչել նրանց յետևից, և այն ժամանակ յես այնպես ուժեղ եմ, վոր վոչ վոք չի կարող խորտակել ինձ։

Այդ ամառ արդեն Տանյան ոգնում եր հայրիկին անտեսական գործերում։ Նա աշխատում եր մեղվանոցում, ճմերուկի և ձեխերի բոստանում, ջրում եր կաղամբը և դեռ հեռվից հընչում եր նրա բարձր ձայնն ու զնդուն ծիծաղը։

Հայրիկը յերդակից մի կապոց դիրք իջեցրեց և յերեկոները Տանյան կարդում եր բարձրաձայն։ Առանձնապես իմ հիշողության մեջ տպավորվեց Վոյնիչի «Բոռա» դիրքը։ Գրքի ընթերցումը մենք վերջացրինք ուշ դիշերին։ Վերջապես Տանյան կարգաց վերջին տողն ու ծածկեց դիրքը։ Նրա աչքերը կարմրել եյին և ուռել արցունքներից։

— Ա՛յ ինչպիսի մարդիկ են յեղել։ Ինչե՛ր չեյի տա, միայն թե տեսնեյի նրանց։

— Իսկ դու կարծում ես մեղանում այդպիսի մարդիկ չկա՞ն,— զարմացած հարցրեց հայրիկը և, աչխատանքը ցած դնելով, սկսեց պատմել նրան աքսորվածների, տաժանակիրների մասին, նրանց մասին, ովքեր բանտերից բաց են թողնված դայլի տոմսով և հարկադրված են տեղից տեղ թափառել։

Այդ դիշեր նրանք կրկին յերկար խոսեցին...

Անցնում եյին տարիները։ Հայրիկը հաճախ տեսրում եր։ Նա մի վոքը աշխուժանում եր միայն այն ժամանակ, յերբ նրա մոտ «պայլատոմասովորներ» եյին դալիս։ Մայրս զբաղվում եր անտեսությամբ և չորսամյա կայտառ Թախա քրոջս եր խնամում։

Գարնանը, յերբ Տանյան վերջացնում եր յոթերորդ դասարանը, մեր ընտանիքում դժբախտություն պատահեց։ Դրա պատճառը հորս կռիվն եր քահանայի հետ։ Քահանան վաղուց չեր սիրում հորս։ Նրան դուր չեր դալիս, վոր ուսուցիչը յեկեղեցի չի դնում, իսկ հանդիսավոր հարկավոր հարդանք ցույց չի տալիս իրեն։

Մեկ անգամ, հրապարակում հանդիսավոր հորս, տերտերն

սկսում է դողդոջալ, թե նա անասելիած է, հրաժարվել է յեկեղեցուց, անբարոյականացնում է յերեխաներին, նրանց յեկեղեցի չուղարկելով անհնազանդություն եւ անբարոյականություն է սովորեցնում։

Հայրս բորբոքվում է, խնդրում է նրան, վորպեսզի չսովրեցնի իրեն, այլ լավ կանի, վոր ինքը քիչ խաբի ժողովրդին։ Քահանան վոտները դեռնին խփելով եւ նայելով մոտեցող ժողովրդի կողմը, դոչում է, վոր հորս նմաններից ամեն ինչ կարելի յե սպասել եւ վոր նա, ըստ յերեւույթին, դպրոցի վողերն է դողանում՝ աղջկան քաղաքում պահելու համար։

Այդ ժամանակ հայրս, իրեն կորցնելով, բռունցքով խփում է տերտերի յերեսին։

Իսկ մի քանի որից, զատկական արձակուրդների նախորյակին, ուշ յերեկոյան, դպրոցի սպասավորը ծեծեց մեր սան դուռը եւ քաղաքից ուղարկված մի հատուկ ծրար տվեց։

Ես չճանաչեցի հորս, յերբ նա յերեսը դռան մեջ։ Գրգռված մազերը ցցվել էին նրա բարձր ճակատի վրա։ Նա ալ ձեռքը թափահարելով, վորով ինչ վոր թուղթ եր բռնել եւ, առանց նայելու ինձ, խռպոտ ասաց.

— Ինձ վռնդել են դպրոցից... վորպես դողի...

Արյունը խփեց նրա դեմքին, խուլ անքաց, ձեռքով բռնեց պլուխը եւ ամբողջ թափով ընկավ հատակին։

Ամբողջ դիշեր հայրս փորձում եր մի բան ասել, բայց վոչինչ դուրս չեր գալիս, բացի խղճուկ, անկապ բառաչիից։ Ես եւ մայրս չեյինք հեռանում նրա անկողնուց։ Միայն լուսադեմին նա ուշքի յեկավ, փորձեց բարձրացնել ձեռքը, շարժել վոտները, բայց նրանք անշարժ եյին։ Տատասկալից հայացքը պտտեց սենյակում, նայելով մեր դեմքերին, ասես ողնություն վորոնելով։

Նա կաթվածահար եր յեղել։ Հայրս սկսեց ինչ վոր խնդրել համառությամբ, աչքերով ցույց տալով պատը, ուր կախված եր Տանյայի լուսանկարը։ Ես իջեցրի պատկերն ու մոտեցրի հիվանդին։ Նա հուզվեց, հետո ժպտաց ու փակեց աչքերը։ Դանդաղ արցունքներ եյին հոսում նրա դեմքով։

Աստվոտյան մորս, թեկադրությամբ նամակ դրեցի Տանյային։

*

Տանյան յեկավ անսպասելի, յերբ հայրիկն իրեն լավ ևս զգում. նա արդեն կարողանում եր քիչ խոսել և շարժել աջ ձեռքը։ Ձախ կողմը դեռևս շարունակում եր անշարժ մնալ։ Ցես նետվեցի քրոջս ընդառաջ։ Նա դունատված դեմքով ու վախեցած աչքերով չտեսավ զալիս եր բակով։

— Ինչպե՞ս է հայրիկն,— արագ, հուզված հարցրեց նա։

— Վոչինչ, այժմ լավ է,— ժպտացի նրան և հանկարծ մեծ թեթևություն զգացի այն բանից, վոր նա մեզ հետ է լինելու։ Թվում եր, այժմ ամեն ինչ կվերխվի և հայրիկն առաջվա նման առողջ կլինի։

— Դու մի՛ գա, յես ինքս,— կանգնեցրեց նա ինձ առաջին սենյակում։

Ցես լսեցի, ինչպես նա արագ քայլերով անցավ հայրիկի սենյակով, լսեցի ուրախ բացականչություններ ու համբույրներ։

Ինձ վախեցրեց Տանյայի բարձր ծիծաղը։ Ցես սենյակ վազեցի։ Տանյան նստել եր հայրիկի մահճակալի վրա, և չոքելով նրա ձեռքը, ուրախ-ուրախ պատմում եր դիմնաղիայի, քննությունների, իր ստացած մեդալի մասին։ Ամբողջ ընտանիքը հավաքվեց։ Հայրիկը քոթոթվեց իր սովորական ծանր դրությունը և, ժպտալով, լսում եր Տանյայի պատմածները։

Միայն մեկ անգամ նա փակեց աչքերն ու կամացուկ ասաց.

— Դե, այժմ յես հաշմանդամ եմ։ Վոչ վոքի հարկավոր չեմ։

— Այդ բոլորը դատարկ բան է,— ընդհատեց նրան Տանյան։— Ժամանակի ընթացքում կառողջանաս, կրկին աշխատանքի կդնաս։ Իսկ տեքստերի վրա չարժե ուշադրություն դարձնել, մենք նրան դեռ ցույց կտանք։ Ցես աչքի տակով նայում եյի Տանյային և վոչ մի կերպ չեյի կարողանում հասկանալ նրան։ Գուցե նա չգիտեե, թե վորչափ վտանգավոր է հայրիկի հիվանդությունը։

Ցերեկոչքն դեմ հայրիկը հոդնեց ու սկսեց նիրհել։ Տանյան

դեռ յերկար չոյում եր նրա ձեռքը, ապա վեր կացավ և դուրս դնաց սենյակից։

Ցես վաղեցի նրա յետևից։

Մենք բակը դուրս յեկանք, յերբ յերկնքում մեծ կլոր լուսինն եր անշարժացել։

Դարպասի մոտ Տանյան կանգ առավ, ափով չփեց իմ մազերն ու կամացուկ ասաց.

— Դե, այժմ ահա յես) մնացի ընտանիքի մեծը։ Նա չի առողջանա։

Ցնվ հանկարծ, թափով չուռ տալով ինձ դեպի իրեն, նայեց աչքերիս.

— Լավ հիշիր, դու պետք և հպարտանաս հայրիկով։ Նրա նման աղնիվ մարդիկ դժվար և դտնել։ Իր ամբողջ կյանքում հայրիկն ոգնել և մարդկանց։ Իսկ այժմ նրան չափազանց վիրավորել են։ Ցես այ, ասացի՝ տերտերի հախից դալու մի՞նչև կդտնենք։ Բայց ո՞վ կլսի մեզ՝ մենք յեկվորներ ենք։ Հայրիկին ել քաղաքում սոցիալիստ են համարում։ Կասկածեյի յես նրանց բոլորին, կհոշոտեյի տանջողներին։

Ցես զարմանքով նայեցի Տանյային։

Ամբողջ ամառ Տանյան խնամում եր հայրիկին և աշխատում տնտեսության մեջ։ Հայրիկն իրեն շատ ավելի լավ եր զդում՝ ինայելին հենված և վոտքը քարշ տալով, նա դանդաղ գնում եր բանջարանոց, մեղվանոց և հետևում Տանյայի աշխատանքին։

Տանյան մի քանի անդամ զրեց քաղաք, խնդրելով քննել հայրիկին հեռացնելու դործը, բայց վոչ մի արդյունքի չհասավ։ Ինչ յերբ նրան առաջարկեցին դասավանդել ատանիցայի դպրոցում, ուրախությամբ համաձայնվեց։

Վաղ առավոտյան Տանյան գնում եր դպրոց, վերադառնում եր այնտեղից ուշ և տանն ավելի ու ավելի հաճախ սկսեցին յերեխաներ յերևալ։

Ազատ ժամանակ մենք շատ եյինք կարդում և զրոսնում։

Հիշում եմ, մեկ անդամ մենք Տանյայի հետ գնացինք թռչմբը։ Ճաղաղ գիշեր եր։ Արևն արդեն մտել եր հեռավոր ամպի յետևը և դեսից զով եր փչում։

Տանյան պառկեց թմբին, ձեռքերը գլխի տակ դրեց և ան-

չարժ նայում էր մթնող լերկինքին, ուր դունատ աստղերն էլին սկսում վառվիլ։

Ում համար մնծացա ու սիրեցի,—

Լռությունը խզեց նրա բարձր ձայնը։

Ամբողջ իմ կյանքը սա՝ նվիրեցի...

Ինձ զարմացրեց նրա լերդի ու խոսքերի մեջ հնչող թախիծը։

Տանյան հանկարծ ընդհատեց լերգը, սևեռուն նայեց ինձ և ժպտաց։

— Այս միայն հենց այնպես, լերդումն է։ Իսկ դու. կարծում ես լեւ չդիտե՞մ ինչու լեմ ապրում,— նա բարձրացավ արմունկին հենվելով։— Գանի՛ դիշեր մտածել եմ այդ մասին։ Հիշո՞ւմ ես, քեզ հետ հայրիկի մասին խոսեցի, լերբ նա հիվանդացավ։ Ինչքա՛ն բան է ավել նա ինձ, մարդ է դարձրել ինձ։ Ամբողջ իմ կյանքը լես կուզեյի տալ ժողովրդին։ Ցերեկները լես ինձ պատկերացնում եմ բարրիկադների վրա, բանում։ Գուցե ինձ կղնդակահարեն այնպես, ինչպես Բոռին։ Ցավ լերբ մտածում եմ այդ մասին, լես ինձ շատ ուրախ ու քնքև եմ զգում։ Ինձ թվում է, վոր լես կարիլ առ կարիլ կատյի իմ ամբողջ արյունը, միայն թե մարդիկ լավ ապրելին։ Ահա և լես շարունակ մտածում եմ՝ ինչպե՞ս անել այդ։

Զգիտեմ ինչու, սարսափ զգացի Տանյայի համար։

Ցես հասկացա, վոր այն բոլորը, ինչ ասում է նա, վոչ միայն խոսքեր են, այլև շատ ավելին, վորի համար նա, առանց տատանվելու, կտար իր կյանքը։

★

Ուր վոր հեռուներում սկսվեց պատերազմը։ Ստանիցան արտասուքով ճանապարհում եր լերիտասարդներին, կանայք կամացուկ և սրտամորմոք լաց եյին լինում։ Ցերիտասարդների լեռևից գնացին ծերունիները և տատիցան լուեց։

Տանյան դալրոցից լրագրեր եր բերում և հացրիկի հետ

յերկար նստում եր քարաեղի առաջ, քննության առնելով ֆըզոնոնեբում յեղած դրությունը։

Գայլատոմասավորները հաճախ եյին գալիս հայրիկի մոտ։ Այժմ նրանց մեկնակ չեր ընդունում, այլ Տանյայի հետ։

Մեկ անդամ ուշ աշնանը մեզ մոտ յեկավ մի գայլատոմասավոր՝ մի յերիտասարդ կապուտչվի ուսանող։ Ճարպիկ ու բարձրահասակ՝ նա զրավում եր իր զբաղմունքով ու կատակներով։ Նստելով վառարանի մոտ ու կրակին նայելով, բարձր ձայնով վոլտական յերդեր եր յերգում, համացուկ նվագելով կիթառի վրա։

Տանյան նստել եր անկյունում և հետաքրքրությամբ նայում եր ուսանողին։

Տաքությունից թմրելով և որվա ընթացքում հոգնած լինելով՝ յես անհկատելի քնեցի։ Արթնացա բարձր, հուզված ձայներից։

Ուսանողը կանգնել եր աթոռի մեջքը բռնած, նրա վերնաշապիկի ոճքը բաց եր։

— Բայց չի՞ վոր դա հատկանալի յե,— հուզված ասում եր նա։— Իմպերիալիստական պատերազմը պետք և դառնա քաղաքացիական պատերազմ։ Վոտքից գլուխ զինված հարյուր հազարավոր մարդիկ իրենց հրացանները կդարձնեն նրանց դեմ, ովքեր դարերով ճնշել են իրենց։ Ցեխ այն ժամանակ— ի՞նչ, ինչ՞ր կանենք մենք այն ժամանակ։

Գայլելով սենյակում և ձեռնափայտը թխթխկացնելով, հայրիկը հանկարծ լալն ժպտաց։ Տանյան մթագնած, փայլող աչքերը չեր հեռացնում ուսանողից։ Ցեխ յերբ ուսանողը մի րոպե լռեց, Տանյան մոտեցավ նրան և յերկու ձեռքով բռնեց նրա ձեռքը։

— Եվ ի՞նչ կարիք կա ապասելու,— խիստ ձայնով և հուզված հարցրեց նա,— պետք և հենց հիմա։ Պետք և խնդրեն։

Ուսանողն իր պատասխան ժպտաց և արագ, ուժգին շարժումով վիրաբուժական խոսեց աղջկա ուսին.

— Ցեթե չտապենք,— զործը կտապալենք։ Հարկավոր և լավ պատրաստվել դրան։

— Բայց մի՞թե կարելի յե՝ ապասել,— կրկին հուզված հարցրեց Տանյան։

— Իսկ դու մի բորբոքվիր,— հանդարտացրեց նրան հայրը:— Դեռ ժամանակը չի լինել:

Հետո յերեքով նստեցին սեղանի մոտ և ինձ հասնում էին ուսանողի առանձին նախադասությունները: Նա խոսում էր բոլշևիկների կուսակցության մասին:

Լուսադեմին, յերբ յես աչխատում էլի բակում, ուսանողը ճանապարհ ընկավ: Տանյան դուրս յեկավ ուղեկցելու նրան մինչև դարպասը: Յես տեսա Տանյայի խիստ, թախծոտ դեմքը: Ուսանողը թեքվեց նրա կողմն ու, ծիծաղելով, ինչ վոր բան ասաց կամաց: Իսկ հետո նա գնաց ճանապարհով, իսկ Տանյան, մոտենալով ցանկորմին, յերկար անշարժ կանգնած էր, հայացքը չհեռացնելով բարձր, արագ հեռացող կերպարանքից:

Յերբ յես տուն վերադարձա, Տանյան նստել էր, ձեռքին ուսանողի թողած գիրքը: Յես արդեն հետո յես նայեցի այդ գիրքը: Շապկի վրա գրված էր՝ «Լենինյան»:

★

Յես ճիշտը չգիտեմ Տանյան յերբ մտավ կուսակցության մեջ, բայց դա հեղաշրջումից առաջ էր: Ավելի ուշ միայն իմացա, վոր Գրիգոր Գոլովինկոյի բնակարանում հավաքվում էր գինվորներից, ճակատային–կազակներից և մի քանի յեկվորներից բաղկացած փոքրիկ կազմակերպությունը:

Փետրվարյան հեղաշրջման մասին մեզ հայտնեց Տանյան: Նա վազում էր բակով և բացականչում՝ լրագրերը թափահարելով: Ինչվոր ցնծագին և մեծ բան էր պատահել, վոր հարկադրեց բոլորին վոտքի ցատկել ու նետվել դեպի Տանյան: Նա, շնչահեղձ, կարդում էր ցարի հրաժարվելու հաղորդագրությունը:

Յես տեսա հորս արցունքով լցված աչքերը, Տանյան նույնպես նայեց հայրիկին, նետվեց դեպի նա ու դրկեց պարանոցը:

Նոր կյանք էր սկսվում:

Իսկ հետո՞:

Բանակը ճակատում յեղբայրանում էր գերմանացիների հետ, թողնում էր խրամատները, տուն էր վերադառնում: Պետրոգրադի փողոցներում կռիվ էր տեղի ունենում ապստամբված

բանվորների և կերենսկու զորքի մեջ։ Կուբանում Ռադան զբաղվորից սպիտակ սպայություն։

Փետրվարի սկզբից հենց Տանյան ամբողջովին տարվեց կուսակցական աշխատանքով։ Նա հանդես էր գալիս միտինգներում, չէջում էր հարևան ստանիցաները, պահանջում էր պատերազմը դադարեցնել, հողը աշխատավորներին տալ։

Նրա դեմ վոտքի էլան կուլակները և ուսուցիչները։ Երբանք մեկ անգամ Տանյային վռնդում են ժողովից, յերբ նա յելույթ է ունենում դպրոցում, անվանելով նրան ծախված աղջիկ, գերմանական շպիոն, դավաճան։

Բայց Տանյան հանգիստ էր վերաբերվում նման ընդհարումներին։ Նա պատմում էր դրանց մասին և ուրախ ծիծաղում, աչքերը վոյլատակելով։

— Դա կարևոր չէ։ Մենք, միևնույն է, հասնելու յենք մեր նպատակին։ Թող դուդուտան։ Մասսաները նրանց յետևից չեն գնա։

★

Մեկ անգամ Ռոստովում ստանիցայում կուլակները քիչ էր մնացել նրան ծեծեն։ Այդ ժամանակ յես Գրիգորիյ յեղբոր հետ մտել էինք կոմիր գլխարդիական ջոկատը։ Յերեկոները հավաքվում էինք, դուրս էինք դալիս ստուգատեսը և այնտեղ ճակատայիններից մեկն ու մեկը մեզ հրացանի հետ վարվել ու կրակել էր սովորեցնում։ Տանյան մեր ջոկատի հրամանատարներից մեկն էր։

Յերբեմն մենք հերթով գնում էինք ստանիցաները կուսակցական ընկերների հետ, վորոնք պետք է յելույթ ունենային միտինգում։ Ահա ինչու յես Տանյայի հետ մեկնեցի Ռոստովի ստանիցան։ Մեկնելուց առաջ ընկերներից մեկը պատմեց, վոր ստանիցայում դրությունը լավ չէ, վոր այնտեղ դրծում են կուլակներն ու յեկած սպիտակ սպայությունը։

Յես դգում էի, վոր Տանյան հուզվում է, թեպետ արտաքուստ հանգիստ էր։

Ստանիցայում կուսակցական կազմակերպություն նիստի յեր։ Տանյան մտավ խրճիթն ու պայմանավորվեց ընկերների հետ, վոր կգնա հրապարակ, ուր միտինգն արդեն սկսված էր։

Հրապարակը լի էր ժողովրդով։ Մենք դժվարությամբ հասանք ամբիոնի մոտ։ Այնտեղ, բոլորի աչքի առաջ նստել էր առանիցայի բարձրահասակ, փոքր ինչ սպիտակած մազերով և վեհ տեսք ընդունած առաջնորդը, կազակային առարշինայի ուսադիրներով։ Փափախը ծոծրակին քաշած և ձեռները թափահարելով, խոսում էր արծաթյա պաղիրներով սպիտակ չերքեզկա հագած հարյուրապետը։

Նա խոսում էր ազատ կազակության տրադիցիաների մասին, այն մասին, որ ամբոխն ու խայտառակությունը կծանրանա հայրենիքի հավատարիմ ու լավագույն զավակների գլխին, եթե նրանք չհաղթեն Գերմանիային։

— Պետք է մոռացության տալ երկպառակությունը, ցեխվորները պետք է դաշտերն պղտորել ժողովրդին և կազակության հետ միասին դնան պաշտպանելու հայրենիքը,— վերջացրեց նա և, ծանր շնչելով, թռավ դեսին։

Ուր որ մոտիկ «ուռա» բացականչեցին։ Բացականչությունը տարածվեց հրապարակում և յերբ լռեց, բազմության մեջից մի ղայրացկոտ ձայն լսվեց.

— Կարծես սպանդանոց ես հրավիրում մեզ։ Իսկ հողը մինչև որս էլ չտեսանք։ Ինչ է, յերեխաներն ու կանայք քաղցից ուշնե՞ն։

Սոսկալի աղմուկ բարձրացավ։ Վոմանք պաշտպանում էին ցեխվորներին, վոմանք դոռդոռում էին նրանց դեմ։

Ցես չնկատեցի, թե Տանյան ինչպես բարձրացավ ամբիոն։ Ջնդուն ուստր կանացի ձայնը հարկադրեց բազմությանը հանդրստանալ։

— Դա հո ուսուցչուհին է, Պոպուռնայա ստանիցայից,— բացականչեց մեկը։

Ցես յերբեք չէի լսել, վոր այդպես խոսեն։ Նա խոսում էր կրակոտ, իսկական հռետորի նման։ Ցեվ նրա ուստր ու անճանաչելի դարձած ձայնը թափանցում էր հոգու մեջ և հարկադրում հավատալ յուրաքանչյուր խոսքին։

Նա խոսում էր հողի մասին, վորի համար պաղտնարար յերազում էին մարդիկ, այն կյանքի մասին, վորը պետք է նվաճել զենքը ձեռքին։ Իսկ յերբ նա խոսեց բոլշևիկների մա-

ին և արտասանեց Լենինի անունը, բազմությունն անզգայացավ։

Ցեխ նկատեցի ատամանի մռայլված դեմքը, հարյուրապետի անհանգստացած հայացքը։ Նա թևքվեց բարձրահասակ-սարքոշ ուրյադնիկի կողմը, վորը կանշնած եր իր կողքին և աչքը չեր հեռացնում Տանյայից։

Անհանգստությունից սիրտս սեղմվեց։ Ուրյադնիկին արագ չարժումով նետվեց դեպի Տանյան և արմունկով մի կողմ հրեց նրան։

— Կացարվե՛ր, ախանջ մի դրեք կնոջ ասածներին,— սուբ ղոչից նա, խլացնելով Տանյայի ձայնը։— Նա գերմանական չպէսններից է։

Տանյան աշխատում եր նրանից բարձր դոչել, բայց աղմուկն ու աղաղակը խլացնում էին նրա ձայնը։

Հանկարծ ուրյադնիկին անսպասելի դարձավ դեպի Տանյան և ուժգին խփեց նրա դլխին։

Ցեխ տեսա, ինչպես յերեքաց Տանյան ու նետվեցի դեպի ամբիոնը։ Բայց դեպի նա հորդած ամբոխը չեղքել անկարելի էր։

Անսպասելի կերպով սուբ սուլոց հնչեց։ Ցեխ տեսա ընկեր Զերժինչենկոյի ծանոթ դեմքը։ Մատները բերանը դրած և Տանյային ծածկելով ուրյադնիկից, նա սուբ սուլում եր։ Ցեվ այդ սուլոցը մի տեսակ թեթևացրեց մթնոլորտը։ Ժամանակ չտալով խելքացած մարդկանց ուշքի դալու։ Զերժինչենկովը դոչեց թավ բասով.

— Ի՞նչ եք անում... Անպաշտպան կնո՞ջ եք ուղում ոչնչել։ Մի՞թե դա պատիվ է բերում կազակուհյանը։ Թիղճ չունե՛ք դուք— կնոջ հետ դլուխ դնել։

Ամբոխը դեռ յերկար աղմկում եր, մարդիկ չարունակում էին վիճել, բայց զայրույթն անցել եր։ Ժողովից յեկած ընկերները հետ մղեցին Տանյային և ոչնչեցին նրան դուրս դնալու հրապարակից։

— Այդպես վրկեց Տանյային ընկեր Զերժինչենկոն, վորը հետաքրքրում դարձավ Ռոբոչնոյե ստանիցայի կարմիր գվարդիական ջոկատի հրամանատարը։

Բոլշևիկները ընդհատակ անցան։ Տանյան տանը չէր ապրում, դիշերում էր ծանոթների մոտ, ընկերների հետ թաղնվում էր յեղեգնուտում։

... Աշնանային մի ցուրտ դիշեր, ընդհատակյա հեղկոմի հրամանով կարմիր դվարդիական ջոկատը շրջապատեց ստանիցայի ատամանի վարչությունը և զինաթափ արեց իշխանությունը։ Ամբողջ դիշեր ստանիցայում հրացանաձգություն էր տեղի ունենում, իսկ լուսադեմին ոպիտականները նահանջեցին դեպի լեռները։

Հեղկոմի առաջին նիստում Տանյային նշանակեցին պարենավորման կոմիսար։

Ամբողջ ընտանիքն ուշ դիշերով տուն հավաքվեց։ Տանյան յեկավ բոլորից ուշ։ Նա հուզված պատմում էր հայրիկին դեպքերի մասին։

Այդ դիշեր նա կորել էր իր յերկար հյուծը։ Մայրիկը վախեցած բացականչեց ու լաց յեղավ։

Տանյան բարձրաձայն ծիծաղեց ու թափահարեց կարճ կլորած մաղերը։

— Ուրիշ կերպ չի կարելի, մայրիկ։ Տանջվեցի յես մազերիս ձեռքին։ Իսկ այժմ հարկ կլինի մեքենների համար ատանիցաները դնալ։ Ինձ զարում են մազերս։ Դե դու լաց մի լինի, յես դեռ յերկար եմ ապրելու։ Նորից կգան։

Յես նայում եյի Տանյային ու չեյի ճանաչում նրան. դեմքին ուրիշ տեսակ եր զարձել, բոլորովին մանկական։ Ու մտածում եյի՝ «Յերթե նրան տղամարդու հագուստ հագցնես, աքանչելի տղա կդառնար»։

Այդ դիշեր հայրիկը յերկար խոսեց մեզ հետ։ Ուշ եր, յերբ մենք բաժանվեցինք։ Յես յերկար չեյի կարողանում քնել։ Յեվ հանկարծ լուսյան մեջ հնչեց հայրիկի հուզված, կամացուկ ձայնը.

— Ինչ լավ է, վոր մենք այսպիսի յերեխաներ ունենք։ Լսո՞ւմ ես, մայր։ Յեվ յերթե իմ անիծյալ վոտքը չլիներ, հրացան կվերցնեյի ու կգնայի նրանց հետ։ Դու կարծում ես, ինձ չեյի՞ն ընդունի կարմիր դվարդիա։

Տանյան այժմ սակավ եր տանը լինում. տուն եր վազ տա-
լիս մի քանի հագուստեղենը փոխելու և մի քան ուտելու: Մայ-
րիկը խնդրում եր նրան սահմանի երեն, բայց նա չպրունակ
նույն պատասխանն եր տալիս.

— Հիմա չի կարելի, մայրիկ: Այնպիսի ժամանակ է, որ
յուրաքանչյուր րոպեն թանդ է: Ճեռ ալիսի կերակրեմ և՛ քա-
նակը, և՛ հիվանդներին: Մեր վիճաբանն վոչ վոք չի աշխատի:
Իսկ կուլակները ժողովրդին պղտորում են, մթերքները թաղ-
նում:

Ճեռ հաճախ եյի մտնում հեղկոմ: Տանյայի մոտ մի քիչ շատ
կանայք եյին լինում: Նա կարգադրություններ եր անում նը-
րանց և կանայք սայլերով մեկնում եյին կուլակներից խլած
ցորենը փոխադրելու:

Չարմանքով եյի լսում, ինչպես և կարողանում նա կար-
գադրություններ անել և տեսնում եյի, վոր վայելում է ընկեր-
ների հարգանքը:

★

Բորրոքվեց քաղաքացիական պատերազմը: Ջորս կողմը ա-
պըստամբություններ ծագեցին: Զանջանված կոռնիլովական
զորքերը փախչում եյին Կուբան, Դոն, Սև-Ծովյան չրջան:
Սպայությունը կուլակությանը վոտքի յեր հանում խորհուրդ-
ների դեմ: Ստանիցաները ձեռքից ձեռք եյին անցնում:

Գաղանացած սպիտակ կազակությունը դեներալների և
սպայության հետ մարտնչում եր «միասնական ու անբաժան
Ռուսաստանի» համար, «ազատ կազակության» համար և ան-
խնա դատաստան եր տեսնում կարմիր զվարդիա զնացածների
ընտանիքների հետ: Տանյան էլ մեր չոկատումն եր: Նա սքան-
չելի ձի յեր հեծնում և կրակում եր համարյա առանց վրիպե-
լու: Արշավանքների ժամանակ նա տղաներից հետ չեր մնում,
քայլում եր կայտառ ու լայն քայլերով և նրա ծիծաղն ու յեր-
գերը փուվում եյին տափաստանում հեռու-հեռու:

Մեկ անգամ Տանյային քիչ մնաց կուլակները սպաննեն,
յերբ նա հարևան ստանիցայում պարեն եր վերցնում:

Զքավորները ջրաղացպանի բակում թաղցրած ալյուրի
պաշար եյին հայտնաբերել: Տանյան գալիս է այն ժամանակ,

յերբ ալյուրի տոպրակները արդեն հանված էին հորից և կանոնավոր կուտերով շարված դետնին։

— Հավաքել բոլորը։ Տանել հեղհոմ,— հրամայեց նա և կարգադրեց ձերբակալել Ջրաղացպանին ու նրա վորդուն՝ մի քաջառողջ յերիտասարդի, վորը չար նայում էր նրան։

Նա յերկար մնաց հեղհոմում և յերբ դուրս յեկավ փողոց, խավար յերկնքում արդեն վառ փայլում էին աստղերը։ Սայլը կարմիր բանակայիններով, վորոնք ալիտի սպասելին նըրան, դնացել էր։ Մինչև Գոպուտնայա առանիցան 15 վերստ էր։ Տանյան անվճռական կանգ առավ։ Հիշեց Ջրաղացպանի բակում յեղած գոռում-գոչումները, սպառնալիքները։ Հեղհոմումն էլ ընկերներից վոչ վոք չկար, իսկ դնալ, փնտրել նրանց տներում, չէր ուզում։ Մարդիկ կարող էին մտածել, թե նա վախեցել է, բայց այդտեղ դիշերելը վտանգավոր էր. դեռ վերջերս այդ գյուղում կազակական ապստամբություն էր յեղել։

Տանյան դանդաղ քայլեց փողոցով, լարված նայելով խավարի մեջ։ Տներում հանդիպել էին լուսերը։ Զորս, կողմը դատարկ էր, միայն շներն էին հաչում դարպասների մոտ։

Առանիցայից դուրս, տափաստանում ավելի լուսս էր։ Տանյան դդուշ դնում էր, մատն առրճանակի պահպանակին դրած։

Առանիցայից յերկու վերստ վրա մի փոքրիկ հեղեղատ կար, փռած ժամրջակով։ Շունչը զսպած և քայլերը խլացնելով՝ Տանյան անցավ հեղեղատն ու հանկարծ լրենից բոլորովին մոտիկ լսեց կրակոց։ Ականջի կողքով սուր սուլեց գնդակը։

Տանյան նետվեց մի կողմ և, դետին ընկնելով, յետ նայեց։ Ցերկու մութ կերպարանք վազում էին իր կողմը։ Թողնելով, վոր նրանք մոտենան, նա կրակեց։ Կերպարանքները յետ թռան ու պառկեցին առվակի մեջ։ Տանյան սողաց դետնի վրայով և, յերբեմնակի յետ նայելով, կրակում էր շարժվող խոտի ուղղությամբ։

Հեռվում մի սայլ ղղրդաց։ Ցեվ վորքան մոտ էր հնչում նրա ձայնը, այնքան սարսափելի յեր դառնում։ Ո՞վքեր էին դրանք. յուրայիննե՞ր, թե՞ ուրիշներ։

Ցեվ միայն յերբ սայլը բոլորովին մոտեցավ, Տանյան ճանաչեց կառապանին ու յերկու մարտիկներին։

— Մ՛ւր գնացիր,— անհանգստացած բացականչեց մարտիկը։— Մենք միայն գնացել էինք վարսակ վերցնելու։

Ուշ գիշերին Տանյան տուն չեկավ։ Աշխատելով չաղմկել, նա տաքացրած կաթ լցրի նրա համար, իսկ նա պատմում էր, ինչպես կուլակները կտրել էին իր ճանապարհը։

— Ես ինձ չկորցրի,— ասում էր նա։— Բայց և այնպես, շատ ապրանքներ չկար։ Շատ հիմար բան է այդպես մեռնելը։ Անխիտ մահ։

— Բայց մի՞թե խմասատակից մահ կա,— զարմացավ նա։

— Իհարկե,— քմծիծաղեց նա։— Ես կուզենայի այնպես մեռնել, վտրտված դրանից ոդուտ լիներ։ Իսկ հիմար ձևով մեռնել— ամեն մեկը կարող է։

Ես մի փոքր կասկածով նայեցի նրան։ Ցավ մխայն շատ ավելի ուշ հասկացա, ինչ էր ուզում ասել նա։

★

Տասնութ թվի ամառը սպիտակները ջոկատներ կազմակերպեցին ու սկսեցին հարձակումները։ Կարմիր բանակն այն ժամանակ դեռ բավականաչափ զենք ու հանդերձանք չուներ, չուներ հրամանատարական անուր կազմ։

Աշունը ցուրտ էր, քամին։ Վաղուց արդեն սպիտակները գրավել էին Ցեկատերինոդարը, հետո Արմավիրը և ստանիցայից բոլորովին մոտիկ կռիվներ էին գնում դեներալ Գոկրովկու հետ։ 11-րդ կարմիր բանակը նահանջում էր դեպի Նեվինկա, մի մասը՝ Ստավրոպոլ, ուր անընդհատ կատաղի կռիվներ էին գնում։ Բծավոր տիֆ սկսվեց։ Տիֆը հնձում էր մարտիկներին, մերկացնում էր ռազմաճակատը։

★

Մենք ստանիցան թողնենք տաք կռվից հետո։ Նահանջում էինք մթնշաղին։ Փողոցում փոշի բարձրացնելով, ձիերն էին դուխում ամբակներով, դղրդում էին կայքով ու մթերքներով բեռնված սայլերի անիվները։ Ցերկար շարանով ձգվել էր կառանցով, ծերերով ու յերեխաներով բեռնված նահանջող զուտակը։

Գումակը ծածկելով և հրացանաձգությամբ պաշտպանվելով՝ մենք դանդաղ մոտենում էինք մեր տանը, ուր բակում սպասում էին թամքած ձիերը։

Տանյան վազեց տուն, համբուրեց մայրիկին, քույրիկին և գրկեց հայրիկին։ Հայրիկն ամուր սեղմեց նրան իր կրծքին և հուզված, արագ-արագ ասաց.

— Եկեք ձեզ մի բան պատահի, շատ ծանր կլինի ինձ համար, իսկ տեքե ճանապարհից չեղվեք՝ ամեն վատ։

Մոտակայքում գործեց դնդացիրը։ Տանյան սրտխվեց հայրիկից ու նետվեց բակը։ Ճարպիկ շարժումով թռչելով ձիու վրա՝ նա մորակեց ու ձեռքով հրաժեշտի շարժում արեց դռանը կանգնած ծերունիներին։

★

Բանակը մեծ կռիվներով նահանջում էր Նեվինկա։ Թիկունք չկար, ամեն տեղ կռիվներ էին։ Սոանիցիներն այրվում էին կռիվներում։

Մենք հազվադեպ էինք տեսնվում Տանյայի հետ. ինձ նշանակեցին ուրիշ ջոկատ. Գրիգորիյ յեղբոր ուղարկեցին հրևան զորամասը։ Շատ աշխատում էի տղաների միջոցով տեղեկանալ քրոջս մասին, որը գտնվում էր շտաբում, բայց դա միշտ չէր հաջողվում։

Տանյային յես տեսա միայն Նեվինկայում։ Դա դժխավոր հրամանատար Սորոկինի դավաճանության ժամանակ էր։ Մի-սինգից հետո յես գնացի շտաբ։ Տանյան այնտեղ յեկավ մի-այն ուշ գիշերը։ Նա ամբողջովին կապտել էր և վոչ մի կերպ չէր տաքանում։

— Այսօր ամբողջ որը ժողովներում յելույթներ եմ ունեցել։ Զայնս խռպել է,— խռպոտ ասաց նա։— Ինչ մեծ հանցագործություն՝ Սորոկինը դնդակահարել և լավագույն կուսակցական ընկերներին։ Մի՞թե վորևե մեկի մոքով կանցներ, վոր նա կդավաճանի։

Յես նրան համոզեցի պառկել շտաբի հարևան սենյակում և լավ փաթաթելով, տաք սուրճ խմացրի։

Նա փոքր ինչ կենդանություն առավ, տաքացավ և աչքերը փայլատակելով, վստահ ասաց.

— Մոսկվայից տեղեկություն է ստացված: Մեզ մոտ մի ամբողջ խումբ կարմիր հրամանատարներ են ուղարկվել: Ընդառաջ գալիս են Ցարիցինով: Կփոխարինեն հին սպաներին, կարդի կդցեն զորքը, և մենք կրկին հարձակման կդիմենք:

— Իսկ դու կարծո՞ւմ ես, որ մենք բավականաչափ ուժ ունենք, որ հաղթենք:

— Հավատացա՞ծ եմ արդյոք: Դե, իհարկե: Թող առանձին պարտություններ, անհաջողություններ լինեն— դա ժամանակավոր է, մենք, իհարկե, դեռ հարձակման կդնանք: Բանակն այժմ վերակառուցվում է, ուժ և կուտակում, իսկ հետո ինքդ կտեսնես, ինչ կլինի:

Տանյան անհանդստանում էր վոքր յեղբոր՝ Գրիգորիի մասին:

— Դու, Նիկոլայ, գնա նրա մոտ, չե՞ որ նա համարյա յերեխա յե: Հիմարաբար կարող է դերի ընկնել: Տեսել եմ, ինչպես է նա իրեն պահում կռվում: Հարկավոր է հանդիստ լինել, իսկ նա ուղղակի սպիտակների վրա յե նետվում: Ի՞նչ կարիք կա դուբ տեղը դլուխը վեր դնելու: Վոչ վոքի հարկավոր չե դա:

Ցնա խոստացա այցելել յեղբորս և ուշ դիշերը վերադարձա իմ զորամասը:

★

Մի քանի որից, ինչպես Տանյան էր ասում, ամբողջ ճակատում հարձակում սկսվեց:

Ստանիցայից դուրս գալուց մի քանի րոպե առաջ յես զբաղցի քրոջս հետ տեսակցելու: Տան մոտ Գրիգորիյ յեղբայրս զրաղված էր ձին սայլին լծելով:

— Դու ինչո՞ւ յես այստեղ,— զարմացա յես:— Ինչո՞ւ զորամասումդ չես:

— Ցերկրորդ որն է, արդեն այստեղ եմ: Դու մի՞թե չես լսել, որ Տանյան հիվանդացել է: Շտաբից ինձ կանչեցին երան խնամելու: Բժիշկն առավոտյան յեկավ, ասում է տիֆ է: Ցնա ներան համոզեցի հիվանդանոցում պառկի, չի ուզում: Հիմա էլ կարգադրել է ձին լծել:

— Ո՞ւր պիտի գնա նա,— զարմացա ես ու տուն մտա։

Տանջան պահած եր նույն այն կոկիկը վրա, որի վրա պահվեցրի ես նրան մի քանի որ առաջ։ Նա շտապով ինչ որ թղթեր եր հանձնում մի յերիտասարդ տղայի, և պատմում եր, թե ինչ պետք է անել։ Ինձ տեսնելով, նա հազիվ նկատելի ժպտաց ու ասկով չխնդց ճակատը։

— Այդ ի՞նչ ես այդպես ամոթով թողնում մեզ։ Հիմա ժամանակը չե,— փորձեցի կատակել ես։— Հարկավոր է հիվանդանոց գնալ, դուրիկ։ Այստեղ ի՞նչ բժշկություն կարող է լինել։

Նա կիսով չափ բարձրացավ, այտերը վառ կարմրությամբ ծածկվեցին։ Ցես յերբեք չեյի լսել, որ նա այդպիսի ջղայնացած ձոնով խոսի։

— Ի՞նչ եք բոլորդ միևնույն բանը կրկնում՝ հիվանդանոց, հա հիվանդանոց... Հիվանդանոց չե՛մ գնա։

— Բայց դու յերբեք չես առողջանա, յեթե ղորքի հետ սկսես տեղից-տեղ փոխվել։

Նա հանկարծ ինձ թվաց բոլորովին փոքրիկ ու թույլ։ Դեմքը խորշոմեց, ճակատին կնճիռներ հավաքվեցին, և խոնավացած աչքերը թաղցնելով, Տանյան կամացուկ ու հուզված ասաց.

— Ձեմ կարող յես մերոնցից բաժանվել։ Վշտից այստեղ մենակ կմեռնեմ։ Դու մի վախեցիր, ամեն ինչ լավ կլինի։ Գրչանը հիմա ինձ հետ է։ Ընկերները սայլ ուղեցին։ Կգնանք դուսմակում, չենք շտապի,— համոզում եր նա ինձ և աստիճանաբար ողջ կյանքումս յես ինձ երանից մեծ և ուժեղ զգացի։

Ինչո՞ւ յես այն ժամանակ չպնդեցի իմ ասածը և չպահեցի նրան Նեվինկայում։

★

Հայրենական մարտերով մենք աստղ եյինք շարժվում նույն այն ճանապարհով, որով դեռ վերջերս նահանջել եյինք։

Նոյեմբերի սկզբին մենք դրավեցինք Կոզմինսկոյե գյուղը, Պետուշոնայա ստանիցայից քսան վերստ հեռավորության վրա։ Ջոկատը կարճ ժամանակով կանգ առավ հանգստի։ Ցերկու ժա-

մի չափ յես չըջում էյի տներում, խմանալու համար, վորտեղ ե կանդ առնել Տանյան յեղբորս հետ:

Մարտիկներից մեկը ցույց տվեց ինձ մի վոջըխկ տնակ դյուղի մեջեին մատում: Առանց ծեծելու բաց արի դուռը: Դեմքես խոնց անդյակի գաղջ ողը: Ցես անմիջապես Տանյային տեսա: Նա չափազանց վոխվել եր, գունատ դեմքին վորոշակի աչքե էյին ընկնում նրա ահագին թուխ աչքերը:

Մահճակալի մոտ մի ինչ վոր հին խամելիք եր տալիս, վերմակին եր ուղղում:

Ցես տեսա նիհար, գունատ ձեռքը յերկար, թեթեւակի դողացող մատներով:

— Ինչպե՞ս են դործերը ճակատում,— հապիվ լսելի հարցրեց նա:

— Լավ ե, Տանյուշա, տեսնո՛ւմ ես, ինչպես ենք քշում նրանց: Մեր տունը կողքներիս ե, մի յերկու որից մեր ծերունիներին էլ կտեսնենք: Դու միայն առողջացիր:

Նա ծանր հառաչեց ու հայացքը մի կողմ դարձրեց:

Տանյան պառկել եր լուռ և, թվում եր, չի լսում ինձ: Հեռվից չեխերի ձայն հնչեց:

— Ժամանա՞կ ե,— ցնցվեց նա:

Ամեն ու ամեն ուժգին եր հնչում վողահարը չեխերը:

Ցես խոնարհվեցի քրոջս վրա ու համբուրեցի նրա տաք ճակատը: Նա բռնեց իմ ձեռքն ու անդադար ամուր սեղմեց:

Շեմքին յես շուռ յեկա ու տեսա նրա անհանդիստ, վշտահար հայացքը: Ցես ուղում էյի նետվել քրոջս մոտ, վերցնել, տանել նրան այդտեղից, պաշտպանել ինչ վոր սոսկալի բանից, վոր հսկայական քարի պես ճնշում եր իմ սիրտը:

Փողոցում արդեն հեծյալներ էյին սլանում: Ցես դուրս յելա ու ծածկեցի դուռը: Մի՞թե յես կարող էյի յենթադրել, վոր դա մեր վերջին հանդիպումն եր:

Իսկ մեկ որ հետո պատահեց այն, ինչ վոր վոչ վոք չեր սպասում:

Մենք արդեն մոտենում էյինք Պոպուտնոյին, յերբ, մեր թիկունքն անցնելով, ապխտակները ներխուժեցին կողմնակա և զբաղեցրին այն: Մեր զորամասն ոչնչց չտապով նահանջել դեպի Նեվինոմիսկայա:

Ցեխ միայն մի տարի հետո չես խմացա քաղաքը, ինչ պատահել էր Տանյայի հետ։

Իմ մեկնելու մյուս որը չեղբայրս վորոշում է չերեկոյան կողմը դնալ Նեվինկա կեր բերելու։ Ձորս կողմը խաղաղ էր, տանտիրուհին խնամում էր Տանյային։

Ուշ դիշեր Գրիգորին, վարսակի տոպրակը սայլում, մոտենում է կոզմենկային։ Մութ դիշեր է լինում, քամին վոշի չեր բարձրացրել, և վատ էր չերևում, ինչ է կատարվում աղջևում։

Նա արդեն դյուղ էր մտել, չերբ անսպասելի հրացանաձգություն է սկսվում։ Իսկ հետո դիմացը չերևում են սայլեր, տաշանկաններ, աղաղակող մարդիկ։ Մեկը փախչում էր միայն սպիտակեղենով։ Սմեն կողմից դոռում-դոչում էին մարտիկները ու խնդիացածի պես կրակում դեպի դյուղի կենտրոնը։

Գրիգորին իրեն չի կորցնում, մտրակում է ձիերը։ Մինչև այն տունն, ուր պահած է լինում Տանյան, մի թաղամաս է մնացած լինում։

— Ո՞ւր ես գնում,— բացականչում են նրա չեւից սայլավորները։ Սպիտակ հեծելազորն ամբողջ դյուղը դրավել է։

Սայլերը սլանում էին արդեն մի քանի չարքով։

Առաջին բոպեին Գրիգորին չի կարողանում ըմբռնել, թե ինչ է պատահել։ Նա թռչում է դեպին, սայլը չուռ է դալիս և ձիերը խճճվում են միմյանց մեջ։ Նահանջող սայլերը վայր էին գլորել նրան։

Փողոցում արդեն սուլում էին գնդակները, շատ մոտիկ դոփծում են ձեռքի գնդացիրը։

Այն ժամանակ միմյանց կտրելով, Գրիգորին թռչում է ձին ու գնում խուճապով նահանջող մարդկանց չեւից։

Ցեխ չերբ դյուղից դուրս է գալիս, նոր միայն պարզ հասկանում է, վոր Տանյան մնաց այնտեղ, սպիտակների ձեռքը...

★

Չերեկոյան կողմ, չերբ Գրիգորին Նեվինկա չի մեկնում, Տանյայի տաքությունը բարձրանում է։ Նա զալարվում է անկողնում, ազահորեն ջուր է խմում և ինքնամոռացության մեջ ընկնում, բարակ, մղկտալի ձայնով կանչում է հորը, մորը, ինձ

ու Գրիշային։ Նրան տանջում են սոսկալի կռշմարնները։

Յերբեմն նա ուշքի չի գալիս, դլուխը փոքր ինչ բարձրաց-նում բարձից ու անհանդիստ ականջ դնում քամու վոռնոցին։

— Գրիշան չկա՞։ Ինչո՞ւ չեկավ նա,— վախեցած նայում է նա տանտիրուհուն, ոտար սենյակին ու վոչքրիկ ծխացող լամ-պին։

Ուշ դիշերին նա բաց է անում աչքերն ու յերկար նայում տանտիրուհու խորշոմած դեմքին։

Յերբ դյուղում հրացանաձդուԹյուն է սկսվում, Տանյան Թուլում է մահճակալից։

— Այդ ո՞վ է այնտեղ,— հարցնում է նա։— Յեղբայրս չկվել է՞։

— Դեռ չի յերևում,— պատասխանում է տանտիրուհին։

Տանյան հետ է ընկնում, ափսոլ ծածկում դեմքը։ Նրա դեմքը մեռելային դունատուԹյուն է ունենում։

Բակում ձիու դոփյուն է լսվում։ Տանտիրուհին նեռվում է մի կողմից։ Փողոցում հրացանաձդուԹյուն եր դնում, ինչ վոր տեղից վախեցած աղաղակ է լսվում։

Իսկ յերբ տանտիրուհին սենյակ է վերադառնում, հիվանդն ուշաղնաց ընկած է լինում լուսամուտի մոտ։ Ըստ յերևույ-Թին, նա փորձել եր դուրս դնալ։

Յեվ արդեն ուշ ժամանակ, ուշքի դալով, Տանյան կրկին անհանդիստ դալարվում է անկողնում.

— Այժմ յես կորա։ Այլևս դուրս չեմ դա այստեղից։

Տղամարդկանց ձայներ են լսվում, և մեկը բարձր և ուժ-դին ծեծում է դուռը։

«Ծով պատճառելու չափ ծանր է ինձ համար վերհիշել այդ բոլորը, բայց յես ուզում եմ, վոր մեր յերիտասարդությունը ճանաչի մեր հերոսներին, սովորի ինչպես պետք է պայքարել ու ապրել, և յերբ հարկավոր է, արժանավայել մեռնել վորպես բոլշևիկ»։

«Շատ եմ մեծ,-ասում աշակերտները, վոր արդեն աշխատում եմ արդյունաբերության մեջ, գյուղատնտե-սության մեջ».

(Տատյանա Սոլոմախի Նախկին աշակերտ Գրիգորիյ Գոլովինկոյի Նամակից)։

Ցնծ աղջիկ յերկրորդ տարին էր, ինչ սովորում էր դպրոցում, յերբ մեզ մոտ նոր ուսուցչուհի ուղարկեցին: Մենք, յերեխաներս, հետաքրքրությամբ դիտում էինք Տատյանա Գրիգորյեվնային: Նա վայելչակազմ էր, բարձրահասակ, յերկար խոպոպավոր հյուսով, և մեզ թվում էր, վոր նա մի քանի տարով է միայն մեզանից մեծ:

Յերեխաներից մեկն ասաց.

— Ե՛հ, այս տեսակին կարելի յե և չլսել: Այժմ դասի ժամանակ ինչ ուզում ես, այն էլ արա:

Սրա պես, թեթև քայլերով նա դասարան մտավ և, յերեխաների դլուխները վայրկյելով, սկսեց հարցնել այն մասին, թե ինչ ենք անցել մենք յերեկից առաջ:

Հետևի նստարաններում մեկը բարձր սուլեց: Ուսուցչուհին չուռ յեկավ և այնպես նայեց սուլող տղային, վոր մենք հասկացանք՝ նա վոչ վոքի թույլ չի տա խուլիգանություն անել: Իսկ հետո նա նստեց սեղանի մոտ, մենք խմբվեցինք նրա չուրջը և սկսեցինք լսել նրա պատմածները: Վոչ վոք մեզ հետ այդպես պարզ, հետաքրքիր ու լավ չեր խոսել, ինչպես նա:

Իսկ դասամիջոցին Տատյանա Գրիգորյեվնան մեզ հետ դրսում խաղաց և վերջնականապես նվաճեց յերեխաներին:

Ամեն առավոտ մենք ամբողջ դասարանով հավաքվում էինք կամուրջի մոտ, և հենց վոր ճանապարհին յերևում էր ուսուցչուհու բարձր կերպարանքը, մի քանց առաջ ընկնելով վազում էինք նրա մոտ: Մեզանից ամեն մեկն ուզում էր առաջինը վազել Տատյանա Գրիգորյեվնայի մոտ, բռնել նրա ձեռքը, քայլել նրա հետ:

Նա պիտեր, թե ինչպես և ապրում յուրաքանչյուր աշակերտ, և հաճախ էր լինում տներում ու խոսում ծնողների հետ:

Մի բան ինձ չափազանց մեծ չափությունն էր պատճառում: Հորս մոտ պիչերները յերբեմն ինչ վոր մարդիկ էլին հավաքվում, խմում էին մինչև լույս և ապա աննկատելի ցրվում իրենց տները: Նրանց մեջ մի կին կար և յես սատկիկ վախենում, յերբ մեկ անդամ ճանաչեցի, վոր նա մեր ուսուցչուհին է: Ին-

չի մասին լռին նրանք խոսում, կես չդիտեյի, վորովհետև այդ դիշերները մայրս իմ անկողինը գցում եր խոհանոցում։

Դուցե նա պատմում եր աշակերտների մասին կամ հորս պանդատվում եր ինձնից, մի բան, վորից կես ամենից շատ եյի վախենում, վորովհետև դիտեյի հորս խիստ բնավորությունը։

Ես վորոշեցի անպայման իմանալ ինչ են խոսում այդ մորդիկ դիշերները։

Մեկ անգամ, յերբ մայրս իմ անկողինը գցեց խոհանոցում, կես շուտ պառկեցի և քնած ձևացա։ Լսելի յեր, թե ինչպես մայրս ինչ վոր բան և անում սենյակում, հետո դուրս գնաց բակը։ Ես դուրս թռա մահճակալից և վազեցի լուսամուտի մոտ։ Մայրս կանդնած եր դարպասի մոտ, առես հսկում եր մեկին։

Անկողնուս մեջ դրեցի մուշտակը, ծածկեցի վերմակով և գլոնների մատների վրա վազեցի հորս սենյակը։ Այնտեղ դեռ վոչ վոք չկար։ Դրսում ճռնչաց դուռը։ Ես նետվեցի մահճակալի տակ և, շունչս զսպած, սեղմվեցի պատին։

Ինչպե՞ս եր թրթռում ու մարում սիրտս։ Ես ուշ չեյի դարձնում ներս յեկող տղամարդկանց վրա։ Վերջապես լսվեց ուրախ, ծանոթ ձայնը։ Սկսվում եր ամենից ծանրը։ Ես հընչեցի իմ բոլոր հանցանքները, վատ թվանշանները և իմ սիրտը ցավագին սեղմվեց ու գլոնները դողացին։

Առես հեռվից, լսեցի, ինչպես հայրս առաջարկեց նախադահ և քարտուղար ընտրել։ Իսկ հետո մի անծանոթ ձայն պարզորոշ ասաց.

— Առաջին հարցն՝ դինված ապստամբության մասին խոսքը տրվում և բոլշևիկների կուսակցության առաջին կոնֆերենցիայի պատգամավոր Տատյանա Սոլոմախին։

Ես անդդայացա։ Սիրտս այնպես եր խփում, վոր դժվար եր ընկել։ Հորը լուռթյան մեջ ուսուցչուհին սկսեց իր զեկուցումը։ Ես այն ժամանակ ամբողջը չհասկացա, ինչի մասին եր խոսում նա, և միայն ավելի ուշ, յերբ հայրս տուն վերադարձավ կարմիր բանակից, մանրամասն բացատրեց ինձ ամեն ինչ։

Ուսուցչուհին ասում եր, վոր բուրժուազիայի դեմ պայքա-

բերու մեկ միջոցը դինված ապստամբությունն է և իշխանությունը ժամանակավոր կառավարությունից վերցնելը։ Նա պատմում էր այն մասին, որ Մոսկվայում և Պետրոգրադում արդեն թափվել է բանվորների արյունը խորհուրդների համար և այժմ արդեն հերթը մեզ է հասել։ Նա պնդում էր, թե հարկավոր է անհապաղ կարմիր դվարդիա կազմակերպել և յերկար պատմեց կոմունիստական կուսակցության մասին։

Ես բոլորը չեմ հիշում, բայց դալրոցում յես դեռ յերբեք չեյի լսել, որ ուսուցչուհին այդպես համոզիչ ու հրապուրիչ խոսի։

Ես ինձ այնպես ուրախ և լավ եյի զգում, որ ուզում եյի բացականչել, յերգել, բայց վախենալով, որ ինձ կլսանեն, շարունակում եյի լուռ պառկած մնալ։

Շուտով այդ ժողովից հետո տեղի ունեցավ այն, ինչի մասին պատմ էր ուսուցչուհին։ Ստանիցայում ամեն որ միխինները ու ժողովներ եյին լինում։ Մենք, յերեխաներս, սովորաբար ամբոխի մոտ եյինք հավաքվում և լսում եյինք բոլորը, ինչ ասում էր Տատյանա Գրիգորյեվնան։ Մեկ դուր էր գալիս, որ նրա կողքից փոքրիկ սև աորճանակ էր կախված և յերբ հարևան ստանիցաներից վրա սպիտակ բանդաներ եյին հարձակվում, նա ջոկատի հետ միասին գնում էր կռվականներին քշելու։

Մենք ամբողջ լեգենդներ եյինք ստեղծում մեր ուսուցչուհու մասին և մեզ թվում էր, որ ամբողջ աշխարհում նրա նման գարմանալի և քաջ մարդ չի գտնվի։

★

Ես չեմ հիշում, թե մերոնք յերբ գնացին ստանիցայից և սպիտակները յեկան։

Ստատիկ հիվանդությունը թուլացրել էր հիշողությունս։

Ինչպե՞ս սարսափելի ու միխյնակ եյինք տանը ստանից հայրիկի, մանավանդ գիշերները։ Սպիտակները անից-տուն եյին շրջում, ձերբակալում և տանում եյին մարդկանց, քայքայում եյին տնտեսությունը։ Հրապարակի սյուներից յերկար ժամանակ կախված եյին մեռած մարդիկ։

Ստանիցայի բնակիչները, մանավանդ վախենալով,

խուճապ էին տալիս միմյանցից։ Սպիտակները տեղից տեղ էին բերում նրանց, ովքեր փոքր ի շատե համակրանք էին ունենում դեպի բոլշևիկները։

★

Մեկ անգամ ուշ յերեկոյան կոմինիկայից սպիտակները ուժեղ պահակախմբի հսկողությամբ բերեցին դերի բռնված կարմիր զինվորականների։ Առում էին, վոր նրանց մեջ մի կին կա, բայց նրան վոչ վոք տեսնել չեր կարողացել, վորովհետև հնձյալները վոչ վոքի մոտ չէին թողնում ձերբակալվածներին։

Սայլերն անցան վողջ գյուղով, ապա դարձան դեպի բլուրը, վորտեղ Ուրուպի վրա կանգնել եր առանիցայի վարչության հին շենքը, վորը բանտի յեր վերածված։ Նա չատ նեղվածք եր ու փոքր և որ ու դիշեր այնտեղ պահակ եր յերևում։

Մենք, յերեխաներս, դպրոց հավաքվեցինք։ Գարը ու արեվոտ առավոտ եր, վոտների տակ ճըթճըթում էին բարակ սառույցով ծածկված ջրափոսերը։

Մենք վաղում էինք միմյանց հետ մրցելով, բռնում էինք խաղում, յերբ դպրոցի դուռը բացվեց և շմաքին յերևաց սպասավորուհին։ Նրա դեմքը կարմրած եր, ուռած, և սովորաբար բարի աչքերը բարկացած էին նայում։

— Անամոթնե՛ր,— բացականչեց պառավը։— Դուք վոչ խիղճ ունեք, վոչ դուք։ Դուք այստեղ վազվզում եք, իսկ ուսուցչուհին, մեր աղավնյակը, վհակված և բանտում։

Առանց միմյանց հետ պայմանավորվելու, մենք ամբողջ զասարանով վազեցինք առանիցայի վարչություն։

Ես հիշեցի, ինչպես լուսադեմին առանիցայից դուրս կրակոցներ լսվեցին. այդ գերիներին էին զնդակահարում։ Թվով մինայն այն մարդից, վոր ուսուցչուհու հետ էլ կարող են նույնն անել, արցունքները սեղմեցին կոկորդս։

Առանիցայի վարչության առաջ յեղած ամբողջ հրապարակը լիքն եր ժողովրդով։ Շենքի մոտ, գերանների վրա նստել էին ծերունիները, խոսակցելով ու ծխախոտելով։ Ներանց կողքին կանգնել էին զինվորականները, մարտկոցը ձեռներին։ Հետին

շարքերում վախվորած խմբվել էին յեկվոր և կապակի չքավոր-ները։

Ամբողջ հրապարակը խոսում էր այն մասին, վոր բռնել են ուսուցչուհուն։ Մերկերը քննում էին այդ ուրախ-ուրախ, յերե-սասարդները մոայլ ու լուռ էին, հարուստ կազակները հայ-հոյում էին կոմիսարչային և սպասում էին առաջանք գալուն։

Առաջանքը յեկավ, բայց վոչ մեկնակ, այլ մեր նախկին ու-սուցիչ Կալինայի հետ, վորը առանիցան սալուտակները դրավելու առաջին խոկ որը ցարական ուսադիրներ հագավ ու կրծքին կպցրեց Գյորգիյևսկի մեդալը։ Բարձրահասակ ու ամրակազնիվ՝ նա քայլում էր առաջանքի կողքով ու նայում բազմութ-յանը, առհասարակ անվրդովորեն խվեխվով իր դեղնցիկ բարձրաճակատ գլուխը։

Ճեռ առնելությամբ նայեցի նրան։ Քանի՛-քանի անգամ, յերբ առանիցայում մերոնք էին, նա վազ էր տալիս հարց մատ և ասել, վոր առաջինը ջոկատ կմտնի, յերբ ապստամբները առա-նիցային մոտենան։ Քանի՛ անգամ նրան տեսել էի ամբոխի մոտ, յերբ բուռն յեղուլթ էր ունենում ուսուցչուհին, և այն ժամանակ նա ուրիշ դեմք ուներ՝ քծնական ու խոնարհ։

Բազմութ-յունն անմիջապես լռեց, ծերունիները վոտքի թռան դերանիներից և, փափախները հանելով, խոնարհ վողջունեցին։

Գահակախումբը պատվի առավ։

Բանդապետը վազեց առաջանքի մոտ և պատվի առնելով, ինչ վոր դեկուցեց նրան։

Մի վոքը անց՝ լսեցի Կալինայի բարձր ձայնը.

— Հա-պա, դուրս բեր կոմիսարչային։ Մենք նրա հետ կը-խոսենք հողի, ազատութ-յան և իշխանութ-յան մասին։

Ճեռ սրտի տրոփով նայեցի դռանը։ Ճեվ հանկարծ ինձ ապա-սավելի թվաց ամբոխը, առաջանքի թառամած դեմքը վերև ցցված բեխերով և Կալինայի ծաղրական հայացքը։

Դուռը ճռռոցով բացվեց և չեմքին յերևաց ուսուցչուհին։

Կողքին մեկը բարձր հառաչեց, յերևում զարմացական շը-շուկ անցավ։ Ճեռ հայացքս չէր կտրում թանկագին, սիրե-լի դեմքից. ապրատիելի յեր այն պատճառով, վոր այդ դեմքը առաջին փոխվել էր ու նիհարել։ Գունատ այտերը փոս

Նյին ընկել, դեմքը յերկարել ու նեղացել եր, անհայտացել եր կարմրուքիլյունն ու փայլաքլական ժպիտը։

Մուտ, պատառոտված հագուստը կախվել եր ծվեն-ծվեն, և ծիծում եր, թե ուսուցչուհին հագիվ և վոտքի վրա կանգնում։

Բարձրաձայն բացականչությունը, քրքիջը, հայհոյանքը խլեցին լուությունը։ Ուսուցչուհին մի քանի քայլ արեց առաջ և դարմացած նայեց բաղմությանը։ Ցնծ հանկարծ նա նկատեց իր աշակերտաններին։ Նա ուշադիր նայեց մեղ, ասես ուզում եր հասկացնել՝ ովքեր ենք մենք։ Ցնծ մեր սովորության համաձայն, վորը վաղուց սահմանված եր մեր մեջ ուսուցչուհուն տեսնելիս, մենք ել նշան վողջույնի, բարձրացրինք մեր ձեռները։ Ուսուցչուհին հագիվ նկատելի ժպտաց, մի քանի շուրթերի անկյուններով, և նույնպես բարձրացրեց ձեռքը։

Աղջունքները շղարշեցին իմ աչքերը, հոսեցին այտերովս։ Ուզում եյի վազել ուսուցչուհուս մոտ, պաշտպանել նրան։

— Հապա, կոմխատրչա, պատմիր այժմ ժողովին, ինչ եյիր սովորեցնում դու յերեխաներին,— վրա ընկավ նրան գալինան, թափահարելով ատեկը, և յես այժմ միայն նրա հուզված դեմքից ու քայլվածքից նկատեցի, վոր հարբած և։— Գո՞ւցե սովորեցնում եյիր, թե ինչպես թալանեն մարդկանց, ինչպես դնեն ատկից հացը հանեն և փողերն իրենց գրպանը դնեն։

Ուսուցչուհին բարձրից, հանդիստ նայում եր ապային, իսկ յես վախենում եյի, վոր գալինան ատեկով կխփի նրա գլխին, չրջապատող կազակները կհնեուվեն աղջկա վրա, կխեղդեն, կբատր-կատր կանեն։

— Ինչո՞ւ յես դեմքդ այդպես,— կրկին ծամածռվեց ապան։

— Ցերևում և, բոլշևիկյան հացն այնքան ել քաղցր չե։ Թե՞ դու արդեն մոռացել ես նրանց։ Այժմ մե՞զ կծառայես։

— Բոլշևիկները գալաճան չեն լինում,— անսպասելի բարձր թռավ հրապարակում ծանոթ դնդուն ձայնը։

— Ուսուցչությանը խայտառակում ես,— քայլ արեց դեպի նա գալինան, բունցքները թափահարելով և հանկարծ ուժգին խփեց աղջկա դեմքին։

Նա յերերաց ու ընկավ գետին։

Մի քանի կազակ վրա ընկան, ուզում սուրբաց յերկաթյա ճիպոտն ու պատռված հագուստի տակից արյուն յերևաց։

Ուսուցչուհին պառկած էր լուռ։

Մարդիկ ծեծում էին կատաղած, չարասրտությամբ և ամեն մի հարվածը խուլ արձագանքում էր ուղեղում։

Հետևի կողմում մի կին ճչաց։ Մի քանի մարդ շփոթված այս ու այն կողմ նետվեցին։

Ականջներս փակելով, կես տեղիցս պոկվեցի ու թափվող արցունքներից առաջս վոչինչ չտեսնելով, շփոթակցելով ուր, փախա բանակ մոտից։

★

Մի քանի որից մենք, յերեխաներս, նորից գնացինք Տատյանա Գրիգորյեվնային այցելության։ Մենք չգիտեինք ինչպես ոգնել նրան, բայց ամեն մեկս ուզում էր մոտենալ բանտը, մի կերպ արտահայտել մեր սերը և ասել նրան, վոր նա մենակ չէ և վոր մենք կաշխատենք վրեժ լուծել նրանից, ով համարձակվեց ծաղրի յենթարկել նրան։

Բայց բանակ մոտ նորից ծեծ էր տեղի ունենում։

Մեծված, արյունլվիկ ուսուցչուհուն բարձրացրին դետնից ու կանգնեցրին տան պատի մոտ։

Նա հազիվ էր կանգնում վոտների վրա։ Ու կրկին ինձ զարմացրեց նրա հանդիստ դեմքը։ Ճիշտ այնտեղ վորոնում էի սպասավի, դիմելության աղերսանք, բայց տեսնում էի միայն համբոխին սևեռուն դիտող, լայն բացված աչքեր։ Հանկարծ նա բարձրացրեց ձեռքն ու բարձր, պարզորոշ ասաց.

— Դուք վորքան ցանկանում եք, կարող եք ծեծել ինձ, դուք կարող եք սպանել ինձ, բայց խորհուրդները չեն մեռնի։ Խորհուրդները կենդանի յեն։ Նրանք կվերադառնան մեզ մոտ։

Ջնջոտ, կարճահասակ, աչքի վրա հատ ունեցող ուրյադնիկ Կոզլիկան յերկաթյա ճիպոտով ամբողջ թափով խփեց ուսուցչուհու ուսին և պատռեց հագուստը։ Իսկ հետո մարդիկ հարձակվեցին Տատյանա Գրիգորյեվնայի վրա, դորդոռոցը միախառնվում էր ճիպոտների սուլոցին ու խուլ հարվածներին։ Հարբած հորդան ընկավ անպաշտպան մարմնի վրա, հարվածում էր վոտներով, ձեռներով, հրացանների կոթերով։

Ճչըզ ուսուցչուհուն բարձրացրին, նրա ամբողջ դեմքն ար-

յունուարյան էր: Նա դանդաղ մաքրում էր այտերից վաղող արյունը: Մենք բարձրացրինք մեր ձեռքերը, թափահարեցինք ոդում, բայց Տատյանա Գրիդորյեվնան չնկատեց մեզ:

— Ձի՛ ցավում,— հոգնածությունից շնչահեղձ ու փոքր ինչ մի կողմ դնալով, հարցրեց Կոզլիկան:— Ճես դեռ կհարկադրեմ քեզ վողորմածություն խնդրել:

Ծանր շնչելով, ուսուցչուհին չարժվեց ուրյադնիկի կողմն ու հանկարծ խիստ նեռեց նրա դեմքին.

— Իսկ դու մի՛ սպասիր: Ճես ձեղնից վոչինչ չեմ խնդրի:

— Հնո՛ տար,— հրամայեց Կոզլիկան և, յերբ պահակները ուսուցչուհուն դեպի բանտը հրեցին, նա ամբողջ թափով հրացանի կոթով խփեց նրա մեջքին: Ուսուցչուհին յերեսի վրա ընկավ թանձր, լպրծուն ցեխի մեջ: Մեկը բղավեց, հարկադրելով նրան վեր կենալ, բայց նա, ըստ յերևույթին, ուշաթնաց էր յեղել: Այն ժամանակ յերկու կաղակ վերցրին անկենդան մարմնի թևերից ու քարշ տվեցին դեպի բանտը:

Ճես ամբողջովին դողում էի դեպի սպիտակներն ունեցածս առելությունից:

Ցերկու և կես շաբաթվա ընթացքում յես ամեն յերեկո առում էի ինձ, վոր այլևս բանտի կողմը չեմ գնա, և ամեն առավոտ կրկին վազ էի տալիս այնտեղ:

Մենք, աշակերտուհիներս, համաքվում էինք միասին: Ճեվ այն որը, յերբ Տատյանա Գրիդորյեվնան նկատում էր մեզ, մենք լաց էինք լինում անզորությունից և ուրախանում այն բանից, վոր մեզ մոտ էինք զգում նրան:

Նրան ծեծում էին միշտ առաջինը և տղամարդկանցից վոչ մեկին այնպես անդութ չէին ծեծում, ինչպես նրան: Երեք էին հանում այն բանի համար, վոր չէր աղաղակում, դիմադրություն չէր հայցում, այլ համարձակ նայում էր իր դահիճներին: Նրան ծեծում էին այն բանի համար, վոր նա, լինելով ուսուցչուհի, կրթված մարդ, դնացել էր բոլշևիկների հետ և մինչև վերջին րոպեն մնում էր նրանց հետ:

Ճեկավ ձմեռը: Այժմ Տատյանա Գրիդորյեվնային բակ էին դուրս բերում մի շապիկով: Վախտ, ցրտից կարմրած մարմնի վրա վորշակի յերևում էին կապտա-սրյունագույնած տեղերն

ու յերկաթաձողերի կարմիր շերտերը։ Մեջքին՝ թարախակալած վերքը։

Գիշերներն ինձ կոշմարներն եյին խեղդում, յես ցատկում եյի անկողնուց և արթնացնում մորս։

— Մամա,— վախեցած շշնջում եյի յես։— Մամա, նրան կապանեն։ Փախչ և ոդնել։ Փախչ և փրկել։ Ինչո՞ւ նրան վոչ վոք չի խղճում։ Մամա, այս ինչ գազաններ են չորս կողմը։

Մայրս կրկին պառկեցնում եր ինձ և յերկար նստում կալքին, շոյելով գլուխս։

— Լռիր, տղաս, լռիր,— շշուկով ասում եր նա ու թաղուն արցունքները։— Ոդնում են, բայց ի՞նչ կարելի յե անել։ Մի՛թե կարելի յե ասել։ Ով ձայն կբարձրացնի, նրան կապանեն։

Ճես յերկար ու անդուստ արտասվում եյի...

★

Մի գրչ փոքրկալից որ, վոտներն արագ-արագ քարշ տալով, բանտին մոտեցավ կապտը ձեռքին մի պատավ՝ Նատալիա Սեմյոնովնան, ուսուցչուհու մայրը։

Ձերբակալվածներին դեռ հրապարակ չեյին դուրս բերել, բայց յերեխաներն արդեն իրենց տեղերումն եյին։ Պատավն անվճռական մոտեցավ պահակին և ինչ վոր թուղթ պարզեց նրան։ Առանց կարդալու, պահակը գլխի շարժումով մորն ուղարկեց ավագի՝ ուրյադնիկ Կոզլիկայի մոտ։

Մայրը յերկար բացատրում եր նրան, վոր առաջանից դրած վոր Թուլյակովներն ունի աղջկա մոտ գնալու և նրա վերքերը կապելու։

Կոզլիկան նստել եր ձանձրացող տեսքով, ասես պատավը նրա հետ չեր խոսում, և բարակ խլիստով խփում եր կոշկին, ինչպես այդ անում եր կալինան։

— Չե՛մ թողնի,— հանկարծ բարկությամբ պատասխանեց նա։

Պատավը կրկին սկսեց համոզել, պարզելով Թուլյակովների թուղթը։ Վերջապես ուրյադնիկը դանդաղ վեր կացավ և նեյեց պատավին վոտից- գլուխ։

— Իսկ դու ինչո՞ւ առաջ չէիր գալիս ինձ մոտ։ Թե՞ չէիր ուզում, թե ինչպես եր քո կոմերաշխն իմ ամբողջ ցորենը խլում, չէիր լսում, թե ինչպես եյին սպլերով տանում։ Ի՞նչ ես կարծում, դու հիմա կվտանգվե՞մ։ Ամբողջ կաչին կմաշկեմ,— բորբոքվեց նա՝ բարձրացնելով ձայնը։— Կհիշի նա գողլիկային։ Կարիք չկա նրա վերջերը կապելու, պառավ, մինչևույն է, նորերը կլինեն։ Վորոշված է նրան կախել,— սկսեց ծաղրել նա։— Բայց այնպես, վոր բոլորը տեսնեն։ Վոտներից պիտի կախենք։

Պառավը հառաչեց։ Հանկարծ բացականչեց։

— Անիծյալ հրեշներ եք դուք։ Ջքվեք դուք բոլորդ։

Ուբյադնիկը դարձավ նրա կողմը, բռնեց ուսից և ուժգին ցնցելով պառավին դեսին դեցց։ Նա ընկավ կողքի, Թաչկինան կը սահեց դնկից և ձյունի վրա թափվեցին մազերի սպիտակ յերկար փնջերը։

Կոզլիկան լինչ վոր բղավեց։ Յերկու կողակ բռնեցին մոր ձեռները, յերկուսն ընկան վոտների վրա։ Պառավը թվրտում եր դեսին, դալարվում, աշխատելով ազատվել, բայց կոզլիկան թափով նրա վրա իջեցրեց յերկաթյա ձողը։

Սկզբում դեռ յերևում եր, ինչպես ջղաձգորեն յետ եր ընկնում սպիտակահեր գլուխն, իսկ հետո անշարժ ընկավ ձյան վրա։ Գորշ չրջազգեստը կարմիր բծերով ծածկվեց. բծերն ավելի ու ավելի մեծանում եյին։

Յերբ կազակները վեր կացան ու մի կողմ քաշվեցին, դեսին մնաց անշարժացած պառավ մարմինը— անդունական ցցվել եյին սպիտակ, տան գործած գուլպաներով և տղամարդու կիսակոշիկներով վոտները։

— Մեռա՛վ,— վախեցած հարցրեց մեկը մեր կողքին։— Սո՛ւրբ նահատակ։

— Կմեռնի,— վորսաց բացականչությունը կոզլիկան։— Վռշինչ, դրա փոխարեն աղջիկ հետ կտեսնվի։

Այդ ժամանակ դուռը ճռռաց և Տատյանա Գրիգորյեվնային հրապարակ դուրս բերեցին։

Վորտեղի՞ց եր նա՝ հիվանդ, տառապած, այդչափ ուժասպառնում։ Մեռելային-գունաթափ դեմքին աչքի եյին խփում

ահագին, վառվող աչքերը: Ամբողջ մարմինը քրքրված վերքերով եր ծածկված:

Մարդիկ լուրված անզգայացան: Ուսուցչուհին նկատեց մեկ և արագորեն բարձրացրեց ձեռքը: Ապա նայեց Կոզլիկային և ինձ թվաց, վոր ուրյադնիկը միջոր ինչ չվոթվեց և, քաջանալով ու ջղայնանալով, բացականչեց Տատյանա Գրիգորյեվնային.

— Ինչ է, կոմիսարշա, ուզում եյիր կազակուհյո՞ւնը խլել մեզանից:

Ո՞ւր են հասել քո խորհուրդները: Պոչերը ցցեցին ու փախան: Ես բոլոր ընկերներին բռնել ենք: Իսկ յեղբայրներիդ կախել են Մոզդոկում:

Ուսուցչուհին դանդաղ նայեց նրան, մերկ վոտները վեր ու վար անելով ձյան վրա:

— Մի չոսալիր,— կամացուկ ասաց նա:— Խորհուրդները դեռ կգան: Կենդանի յեն նրանք: Կվոչնչացնեն նրանք ձեզ յերկրքի յերեսից: Միայն թե սրանք խեղճ են,— ձեռքով ցույց տվեց նա կանդնած կազակներին:— Նրանցից դուք սրանց, սպիտակ ուսադիրավորներ: Կգա ժամանակը, նրանք կհասկանան ինչ են արել: Իսկ ձեզ, սպիտակ գվարդիականներիդ, ներում չյուն չի լինի:

Ուրյադնիկը թռավ նրա մոտ և սկսեց դանդաղ պոկել մարմնին կպած շապիկը: Աբյան վտակը վազեց դեպի ուսուցչուհու վոտները: Ես տեսա, ինչպես ցավից բռնկվեցին Տատյանա Գրիգորյեվնայի այտերը, տեսա խոնջվող չրթունքները: Ցավ այդ խակ բոպեին նա տեսավ ձյան մեջ ընկած պատռվին:

— Մայրի՛կ,— բացականչեց նա և այդ աղաղակից ցուրտ հոսանք անցավ վողջ մարմնով:

Ուսուցչուհին նետվեց մոր մոտ, բայց նրան դրկեցին, յեռ քաշեցին պատված մորից:

— Թույլ տվեք հրաժեշտ տալ,— բացականչեց մոտեցած սոտամանը:

Կազակները բաց թողեցին ձեռները և ուսուցչուհին նետվեց դեպի մայրը: Նա ծնկի ընկավ մոր առաջ և, պատռվի գլուխը գրկելով, բարձրացրեց ու մանրիկ, արագ համբույրներով ծածկեց արյունոտած դեմքը:

— Մայրիկ... Քնել էլ նուիրակես, մայրիկ,— կամաց, հուզված կրկնեց նա:

— Բավական է: Վերջ տալ,— բացականչեց առաջնորդը: Ուսուցչուհուն մի կողմ քաշեցին:

— Գաղանիքը եք դուք,— բարձր աղաղակեց նա ուրյաղնիկին:— Մինչեւ չի, վոչնչացնելու չեն ձեզ: Սողունները:

Ինչպե՞ս էին ծնծում նրան դրանից հետո:

— Բավական է, թե չե կսպանեք: Իսկ մենք դեռ կոմիսարչային հարկադրելու չենք հարցաքննութեան ժամանակ խոսել,— կրկին հնչեց առաջնորդի ձայնը:

Իսկ յերբ ուսուցչուհուն քարշ տվին դեպի բանտ, ձյան վրա նրա յետեւից արյան հետք եր ձգվում:

•Այս ժամիս, յերբ գրում եմ այս տողերը, իմ առաջ նստած են իմ յեւթ յեղբայրները և ուրցնում են, ինչու եմ լաց լինում•

— Ջի վոր մտածիր նրանց մեզ համար ազատ կյանք և նվաճել՝ ես ինչու չես դու լաց լինում•, (Տանյայի հոգի՝ Ռախա Սոլոմախի նամակից):

ՑԵՐՐՈՐԴ ՏԵՏՐԱԿ

Ցնս տասներեք տարեկան էլի, յերբ կարմիրները նահանջեցին մեր տանիցայից: Ցնվ նրանց հետ միասին գնացին Տանյան ու իմ յերկու յեղբայրները՝ Գրիգորին ու Նիկոլայը:

Քանի՛–քանի գիշեր նստել ենք մենք հայրիկի ու մայրիկի հետ մինչև լուսադեմ ու ականջ դնելով քամու վոռնոցին՝ արտասվել նրանց համար, ովքեր գնացել էլին:

Նուիրիակ ցերեկը սարսափելի յեր դուրս գալ փողոց: Քամին որորում եր սյուներից կախված դյուրագիների մեծ, սպակիացած աչքերով ու կապույտ, ուռած դեմքերով դիահիները:

Ջորս կողմն աղցունք եր ու հառաչանք. սպիտակները հրդեհում էին կարմիր բանակի հետ գնացած կազակների և յեկվորների տները, վորբերին փողոց էին քշում, և մերկ, վո-

աղբյուրիկ յուրեղանները ցրտին կծկվում էին այրված վելատակների մոտ։

Իսկ առանիցայից դուրս, դաշտերում, քամուց խշխշում էր չհավաքած յեգիպտացորենն ու սևացած արևածաղիկը, վառում էին առնամանիքից ցրտահար կարտոֆիլը, բաղուկն ու բոստաննները։

Բլուրների յետև սոված, վայրենացած շներ էին թափառում, դռնում էին գյուղացիների ու դերի վերցրած կարմիր բանակայինների դիակները, որոնց սպիտակները թույլ չէին տալիս թաղել, և մամռալով ումխյանց հետ կռվելով պատառոտում էին ընդարմացած մարդկային մարմինները։

Ինձ հնարավոր չէր տանը պահել։ Ամբողջ օրերով չես վազվզում էի առանիցայում, իսկ յերեկոյան տուն էի գալիս ու պատմում հորս տեսածներիս մասին։ Ճես ուզում էի լաց լինել, արցունքները սեղմում էին կոկորդս, բայց հիվանդի ներկայությամբ ինձ զսպում էի։

Ճես ու մայրս հոգում էինք նրա մասին և աշխատում էինք վորևե կերպ հեռացնել նրա մտքերը Տանյայից։

... Ճես տեսա, ինչպես սպիտակները բերեցին հիվանդ, տատասած Տանյային։ Ճես տեսա, ինչպես ծնծում էին նրան։

Սարսափից դողդողալ՝ յես նայում էի հարազատ, սիրելի դեմքին և լսում էի մարդակների հարվածները։ Ճես ուզում էի նետվել Տանյայի մոտ, պաշտպանել նրան հարվածներից, նրա կողքին լինել, մի կերպ ողնել նրան։

Մի շաբաթ հետո միայն ինձ հաջողվեց մոտենալ նրա մոտ, բոնաբո։

Ամեն առավոտ մայրիկն արթնացնում էր ինձ լուսադեմին, տալիս էր չորի կտորի մեջ փաթաթած կերակուրով ամանը և վերարկուիս գրպանն էր դնում ողու շիշը։

Ճերբևմն ինձ ճանապարհին կանգնեցնում էին կանայք և շուրջները նայելով, դաղտագողի վորևե քաղցրեղեն էին տալիս Տանյայի համար։

Ճերբ պահակի մոտ վոչ վոք չէր լինում, յես շտապով նըրան էի տալիս շիշը։ Նա շտապ բաց էր անում դուռը և կատվի ձագի նման ինձ ներս էր հրում։ Թափից յես ընկնում էի

ցեմենտե հատակին, աշխատելով, վոր մոլա ուվածք կերակուրը չթափվի։

Գաղջ, թթված ոդը դեմքիս եր խփում։

Մարդիկ սարսափով եյին նայում դրան ճռռոցին։ Ամեն մեկն սպասում եր, վոր իր հետևից են յեկել։ Գիշերներն սպիտակներն ամբողջ խմբերով տանում եյին ձերբակալվածներին, իսկ առավոտյան բանաը լցվում եր նոր ժողովրդով։ Ցուբա-քանչյուրն իր հերթին եր սպասում գիշեր ու ցերեկ։

Բանաը նեղվածք, փոքրիկ քարե չենք եր, ծայրեծայր լցված ձերբակալվածներով։ Ցուրտ հատակին պառկած եյին ձերբակալվածները, իսկ առողջները պառկելու տեղ չունեյին։

Փոքրիկ, աղոտ ճրագի լուսով յես միշտ սարսափով եյի նայում պատի վրայի չորացած բծերին ու ինձ թվում եր, վոր սրանք Տանյայի արյունն ել կար։

Ցես գդուշությամբ անցնում եյի պառկածների միջով ու նստում Տանյայի կողքին։ Առաջին րոպեներին խոսել չեյի կարողանում և միայն լուռ նայում եյի նրա նիհար, կապույտ յերակներով ձեռներին։ Տանյան ինձ ցնցում եր, աշխատում եր զվարճացնել կատակով։

Ցերբեմն նա ցույց եր տալիս իր վերքերն ու պատմում, թե ինչպես հարցաքննության ժամանակ սպա Միխայլեցը ծաղրում և տարճանակի վոտով խփում եր իրեն։

Ցես հաճախ խնդրում եյի, վոր նա կոպտություններ չասի պահակներին։

— Ցեթե տյղպես անես, նրանք քեզ կսպանեն։ Հարկավոր չե, քույրիկ ջան։

— Միևնույն է, սպանելու յեն, Թայիչկա,— քմծիծաղում եր նա։— Նրանք ինձ կենդանի չեն թողնի։ Ցես ուզում եմ, վորպեսզի նրանք տեսնեն, թե բոլշևիկներն ինչպես գիտեն մեռնել։

Նկատելով դողացող շուրթերս ու արտասուքով լի աչքերս, նա ձեռքով շոյում եր մազերս ու աշխատում հանդստացնել։

— Վոչինչ, այդ այնքան ել սարսափելի չե։ Ա՛յ, հիմար ձեվով գերի ընկա— այդ մեկը ճիշտ և։ Պետք եր լսել Նիկոլային և բանակի հետևից քարշ չգալ։ Այն ժամանակ ամեն ինչ ուրիշ կերպ կլիներ։

Նա հաճախ էր հարց ուղղում ինձ հիվանդ հայրիկի, մայրիկի մասին, պատվիրում էր լավ խնամել նրանց և խնդրում էր, որ նրանք չհուզվեն իր համար։

— Այդպես չես հանդիստ կլինիմ։

Ինչպես լավ էին վերաբերվում Տանյային ձերբակալվածները։ Ինչպես լսում էին նրա ամեն մի խոսքը։ Նրանք աշխատում էին հարմարություն ստեղծել Տանյայի համար սառը հատակին, նրա տակը վուռելով իրենց հագուստներն ու ցնցոտիները։

— Գետք չէ, աղջիկ,— ասում էր նա։— Ձի՛ որ ինքներդ վոչինչ չունեք։ Իսկ ինձ համար այսպես էլ վատ չէ։

Բայց նրանք, այնուամենայնիվ, պնդում էին իրենցը և ղժուշությամբ, վախենալով դիպչել քրոջս վիրավորված մարմնին, ամեն որ փոխում էին նրա տակ վուռած լաթերը։

Ճերբակն նա հավաքում էր նրանց իր չուրջը և յերկար պատմում էր կուսակցության մասին, սպիտակների դեմ մղվող պայքարի, Մոսկվայի, Լենինի մասին։

— Ձորհուրդները ժամանակավոր են նահանջել, նրանք ամուր են, շուտով կվերադառնան և այն ժամանակ նոր, աքսանչելի կյանք կլինի։ Մեզ կարող են սպանել սպիտակները, բնկերներ, դրան պետք է պատրաստ լինել։ Բայց մեր գործը չի մեռնի։ Հարկավոր է միայն ուրիշներին տանել բոլոր տանջանքները, վորպեսզի ամբողջ ժողովուրդը տեսնի, վոր մենք ուժեղ ենք, վոր մեզ խորտակել չի լինի։

Ճես չգիտեմ ինչու, յերբ Տանյան խոսում էր մահվան մասին, ընկերները հանդիստ էին զգում իրենց։ Գուցե նա վարակում էր նրանց այն բանով, ինչն այրվում էր նրա հոգում, վարակում էր իր ուժով ու տոկունությամբ։

Նրանց մեջ ուրիշ վոչ մի կին չկար։

Գահակը հաճախ հրացանի կոթով ծեծում էր դուռը, հրամայելով լռել։ Բայց Տանյան ուշադրություն չէր դարձնում նրա վրա։

Ճերբակն յես առաջին խանդում էի, վոր նա զրաղվում է ընկերներով։ Ճես ուզում էի, վոր նա միայն ինձ հետ լինի, վոր նրա խոսքերը միայն ինձ համար լինեն և վիրավորվում էի այն բանից, վոր նա իր ամբողջ ժամանակն ինձ չի նվիրում։

Ցնծալ մեկին չատ ուշ հասկացար. Տանյան ձերբակալվածների յուրաքանչյուր նոր խմբի նախապատրաստում եր, յուրաքանչյուր ընկերոջ համոզում եր ծնծղ ժամանակ կայուն լինել և ամուր պահել երեն:

Ուշ յերեկոյան մոտենում եյի մեր սունը, մտածելով, թե արդյոք վերևն դժբախտություն չի՞ պատահել ծնողներիս:

Հայրս դուրս եր գալիս իր անկյունից, դժվարությամբ քարշ տալով հիվանդ վոտքը և նստելով սեղանի մոտ՝ մանրամասն հարցնում եր ինձ, ինչպես և պահում երեն Տանյան ծնծղ ժամանակ: Հայրիկը հուզված լսում եր և յես զգում եյի, վոր նա հպարտանում է, վոր Տանյայի նման աղջիկ ունի:

Հետո նա յերկար նստում եր լուռ և յես ցավով եյի նայում անընդհատ որսրվող ծեր գլխին:

Մի յերեկո, ինձ լսելուց հետո, կանչեց մայրիկին և կամաց, առանց մեզ նայելու, ասաց.

— Եկեք Տանյայի հետ մի բան պատահի, չգիտք և արտասվել: Մենք չգիտք և ցույց տանք նրանց մեր արցունքները: Թող չուրախանան: Տանյան այդ բանը չեր ուզենա:

Իսկ դիշերները լսում եյի, ինչպես մահճակալի վրա շուռ ու մուռ և գալիս հայրիկը: Վիշտը մեզանից թաղցնելով՝ նա մինչև լույս համացուկ լաց եր լինում:

★

Վերջին որը յես Տանյայի հետ անկացրի մինչև ուշ դիշեր:

Ծերը նստեցի նրա կողքին, ինձ վախեցրեց նրա անսովոր խիստ դեմքն ու ամուր սեղմված շրթունքները: Տանյան պատկած եր փակ աչքերով: Յես նայում եյի թարախակալած վերքերով ծածկված ուսած վոտներին, աչքերի տակ յեղած ահաղին կապտած տեղերին և պատռված, ուսած շրթունքին:

Տանյան հանկարծ բացց, անհանգիստ նետվեց և վեր թռչելով, լայն բացեց աչքերը: Ցավ այժմ նրա աչքերում չկային սովորական ջերմություն ու վաղաքչանքը:

Նա սարսափով նայում եր մութ, դուրչ պատերին և հանկարծ, ասես հանկանալով վորտեղ է գտնվում և ինչ է պատահել իր հետ, ծանր հառաչեց ու գլուխն իջեցրեց լաթի վրա:

Առաջին և վերջին անգամ կյանքումս կես նրա աչքերում անսահման վիշտ տեսա և այժմ միայն պարզորոշ կերպով հասկացա, թե Տանյան ինչպե՞ս բորբոքուն ու անսահման ուզում էր սիրել:

Նկատելով ինձ՝ նա չափազանց ուրախացավ և ամուր բռնելով իմ մատները, դրեց իր տաք ճակատին:

Նա, ըստ երևույթին, իրեն շատ վատ էր զգում:

Գոտատուփած հագուստի միջից կես տեսա Տանյայի կուրծքը, վոտներն ու ամբողջ մարմինը՝ կապտած ու վերքերով ծածկված: Վերքերից շատերը խորն էին: Վերքերը, ինչպես երևում էր, տանջում էին նրան:

Ցնս հանեցի տանից վերցրած վիրակապը և ուզեցի վերքերը վաթաթել:

Տանյան բացեց աչքերը, հաղիվ նկատելի ժպտաց և թույլ ոտրրեց ղլուխը:

— Պետք չէ,— կամաց ասաց նա:— Այժմ այլևս անոգուտ է,— և հանկարծ, բռնելով շապկի ծայրը, թախով քաշեց— արյան վոտ շիթ ցայտեց:

Տանյան կամացուկ ծանքաց:

Ցնս աչք չէի կտրում դունատ դեմքից:

— Ինչո՞ւ կես դուս քեզ տանջում,— ճչացի կես:

Նա ականջ դրեց միջանցքում լսվող աղմուկին: Ինձ թվաց, հեռավոր քայլերի ձայն լսեցի:

— Ավելի լավ է ինքս,— չտասպ ասաց նա և նրա ձայնում անհանգստություն լսվեց:— Ներանք դիմամբ դանդաղ են պոկում: Արագ պոկելը հեչտ է...

Վրտանաձայնը միջանցքում մոտենում էր: Տանյան արագ դարձավ ինձ.

— Շո՛ւտ, մտիր թախտի տակ, թե չէ կտեսնեն քեզ այստեղ: Իմ յետևից են գալիս:

Ցնս հաղիվ թաղնվեցի:

Մի ինչվոր խիստ ձայն սկսեց աղջամուղները տալ: Տանյան կանչվողների մեջ էր:

Ներան թևերից բռնած դուրս քաշեցին բանտի խցից:

Հենց այդտեղ, դռան յետևը, միջանցքում սկսվեց ընկերնե-

ըի ծնծը, դնչացին խթանները— ըսա յերևույթին վոտներով և-յին խոխում։

Ցնս մատներով փակեցի ականջներս։ Ջղաձգությունը խեղդում եր կոկորդս։

Դուան ճռինչից ուշքի յեկա։ Ինչ վոր մի ծանր բան դլորվելով ընկավ աստիճաններից։ Մեկը բարձր, հիստերիկ արտասվեց։ Ցնս այլևս համբերել չկարողացա ու դուրս թռա թախտ ատկից։

Հատակին, թևերը վոտած, անշարժ պառկել եր Տանյան։ Ցնս նետվեցի դեպի նա, ցնցեցի ուսերը, բարձրացրի դլուխը, ափիս զգացի տաք, լպրծուն արյունը և սարսափով նայեցի մահվան դունատություն ունեցող դեմքին։

Մի քանի մարդ նետվեցին դեպի Տանյան։ Ցնս շուրջս տեսա վախեցած դեմքեր, դողացող մատներ, և լնձ թվաց, վոր ամեն լինչ արդեն վերջացած և։

Տանյան հանկարծ ծանր հառաչեց ու բացեց աչքերը։ Զգուշությամբ, ասես փոքր յերեխայի, ընկերները դրկեցին նրան ու դրին իր տեղը։

Ցնս նստեցի կողքին ու սկսեցի ճակատին սառը, խոնավ շորի կտոր դնել։

Պետք և յես լինձ զսպեյի, Տանյայի ծանր դրությունը վորևե կերպ թեթևացնելու համար։

Երբ նա բացեց աչքերը, դորշ մթնշաղն եր փոքրիկ, նեղ լատամուտից սենյակ լցվում։

Ընկերներից մեկը վառեց ճրագն ու մրի մութ շերտը յերեքացց, դեպի առաստաղը բարձրանալով։

Մենք յերկար ժամանակ լուռ եյինք։ Տանյան կենտրոնացած մտածում եր ինչ-վոր բանի մասին։ Ցնս պառկեցի նրա կողքին ու սեղմվելով, աշխատում եյի ջերմացնել նրան։

Նա հրկին սկսեց հարցնել հայրիկի, ծնծի յենթարկված մայրիկի մասին, այն մասին, թե արդյոք ռալիտահները չե՞ն քայքայել մեր տնտեսությունը։

— Իսկ յեղբայրներիս մասին վոչինչ չի՞ լսվում։ Անհանգիստ եմ նրանց համար։ Կենդանի՞ յեն արդյոք,— ծանր հառաչեց նա ու ամուր սեղմեց իմ ձեռքը։

— Ահա լինչ, քույրիկս,— նորից սկսեց Տանյան, վոքր լինչ

լռելուց հետո. յես արտասովոր լռություն զգացի նրա ձայնում,— այդպես նա դեռ ինձ հետ յերբեք չեր խոսել։— Ուզում եմ քեզ հետ այսօր խոսել ինչպես մեծի հետ, ընկերոջ հետ։

Հուզմունքը տիրեց ինձ, ուզում եյի հավիտյան հիշել քրոջս ամեն մի խոսքը, ամեն մի նախադասությունը։

— Ցնս կարծում եմ, վոր այս գիշեր ինձ կսպանեն,— կամացուկ, այնպես, վոր շուրջը յեղածները չլսեն, ասաց նա։

— Ինչո՞ւ յես այդպես ասում,— ընդհատեցի յես։— Մի՞թե նրանք կարող են սպանել այդպիսի հիվանդի, ինչպիսին դու յես,— համոզում եյի յես Տանյային, աշխատելով վանել ինձնից այդ սոսկալի միտքը։— Չի կարող այդ լինել, Տանյուշա։ Ջուր ես խմդ մոռին մոռածում։

— Գնաք չեն հուզվել,— ձեռքով շոյում եր նա իմ մազերը։— Գուցե յես և դու այսօր վերջին անգամն ենք խոսում։ Իսկ յես այնքան շատ բան եմ ուզում ասել։ Ինչպես կուզեյի տեսնել այն, թե ինչ և լինելու հետո, յերբ մենք հաղթենք։ Ցնվ յես տխրում եմ այն պատճառով, վոր այդ անել չեմ կարող։ Բայց հիշիր, Ռայա, վոր այն մահը, վորը պատրաստում են ինձ համար,— պատվավոր մահ է։

Ցնս նայում եյի ճրագի բոցին և թվում եր, վոր նա ել և տոչորվում ու թպրտում, ինչպես Տանյան։

— Շուտով կգան մերոնք... կարմիրները... Ցնս չեմ տեսնի յեղբայրներիս։ Մանրամասն պատմիր նրանց այն բոլորը, ինչ տեսար այստեղ։ Թող նրանք հաղորդեն բոլորին, թե ինչպես տանջեցին ինձ, ինչպես չարչարեցին և ինչպես մեռա։ Ցնս վոչ վոքի չեմ մատնել և մինչև վերջը մնացել եմ կուսակցության հավատարիմ անդամ։ Ցնվ թող յեղբայրներս խմանան, վոր յես նրանց շատ եմ սիրում։ Թող հաստատ հիշեն իմ պատվերները և նույնպես հավատարիմ լինեն կուսակցությանը մինչև վերջ։

Աչքերս վարագուրած արցունքներով միջից յես տեսա, ինչպես ծանր բարձրացավ նրա կուրծքն ու հետո քաշվեցին մուգ բարակ հոնքերը։

Նա լուռ պառկել եր, աշխատելով հանգստանալ։ Ինձ թվացյ, վոր նրա ձայնը զղղում եր ինձ հետ խոսելիս։

Հանկարծ նա սեղմեց ինձ իրենն, նայեց աչքերիս մեջ։

— Ոչա՛յ, թաղցրուհ հայրիկից,— արագորեն չընջաց նա,— մի առա՛ նրան, մինչև յողբայրներիս գալը։ Ուղա՛ նրան։ Նա չի դիմանա։ Կմեռնի։

Ես հնձկլատացի, այժմ միայն զգացի, որ նրա կյանքի վերջին ժամերն են։ Մայրական քնքշանքով նա գրկում, փաղաքշում, համբուրում էր ինձ և հիվանդ, ամբողջովին վերքերով ծածկված՝ նույնիսկ կատակում էր։

Ես զգում էի նրա համբույրները դեմքիս, կրծքիս, ձեռքիս, զգում էի նրա տաք, ամուր գիրկը։

Ոտնաձայնի հատակին մեկը բարձրաձայն հառաչեց, կողքիս մեկը զարմած արտասվեց։ Պահակը ծնծեց դուռը։

Մենք հասկացանք, որ յես պիտի հեռանամ։

— Դու առա՛ մերոնց, որ յես ինձ շատ, շատ թեթև եմ զգում,— չոտալ-չոտալ ասաց նա։— Ես այնպես յերջանիկ եմ, ինչպես յերբեք չեմ յեղել։

Նա կրկին շոյեց իմ մաղերը, նայեց աչքերիս ու ամուր համբուրեց շուրթերս։

Մեկն ինձ պոկեց Տանյայից ու դուրս հրեց մի կողմից։

Իսկ յերբ մյուս որը յես բանտի մոտ յեկա, պահակը ներս չթողեց Տանյային մոտ։ Ես լաց եյի լինում, խնդրում եյի, աղերսում նրան։

— Հեռացիր վերջապես, պատվով խնդրում եմ,— համոզում էր նա ինձ, հայացքը թաղցնելով։— Իշխանությունը հրամայել է թույլ չտալ։

Ես չնկատեցի, ինչպես հեռվից մոտեցավ Կոզլիկան։

— Այստեղ թրև գալու բան չունես,— կոպիտ բղավեց նա ինձ վրա։— Կոմխարշային են այնտարն ենք ուղարկել։

Ահա ինչ իմացա յես նրա մահվան մասին։

Նոյեմբերի յոթի լուսադեմին կաղակները բանտ են լցվում։ Բոլորը հասկանում են, թե ներանք ինչու յեն յեկել։

Ձերբակալվածներից մեկն աղաղակում է, լաց է լինում, մեկը գալարվում է հատակին։

Տանյան վեր է թռչում ինքը։

— Սուս,— բացականչում է նա,— պետք չէ լաց լինել։ Դուք մենակ չեք, ընկերնե՛ր։ Մենք բոլորս միասին կդնանք։

Իսկ յերբ ձերբակալվածներին սկսում են հրացաններով կոթերով դուրս քշել խցից, Տանյան դուռն մոտ դառնում, և նրբանց կողմը, ուշքեր մնացել չկին։

— Մնաք բարև, ընկերնե՛ր,— հնչում է նրա զնգուն, հանդիպատ ձայնը։— Թող պատերին չկպած այս արյունն իզուր չանցնի։ Շուտով կգան խորհուրդները։

Սառնամանիք վաղ առավոտյան ռևիտակները արթուտում սրախողող են անում տասնութ ընկերների։ Վերջինը Տանյան է լինում։

Դեռ կենդանի-կենդանի, կոթում են նախ նրա ձեռքերը, հետո վոտները և ապա մխային դլուխը։

Հավատարիմ իր խոսքին՝ նա դահիճներից դթություն չի խնդրում։

Այդպես կարող են մեռնել միայն բոլշևիկները։

ԼԵՌՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԲՈԼՇԵՎԻԿՈՒՀԻՆ[1]

Վ

ևրա Տիբիլովան մեծացել էր Հարավային Ուսթիայի լեռներում։ Ղրա հայրը չքավոր մի ոսեթին՝ իր ամբողջ կյանքում աշխատում էր ուրիշների համար։ Վերան մանկությունից ըմբռնեց, վոր չորս կողմն ամեն ինչ՝ և՛ սուվերտախիտ անտառներով ծածկված լեռները, և՛ հովիտներն իրենց պարտեզներով, խաղողի այդիներով ու արտերով, և նույնիսկ արագահոս լեռնային գետակները, այն բոլորը, ինչին այնպես վարժվել էր Վերան և ինչը սիրում էր նա, պատկանում է վրացական «պայծառատիրայր» իշխաններին։ Վոչ մի կտոր հող, վոչ մի պտղատու ծառ չկար չքավոր-ոսեթինի համար։ Ցեվ կարիքը հարկադրում է նրա հորը՝ ընտանիքով վտխադրվել Թիֆլիս՝ այնտեղ մի կտոր հաց վորոնելու։ Բայց

---

1 «Քաղաքացիական կռիվների պատմություն» նյութերից։

քաղաքում իր նման չքավորների թիվն ավելի շատ եր։ Կյանքն ավելի ու ավելի դժվարանում եր։

Մեկ անգամ, յերեկոյան, հայրը յերկար ժամանակ չեր վերադառնում։ Վերան արդեն սկսել եր անհանգստանալ՝ չլինի թե դժբախտություն և պատահել։ Նա նստել եր լրենց աղքատիկ սենյակի լուսամուտի առաջ և սպասում եր։ Հայրը միակ մարդն եր, վոր հոգում եր ընտանիքի կարիքները։ Հայրը վերադարձավ ուշ ղիշերին, նա ինչ վոր բանով մտահոգված եր։ Մոտենալով Վերային՝ իր ղողղոջ, խորշոմած ձեռքը դրեց աղջկա ուսին և սկսեց դանդաղ խոսել։

Լուսիյան մեջ հոր ձայնը հնչում եր խուլ ու տխուր։ Նրա ինձուտատա դեմքը ցնցվում եր, աչքերը նայում էլին աղջկա դլխի վրայով։ Վերան չեր լսում նրա խոսքերը։ Նա մեկայն մի բան հասկացավ՝ կարիքից ազատվելու համար, հայրն իրեն ամուսնացնում է։ Հոր կամքն անխորտակելի որենք եր։ Հոր կամքը չկատարող աղջիկը նրա դատաստը կոչվել չեր կարող։ Բայց բացի որենքից, Վերան նաև շատ եր խղճում հորը։ Մեխունական անդուլն աչքերում նա տեսնում եր անհուն կարիքից ազատվելու հույսը։

Հայրը ծախեց՝ հացի հետ փոխեց Վերային, յերբ նա տասնչորս տարեկան եր դարձել։ Ոտար մարդը չհարցրեց Վերային, սրտյոք կամենո՞ւմ է նա իր կինը դառնալ։ Նա ուղղակի, ինչպես առարկա, վերցրեց նրան և տարավ իր տուն։ Բայց ամուսնությունը չթեթևացրեց ընտանիքի դրությունը։ Սկսվեց պատերազմը։ Պատերազմը յերկար-յերկար տևեց։ Վերան աղջիկ ունեցավ։ Այդ ժամանակ Ֆրոնտից սկսեցին վերադառնալ զինվորները։ Զինվորները լցրին քաղաքը։ Վերան առաջին անգամ նրանցից լսեց հեղափոխության մասին։ Կրկին նոր դժբախտություններ ընկան Վերայի դլխին. փողոցում տեղի ունեցած հրացանաձգության ժամանակ սպանվեց ամուսինը, իսկ մի քանի ամսից՝ մեռավ աղջիկը։ Հոր տունը ևս դժբախտությունը մոտավ։ Հայրը կորցրեց աշխատանքը։ Ծերուկ և անոդնական հայրն ավելի ևս կորացավ ու ամքվեց։ Շուտով նա մեռավ և Վերան մնաց մենակ։ Իսկ կյանքը չորս կողմն ավելի ու ավելի ալեկոծվում եր։ Զինվորների աղմկոտ միտինգներից, անհանդիստ փողոցներից ավելի ուժգին և ավելի հաճախ եկին

հասնում նրան սկզբում իր համար անհասկանալի բառերը՝ բոլշևիկներ, խորհուրդներ։

Վերան սկսեց միտինգներ հաճախել։ Նա մոլորաբար կանգնում էր մի կողմ և լսում հռետորների խոսքերը։

Ժողովից հետո նա շտապում էր ընկերուհիների՝ Ծանոթ լեռնուհիների մոտ և պատմում նրանց բոլորը, ինչ լսել էր միտինգում։

Մեկ անգամ նա մի ուրախ լուր լսեց։ Այնտեղ, հեռու, լեռներից այն կողմը, բանվորները հաղթել էին։ Բանվորները հարուստների ձեռքից խլել էին իշխանությունը։ Դա առաջին իսկական ուրախություն էր մի կնոջ, որն իր կյանքում վիշտ ու թշվառություն էր տեսել միայն։

Քաղաքը կենդանություն առավ, հուզվեց։ Ծերխատարդները, ծերունիները, կանայք հավաքվում էին միտինգների։ Վերան այժմ վոչ միայն լսում էր։ Նա կանանց հավաքում էր միտինգի, ինքը յելույթներ էր ունենում։ Իր համար էլ աննկատելի՝ նա զինվորների մեջ բավականաթիվ ծանոթներ ունեցավ, կանայք փողոցում նրան հանդիպելիս սիրալիր բարևում էին։

Բայց, զրուցելով զինվորների հետ, հեղափոխության մասին պատմելով կանանց, Վերան ավելի ու ավելի յեր զղում, վոր իր դիտությունը պակաս է։ Այն ժամանակ նա նեռվից գրքերի վրա։ Շատ էր կարդում։ Շուտով նա կարողացավ տարրական դպրոցի ուսուցչուհու քննություն տալ։ Այժմ նա ձգտում էր լեռները գնալ։ Ջե՞ վոր այնտեղ վոչ վոք չկար, վորը կարողանար բացատրել խավար լեռնցիներին տեղի ունեցած ցնծալի ու մեծ դեպքերի իմաստը։ Վերան գնաց իր հայրենի վայրերը՝ Տերեչվանի աուլը՝ Հարավային Ոսեթիայում։

Այնտեղ Վերան առաջինն էր լեռնուհիներից, վոր մտավ բոլշևիկյան ընդհատակյա կազմակերպության մեջ։ Նրա բոցավառ խոսքերը հնչում էին յերիտասարդության և կանանց մեջ։ Թուշիկների հետ միասին Վերան հարևան աուլներն էր տարածում Թշնամու հետ վճռական կռվի պատրաստվելու հրաբորբոք կոչը։

Իսկ Թշնամին ներհած չէր։ Լեռներում հակահեղափոխական ջոկատներ էին Թրևում։ Իշխանները, մոլլաները, հարուստնե-

րը դնդակով ու կախաղանով էին ճնշում մեծ պայքարի յելած լեռնցիներին:

Գոան թվլե անհանդիստ օրերն էին: Սպիտակ բանդիտները հարձակվեցին առուի վրա: Սուրեցին մարակներն ու չոմպոլնեը: Հոսեց յերեխաների, կանանց ու ծերունիների արյունը:

Հեղափոխական լեռնցիների ջոկատը հեռացավ լեռները: Ջոկատի հետ դնաց նաև Վերան: Նա չքավորների հետ միասին պայքարում էր սպիտակների դեմ:

Արճաղանքում էին Թնդանոթները: Թնդանոթներով, դնդացիրներով ու ձեռքի նռնակներով զինված սպիտակները սեղմում էին կարմիր պարտիզաններին:

Պարտիզանական ջոկատում չկային վոչ Թնդանոթներ, վոչ դնդացիրներ, առավել վատն այն էր, վոր նուվնիկ հրացանը պակաս էր: Ցերեկը կողմից սպիտակներով շրջապատված մարտիկները քարերով էին պաշտպանվում: Նահանջի միակ ճանապարհը՝ նեղ կիրճը՝ մահ էր սպառնում: Կիրճի մուտքի մոտ, ժայռի տակից, Թշնամու դնդացիրը դնդակ էր թափում:

Վերան քարերի հետևից տեսնում էր, թե ինչպես են ընկնում պարտիզանները, սպիտակների դնդակներից տապալվելով: Մեկ-յերկու ժամից ջոկատից վոչ մի մարտիկ չէր մնա: Նրա տրտմված դլխում անդադար մի միտք էր պտտվում «Մի բան պետք է անել: Այլապես մահ է սպասում ջոկատին: Սակայն ի՞նչ անել»... Վերան արյունոտելու ափսոսան կծում էր իր չորացած շուրթերը և աչքերը սևեռած՝ Թշնամու դիրքի Թույլ տեղն էր վորոնում: Կիրճի դնդացրային կրակը դրավեց նրա լարված ուշադրությունը:

— Ահա, ահա,— ուրախ բացականչեց նա և պատկելով դնաննին, մոդեսի նման սողաց դեպի կիրճը:

Սուր քարերը քերծում էին ծնկները, ձեռները, դեմքը: Քերծված տյուից արյուն էր հոսում: Վերան վոչինչ չէր զդում: Հրացանը ձեռքին նա սողում էր ավելի ու ավելի բարձր, ցած էր դլորվում և նոսամները սեղմած կրկին սողում: Վերջապես բարձրացավ: Ցածում, լեռան զառիվայրում յերևում էին յերկու սպիտակ դնդացրորդների տեսի մեջքերը, ուսադիրներն ու ծոծրակները:

Վերան նշան առնելով կրակեց: Գնդացրորդը ցնցվեց ու անզգայացավ: Գնդացիրը լռեց:

Կենդանի մնացած սպիտակ գվարդիականը շփոթված հետ նայեց: Դիպուկ գնդակը նրան էլ փռեց գետին: Վերան նետվեց դեպի գնդացիրը: Գլխից պոկեց դորշ թաշկինակն ու վոր-չափ ուժ ուներ, գոչեց.

— Ընկերնե՛ր... Ա՛յս կողմ:

Գարտիզանները վազելով անցան կիրճը: Վերան կանգնել էր գնդացրի մոտ և հաղթական թափահարում էր թաշկինակը: Սպիտակները կրակ բացեցին:

— Պառկի՛ր... հսպաննեն,— գոչեց մոտ վազող պարտիզա-նը: Նա գնդացիրը դարձրեց սպիտակների կողմը:

Վերան յերերաց: Մարմինը հանկարծ հոգնածություն ըղ-ջաց, աչքերի առաջ շողեր առկայծեցին: Նա ընկավ: Թշնամու գնդակը խոցել էր նրա կուրծքը: Արյունը վառ բծերով ծած-կեց հագուստը:

Յերկար ժամանակ հիվանդ պառկեց Վերան:

Այդ ժամանակ Անդրկովկասում տեր էին մենշևիկները: Այնտեղ մնալը վտանգավոր էր: Ուստի ուղղակի հիվանդանո-ցից, ուր անվեզալ պառկած էր Վերան, առողջանալուց հետո, մեկնեց Վլադիկավկազ:

Գնաց բոլշևիկների կոմիտե:

— Ուղարկեցեք լեռները: Թշնամուն վոչնչացնելու,— խնդրեց նա:

Կոմիտեի աշխատակիցները նայեցին Վերայի վառ ընկած այտերին ու պատասխանեցին.

— Դու, ընկեր Տիբլովա, ֆրոնտ չես գնա: Գնա, վոտքի հանի լեռնուհիներին: Մեծ շրջան է, պատասխանատու: Մեր ողնության կարիքը լինի՝ յեկ, կոգնենք:

Լեռներում հրաձգություն չեր լսում: Գարտիզանները վերջ էին տալիս սպիտակներին: Վերան մտքով շարունակ նը-քանց հետ էր: Նա սկսեց աշխատել լեռնուհիների մեջ: Ինդու-շական, ոսեթական, չեչենական առվները հիշում են նրա բա-յական ճառերն ու անխոնջ յեռանդը:

Առվներից մեկում նա կազմակերպեց դեռության քույրերի մի փոքրիկ ջոկատ և խմացածի չափ սովորեցնում էր նրանց

վերքեր կապելը: Ջոկատը գնաց լեռները: Նա պարտիզաններին մաքուր սպիտակեղեն, ուտելիք և նրանց անելիից լուրեր էր ուղարկում: Գառավ կանայք լվանում էին մարտիկների սպիտակեղենը և հոգատար խնամում նրանց յերեխաներին:

Աղատ ժամանակ Վերան հավաքում էր լեռնուհիներին, կարմ ու հասկանալի պատմում էր նրանց բոլշևիկների մասին, կանանց ու աղամարդկանց իրավունքների հավասարության, նոր կյանքի մասին: Լեռնուհիները լսում էին և գլուխները շարժելով հավանություն հայտնում:

Լեռնուհու յերեխան է հիվանդանում՝ Վերան մխիթարում է մորը և ոդնում, որ նրան յերեխային առողջացնելու: Մեկ ուրիշ կնոջ հացն է սպառվում՝ Վերան հաց է հարում և բերում լեռնուհուն:

Աուլների կանայք Վերայի մոտ էին գնում իրենց զաղտնի մտքերը նրա հետ բաժանելու, գնում էին խորհուրդ անելու, ոդնություն խնդրելու: Գոհ հեռանում էին նրա մոտից լեռնուհիները ու ասում միմյանց.

— Բարի սիրտ ունի մեր Վերան:

Թշնամին չախչախված է: Զաղաքացիական կռիվը վերջացած է: Յերկիրն սկսեց վերականգնել քայքայված անտեսությունը:

Վերա Տիրելովային ուղարկեցին սովորելու:

Բուռն փափաղով սկսեց նա ուսումնասիրել մեծ Լենինի դրքերը. վորքա՜ն շատ հետաքրքիր ու հուզիչ բան կա այդ դրքերում: Վերան այդ դրքերի մեջ գտնում է ցայտուն բացատրություն, թե ինչ պատճառներով ցարիզմն ու նրա դահիճները ճնշել են ժողովուրդներին, պահել դարավոր սարկության մեջ: Նրա համար այժմ հասկանալի յե լինում, թե ինչու յեր ցարիզմը ամրապնդում կանանց անհավասարությունը: Աչքերի առաջ անցնում են հոր անիծյալ կյանքի պատկերները: Ճնշում, թշվառություն, իրավազրկություն:

Վերան գիշերները, քնից կտրվելով, գիրք և գրում լեռնցի կանանց կյանքի մասին:

Սովորելիս էլ նա սերտ կապ է պահպանում լեռնուհիների հետ: Աշխատավորներին Վերան վերադառնում է հայրենի տուլ: Ու կրկին, ինչպես քաղաքացիական կռվի տարիներին, հավա-

քում է նա կանանց, քաժանում է նրանց հետ իր ստացած դի-
մումքյունը, կոչ է անում լեռնուհիներին՝ մասնակցել հասարա-
կական կյանքին:

Լեռնուհիները առաջվա նման ուշադիր լսում են Վերային, պնդում են նրա մոտ ողնուքյուն ստանալու, խորհուրդ լսելու: Ցեղ կանանցից շատերն են հրաժարվում անցյալի վայրի սովորություններից:

Վերան կանանց համար կենդանի օրինակ է:

Ծուրաքանչյուր լեռնուհի ձգտում է լինել այնպես, ինչպես բոլշևիկուհի Վերան է:

Քոան յերկու թվին հավաքվեց լեռնուհիների համաղումարը: Պատգամավորուհիներն աղմուկով ու գոթծնականորեն գրավեցին իրենց տեղերը: Դահլիճում հանդիսավոր լուքյուն է տիրում: Նախագահուքյան ընտրուքյունը խլեց լուքյունը, ակնոծեց լեռնուհիներին: Դահլիճի զանազան կողմերից պատգամավորուհիները մխաբերան, սիրով բացականչեցին.

— Վերա Տիբիլովային...

— Բոլշևիկուհի Վերային...

— Պարտիզանուհի Տիբիլովային...

Վերան հուզված բարձրացավ նախագահության տեղը, ուրախ հայացքով նայեց դահլիճին:

Լեռնուհիների դլուխներին կարմիր քաշկինակներ են: Ձկա նախկին խեղճ արտաքինը, կորացած մեջքերը: Ցերկանիկ քուխ դեմքեր: Անկախ, հպարտ հայացքն ասում եր այն մասին, վոր լեռների կանայք ազատագրվել են ընդմիշտ, վոր յերբեք լեռնուհիներն այլևս ստրուհիներ չեն լինի:

Տաք հոսանք անցավ Վերայի մարմնով, սիրտը ծակեց: Վերան յերեքաց ու ընկավ աթոռին:

Լեռնուհիները նետվեցին Տիբիլովայի մոտ: Վերան անչարժ եր: Հին, մոտալ կյանքը, պայքարի տարիները, ստացած վերքը քայքայել եյին նրա սիրտը: Սիրտը չդիմացավ:

Պատգամավորուհիները հոծ պարսպի նման շրջապատեցին Տիբիլովային— լեռների առաջին բոլշևիկուհուն, վորն իր վոդի կյանքը նվիրեց բոլոր լեռնուհիների յերջանկուքյան համար:

Ֆ. ԲՈՋԻԵՎԱ

ՊԱՐՏԻԶԱՆՈՒՀԻՆ

Գրի առավ և մշակեց՝ Իդա Բուռլ

Ֆրլրատիզ Զերնիկի ձախ ափին տարածված է տորին Բալկարիան։ Մի ծաղկափետ վայրում ստեղծվել է Նաստուն Ռուսուքի անվան մեծ կոլտնտեսությունը։ Այդ կոլտնտեսության մեջ ես ներկայումս ապրում և աշխատում եմ։

Ցես վաթսուն տարեկան եմ։ Տարիքս չի խանգարում ինձ աշխատել վորպես կանանց լավագույն բրիգադի բրիգադուհի։ Իմ անցյալ հինգ պարգևն այդ է ասում։ Բացի կոլտնտեսությունից, ես դյուղխորհրդի կուլտուրական-մասսայական սեկցիայի ակտիվ անդամ եմ։

Շատ դժբախտություններ եմ տեսել ես, շատ բան է մըտնացել անցյալում։

Բայց յերբեք չեմ մոռանա, թե ինչպես եյին խշխաններըծաղրել յենթարկում մեզ, հքավոր լեռնցիներիս։ Ցերկու հարյուր տարի տևեց այդ։ Չեմ մոռանա։

Լավ եմ հիշում նաև մեծ պայքարի տարիները։ Վոտքի յելան հքավորները։ Վոտքի յելավ ժողովուրդն ամեն կշխանների դեմ։

Տասնիններ թվին եր։ Սերեբրյակովի սպիտակ ջոկատն սկսեց մոտենալ Բալկարյան կիրճին։

Գլխիս ծածկելով մեծ, մուգ գույնի թաշկինակն ու, վերցնելով հրաժեշտի հայացք նետելով տանս վրա, ամուսնուս՝ Վայմըղայի և վորդուս՝ Մահիլրեյի հետ գնացի կռվելու իմ ժողովրդին ճորտությունից ազատելու համար։

Զենք չկար։ Ներանք, ովքեր հրացան ունեյին, առաջ գնացին— կիրճը պահպանելու։ Ներանց առաջնորդում եր ընկեր Նաստուևը։

Նաստուևի հրամանով մնացյալ պարտիզանները պաշտպանում եյին կիրճն արևոտեղ, վորտեղից ճանապարհն եր անցնում։

Պարտիզանները քարերի կույտեր եյին հավաքում, վորպես-

ղի ամեն բոպե նեռնեն ճանապարհի վրա, յերբ կաղնաներն ա-ռաջ չարժվեն։

Ցես հետ չեյի մնում մյուսներից։ Ցես լավ կարողանում ե-յի խորը փոս փորել ժայռերի մեջ, ճանապարհի շուրջը։ Այդ փոսերի մեջ վառոդ եյի դնում։ Հարկավոր բոպեյին նրանք վա-ռում եյին։ Ժայռը պայթում եր և թափվում սպիտակ բան-դիտների վրա։

Իրանով սկսվեց իմ նոր կյանքը, ամուր կապվելով Բալ-կարիայի ամբողջ պարտիզանական չարժման հետ։

Սպիտակները մոտենում եյին Բալկարիայի կիրճին։ Նրանք ամեն ինչ ունեյին՝ զնդացիրներ, հրացաններ, փամփուշտ։ Թըշ-նամիները նոր կոշիկներ եյին հագել և լավ չինեղներ։ Նրանք չգիտեյին քաղցն ու ցուրտը, Բալկարիայի կիրճի սառնցնող դիշերները։

Սպիտակները հարձակվում եյին աուլների վրա։ Սկսվեց հրաձգություն։ Նապաստակն ու Նապերուն առաջին չարքերումն եյին։ Ցես նրանց հետ եյի։

Սպիտակները պարտիզաններին ճնշեցին դեպի կիրճի խոր-քը։ Ընկեր Նապերուն սպանվեց։ Ինձ վիրավորեցին ալ ձեռքից։ Դժբախտ արձակեցի մեծ մուդ թափչինակն ու վիրաբո-վոր ձեռքս։

Ցես ունեյի ուժ, առելություն և մի առողջ ձեռք։ Զախ ձեռքով սուր-սուր քարեր եյի նետում սպիտակ բանդիտների վրա։ Վառում եյի վառոդի փոսերը ժայռերի մեջ, խորտակում-ներ ու պայթումներ առաջ բերելով։ Սպիտակները կարծում ե-յին, որ այդ պայթյունները թնդանոթների կրակոցներ են և որ մենք շատ թնդանոթ ունենք։

Մշտական պայթյուններից վախեցած, թշնամիները շատ-ուով հետ եյին քաշվում։ Բալկարյան կիրճի կռիվը յերեք ամիս տևեց։

Բալկարիայի ամբողջ չքավորությունն ոգնում եր կարմիր պարտիզաններին։ Պարտիզանները տոկունությամբ դիմանում ե-յին, կրելով լեռների պայքարի բոլոր նեղություններն։ Սպի-տակները մեծ ոգնական ղորք ստացան և համատ կռվից հետո դրավեցին Բալկարիայի կիրճը։

Բալկարիայի կենդանի մնացած չքավորները ցրվեցին դյու-

պերը։ Նաստուհը բարձրացավ ամենաբարձր ժայռի վրա ու թաղնվեց այնտեղ։ Գյուղում դավաճանները դռնվեցին, վորոնք մատնեցին սպիտակներին Նաստուհի թաղնված տեղը։

Գյուղերում ցրված պարտիզանները իմանալով Նաստուհին սպառնացող վտանգի մասին՝ զաղտագողի գնացին նրա մոտ, վորպեսզի նախազգուշացնեն նրան և փրկեն։

Շատ դժվար եր գնալ։ Իշխանները և Սերեբրյակովի ջոկատի սպիտակ գվարդիականները հետևում եյին նրանց և քայլ առ քայլ հետապնդում Նաստուհին։

Ցես մենակ գնացի լեռները, Նաստուհի մոտ...

Ամբողջ որ ու գիշեր լեռներում անընդհատ հրացանաձգություն եր լսվում։ Այդ սպիտակներն եյին կրակում Նաստուհի մոտ գնացող պարտիզանների վրա։

Սպիտակների դեմ պայքարելը դժվար եր։ Նրանք բռնում եյին պարտիզաններին և անգութ դատաստան տեսնում նրանց հետ, տեղնուտեղը գնդակահարելով ու կախելով։

Նրանք բռնեցին Նաստուհին, կապկապեցին և տարան իշխան ժննյուկովների տուն։ Նեռելով նրան այնտեղ, նրանք դուռը փակեցին և ուժեղ պահակ դրեցին։

Այնուամենայնիվ սպիտակներին չհաջողվեց բոլորին ձերբակալել։

Ինչպե՞ս ազատել Նաստուհին։ Ինչպե՞ս դուրս կորզել նրան մահվան ճանկերից։ Գլուխս ուռեց մտքերից։ Հնարքը գտա։ Հավաքեցի գյուղի չքավորների բոլոր կանանց և նրանց տարա սպիտակների իշխանավորի մոտ, խնդրելու, վոր Նաստուհին ազատեն։

Կանայք, գլուխներից արձակելով թաշկինակները, վորը մեծ վշտի նշան եր հանդիսանում, արտասվում եյին և խնդրում ազատել Նաստուհին։ Բայց յես սխալվեցի։ Թշնամուն խնդրել չի կարելի։ Նրան պետք և վոչնչացնել։ Սպիտակները ծիծաղեցին մեզ վրա, քշեցին ու ծեծեցին։

Գիշերը, չնայած ուժեղ պահակախմբին, հաջողվեց փախցնել Նաստուհին։ Նրա հետ միասին լեռներում թաղնվեց նաև նրա ընտանիքը։

Առավոտյան սպիտակ բանդիտները թալանեցին տուրը և սրբեցին լեռնցիների տները։

Իմ ամուսինը և վորդիս նույնպես թաղնվեցին լեռներում: Ես մենակ մնացի դյուղում: Ծանր, տորկական աշխատանքով պահպանում էի դոյությունս և հաց էի ճարում նրանց համար, ովքեր լեռներումն էին գտնվում:

Գիշերները լեռներից դալիս էին ինձ մոտ: Ես ուտելիք էի տալիս, լվանում ու կարկատում էի պարտիղանների սպիտակեղենը: Հաճախ ինքս էլ նրանց ուտելիք ու սպիտակեղեն էի տանում և արժեքավոր տեղեկություններ էի հաղորդում սպիտակների պլանների մասին:

Այդպես, ամուսնուս ու վորդուս հետ միասին, վոչ մի քայլ հետ չմնալով, պայքարի էի գնում իմ ժողովրդի յերջանկության համար, և, ինչպես խոստացա յես հետո, բոլոր աշխատավորների յերջանկության ու լոյս կյանքի համար:

Ներքին Բալկարիա դյուղում բոլորը ճանաչում են ինձ: Հարցրեք, վորտեղ է ապրում Բոզիևա Ժուլդուսխանը,— ամեն մեկը ցույց կտա ձեզ իմ տունը: Հաճախ ինձ սպիտում են պատմել սպիտակների հետ ունեցած կռիվների և իմ վիրավորվելու մասին: Ես պատմում եմ: Իսկ թե Բալկարիայի կիրճում վորտեղ և թաղվել իմ աչ ձեռքը ծակող գնդակը.— կասեի, բայց թե չեմ հիշում:

Դուք հարցնում եք, ինչո՞ւ յեմ ձեռքիս պահել այս կարմիր մետաքսյա թաշկինակը: Ես հիմա այս թաշկինակը թափահարեցի ողում, մեր դյուղի լավագույն, առաջավոր աղջիկներին ձիարշավի ճանապարհելով: Նրանք, մեր ուժեղ, առողջ աղջիկները զարմանալի նոր յերիտասարդ կյանք են կառուցում և ամրապնդում:

Ես ուրախանում եմ նրանց յերջանկության և առողջության համար: Ուրախանում եմ այն բանի համար, վոր իզուր չեմ պայքարել ու արյուն թափել այնտեղ, լեռներում:

Ժ. ՈՒՄԵԶՈՎԱ

ԼԵՌՆԵՐԻ ԿԻՆԸ

Գրի առավ և մշակեց՝ Իգա Բոուկ

Հազար աստղեր են փայլում Կաբարդինո-Բալկարիայի լեռների ձյունապատ գագաթների պրա։ Արագ սահում են լեռնային նեղ առվակները։ Ժուղեկ Ումեզովան սիրում է աղմկոտ նեղ գետակներն ու բարձր վեհատես լեռները։ Շատ տաբլներ նա նայում է նրանց և ամեն անգամ նրանց մեջ ինչ-որ նոր բան է տեսնում։

Այսօր, շատ տաբլների ընթացքում առաջին անգամ Ումեզովան անցավ լեռների կողքով, վոչ մի անգամ նրանց չնայելով և նույնիսկ շուռ չդալով նրանց կողմը։ Լուռ նստել և Ժուղեկը մեքենայում, շրթունքներն ամուր սեղմած։

Ուրախ վայլատակում են Ժուղեկ Ումեզովայի աչքերը։ Լքացավ նրա ինքնուն տաբլին, բայց նա ղլում է, վոչնչի զոհմանալի լավ և ապրելը։

Ինչքան շատ բան է ուզում արած լինել Ժուղեկը։ Նա աշխատում է Զերևկինու չրջանի Վերին Ռուլան գյուղի կոլտնտեսության մեջ։ Ումեզովան հանդիսանում է այդ կոլտնտեսության լավագույն բրիգադիրուհին և ամենահաստակամոր հավաձայինն ամբողջ Կաբարդինո-Բալկարիայում։

Ամբալինդ, գյուղատնտեսական աստղուծության տեր կին է Ժուղեկը։ Նրա դեմքին խորը կնճիռներ չկան, չնայած նա շատ բան է կրել քաղաքացիական կռվի տաբլներին։ Ամուսնու և վորդու հետ միասին նա կռվել է սպիտակների դեմ, ազատ յերկանիկ կյանքի համար։

Այսօր Ժուղեկը յերիտասարդ և ուրախ կոլտնտեսուհիներին պատմում է իր անցյալի մասին...

Չիլման Շամկանովիները շատ վաստակ ունեցան մեր ընտանեքից։ Վեց անգամ նրանք մեր ընտանիքը ծախեցին ուրիշ իշխաններին։ Հետո չնչին գնով ամբողջ ընտանիքը հետ էին գը-

նում ու նորից ծախում։ Ահա ու ծախով ժամանակամիջոցում մենք աշխատում էինք, առանց մի րոպե հանգիստ ունենալու։ Իշխանները հարկադրում էին մեր ընտանիքին դնալ հեռավոր լեռները, մեծ-մեծ ծառեր կտրել և ուտով կրել ցած։ Ամենածանր աշխատանքը նրանք դցում էին իրենց ճորտերի վրա, խնայելով անասուններին, սակայն մարդու մասին հոդ չտանելով։

Տասնինը թվին իմ վորդին՝ Ժյունուսը վերցրեց իշխանի ձիերը, բաժանեց աղքատ լեռնականներին և նրանց հետ միասին լեռները, պարտիզանական կռիւ սկսեց կազմակերպել։ Կյանքումս առաջին անգամ իշխան Շամխանովները յնկան իմ տուն։ Սկսեցին պահանջել, վորպեսզի ասեմ, ուր է դնացել վորդիս։ Ներանք ինձնից վոչինչ չիմացան։

Մեկ անգամ գիշերը Ժյունուսը մի կերոյ տուն հասավ և ուշագնաց ընկավ։ Նա ծաղիկ եր հանել։

Իշխաններ Ալանբեկ և Ալանդերի Շամխանովները սկսցան նրա հետևից։ Ներանք սկսեցին մորակներով ծեծել լուսամուտը, ապա տուն թափվեցին, հանեցին հիվանդ Ժյունուսին և պահանջեցին, վոր մատնի բոլշևիկներին։ Ժյունուսը վերջին ուժերը հավաքելով քաշեց նագանը և փորձելով կրակել նրանց վրա, դոշեց.

— Մարդը յերկու անգամ չի մեռնում։

Այն ժամանակ կատաղած իշխանները քաշքշելով դուրս հանեցին նրան ձյան վրա ու սկսեցին շոմպոլներով ծեծել նրան ու ծեր հորը։

Ցես նետվեցի իշխանների վրա։ Բայց նրանցից մեկը բացականչեց.

— Մեծել մորը հրացանների կոթերով։

Ցեվ ինձ ծեծեցին այնքան, մինչև ուշքս գնաց։ Ուշքի գալով, չնչել չեյի կարողանում, վորովհետև յերկու կողքս կոտրել եյին։

Հաղիվ վոտքի կանգնելով գնացի վորդուս և ամուսնուս վորոնելու, բայց նրանք վոչ մի տեղ չկային։ Այն ժամանակ դյուղից դուրս գալով յես տեսա յերեսուն վից դիակ։ Նրանք կապված եյին զույգ-զույգ և ամեն մի զույգի մոտ ճյունը ներկվել եր նեղկվել։ Ցես ճանաչեցի վորդուս, ամուսնուս,

հարևաններիս ու աղգականներիս դիակները... Ներանց թաղելուց հետո յես դնացի լեռները... Կիրճում գտա ոչխտեղ թաքնված պարտիզանական ջոկատը: Միանալով ջոկատին, յես այլևս չդատժանվեցի պարտիզաններից:

Յես յոթանասուն հինգ տարեկան եյի: Ոգնում եյի վիրավորներին, կերակրում եյի մարտիկներին: Դեռ ամուր եր իմ ձեռքը, արատես եր աչքս: Ինչ հրացան կար մեր ջոկատում, բայց մարտիկները հաճախ եյին հանձնարարում ինձ՝ հրացանը ձեռքիս կանձնել լեռներում և թշնամուն մոտ չթողնել:

Կարողացածիս չափ յես չարունակում եյի պայքարել այն բանի համար, ինչի համար վոչնչացավ իմ ընտանիքը:

Ներկար պատմում եր Թուղեկը կոլտնտեսուհիներին իր կյանքի մասին: Ավելի ու ավելի մոտ եյին խմբվում կանայք նրա շուրջը, և նրանց նայելով, Թուղեկն իրեն մենակ չեր զգում: Նա դիտեր, վոր կորցնելով իր փոքրիկ ընտանիքը, իր համար մեծ պրոլետարական հայրենիք և ձեռք բերել:

Թաշկինակով մաքրեց Թուղեկն իր չոր, բայց զոպված արցունքներից բորբոքված աչքերն ու ասաց.

— Ցերբ լրանա նուիրական իմ հարյուր տարին, յես միշտ պատրաստ կլինեմ պաշտպանելու կարմիր դրոշակը վոչ միայն մեր Մխուբյան, այլև ամբողջ աշխարհի:

Կանայք սիրով ու հպարտությամբ եյին նայում Թուղեկին: Ինտունամյա Թուղեկը նրանց հետ՝ յերիտասարդ, ուրախությամբ և ուժերով լի կանանց հետ միասին ակտիվ մասնակցություն և ունենում մեր մեծ հայրենիքի նոր կյանքի շինարարության գործին:

Ա. ԿՈՒԶԻՆ

ՉԵՉԵՆՈՒՀԻ ՅԱՏԻՍԱՑԸ

Ֆատիմատի հայրը, չեչեն Աբդ Արասանովը աշխատում եր Վլադիկավկազում ցինկո-արծաթային գործարանում: Աաբին դեռևս բոլորովին յերիտասարդ եր, յերբ հարկադրված

յեղաւ թողնել հայրենի տունը և գնալ ռուսական քաղաքը։ Դրա պատճառը տոհմերի մեջ յեղած հին թշնամութիւնն էր։ Մի ուրիշ տոհմ վրեժ էր լուծում Արսանովների տոհմից՝ թափված արեան համար։

Աբրին պետք է վրիժեր իր կեանքը։

Ցերկար չաշխատեց նա դործարանում։ Հաւղվեց բանվորական ռուսաստանը, ամեն տեղ դործադուլներ եյին։ Դործարանում աշխատանքները դադարեցին։ Մյուս բանվորների հետ մնաին, Աբրի Արսանովն ընկաւ Հեռավոր Սիբիր— աքսոր։

Ծարական բանտից նա իր ընտանիքն մուտ վերադարձավ, յերբ նրա փոքր աղջիկը՝ Ֆատիմատը տասը տարեկան էր։

Կայտառ, ժիր սևաչյա Ֆատիմատը մինչև Աբրի սիրելին էր յեղել։ Ամեն անդամ խղճուկ աշխատավարձն առանալիս՝ նա փոքրիկ Ֆատիմատի համար ետ անպատճին նվերներ էր բերում։

Բայց դժվար ու դառն էր Աբրիի հացը։ Դործարաններում նրան այլևս չեյին ընդունում։ Ապրում էր նրանով, վոր աղոցը ու ծանր, սուր կացինը ձեռքին անից—տուն էր թափառում։ Վաչ մի աշխատանքից չէր խուսափում, անում էր, ինչ պատահեր։

Մեկ անդամ մինչդեռ Ֆատիմատը նստած լրենց ապրած խրճիթի դռանը, սպասում էր հորը։ Վառվում եյին Շալդոն արվարձանի ճրագները, նեղ, սեղ փողոցներում դորդոում եյին կնդտոտ, պատառոտուն յերեխաները։ Հանկարծ մի անծանոթ, լավ հագնված ոտա, մոտեցավ աղջկան.

— Դու ո՞ւմ աղջիկն ես։ Դու Աբրի աղջի՞կն ես։

Ֆատիմատը նայեց անծանոթին։ Դորշագույն կոստյում, ծղնոտյա գլխարկ՝ սև վայլուն ժապավենով, վայլնցրած կոշիկներ։ Ձեռքին ձեռնափայտ։

Հայրն այդպիսի ծանոթներ չուներ։ Կասկածելի անծանոթ եր։

Ֆատիմատը վռնդնել չպատասխանեց, վեր կացավ ու փախավ բակը։ Դարպասի չորացած տախտակների արանքից սկսեց հետևել անծանոթին։ Անծանոթը նորից մոտեցավ դարպասին, հանեց փոքրիկ դրքույկը, աչքի անցկացրեց ու նայեց տան լապտերին, ուր սևին եր տալիս տան համարը։ Հետո հեռացավ, ձեռնափայտը պտտելով մատների մեջ։

Հետևյալ առավոտ Յաստխատը պատմեց հորը խորհրդավոր անծանոթի մասին: Աբբին մռայլվեց ու լուռ մնաց:

Այդ որը նա աշխատանքի չէնաց, այլ, աղջկա ձեռքից բռնած, գնաց Ոսկեթաղան արվարձանը: Այնտեղ նա վաստակած փող ուներ առանալու: Ամբողջ ճանապարհին նա լուռ եր, ինչ-որ բան եր մտածում և շարունակ շուրջն եր նայում: Յաստխատին վոչ մի կերպ չհաջողվեց ուրախացնել հորը:

Կանդ առան Զուգունի կամուրջի մոտ, մի հարուստ տան առաջ, ուր մի յերդվյալ հավատարմատար եր ապրում: Այդ ժամանակ Յաստխատի սուր աչքերը տեսան հեռվում իրենց յեվանից յեկող յերեկվա անծանոթի մարդուն: Ավելի հեռվում վողոց քարերի վրա դղրդաց մի կառք: Կառքը մոտենում եր. կառքում նստած եյին «Թագավորները» (Շալդոն արվարձանի յերեխաները բոլոր սպանների «Թագավոր» եյին ասում):

— Թագավորները են գալիս,— ասաց Յաստխատը հորը, յերբ նրանք ներս մտան մի լճանոցը: Ներսից ընդառաջ դուրս յեկավ ինքը տանտերը, կուշտ ճաշից հետո առատները քչփորելով:

— Ա՛, բարև, Աբբի,— ասաց նա բարեսրտորեն, ուղղելով պենսնեն:— Փողի՞:

Գլխավոր մուտքի աստիճաններին վրա վոտնաձայն լսվեց, խթաններին զնդաց: Դռան մեջ յերևացին յերկու ոգա, իսկ նրանց հետևից յերևում եր ծղնոտե դլխարկով, ձեռնափայտով մարդու դեմքը:

Սևաչյա Յաստխատի հիշողության մեջ իր վողջ կյանքում սպավորվեց այդ պահերը:

Աբբին զունատվեց: Նա կանդնել եր, սրտբելով բուրդը թափված փափախն ու չոյելով փոքրիկ Յաստխատի դանգուր մաղերով գլուխը:

— Դո՞ւ յես Աբբին,— հարցրեց «Թագավորներից» մեկը:

— Ա՛յո,— պատասխանեց հայրը:

— Հանուն որենքի դուռ ձերբակալված ես,— ասաց «Թագավորը»: Յաստխատը նրա ճակատին նկատեց մի մեծ խալ, վորը, կարծես, յերբորդ աչք լիներ:

Սպաները նիկելած սպարանջաններով կարճ չղթան հագցրին հոր ձեռներին ու տարան իրենց հետ:

Շատ դիշերներ չքնեց Ֆատիմատը։ Շարունակ թվում էր, որ սոսկալի յերեք աչքանի «Թաղամորն» իրեն է նայում։ Այլևս նա հորը չտեսավ և յերբեք չիմացավ ինչ վիճակվեց նրան։

Անցավ տասը տարի։ Ֆատիմատը մեծացավ ու դարձավ գեղեցկավարդ, դանդրահեր, դեղեցիկ աղջիկ։ Սկսվեց հեղափոխությունը։ Վողջ հոգով Ֆատիմատը նրանց հետ էր, ովքեր պայքարում էին չքավորների համար, ազատության համար։ Վողջ հոգով աոում էր նրանց, ովքեր կործաննելին էր հորը։ Տանտիրոջ թվի մրրկալից, նմանը չեղած դեպքերով լի ամառն էր։

Գնդապետներ Բելիկովի և Սոկոլովի ապխտակի բանդաները ցրեցին Վլադիկավկազում հավաքված Թերեքի ժողովուրդների հեղափոխական համագումարը։

Շալդոն արվարձաններում վազվզում էին սպաները, թաղնված բոլշևիկներին վորոնելով։

Ռուդարկությունից դերծ չմնաց նաև Ֆատիմատի բնակարանը։ Գաղանացած հյուրերին ընդառաջ դուրս յեկած գառամյալ մայրը հրացանի կոթով ծանր հարված ստացավ դեմքին։ Ֆատիմատի ուսին կաղակական մորակի հարվածից կապտած շերտեր ուռեցին։ Սպիտակները հեռացան՝ կատկածելի վոչինչ չհայտնաբերելով։

Հիվանդ մորը մեծ քրոջ խնամքին թողնելով՝ Ֆատիմատը մտավ կարմիր սանիտարական ջոկատը։ Շուտով ջոկատն ուղարկվեց Գրոզնի քաղաքը։

Զորս կողմը կռիվ էր, թնդանոթների վորոտներն արձագանք էին առնում լեռներում։ Սպիտակները խոշոր ուժ հավաքելով գնում էին Գրոզնու վրա։ Սկսվեց քաղաքի պաշարումը։ Որ ու դիշեր կատաղի կռիվներ էին գնում։

Ֆատիմատը հայտնվեց դիրքերում։ Նա դիրքերը յեկավ սպիտակ գլխակապով և գինվորական անդրավարտիկով, հրացանով և սանիտարական պայուսակով։ Մարտիկների հետ միասին պառկում էր առաջավոր շղթաներում՝ յերկինքում պայթող շրապնելի տակ։

Ֆատիմատի հրացանը կրակելուց տաքացավ, չուրթերը չորացան ու ճաքացան։

Ջոկատի հրամանատարը հրաման տվեց հարձակման դիմել։ Կատաղի ճնշումով կարմիր ղորամասերը հետ չպրտեցին Քըշնամուն ու ներս մտան Գրոզնենսկայա ստանիցան։ Բայց այդտեղ հարձակումը դադարեց։ Ցերեկը խիտ ղորապատնով սպիտակները հակագրոհի նետվեցին։ Կարմիրները հետ քաշվեցին։

«Սևվեր» հյուրանոցում մի տասնյակ կարմիր բանակայիններ դիրք մտան։ Ցատխմատը նրանց հետ եր։

Սպիտակները չրջապատեցին հյուրանոցը։ Նրանց զրահապնացքը թնդանոթներից կրակում եր, ուղղակի հյուրանոցը նշան առնելով։ Մեկը մյուսի հետևից ընկնում եյին ապտնված կարմիր բանակայինները։ Տնքում եյին վիրավորները՝ հատակին խճի ու փշրված սպակինների մեջ պառկած։ Հոգնած Ցատխմատը հազիվ եր հասցնում վերքերը փաթաթել։

Հազիվ եր նա հետ քաշել փշրված լուսամուտի մոտից չորրորդ սպանվածին, վոր դրսից վորոտաց նռնակաձիգի արկը, կրակ ու ծուխ ժայթքելով։ Պատի մոտ տղացող մի սպիտակ գվարդիական հրացանն ուղղեց նրան։ Ցատխմատը ճարպիկ հարվածով թշնամու ձեռքից վայր գլորեց հրացանը։

Դատարկվեց սանիտարական պայուսակը, սպառվեց մարլյա, վիրակապի պաչարը։ Այդ ժամանակ արդեն մեկ տասնյակ մարտիկներից կենդանի եյին մնացել մեխն յերեք հոգի։ Կապկինները չրջապատեցին հյուրանոցում դարանածներին և սկսեցին ձեռքի նռնակներ գցել։ Պայթյունների վորոտ, աղաղակներ։ Ծուխն ու թանձր փոշին ծածկել եյին սենյակը։ Այդ ժամանակ Ցատխմատը պոկեց ձախ թևվին յեղած կարմիր խաչի նշանը, վերցրեց հրացանը, ուսով դռեց արնոտած բրևեռնոի փամփուշտակալը և տեղավորվեց անկյունի յերկու հրակնատների մոտ։

Պատի մոտ խռխռալով մեռնում եր ծանր վիրավորը։ Կողքին կանգնած եր դլուխը վիրակապով փաթաթած մի կարմիր բանակային և, առանց հրակնատից հեռանալու, չարունակում եր կրակել հարձակվողների վրա։ Ցատխմատի կողքին տեղ գտավից յերկրորդ, թեթև վիրավորված մարտիկը։ Ցերեքով նրանք կրակելով պաշտպանվում եյին կապկիններից։

Ցատխմատը տեսավ սպիտակների չփոթությունը։ Մոտեցող կազակային շղթան կանգ առավ հյուրանոցից հինգ սաժեն հեռավորության վրա, պառկեց ու սկսեց դիրքավորվել։ Ըրեք

չբխկացին զնդացիրները: Բայց հյուրանոցի պաշտպանների կրակը չեր դադարում: Ցատխմատը պահունակ պահունակի հետևից դատարկում եր սպիտակների վրա: Աչխատում եր խփել ընտրովի՝ անվրեպ:

Այդպես դիմացավ կիսակործան «Սևվեր» հյուրանոցը, մինչև ոգնական ուժեր գալը: Ցեկած սանիտարները սպանվածներին տարան սանիտարական սայլակը:

Կենդանի մնացած մարտիկները քաշվեցին: Ցատխմատն առաջվա պես հրացանը ձեռքին չեր հեռանում հրակնատից: Կաղակները բարձրացան դետնից, կրկին աղաղակով նետվեցին դեպի հյուրանոցը:

— Նանա՛կ,— բացականչեց Ցատխմատը:

Ոգնության ցեկած մարտիկներն սկսեցին ձեռքի նռնակներ նետել դրոհողների վրա: Մի քի մլչից յերևում եր, թե ինչպես կազակներն ընկնում են ու վախչում ամեն կողմ:

Հանկարծ Ցատխմատը տեսավ՝ դեպի անկյունի հրակնատն և մոտենում մի ոպա, նռնակը բարձրացրած: Սպան առանց դիմարկի յեր, նրա ճակատը վիրյում եր: Ճակատին սևին եր տալիս մեծ խալը: Ցատխմատը ճանաչեց վոխերիի Թշնամուն:

— Այդ նա յե՛:

Ցեվ նա կրակեց, նշան բռնելով ուղիղ խալը, վորը յերրորդ աչքի յեր նման: Սպան յերեսնիվայր վռնդեց դետին: Այդ ակնթարթին աջ թևից կազակների վրա կրակեցին մեր զնդացիրները: Կարմիր հարյուրակից ցեկած ոգնական թարմ ուժերն եկին դրանք:

Հարյուր որ տևեց Գրոզնու պաշարումը: Տանջված վիրաբույժով քաղաքացորն արիաբար պաշտպանվում եր ճնշող Թշնամուց: Ցերեք ամսից ավելի կռվում եր Ցատխմատը կարմիր մարտիկների շարքերում: Ամբողջ ձախ թևում շարունակ այս ու այնտեղ յերևում եր նրա սպիտակ դլխակապը: Հրացանից նա չեր բաժանվում:

Մեկ անգամ, կարճատև դադարից ոգտվելով, Ցատխմատը յեկավ զորանոց: Ոգնական ուժ եր յեկել Չեչենական յերկու դյուղերից՝ Գոյսայից և Ալխան-Ցուրտայից: Զորանոց մտնելով՝ Ցատխմատը լսեց ինչ վոր մեկի զայրացկոտ ձայները, չհիշեցին հայհոյանքներ: Մարտիկներով շրջապատված, յերկու

չէչեն հայհոյում էին միմյանց, աչքերը վայրատակելով։ Պարզվեց, որ յերկու արյան թշնամիները, որոնք յերկար ժամանակ ապարդյուն որոնում էին միմյանց, միանգամայն պատահաբար հանդիպել են դիրքերում։ Ցատխմատն ականջ դնելով յերկու վոխերիմ թշնամիների հայհոյանքներին՝ մոտեցավ նրանցից մեկին և ասաց մայրենի լեզվով.

— Դուք ինչո՞ւ յեք այստեղ յեկել։

— Սպանելի դեմ կռվելու,— պատասխանեց նրանցից մեկը։

— Իսկ մի՞թե, դուք սպաներ եք, որ միմյանց հետ կռիվ եք սկսել։ Դուք յեկել եք այստեղ աշխատավորներին ոգնելու և վոչ թե անձնական հաշիվ մաքրելու։

Մյուս լեռնցին՝ Գոյտեցին՝ պատասխանեց արհամարհական.

— Վաղո՞ւց ես չրջաղեստ դեն դցել, որ տղամարդկանց գաստավորը դառնաս։

— Ես չրջաղեստս դեն եմ դցել այն ժամանակ, յերբ մարտիկ եմ դարձել։ Ես այդ չրջաղեստը յես պահում եմ այն վախկոտների համար, որոնք վախենում են թողնել հին սովորությունները... Ահա նա։

Ցատխմատը իր առնիտարական պայուսակից հանեց խաստարդնտ կտորից կարված չրջաղեստը։ Նա մոտեցավ Գոյթեցի չէչենին.

— Այստեղ ձեր տեղը չէ՛։ Եթե չեք ցանկանում համերաշխ պաշտպանել ազատությունը, ապա դնացեք այն կիրճերը, որտեղ քշել եր ձեզ ռուսական թագավորը։ Միմյանց փոր թափեք, բայց իմացեք, որ հեղափոխությունն այդ բանը թույլ չի տա... Գնացեք։

— Ես չեմ դնա,— ասաց չէչենը, տեղի տալով կնոջ առաջ։

— Ես նույնպես,— ասաց մյուս թշնամին։

Զորանոցում լռություն եր տիրում։

— Ձի՞ք դնա։ Այդ դեպքում խնդուն հաշտվեցեք։

Ալխան-Յուրտովցու աչքերում արցունք փայլեցին։ Գոյտեցին կանդնել եր գլուխը կախ, ղաճգորեն սեղմելով դաշույնի կոթը։

— Մահմեդ,— բացականչեց Ալխան-Գուբտուլչին,— յեկ մոռանանք հին թշնամությունը: Ապրենք նոր ձևով:

Գոյտեին պայծառացած դեմքով ձեռքը պարզեց իր նախկին թշնամուն:

Կարմիրների ջոկատը հարձակում. դրծեց Գրոզնենսկ ատենիցայի վրա:

Ձոխ թևում, շղթայի մեջ, հրացանը պատրաստ բռնած, դնում էր Ֆատխմատը: Հետևից ծխում էր դանդաղ առաջացող կարմիր ղրահաղնացքը: Ծերկաթգծով դնալիս Ֆատխմատը հանկարծ նկատեց կոճերի տակից յերևացող յերկար ելեկտրահան լարը: Քոտերի մեջ թաղըրած, լարը ձգվում էր դեպի յերկաթուղային դպրոցը, վորը դտնվում էր մոտակայքում:

Ֆատխմատը կանչեց մոտ յեկած կարմիր բանակայինին և ցույց տվեց նրան. կարմիր բանակայինն իմաց տվեց ընկերներին: Լարը կտրեցին: Ռելսերի տակից ղդուշությամբ հանեցին մեծ կլոր ականը:

Ֆատխմատը նետվեց այն կողմն, ուր ձգվում էր մահացու լարը: Փոքրիկ անակը դտնվում էր յերկաթուղային թմբից վոչ հեռու: Ֆատխմատն արդեն անակի մոտ էր, յերբ նրանը ձայներ լսեց: Նա կանգ առավ, դաղտագողի մոտեցավ լուսամուտին:

Թնդանոթի դնդակից ծակված պատի մոտ յերկու ուսադրվորներ նստել էին ինչ վոր անհասկանալի մեքենայի մոտ: Ֆատխմատն ուշադիր զննեց: Ելեկտրական լարը միանում էր այդ մեքենայի հետ: Սպիտակներն սպասում էին կարմիր ղրահաղնացքին, վորպեսզի պայթեցնեն: Նրանք չդիտեին ռելսերի տակ դրված ականի վիճակի մասին— ատն առաջ բարձրացող յերկաթուղային թումբը ծածկում էր այն:

Ֆատխմատն, այլևս առանց մոտածելու, հրացանը բարձրացրեց և յերկու վոսկեուսադրվորներին էլ փռեց իրենց տեղերում:

Կարմիրներն առաջ էին շարժվում: Նրանց ձախ թևը մոտենում էր յերկաթուղային նավթի պահեստին: Բռնկվեց հրդեհված հարյուր հազար փութ տարողություն ունեցող պահեստը: Գոլուբինցևա այդուց չոր թփուտների վրա պատի պես կանգ-

նեց սև ղղղված ծուխը և ծխի մեջ յերևացին բոցի կարմիր լեզուներ:

— Ուռա՛,— վորոտաց հարձակումն դործող շղթան և կարմիր բանակայինները հրացանները պատրաստ առաջ նետվեցին:

Ցերեխաուղային ջրհանից թխթխկաց դնդացիրը: Վաղողնեբից մի քանիսը վայր ընկան: Յաոխմատն չտատեց հետ քաշել վիրավորվածին, բայց ինչ վոր մի բան ուժգին հրեց կրծքին, և նա ընկավ:

Սանիտարներն հետ վիրավորներին հավաքելով գնում էյին յերկու չեչենները, վորոնք վերջերս դեռ արյան թշնամիներ էյին: Նրանք առաջինը նկատեցին չոր, տրտրված խոտին կպած սպիտակ դվնահատը, վորն որորում էր քամին:

Ցերբ սանիտարները Յաոխմատի կախ ընկած մարմինը դրեցին արյունոտ պատգարակի վրա, չեչեններն մոտյլ նայեցին միմյանց:

— Սա մեր չեչենուհին է: Նա մեր ազատության համար մեռավ,— ասաց Գոյտեցին:

— Մենք չատերից,— կրկնեց Ալխան-Յուրտովցին:

Ցեվ յերկուսով էլ, առանց միմյանց խոսք ասելու, նետվեցին դեպի ջրհանը, վորտեղից սուլում էյին պպիտակ դվարդիականների վերջին գնդացիրները:

Ց. ԼԻՏՎԻՆՈՎԻՉ

Ա Ց Ս Ո Ր

Ցատ լուսավոր և ցնծագին բաներ ունենք մենք: Մենք հարուստ ենք մեր յերիտասարդությամբ, մեր յերջանկությամբ: Նայեցեք իմ մորը: Նա ութսուն տարեկան է: Նա կորցրել է ամուսնուն և աղջկանը՝ իմ փոքր քրոջը, բայց վոչ մի վիշտ չի կարող ընկճել նրան: Տեսնո՞ւմ եք ինչպես ուղիղ և կանգնում նա և առում է: Այդ իր ամուսնու և Ցյակլուշա աղջկա հա-

մար հպարտությամբ լցված ազնիվ սիրտն և յերիտասարդացնում նրան և թույլ չի տալիս ծերանալ: Տեսնո՞ւմ եք ինչպես ջերմ առկայծում են նրա աչքերը: Այդ նոր, յերջանիկ կյանքի յերջանկությունն է բոցավառվում նրանց մեջ: Այն կյանքի, վոր մենք նվաճեցինք և վորը մեր բոլշևիկների կուսակցությունը ղարձնում է լուսավոր և ուրախ, ծաղկուն ու յերջանիկ:

Ցեվ այսպես, լսեցեք... Իմ ամբողջ յերիտասարդությունն անցել է ծայրահեղ կարիքի մեջ: Վորքան էլ աշխատում էի հարուստ կազակների համար, բայց կուշտ հաց չէի ուտում: Մինչև քսան տարեկան հասակս բատրակություն էի անում պրաշիտների մոտ, բայց ամսական մեկ մանեթից ավելի չէի ստանում: Հորս կորցրել եմ վաղուց, դեռևս հինգ թվին: Նա քաղաքական մեղադրյալ եր և նրան զնդակահարեցին: Իմպերիալիստական պատերազմի ժամանակ աշխատելու մոտ կուբանի չրջանի Պավլովսկ ստանիցայի հիվանդանոցում: Այնտեղ վիրավոր զինվորներ էին գալիս Արևմտյան ու Կովկասյան ռազմաճակատներից: Ահա այստեղից էլ սկսվեց իմ ընդհատակյա հեղափոխական, իսկ հետո էլ՝ նաև մարտական գործունեությունը: Տասնյոթ թվին մտա բոլշևիկյան կուսակցության մեջ:

Մեկ անգամ, փետրվարյան հեղափոխությունից հետո, ինձ հետ յերկու վիրավոր զինվոր խոսակցություն ունեցան: Հարցրին ո՛վ եմ, յես, ո՛վ է հայրս: Պատասխանեցի, վոր բատրակ եմ: Հորս մասին լռեցի: Ներանք ասացին; վոր իրենք Պուտիլովյան գործարանի բանվոր են: Այն ժամանակ յես սկսեցի ատուդել նրանց: Ցեվ յերբ մենք լավ հասկացանք միմյանց, յես ճշմարտությունն ասացի, վոր հայրս քաղաքական և յեղել և ինձ տասը տարեկան աղջկան, սովորեցրել է ատել բոլոր պարազիտներին, և ասում եր, վոր պետք է պայքարել աշխատավորների լավ կյանքի համար: Հինգ թվին նրան կազակները զնդակահարեցին հենց այստեղ, ստանիցայից մի փոքր հեռու, յերբ նա Տիխորեցկ եր գնում:

Զինվորներն ինձ էլ ատուդեցին: Տուն եկին գալիս, խոսում եկին մորս հետ, զգուշությամբ հարցնում եկին հորս մասին:

Հիշում եմ, մի անգամ յերկու ուրյադնիկ ներխուժեցին հիվանդանոց: Զինվորները նստած եկին իմ սենյակում: Ցես նը-

բանց ասացի՝ «Վոստիկանություն» և նրանք վազեցին հիվանդանոցի սենյակները։ Վառարանի մոտ մեծ ինքնայեռ կար։ Հանեցի խողովակը և ընդհատակյա աշխատողների թողած թղթերը խցկեցի ինքնայեռի մեջ։ Ուրյադնիկները չերկար խուզարկեցին և՛ ինձ, և՛ անկողինս։ Խուզարկությունից հետո ուրյադնիկը հարցրեց. «Իսկ ինչո՞ւ ձեր սենյակում ծխախոտի ծուխ և կանդնած»։ Ես պատասխանեցի, թե՝ ինքս եմ ծխում։

Ընդհատակյա աշխատողներն իմացան այդ խուզարկության և իմ ճարպիկության մասին։ Նույն օրն էլ ինձ ընդունեցին ընդհատակյա կազմակերպության մեջ։ Յոկլուշան դրագետ եր և ինձ ոգնում եր իմ աշխատանքում՝ ցանկապատերի վրա բոլշևիկյան լոզունգներ եր գրում, թռուցիկներ եր կպցնում։

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո կուբանում կռիվներ սկսվեցին։ Կարմիր գվարդիական ջոկատները կռվում էին հակահեղափոխական բանդիտների հետ։ Տասնութ թվի սկզբներում, մի կռվից հետո, մեզ մոտ քառասունութ վիրավոր կարմիր գվարդիական բերին։ Որ ու դիշեր մենք խնամում էինք նրանց։ Հետո կարմիրները հետ քաշվեցին, յեկան սպիտակները։ Ես մնացի հիվանդանոցում, վորպեսզի ոգնության ցույց տամ վիրավորներին։ Ես վոչնչացրի նրանց վաստաթղթերը և յերբ սպիտակները մտան, ասացի, վոր դրանք մոբիլիզացիայի յենթարկված բանվորներ են, յերկաթուղին էին նորոգում և ահա այնտեղ վիրավորվել են։ Բայց մեր հիվանդանոցում յեղած վիրավորների մեջ մի սպիտակ գվարդիական դուրս յեկավ, վորը մատնեց մեզ։ Նա ասաց.

— Ահա այս անդամն ամենակատաղի բոլշևիկյան է։ Նա պատռեց նրանց վաստաթղթերը։

Սպիտակները սկսեցին մերկացնել վիրավորներին, տանջանքների յենթարկել նրանց։

Ես կրկին պաշտպանեցի, ասում եմ.

— Նրանց համար ցուրտ կլինի հատակի վրա մերկ պառկել։

Սպիտակները ծիծաղեցին և ասացին.

— Մենք նրանց դաշտ կտանենք, ուր փոս ենք պատրաստել նրանց համար, և կարմիր սրիկաներին այդ դերեզմանը կնե-

տենք կենդանի–կենդանի: Ինչո՞ւ վամփուշտ փչացնենք նրանց վրա:

Սպան պահանջեց հիվանդանոցի որակները, վորտեղի համոզվի, կարմիրնե՞ր են դրանք, թե պինակոչի յենթարկված բանվորներ: Բայց դիրքը չդուռան: Գիրքը յես վոչնչացրել եյի: Որագրում դրված եյին առաջին կոմունիստական դնդի վիրավոր մարտիկների անունները: Սպիտակները գայրացան, վերցրին յերկու վիրավորի և ինձ ու տարան զնդակահարելու: Մեզ քշում եյին նիզակներով: Բակում նրանք կրակեցին կարմիր դվարդիականներից մեկի վրա: Նա ընկավ և բացականչեց.

— Բոլորին կոտորել չեք կարող: Մենք շատ ենք: Ձեզ չի՛ հաջողվի հեղափոխությունը խեղդել:

Հրացանի փողը կոխեցին մյուսի բերանը, վորովհետև նա եյ բացականչեց՝ «Կեցցե՛ հեղափոխությունը»: Նրան այլպես եյ զնդակահարեցին: Իսկ իմ թևից քաշեցին ու տարան մի պատարկ սենյակ: Սպիտակ դվարդիականներն ինձ նետեցին հատակին... Անպատվեցին... Ցես ուշաղնաց եյի:

Շատով մերոնք առանիցան դրսվեցին և ինձ ազատեցին: Ցես մտա ջոկատը վորպես մարտիկ, հետախույզ և դիմուքյան քույր: Այդ ջոկատում զնդացրորդ եր նաև Ֆյոկլուշան՝ իմ փոքր քույրը:

Տաճնուք թիվը Հյուսիսային կովկասի հեղափոխական պոլքերի համար ամենից ծանր տարին եր: Դոնից զերմանացիների ոժանդակությամբ ճնշում եր առաման կրասնովի կազակային հեծելազորը: Մանիչից և Սալից հարձակվում եյին կուլակա–յին–կարմիկական բանդաները: Սեվծովսկինյա շրջանից հարձակվում եր Դենիկինի կամավորական բանակը: Բատալպաշինսկու և Ջելենչուկի կողմերից ասպատակում եյին Շկուրոյի զայլի վոհմակները: Բելի գլինայի և Ցեռորեչկի ստանիցայի շրջանում գործում եյին սպիտակ բանդիտները:

Թշնամին հարձակվում եր բոլոր կողմերից, նեղացնելով կրակի ողակը: 11–րդ բանակը բոբիկ եր, մերկ եր և ռազմամթերք չուներ: Ճնշող սպիտակ բանդիտներից մենք պաշտպանվում եյինք սուրը զենքով: Մեր շարքերն որեց–որ նոսրանում եյին, իսկ ողակը մեր շուրջն ավելի ու ավելի յեր սեղմ–

չում։ Կամանդարմ Սորոկինը մեզ դավաճանեց։ Պետք եր յեկք վորոնել։

Մեր յերրորդ մարտական գործառույթը դանվում եր Ովեչկա առանիցայում։ Բոլոր սայլերը լիքն եյին վիրավոր և հիվանդ կարմիր բանակայիններով։ Ճես աշխատում եյի ուժասպառ լինելու աստիճան։ Իսկ դեղորայք չկար, չկար և վոչ մի կտոր մարլա, վոչ մի վիրակապ։ Հանում եյինք մեր ափսառակեղենը, պատռում, կապում վիրավորներին։

Դա տասնութ թվի վերջերին եր։ Ցարիցինից մեզ շատ վատ լուրեր բերին։ Այդ վատ լուրերը Սորոկինը խլեց։ Մեր հրամանատարը մեկնեց դվռապետ հրամանատարի մոտ, վերադարձավ մոտալ ու զայրացած։ Նա ասաց, վոր Ռևվոլյուցիոնավոեի կողմից հրամայված ե իրեն ոգնության գնալ 10–րդ բանակին, Ցարիցին, իսկ Սորոկինը թուլ չի տալիս և ասում ե, վոր ինքը դվռապետ հրամանատար ե և տեր ե Հյուսիսային Կովկասում և վոչ վոքի հրաման չի կատարի։ Մենք չլսեցինք Սորոկինին և շարժվեցինք Սուրբ–խաչ քաղաքը։ Այնտեղ յեկան և մի քանի դորամասեր։

Այնտեղ ել կազմակերպվեց պողպատյա դիվիզիան։ Հրամանատարությունը դիվիզիան տարավ դեպի Ցարիցին։ Մենք գնացինք Դիվնոյե, Մանիչ, Կրիստի, Զավետնոյե, Զեզուրնիկի վրայով։ Ճանապարհին մեզ վրա հարձակվում եյին կուլակա–յին–կալմիկական բանդիտները։ Ճես մասնակցում եյի բանդիտների դեմ մղվող կռիվներում վորպես շարքային մարտիկ և միաժամանակ վիրավորներին բժշկական ոգնություն եյի ցույց տալիս։ Ավազոտ–տափաստաններում հետախուզության եյի գնում և արժեքավոր տեղեկություններ բերում։ Ֆյոկլուշան կռիվների մեջ ընկած ժամանակամիջոցում, խնամում եր հիվանդներին և վիրավորներին։ Ջուր չկար, մարտիկներից ու զաղթողներից շատերը մեռնում եյին ծարավից։

Մեր, անմարդկային պայմաններում եյինք անցնում մենք ամպռտանները։ Զորս կողմը տիֆ եր, քաղց, կրասնովի բանդաները, ջուր չկար։ Բայց մենք հաղթահարեցինք այդ ճանապարհը։ Մենք յոթանասուն հազար մարդուց ավելի եյինք— քսան յերկու հազար մարտիկ և հինուն հազար զաղթական։ Սեպտեմբերի վերջերին մեր Պողպատյա դիվիզիան հասավ Զավետնոյե։

Ուղիղ հեռախոսագծով կապվեցինք Ցարիցինի հետ— ընկերներ Ստալինի և Վորոշիլովի հետ։ Ցարիցինյան ճակատի Ռևվոլյուցիոնամասը հրամայում էր Պողպատյա դիվիզային՝ հնարավորին չափ շուտ հասնել Ցարիցին։

Մեր առաջ, ճանապարհին ընկած էր Զեպուրնիկի դյուղը։ Ֆյոկլուշան կուլակի չոր հաղնելով դնաց հետախուզության։ Նա յեղավ Զեպուրնիկում, սրբապատկերներ և խաչեր ծախելով սպիտակների մասին տեղեկություններ հավաքեց և վերադարձավ դիվիզիա։ Զեպուրնիկում տեղավորված էին իշխան Տունդուտովի կամավորական բանակը, յերկու սպայական դունդ և կուլակային-կալմիկական հեծելազորը։ Նրանք դինված էին մինչև առամները։ Իսկ մենք վոչ փամփուշտ ունեյինք, վոչ թնդանոթի դնդակ։ Սպիտակները մեզ վրա թնդանոթային և դնդացրային կրակ բացեցին։ Բայց մենք, մեր հրամանատարներից վոգևորվելով, այնպես հարձակվեցինք դեպի կապարյա հեղեղը, վոր վոչ մի ուժ հետ պահել չեր կարող մեզ։ Ուղիղ քառասուն հինգ րոպե դղդում էյինք մենք իշխան Տունդուտովի մեջքը, մինչև բոլորովին մաշկեցինք բանդիտական կաշին։ Այդ կռվում յես սաստիկ կոնտուզիա ստացա արկի հարվածից և ուղարկվեցի հիվանդանոց, Բեկետովկա։

Այդ հարվածով մենք խորտակեցինք առաման կրասնովի պլանը՝ կարմիր Ցարիցինը գրավելու մասին։

Ցարիցին հասնելուց և դինեթրել կրասնովի Դոնի բանակը ջախջախելուց հետո, վորը փախավ Դոնի մյուս կողմը, մենք, արդեն ուրիշ կոմպոզիցիայով, ոգնության գնացինք 11-րդ բանակին, վորը Հյուսիսային Կովկասի ավազուտներով առաջանում էր դեպի Աստրախան։

Կրկին մենք հետախուզության էյինք գնում։ Ճանապարհին հանդիպում էյինք սառած կարմիր բանակայինների և ձիերի։

Ունևոր կալմիկները մեզ վոչ հաց էյին տալիս, վոչ միս, վոչ ջուր և չէյին էլ ծախում։ Բանդիկից հետո սկսեցին հանդիպել վիրավորներ ու հիվանդներ։ Բայց ինչպե՞ս ոգնել նրանց, յերբ չորս կողմդ թշնամիներ են ու ճնահատուն բուք։

Հիշում եմ մի վիրավորի,— նա վոտքին մեծ թարախակալված վերք ուներ։ Հարկավոր եր վերքը լվանալ, բայց տաք ջուր չկար։ Գնում ենք կիբիտկա, խնդրում ենք, բայց կուլակ-

կալմիկներն անդրդվելի չեն։ Այն ժամանակ թասերը լցնում ենք ձյունով, տաքացնում ենք մեր շնչով և ջրի չնչին կաթիլներ ստանում։ Բայց ի՜նչ ջուր։ Աղի ու դառը, յուրաքանչյուր ըմպան կարծր ավազի հետ խառը։ Պատռում ենք մեր վրայի ապտակեղենը, մաքրում թարախը, կապում վերքերը։ Ծածուկ կը թում ենք կալմիկների կովերը, կաթը խմացնում վիրավորներին։ Վոմանք սեղմում են շուրթերը, չեն ուզում խմել, հրաժարվում են, վոր մնա նրանց, ովքեր դեռ ուժ ունեն, իսկ իրենց՝ խնդրում են թողնել տափաստանում, վորպեսզի մեռնեն ճնայլին փոթորկի մեջ։

Մենք աշխատում էինք ոչնչել բոլորին. հավաքում էինք վիրավորներին, մեր ուսերին առած տանում էինք նրանց, թեվերից բռնած ուղում էինք քայլելու հուշնած, ուժասպառ յղած մարտիկներին։ Մենք պահպանում էինք յուրաքանչյուր ընկերոջ, թույլ չէինք տալիս մարելու հանդչող կյանքերը։ Մենք, կանայք, անձնազոհ նվիրված լինելով բոլշևիկների կուսակցությանը՝ հեղափոխության հարյուրավոր զոհվածների կյանք աղատեցինք։ Մենք կրկին կուսակում էինք մեր ուժերը։ Ու կրկին հարվածում էինք թշնամուն։ Հրային հեղեղով Սև ծովը քշեցինք բոլոր պարազիտական խոցերը խորհրդային յերկրից, ուր այժմ մեր պայծառ, ուրախ կյանքն և ծաղկում։

Վ. ԴՑՈՒՐԻՆ

ՑՑՈՒԼՈՒՇԱՆ ԴՆԴԱՅՐՈՐԴ.

Պոլիտարական հեղափոխությունն սկսվելիս, Ցյուկլուշա Լիսովինովան գտնվում էր Դոնի ավազանի Ցասինովսկի հանքերում։ Նա շախտում աշխատում էր վորպես վառոնանյութի քաշող։ Մանր աշխատանքից, ածխափոշուց, անդադար մշտական պակասությունից նա նիհար էր ու դունատ։

Բայց աշխատանքում Ցյուկլուշան չէր ղիջում աղամարդկանց։ Լինելով ժիր ու հանդուգն՝ նա թույլ չէր տալիս, վոր

հանքատերը վիրավորել էրեն և իր ընկերներին, իսկ ընկերուհիների մեջ համարվում էր ամենալավ պարողն ու խոհարարուհին: Ընկերները սիրում էին այդ առանութամյա աղջկան իր ուրախ բնավորության և անհոգանդության համար:

Հակամեքենայության հեղափոխությունից հետո բոլշևիկները սկսեցին հանքերում բանվորական ջոկատներ կազմակերպել: Հանքափորներին հրացան ու գնդացիր կրակել էին սովորեցնում: Հակահեղափոխության դեմ կռվի էին պատրաստվում:

Տասնութ թվի դեկտեմբերին Ցասինովկու հանքերում կարմիր գվարդիական ջոկատ կազմակերպվեց: Ջոկատը Լոզովկից չպաժվեց կրեվ, ուր սեր էին դասել պետլյուբրականները:

Ջոկատ ստեղծելու առաջին օրն իսկ Ցյոկլուշան զարդարվեց մաքուր հագուստներով ու գնաց հանքային դրասենյակ, ուր տեղի էր ունենում կամավորների ցուցակագրումը կարմիր-գվարդիական ջոկատում:

Նա մտավ հրամանատարին, նայեց նրան պայծառ-կապտաթաշեան աչքերով, պարզեց ձեռքը.

— Բարև՛ք,— և վճռական ավելացրեց:— Գրեցեք ջոկատում: Գնդացրորդ եմ լինելու:

Այսպես ահա Ցյոկլուշան նոր կյանք մտավ:

Կիևկի տակ, Կիյեվո-Պեչորյան վանքի պատերի տակ, որի անունը «մահվան խրճիթ» էին դրել, նկուղում տատապում էին պետլյուբրականները կողմից մահվան դատապարտված որևէ մի քանի հարյուր բանվորներ: Այդ պատերի մոտ պետլյուբրականները հարյուրավոր բանվորներ էին գնդակահարում: Ցյոնաեղ հերոսաբար կռվում էր Ցյոկլուշան: Վո՞չ ինքը, վո՞չ նրա ամրաժան ընկեր «Մաքսիմը» հոգնածություն և դադար չունեին:

Գնդացիր էին լինում, երբ գնդացրային ժապավեններում մի՞չ մի փամփուշտ մնացած չեր լինում, կամ կարմիր գվարդիականների շղթան հակառակորդի խիտ հարվածների հետևանքով ստիպված եր նահանջել: Այն ժամանակ Ցյոկլուշան դուրս էր հանում եր ձեռքի նռնակներն ու դիմում մարտիկներին.

— Մի՛քիչ հանգստորները յերբևիցե նահանջել են: Առա՛ջ ընկերներ:

Տասնութ թվի հունվարի քառասնեցին կիևցիք գրավվեց

զարմիրներով կողմից, արսենալի բանվորներն աղատվեցին մահվան դատապարտությունից: Վանքի տակ չեղած կռիվներում Յոկկուշան առացավ առաջին մարտական մկրտությունը և հանդես բերեց իրեն վորպես իսկական հերոս ու հեղափոխության անվեհեր մարտիկ:

★

Հյուսիսից, Շախտա քաղաքի կողմից կարմիր զվարդիաների ջոկատները հարձակվում էին Նովոչերկասկի վրա: Կազմիրների վախից զենեռալ Կորնիլովը թողնում է քաղաքը և Դոնի տափաստաններով գնում Կուբան: Դոնեցի հանքափորների ջոկատն առաջադրանք ստացավ՝ կտրել Կորնիլովի ճանապարհը և վոչնչացնել նրա բանդաների մնացորդները: Եշելոնը Ռոստովից շարժվեց հարավ-արևելյան ուղղությամբ: Փոքր կայարաններից մեկում՝ Մեչետինսկի ստանիցայի մոտ, ջոկատն իջավ և շելոնից և քայլով առաջ անցավ: Կորնիլովականները նոր էին անցել հարավային ուղղությամբ, դյուղերից մեկում թողնելով իրենց զինվորներից հիսուն հոգու՝ ստառած վոտներով ու ձեռներով: Հանքափորներն ընկան Կորնիլովի հետևից: Ճանապարհին հանդիպեցին քառասուն հինգ հոգուց բաղկացած յերիտասարդ կազակների մի խմբի: Նրանց առաջնորդում եր մի տասնհինգը տարեկան ակնոցավոր յերիտասարդ: Ռուլորն էլ ձիով էին: Ջոկատի հրամանատարը կանգնեցրեց նրանց, հարցրեց.

— Ո՞վքեր եք, և ո՞ւր եք գնում:

— Ձես,— պատասխանեց յերիտասարդը,— Իվան Իվանովիչն եմ, Մեչետինսկի ստանիցայի կազակ: Իսկ սրանք իմ հավատարիմ բաղեներն են: Այնտեղ, ստանիցայում աղ ու հաց են պատրաստում Կորնիլովի համար, իսկ մենք քեզ մոտ ենք գալիս, Բատկո, զենեռալին սրով ու գնդակով դիմավորելու:

— Ուհո՛,— բացականչեց Յոկկուշան:— Նեցցե՛ք, տղերք:

Հրամանատարը վորձող հայացքով զննեց կրակոտ, մազերի փնջերը ճակատներին թափված կազակներին և ասաց.

— Շնորհակալություն ձեզ, ընկերներ, հեղափոխության անունից, միացե՛ք:

Կազակները ժիր աշտանակեցին ձիերը ջոկատի կողքով:

Ֆյոկլուշան նստել էր տաշտանկայի վրա, դնդացրի մոտ, փաթաթված վոչխարի մորթու կիսամուշտակում։ Նա նայեց ակնոցավոր յերիտասարդին։ Յերիտասարդը թևի տակ մի ինչվոր յերկարավուն տուփ էր բռնել։ Ցեվ յերբ Ջոկատը շարունակեց ճանապարհը, Ֆյոկլուշան յերիտասարդին մատով էր մոտ կանչեց.

— Անունդ ինչպե՞ս է,— հարցրեց Ֆյոկլուշան։

— Վանյա։— Նա ժպտաց և նույնպես հարցրեց։— Աղջի՞կ ես։

— Տարօրինա՞կ է, ինչ է։ Հապա մի տեսնես սպիտակներին ինչպես եմ փոում, թե չե՝ «աղջի՛կ, աղջի՛կ»։ Կինը նույնպես մարդ չի՞, ի՞նչ է։

— Վոչ,— շփոթվեց Իվան Իվանովիչը,— այդ յես հենց այնպես...

— Իսկ այդ ի՞նչ արկղ է թեվիդ տակ։

— Տուփ է։ Իսկ մեջը՝ ջութակ։

— Ջութա՞կ,— զարմացավ Ֆյոկլուշան։

— Տարօրինա՞կ է, ինչ է։ Հապա դու մի լսելիր ինչպես եմ նվաղում յես ջութակը, թե չե՝ «ջութա՛կ, ջութա՛կ»— նրա տոնով պատասխանեց յերիտասարդը։ Ցեվ յերկուսով էլ ծիծաղեցին։

— Լավ,— ասաց Ֆյոկլուշան։— Ցերբ կոմնիլովին վերջացնենք, այն ժամանակ ուրախություն դու կնվագես ինձ համար, իսկ յես կպարեմ քեզ համար։

Այդ րոպեից նրանք սերտ բարեկամներ դարձան։

Ջոկատն ամբողջ գիշեր ճանապարհ գնաց։ Ցերկար, սառնամանիք գիշեր էր։ Առաջից գնում էր հետևակը, նրանից հետո հեծյալները եյին, իսկ հետևից ճոնչում էր դումակը։ Մարտիկներն ուշադիր հետևում եյին Քշնամուն։ Բայց Քշնամին չէր յերևում։ Հետախույզները վերադառնում եյին, մեկը մեկ նույն լուրը բերելով.

— Կոմնիլովականների հետքն էլ չկա։

Մոտենում էր լուսաբացը։ Ցերբ Ջոկատը բարձրանում էր բլուրը, արդեն բոլորովին լույս էր։ Առջևում ընկած էր ձորը, իսկ նրանից այն կողմ՝ բլուրն էր բարձրանում։ Հեռվում յերե-

վում էին հրաձգային դրամասերը և շարժվող զումակի ևս ժա-
պավիններ:

Թշնամու հեծելազորը գնում էր թեվերից:

Կորնիլովականների կողմից թնդանոթի վորոտ լսվեց: Ո-
դում բարձր սուլից գնդակը, ընկավ դետին, զումակը խառնա-
շփոթեց: Զիները մի կողմ նետվեցին, առաջ չէին գնում: Ցերի-
բորդ հարվածը քանդեց հողը: Մարտիկներն անդիտակցորեն
կռացան: Ցյոկլուշան ուղիղ կանգնեց տաչանկայի վրա, ծիծա-
ղեց.

— Տեսե՛ք մի, վախեցնում է: Վախեցո՞ղ է գտել: «Մահ-
վան խրճիթում» դրանից սոսկալին ենք տեսել: Ճի՞շտ է, տղերք:

— Ոհո՛-հո՛,— բամբ ձայնով ասաց մի մարտիկ:— ԵՒս
քո՛ղը հանեցինք:

Մարտիկները ժպտացին և ուրախ առաջ գնացին: Հետևա-
կին հրաման տրվեց թշնամուն ճակատային հարվածատալ, իսկ
հեծյալները ձիերով սլացան կորնիլովի թիկունքը: Թշնամին
ուժեղ դնդացրային կրակ բացեց: Մարտիկները պառկեցին դե-
տին և սողացին լեռն իվեր: Սալիտակները գնդակների տարափ
էին թափում գնդացիրներից: Սողաց նաև Ցյոկլուշան, քաշե-
լով իր գնդացիրը: Մեկը կրակեց հրացանն ու բացականչեց.

— Ահա՛ նրանք: Սրդեն յերևում են:

Ցյոկլուշան փոքր ինչ բարձրացավ և տեսավ ձյան վրա
պառկած կորնիլովականների նոր շղթան: Գնդացիրներն աչիա-
տում էին առանց լուելու: Պատյաններից տաք պղպջվի յեր
բարձրանում: Հեռվում, շղթայի հետև գտնվում էին հակառա-
կորդի պահեստային ուժերը, հեծելազորի պաշտպանությամբ: Իսկ
այդտեղ, ջոկատի առաջ պառկած էր միայն սոցյալական հա-
յությունը:

— Վարեցի՛ն շները— դուրս թռավ հրաձգային վաշտի
հրամանատար Սկիբայի կրծքից:

Նա պատյանից դուրս քաշեց սուրը, դարձավ մարտիկների
կողմը:

— Վոտքի՛:

Բոլորը վոտքի յելան ու շարժվեցին թշնամու վրա: Ցեվ
նույն րոպեին կորնիլովականները նույնպես դադարեցին կրա-
կել: Նրանք ևս վոտքի յելան ու շարժվեցին ընդառաջ: Նրանք

առաջանում էին հրացաններըը պատրաստ բռնած, վայրկենական նիզակները։ Ահա նրանք բոլորովին մոտիկ են։

Ցոկկուշան թևից իջեցրեց կարաբինը, դռուց պոկեց նռնակը։

— Կանգնի՛ր։

Սպայական շղթան անզգայացավ։

Սկիբան թուրն առաջ պարզեց.

— Անձնատո՞ւր եք լինում։

— Նետի՛ր հրացանները,— առաջ վազեց Ցոկկուշան։

Ճերկու շղթաները, յերկու պարսպի նման, խորտակվեցին մի մյանց վրա։ Կատաղաբար նիզակահար էին անում մի մյանց։ Վեր թռան հրացանների կոթեր, նիզակներ, սրեր։ Ցոկկուշան պաշտպանվում էր կարաբինի կոթով, կրակում էր ապանների դեմքերին։ Բայց հանկարծ նա նկատեց, որ Սկիբան և ապան մի մյանց բռնվեցին, թավալվեցին ձյան մեջ։ Նրանց մոտ վազեց էս մի ապա, հրացանի կոթով հարվածեց Սկիբայի գլխին։ Բայց նույն րոպեին Ցոկկուշան նիզակահար արեց նրան և բարձրացրեց Սկիբային։

Բլուրից վորոտում էին թնդանոթները։ Կորնիլովականների մնացորդները չտալ նահանջեցին։

Սկիբան առաջ նետվեց, բայց մի քայլ արած, ընկավ։

Ցոկկուշան Սկիբային հանձնեց մի մարտիկի, վերցրեց դնդացիրը, քաշեց մի կողմ, հարմարեցրեց թմբի գագաթին և իր գայբուլին ու առելությունը թափեց նահանջող թշնամու վրա։ Ցոկկուշան կռացած նստել էր իր ամաքսիմի կողքին ու կրակում էր.

— Հեղափոխության թշնամու վրա հովհարաձև կրա՛կ։

Ցոկկուշայի մոտ վորպես յերկրորդ համար աշխատող կարմիր դվորդիականը հազիվ էր հասցնում դնդացրային ժապավենները նրան տալ։

Այս անգամ կորնիլովը խուլ տվեց։ Դեռ յերկար պահում էր ջոկատը կուբանով և Ցոկկուշայի դնդացիրը սպիտակ գվարդիական շատ հարյուրակներ հնձեց։ Նա չարունակ տռում էր.

— Ե՛խ, կորնիլովին էրեն հանդիպեյի...

Ցեղ հանդիպեց։ Տառնուք թվի գարնանը կորնիլովը կու-

բանի ոտքայլ ղորքերով մոտեցավ Ցեկատերինոդարին և սև ամպի նման խիտ շրջապատեց քաղաքը յերեք կողմից։ Յարբքին-ներն և զրծարաններն բանվորները, քաղաքային կուսակցական կազմակերպության և հեղկոմի առաջնորդության ղեկավարությամբ, դուրս յեկան պնդերալի դեմ։

Նովոդմիտրիևսկ ստանդյայից նրանց ողնության հասավ այն ջոկատը, որի մեջ եր Յեկկուշան։ Ջոկատը մոտեցավ ենեմ կիսակայարանի կողմից և հանկարծակի հարվածեց թշնամուն թևից։ Յերեք որ ու գիշեր ղորտում եյին քնդանոթները։ Կորնիլովականներն աշխատում եյին քաղաք մտնել։ Յեկկուշայի պնդացքերն անդադար տաք արճիճ եր թափում։ Զորտորդ որը կարմիր հրեատանու դիպուկ արկն ընկավ սպիտակների շտաբի վրա և սպանեց Կորնիլովին։ Սպիտակ գվարդիականները խուճապով փախան։

Գավից հետո, խմանալով Կորնիլովի մահվան մասին, Յեկկուշան մոտեցավ Իվան Իվանովիչին և ասաց.

— Իսկ այժմ, Վանյա, վերցրու ջութակը և «Յարկոչկան» նվագիր։

Իվան Իվանովիչն ուղղեց ակնոցները, հինտոցը քսեց լարերին։ Այդ որը Յեկկուշան առանձնապես ժիր եր պարում։

Հուլիսյան մի յերեկո, սպիտակ գվարդիականների հետ ուենցած անընդհատ կռիվներից հետո Կուբանում, Ստավրոպոլշչինայում, Եկատերինոդարում և Բելոգլինայի շրջաններում, Դոնն և Կուբանի պարտիզաններով համալրված հունգուզախորների ջոկատը հասավ Տիխորեցկ։

Անքուն գիշերներից և հոգնածությունից Յեկկուշան նիհարել եր, բայց աչքերն առաջվա նման բոցավառվում եյին վճռականությամբ ու անվեհերությամբ։ Նա հագել եր սև պուոնոտով հասարակ չթի հագուստ, մեջքին գնդացրային ժապավենն եր կապած, գլխին ծղնոտե գլխարկ, վոտներին գինվորական կոշիկներ, ուսին կարաբին, գոտուց կախված եյին ձեռքի նռնակներ։

Անցան հուլիս, ոգոստոս ամիսները, յեկավ սեպտեմբերը։ Ջոկատի հրամանատարը, վորը մեկնել եր Ցարիցին, Ստալինի մոտ, չեր վերադառնում։ Բանակը քաղցած եր ու բոկոտն։ Սպիտակները կատաղել եյին, ամեն կողմից ճնշում եյին, խո-

պաշտպանվելու վոչինչ չկար. ռազմամթերքն սպառվել եր: Սոլոկինն իր շտաբում որպիաներ եր սարքում, ստանիցաներում հարսանիքներ եր անում: Մարտիկների մեջ խուճապ եր սկսվում: Նրանք աւում եյին, վոր հրամանատարն այժմ չի վերադառնա և ամեն ինչ կվոչնչանա: Ցեղ մխայն Ցյոկլուշան չեր հավատում, խրախուսում եր ընկերներին.

— Ամուր կանգնենք վոտքի վրա, թե չե քամին կփչի, վայր կընկնենք, քթներդ կջարդենք:

Մարտիկները ծիծաղում եյին, վերադառնում եր առաջ տրամադրությունը:

Սոլոկինը փորձում եր ջոկատը լուծել, բայց ուշացավ: Անսպասելի յեկավ հրամանատարը, դուրս պրծնելով Ցարիցինից: Նա յերեսուն ապրանքատար մեքենաներով Հյուսիսային Կովկասի հեղափոխական զորքի համար արկեր ու վամփուշտ բերեց, նաև ընկեր Ստալինի հրամանը՝ յերրորդ գորասյունը, ինչպես այժմ կոչվում եր ջոկատը, նետել Ցարիցինի ճակատը:

★

Սուրբ-խաչում յերրորդ գորասյունի մասերից կազմակերպվեց Պողպատյա դիվիզիա: Դիվիզիայի կազմում մտնում եյին վեց հազար սուսեր և քսան յերկու հազար նիզակ: Մարտիկների հետևից գնում եյին մայրերը, քույրերը, կանայք ու նյութերը: Ցերբ բանակը դուրս եր գալիս Սուրբ-խաչից, Ցյոկլուշան տաչանկայով անցավ զորքականների դումակի մոտով, ազատաց ուր վոր հետևն և բացականչեց.

— Դե՛, զգուշացի՛ր, բանդիտ կրասնով:

Կանայք հիացմունքով եյին նայում Ցյոկլուշային: Ներանք սիրում եյին նրան ու հավատում:

Դադարների ժամանակ Ցյոկլուշան գալիս եր կանանց մոտ, զրույց եր անում նրանց հետ, տխուր յերգեր եր յերգում և ասում.

— Ե՛խ, կնանիք, ա՛յ, կնվաճենք ազատ կյանքի բոլոր իրավունքները, այն ժամանակ մի՛թե այսպիսի յերգեր կերգենք: Ամեն ինչ կմոռացվի՝ և՛ վիշտ, և՛ կարիք, և՛ մեր անիծյալ շան կյանքը: Նոր յերգերում կասվի միայն յերջանկու-

թյան և ուրախության մասին, վորը մեր արյունով ենք ձեռք բերում մենք...

Ֆյոկլուշան կանչում եր վանքային, ուխտում եր նրան նվաղել, իսկ ինքը պարում եր: Մարտիկների կանանց և մայրերի սրտերը նոր կորովով եր բորբոքվում:

Գողգոթայա դիվիզիան մասալ չդազուրկ, ավազուտ տափաստանը: Սուխոյ Բուլվարում ուղեցին պարենամթերք և կերի պաշար վերցնել, բայց տեղական իշխանությունները մերժեցին: Պարզվեց, վոր Սորոկինը հրաման և ուղարկել, թե՝ դիվիզիայի մարտիկները հեղափոխության ղավաճաններ են, և պահանջում և դիվիզիայի հրամանատարական կազմը ձերբակալել ու դնդակահարել:

Բանակի հրամանատարի հրամանը հեռագրային և հեռախոսային լարերով ավելի շուտ եր տեղ հասել, քան Գողգոթայա դիվիզիան: Տեղական իշխանությունները, հիմնվելով այդ հրամանի վրա, պարենը ու կերի համար դրամ եյին պահանջում, բայց դիվիզիայի դրամարկղը դատարկ եր: Ճշմարիտ և, այդ բոլորը կարելի յեր ստանալ ուժով, սակայն ուժ չեյին ուզում դիմել: Մարտիկները լավ եյին հիշում հրամանատարության կարգադրությունն այն մասին, վոր ազգաբնակչությունից ինքնակամ վերցրած յուրաքանչյուր թելի համար հանցագործները կդնդակահարվին: Միևնույն ապացուցել, վոր դիվիզիան գնում և Ցարիցին, 10-րդ բանակին ոգնության՝ ժողկոմ Ստալինի հրամանով— խնդրում եյին դիվիզիային պարեն և կեր տալ:

Բայց Սորոկինը վախեցրել եր տեղական իշխանություններին և նրանք անողոք եյին: Ամեն ժամանակ առաջ անցավ Ֆյոկլուշան, գնդացրային ժապավենները խաչաձև կապած: Նրա ձեռները դողում եյին և շրթունքները ցնցվում:

— Սողոմոնի՛ր... Ո՞ւմ եք ծունկ չոքեցնում: Բան դիտ Սորոկինի՞ն եք հավատում: Մենք և՛ մեր արյունը, և՛ մեր արցունքը, և՛ չահել կյանքներն ենք տվել Հոկտեմբերյան իշխանությանը: Իսկ դո՞ւք:

Նա դվից պոկեց ծղնոտե դլխարկը, դինվորական տաք հագուստի դրպանից հանեց փողերը, նետեց դվխարկի մեջ, բացականչեց.

— Հապա, յեղբայրներ, դյնեք, տվեք ով ինչ ունի։ Թափ տվեք դրպանները։

Մարտիկները սկսեցին թափ տալ դրպանները և Ֆյոկլուշայի դվնարկի մեջ թափվեցին թղթադրամներ, արծաթ, ժամացույցներ։ Գաղթականները ևս իրար անցան։ Մեղուհիները եկին բացում, ձեռներով վորոնում հին հագուստների մեջ, ուր դաղտնի դրպաններ էլին կարված։ Ֆյոկլուշային տարան՝ ով դրամ, ով արծաթյա ականջողները, ամուսնական մատանիները և այլ իրեր։ Հավաքված իրերով դնեցին պարեն, հեր, տակառները— տակառներում խկուշն ջուր լցրին։ Նույն որվա յերեկոյան Պողպատյա դիվիզիան ճանապարհ ընկավ։

Տեղական ղեկավարները Սուխոյ Բուլվալայից այն կողմ հասան դիվիզիային, վերադարձրին դրամը և դանձապահին թուղթ տվին այն մասին, վոր տեղական աղգաբնակչությունը կամավոր կերպով պարեն և հեր հայթայթեց Պողպատյա դիվիզիայի մարտիկներին։ Ֆյոկլուշան խիստ նայեց նրանց և ասաց.

— Հը՛, հասկացա՞ք։ Տեսեք, մյուս անդամ հակահեղափոխություն չառաջացնեք։

★

Ցերկրորդ որն էր. Պողպատյա դիվիզիան դնում էր ամրոցառներով։ Մանր ու դժվարին էր ճանապարհը։ Ալ կողմից, անջուր տափաստանի խորքերից հարձակվում էլին սպիտակգվարդիականները, ձախից սպիտակ կազակները։ Բայց մարտիկները, հետ մղելով թշնամու դրոհները, շարունակում էլին առաջ ընթանալ։ Սպիտակ կալմիկների հետ ունեցած ընդհարումներից մեկի ժամանակ Ֆյոկլուշան վիրավորվեց դլխից։ Գանդին լցված առաջի շեղ հարվածը թեթև եր, բայց վերջից շարունակ արյուն եր հոսում։ Ցավ, այնուամենայնիվ, Ֆյոկլուշան չեր թողնում տաչանկան։ Արյունոտված վիրակապը դլխին, նա առաջվա նման եր դնդացրի առաջ։

Պարենը վերջացավ, ջուրը վերջանալու վրա յեր, տակառները ցամաքել էլին։ Մարդիկ և ձիերը ջուրը բաժիններով էլին ստանում։ Ցավ վորչափ ջուրն սպառվում եր, այնչափ շատ

ավազուանդ եյին հանդիպում։ Մանը, շարժուն ավազը լցվում եր աչքերը, կոկորդը։

Իսկ Ծանը բեռնված սայլերի վրա անքում եյին ափիոմ հյուվանդներն ու վիրավորները։

— Ջո՛ւր, ջո՛ւր տվեք ինձ...

Ճեվ Ֆյոկլուշան լինում եր տաշանկայից՝ նիհար ու սեվացած՝ յերերուն քայլերով գնում եր վիրավորների մոտ։ Ներանց եր տալիս իր բաժին ջուրը, մխիթարում եր, ինչպես կարող եր.

— Ընկերներ, համբերեցեք մի քիչ էլ... Շուտով կհասնենք Վոլգային... Լայն, անսահման... և այնքա՜ն ջուր կա նրանում...

Կապում եր նրանց վերքերը, մոռանալով իր վերքը, հանդիստ պառկեցնում եր նրանց սայլերի վրա և շարունակ կրկնում.

— Թանկագին իմ ընկերներ, հարազատ իմ ընկերներ... Վոլգան արդեն մոտիկ է։ Լսո՞ւմ եք։ Այդ ջուրն է խշշում...

Հիվանդներն ու վիրավորները հանդստանում եյին, հետո սկսում եյին զառանցել և կոշտ ավազի խշշոցն ընդունում եյին ջրառատ Վոլգայի աղմուկի տեղ։

Աչքերը վախած Ֆյոկլուշան պառկում եր տաշանկայի վրա։ Մարմինը տանջում եր, բայց նա պառկում եր լուռ։ Աբևելքից ալիքների պես թավալում եյին ավազները, խանգարում եյին քայլել, կուրացնում եյին աչքերը։ Մարտիկների քայլը թուլանում եր, վոտները թաղվում եյին ավազի մեջ, կախ եյին ընկնում ծանրացած գլուխները։ Անիվները ծանր եյին շարժվում, ճռռում եյին սայլերի առանցները և սայլապանները կսկիծով շշնջում եյին.

— Ե՛խ, մազութ լիներ... Անիծյա՛լ ավազ...

Վանյան առանց հետանալու, հետևում եր Ֆյոկլուշայի տաշանկային։ Մաքրելով ակնոցներն ու թևով ջրքաշկի տուխը սեղմած, նա դժվարությամբ շարժում եր վոտները։ Ճեվ յերբ մարտիկները, ընդհատելով քայլերը, սկսեցին կանգ առնել ու հետ մնալ, հոգնածությունից նստելով ավազի վրա, Ֆյոկլուշան բաց արեց մթագնած աչքերը։ Տեսնելով Վանյային, նա ժպտաց ու նրան իր մոտ կանչեց։

— Հը՞, ինչպե՞ս ես, պարուհի,— ժպտաց Իվան Իվանովիչը, թեքվելով Ցյոկլուշայի կողմը:

— Դու մի բան նվագելիր,— խնդրեց Ցյոկլուշան:

— Կարելի չե՝ գաուվիրը...

— Ուրախ բան նվագիր, որպեսզի մեր ընկերներն առույգ քայլեն:

Վանյան առավ հանեց հին, դունաթափ ջութակը: Այդ ջութակը ճանաչում էին բոլոր մարտիկները: Ցնվ այժմ կարծես նա նրանց լավագույն և հավատարիմ ընկերը լիներ: Վանյան բարձրացավ առջևնակի վրա, քաշեց կնոտոցը և սայլերի վրա շարժվեցին վիրակապերով փաթաթված մարդիկ:

— Ուժգի՛ն:

Ֆամին բարկանում է, մրրիկի չի վոխվում:

Ցերգն ուժգին, զնգուն և բարձր է հնչում: Ամբանում է քայլը: Ցերգն ընդգրկում է բոլորին ու առաջ է տանում, սվազներին ընդառաջ: Բայց ահա կտրվեց լարը: Վանյան նվագում է յերեք լարով: Հետո կտրվում են յերկուսն էլ, նվագում է մեկ լարով: Ցնվ, վերջապես, կտրվում է և վերջինը... Իվան Իվանովիչը ջութակը թափահարում է ողում, ուզում է նետել ավազների մեջ, բայց Ցյոկլուշան արդելում է.

— Չհամարձակվի՛ս: Տեսնո՞ւմ ես մարտիկներն ինչպես են քայլում: Ինչո՞ւ չես ուզում դու ջութակը...

Զեռքը պարզեց նրան.

— Շնորհակալություն: Շնորհակալությո՛ւն և՛ քեզնից, և՛ ահա, դրանի՛ց,— ցույց տվեց նա ջութակը— մեր բարեկամից: Պահիր: Ցերբ նվաճենք, կնորոգինք և դու դեռ մեր մարտական յերիտասարդության մասին շատ յերգեր կնվագես:

Ցնվ Վանյան խնամքով տուփի մեջ դրեց լուռ ջութակը:

Ջութակն իր դործը կատարեց: Առույգ յերգով ամուր քայլում էին մարտիկները:

Հինգերորդ որը առավոտյան Պողպատյա դիվիզիան դուրս պրծավ ավազուտ անապատի մահացու դրկից և մոտեցավ Զավետնայա գյուղին: Ջրի, պարենի և կերի պաշար վերցնելով դիվիզիան նույն որը արագացրած քայլով գնաց դեպի Զեպուրնիկի: Այդտեղ սոսկալի կռիվ տեղի ունեցավ: Զեպուրնիկի մոտ դերք էին բռնել սպիտակների ամբողջական գնդերը, կալմիկա-

հան հնձելաղբեր ու իշխան Տունդուսովի ատրախանյան բանակը։ Պողպատյա դիվիզիայի հրամանատարը էլ եր։ Մարտիկները սխալած էին կռվել համարյա մի այն սաղը գենքով։

Կռիվը քառասուն հինգ րոպե տևեց։ Պողպատյա դիվիզիան վոչնչացրեց ամուր, համարյա անխորտակելի թվացող սպիտակ գվարդիական առաջապահ զորքին, ճանապարհ բաց արեց իր համար դեպի Ցարիցին։

Կռվից հետո Ցյոկլուշային գտան իր «մաքսիմի» մոտ ծանր վիրավորված։

Պողպատյա դիվիզիայի ջոկատներից մեկը կրասնովին վոչընչացնելուց հետո շարժվեց Ատրախան։ Ընկերները Ցյոկլուշային տարան իրենց հետ։

Զեպուբնիկիի տակ ստացած վերքերը յերկար ժամանակ չեյին բուժվում։ Միայն տասնինը թվի վերջերում առողջացավ Ցյոկլուշան և կարողացավ վերադառնալ մարտական կյանքին։ 49-րդ հրաձգային դիվիզիայի հնձելակային դիվիզիոնի հետ նա ուղևորվեց Ղրլար, վորտեղից մասնաժամ եր անցնել տուն, Ռոստով և տեսնվել իր պատավ մոր հետ։ Բայց Ցյոկլուշայի տենչերը չերականացան։

Նրա դիվիզիոնն ուղարկվեց Բաքու, վորտեղ քսան թվին, Անդրկովկասս շրջապատված գենիկինյան բանդաների մնացորդների հետ ունեցած կռիվներում սպանվեց Պողպատյա դիվիզիայի մարտական դնդացրորդ Ցյոկլուշա Լիսովինովան։

ՑԵ. ԿՈՒՉՆԵՑՈՎԱ

ԻՆՉ ՀԵՆՎԵԼԱԶՈՐԱՑՈՒՆԸ ՊԱՅՔԱՐԻ ՍԿԻԶԲԸ

ՑԵ՛ռու անգամ վիրավորված լինելս, յերկու կոնտուզիան և ստացածս կաղակային մարտկի քսան հինգ հարվածը խիստ անդրադարձել են իմ առողջության ու հիշողության վրա։ Ուստի իմ կյանքի բոլոր փաստերը յես այժմ մանրամասն պատմել չեմ կարող։ Հա-

դորդում եմ միայն այն, ինչ մնացել է իմ հիշողության մեջ մինչև այս օրերս։

Ծնվել եմ 1901 թվին, Հյուսիսային Կովկասի Ալեքսանդրովսկի շրջանի Սերգիյեվսկ գյուղում։

Հորս չես շատ քիչ եմ հիշում։ Նա մեռավ, երբ ես ընդամենը վեց տարեկան էի։ Մայրս, չքավոր կազակուհի, Հյուսիսային Կովկասի Տեմնոլեսսկի ստանիցայից, կենդանի չէ։ Նա ականատես է եղել համադյուղացի պարտիզանների նկատմամբ սպիտակ գվարդիական սպաների կատարած անգութ դաժանությանն։ Նրա ներկայությամբ մորակով ծեծել են նաև ինձ։ Քաղաքացիական կռվի տարիներին մայրս հալածանքների է ենթարկվել գյուղ եկած սպիտակ գվարդիականն բանդաների և տեղական կուլակների կողմից իմ և իմ հարազատ պարտիզան հեղբորս պատճառով։ Իմ մասնակցությունը պարտիզանական ջոկատներում և իմ հեղբոր մասնակցությունը շատ են քայքայել նրա առողջությունը, բայց դրա փոխարեն այժմ նա տեսնում է, թե ինչի համար էինք պայքարում մենք։ 1906 թվին, հորս մահից հետո, վորը չերեսուն տարի բատրակ եր եղել, մեր ընտանիքը մնաց ծայրահեղ ծանր դրության մեջ։ Վորպեսզի մի կերպ ապրենք, մենք բոլորս՝ մայրս, ես ու հեղբայրս հարկադրված էինք դնալ աշխատանքի։

Ծեղբայրս մտավ դարբնի մոտ սովորելու, ուր և ապրում եր առանց մեզ մոտ վերադառնալու, իսկ ես ու մայրս որպես աշխատանքի էինք դնում կալվածատիրոջ և տեղական կուլակների մոտ, դրանով էլ կերակրվում էինք։ Ծերբ ես ութ տարեկան դարձա, ինձ ամառվա ընթացքում տալիս էին վորպես դայակ, իսկ աշնան ցրտերն սկսվելուց հետո տերերս ինձ հետ էին ուղարկում մորս մոտ, վորովհետև ես վոչ հագուստ ունեի, վոչ վոտնաման։ Դայակ Ծելենա,— այսպես էին կանչում ինձ մեր գյուղում։

Դպրոց ես ընդունվեցի արդեն հասակ առած։ Մորս հաջողվեց տեղական դեղատանը պահակի մշտական պաշտոն գրաւնել, վորից ամսական հինգ ռուբլի ես առնում։

Դպրոցը ես լավ ավարտեցի և ընդունվեցի գյուղական զեմստվոյական դրադարանում հավաքարարուհի-պահակ։ Ամս-

ալը, բացի դրանից, կալվածատեր Ցեփրեմենկոյի մոտ դաշտային աշխատանքի էլ գնում։

Աշխատանքը դրադարանում մեծ նշանակություն ունեցավ իմ կյանքում։

Առաջին մարդը, ովքը ցույց տվեց ինձ իմ տեղը շահագործողների դեմ մղվող պայքարում, դրադարանի կառավարչուհի Մ. Վ. Զերտովան եր։

Նրան, ովքսիս իմ ուսուցչի, ովքը հեղափոխական պայքարի ճիշտ ճանապարհը ցույց տվեց ինձ, յես շատ բան եմ պարտական։

Նույն այդ դրադարանում յես հանդիպեցի իմ մյուս ուսուցչին՝ Սեմ Ծուլի նավատորմի նավատոմ ընկերը Ռիլսկուն։ Նրա շուրջը խմբակ կազմվեց, յես էլ խմբակումն եյի։ Ռիլսկին համարձակ խոսքեր եր ասում իշխանության և պատերազմի մասին։ Ռիլսկու գրույցներն էլ ավելի ամրապնդեցին իմ մեջ ծնորկվող զայրույթն ու ատելությունը դեպի ինքնակալությունն ու բուրժուազիան և յես սկսեցի աշխատել նրա հետ։

★

Փետրվարյան հեղափոխությունից հետո Սերդիկովկում իշխանությունն անցավ առևտրականների ու կուլակների ձեռքը։ Նահրներն իրենց հաղթանակն եյին տոնում։ Բայց ահա յեկավ Մեծ Հոկտեմբերը։ Իշխանությունը նվաճելու համար անհագուրդ դասակարգային կռիվներ սկսվեցին։ Մեզ ուղնության յեկավ Ռիլսկու կազմակերպած կարմիր զվարդիական ջոկատը։ Ջոկատը հարկադրված յեղավ անմիջապես կռվի բռնվել սպիտակ զվարդիական զնդերալ Շկուրոյի բանդաների հետ, ովքը այդ ժամանակ տեր եր Ստավրոպոլում և Ստավրոպոլի մերձակա գյուղերում։ Այդ փոքրիկ ջոկատը Շկուրոյի հետ մղած կռիվներում աճեց ու լրացավ տեղական պարտիզաններով։

Առանձնապես շատ պարտիզաններ մտան Ռիլսկու ջոկատը Սերդիկովկից, Կալինովկայից, Միխայլովկայից և Ալեքսանդրովկ քաղաքից։ Դրանք սահմանահող և հողաղուրկ գյուղացիներ ու չքավոր-յեկլորներ եյին։

Տասնութ թվի հուլիսին Ռիլսկու ջոկատն իր կազմում ուներ

մեկ բառալիոն հետևակ և մի հեծյալ գունդ, վորը հետագայում կոչվեց «Ստավրոպոլի առաջին հեղափոխական հեծելագունդ»: Այդ գունդն ամբողջովին մտավ Բուդյոննու առաջին հեծյալ բանակի մեջ:

Այդ ժամանակները կազմակերպվեց և մի ջոկատ սպիտակ դվարդիական բանդաների դեմ, ընկեր Նազարենկոյի հրամանատարությամբ:

Ջոկատները կազմակերպելու ժամանակ յես կուռակցական կազմակերպության հանձնարարությամբ հաստատվերում էլի սպիտակ դվարդիական և եսերական խմբավորումները դյուղում, սերտ կապ էլի պահպանում Ռիլսկու և Նազարենկոյի ջոկատների հետ: Իմ ցուցմունքով լիկվիդացիայի յենթարկվեց մեր դյուղի կուլակային–եսերական խմբակը: Նրա ղեկավարները՝ առևտրական Ցեֆրեմովը, Ոլիֆերենկոն, կալվածատեր Ցերեմենկոյի վորդին և առևտրական Նովիկովի վորդին դնդակահարվեցին Նազարենկոյի ջոկատի կողմից, վորպես կատաղի հակահեղափոխականների:

Ջոկատները լրացվում էին մարդկանցով, ամրապնդվում եր դիսցիպլինան, բայց Շկուրոյի բանդաներն առաջվա պես մեզ համար սպառնալիք էին: Շկուրոյի չուրջը համախմբվում էին հարուստ կազակները, կալվածատերերի, առևտրականների վորդիները և ընդհանրապես հակահեղափոխականորեն տրամադրված բոլոր տարրերը:

Այդ բանդաների ճնշման տակ Հուվխի սկզբին մեր ջոկատը հարկադրված եր նահանջել մեր դյուղից տասնուվեց վերստ հեռու: Կուռակցական դիրեկտիվով յես մնացի դյուղում, հետևվելու սպիտակներին և ջոկատի հետ կապ պահպանելու համար: Վորոշված եր, վոր Ռիլսկու ջոկատը յերկու–յերեք օրից կըռվով հետ վերադառնար Սերդիչեվկ: Բայց վիսատորեն մեր ջոկատին հաջողվեց Սերդիչեվկը գրավել մի քանի յոթերորդ օրը:

Մեկ ամբողջ շաբաթ սպիտակ դվարդիական սպաներն ու կալվածատերերն անդուլ դատաստան էին տեսնում բնակչության հետ: Առանձնապես զազանաբար էին վարվում նրանք պարտիզանական ջոկատների մասնակիցների ընտանիքների և յերիտասարդության հետ:

Գյուղ դալու առաջին որն իսկ դազանացած բանդաները

արախողխող արին գյուղխորհրդի նախագահ ընկեր Մեղվեդևին և ուսանող Գոլյանուկուն: Սպանում էլին նույնիսկ պատանիներին: Նրանց ընթում էլին նախկին գյուղխորհրդի չինքն ու կարճ սրերով ու քրներով կտրում նրանց գլուխները: Ըստ վորում, հարկադրում էլին նրանց փողոցից քար բերել, վորպեսզի գլուխը կտրելը հարմար լիներ: Ահա ինչպես էլին տանջում գյուղխաչ յերևխաներին:

Հետո բանդիտները բռնեցին նաև ինձ: Աստնք յես չէլի ել թաղնվում: Իմ հետևից յեկան յերկու կաղակ և մի ասլա հարցրին Ցևլենայլին:

Ցես դուրս յեկա և ասլան անմիջապես սկսեց ինձ հարցաքննել՝ պարտիզաններին ինչքան զենք ունեն, ով է մտնում Ջոկաու կազմում: Նա աշխատում եր իմանալ, յես ինչ մանկակցություն ունեմ Ջոկատում: Հարցերին յես չէլի պատասխանում: Սպան հայտարարեց, վոր կարմիրների ոգտին կատարած իմ լրտեսական աշխատանքի համար ինձ պիտի կախեն, բայց նըկատի ունենալով իմ յերիտասարդ հասակը և այն, վոր յես, իբ կարծիքով, կարող եմ ոգտակար լինել պլիտակների հետախուզական աշխատանքում, կյանքս շնորհում է ինձ: Միաժամանակ հրամայեց անմիջապես քաշ հինգ մարակի հարված հասցնել: Վայրկենապես յերկու կաղակ թռան ինձ մոտ, քաշ տվին մահճակալի մոտ ու պառկեցրին, մյուսները բռնեցին մորս ձեռներն ու այդպես պահում էլին նրան սմբողջ ծեծի ժամանակ:

Սպան կանդնել եր դռան մոտ և հաշվում եր հարվածները: Ցես լարեցի բոլոր ուժերս, վոչ մի անգամ չաղաղակեցի, բայց վեցերորդ-ին յոթերորդ հարվածից ուշքս կորցրի: Մայրս ասում է աղաղակում եր: Ներան թվում եր, վոր յես մեռնում եմ: Ծեծից հետո յես մի ամբողջ շաբաթ վոչ միայն չէլի կարողանում վեր կենալ, այլև նույնիսկ առանց ուրիշի ոգնության չէլի կարողանում շուռ գալ: Ցոթերորդ-որը մեր Ջոկատը կըրկին գրավեց գյուղը և յես կրկին մերոնց հետ ելի: Բայց կարմիր զվարդիականները չմնացին գյուղում, այլ առալ գնացին հարձակման: Մեր Ջոկատը հասավ համարյա Ստավրոպոլին, բայց Շկուրոլի մարդկանց թիվը մեծ եր և շատ զենք ուներ, և մեր Ջոկատը նահանջեց՝ Սերդիևակը Թողնելով պլիտակների ձեռքում: Այդ անգամ ինձ գյուղում չթողին, և յես, թեպետ և

հիվանդ, բայց գնացի իմ ջոկատի հետ։ Վոտքով կամ ձիով չես գնալ Չեչի կարողանում, ուստի ինձ նստեցրին ավրանքաստար մեքենան։ Այդ մեքենայի վրա յերկու գնդացիր և մեկ թնթե թնդանոթ կար։

Մեր ջոկատը նահանջեց Ալեքսանդրով դավառական քաղաքի ուղղությամբ։ Ճանապարհին կալինովկայում կռիվ տեղի ունեցավ։

Կալինովկայի տակ մեր ջոկատին հանդիպելու համար դըրված ավիտակ դվարդիական շղթաներն սկսեցին նահանջել։ Մեր ավրանքաստար մեքենան արագ ընթացքի ժամանակ ճեղքեց-անցավ ավիտակների շղթան և մենք ընկանք նրանց թիկունքը, ուշնենալով գնդացրային մեկ ժապավեն և թնդանոթի մեկ արկ, բայց ավիտակներն այդ մասին չդիտեին— նրանք անակնկալից չվոթվեցին և սկսեցին փախչել ով վորտեղ կարող եր։ Մի ապա դուրս թռավ իր ավտոմոբիլից և հենց այդտեղ էլ անճնաստան յեղավ։

Այդ ժամանակ Կալինովկայից վրա հասավ ավիտակների հեծյալ ջոկատը, հրացանային կրակ բաց արեց ավրանքաստար մեքենայի վրա ու հարձակվեց մեղ վրա։ Ողնության հասած մեր հետևազորը հետ մղեց ավիտակների հեծյալ ջոկատն ու տրավեց Կալինովկան։ Հրացանաձգության ժամանակ Ռիլսկին ուսից վիրավորվեց գնդակով։ Ցեղ նրան տարա վիրակապական կետը։

Ցերկու վերստ հաղիվ եյինք անցել, տեսանք, վոր մեղ ընդառաջ է շարժվում մի մեծ հեծյալ ջոկատ։ Ջոկատը, մոտենալով, հրացանային կրակ բաց արեց մեղ վրա։ Հարկավոր եր, առանց րոպե կորցնելու, թաքնվել։

Ցես հարկադրված եյի վազել բառիս իսկական իմաստով գնդակների տարափի տակ։ Մենք փախանք դանազան կողմեր։ Ավիտակները գնդակոծում եյին մեղ։

Վազելով բլուրի յեսևը, տեսա մի գյուղացու, վորը հնձող մեքենայով ցորեն եր հնձում։ Ցես սկսեցի խնդրել նրան, վոր ինձ վերցնի մեքենայի վրա և դրանով ազատի ավանվելուց, խոստանալով դրա համար հինգ հարյուր ռուբլի փող տալ։ Գյուղացին համաձայնվեց ինձ վերցնել իր մոտ, միաժամանակ ավելացնելով, վոր փող չի վերցնի։

Ցնա խնդուն նետեցի վերնահագուստս, վորն, իրոք ասած, արյունոտվել եր Ռիլսկու արյունով ու նստեցի հնձող մեքենայի վրա։ Մի քանի րոպեյից մեզ մոտ սլացան մի քանի հեծյալներ։ Նրանց մեջ յես ճանաչեցի մեր ջոկատի եսկադրոնի հրամանատար Դանիել Դերկաչին։ Պարզվեց, վոր մեզ սպիտակ գվարդիականների տեղ եյին ընդունել և վորոշել եյին կենդանի բռնել։ Դրանից հետո յես յերկար ժամանակ վորոնում եյի Ռիլսկուն և, վերջապես, դտա նրան ծուռավկա գյուղում հիվանդ, բորբոքված վերքով։ Ցնա նրան հանձնեցի ինձ մոտ յեղած ջոկատին պատկանող դրամը, իսկ ինքս վորպես շարքային մարտիկ մոտս մեր հեծյալ գնդի յերկրորդ եսկադրոնը։ Մեր հեծյալ դունդը հետապտյում մնացավ ճ–րդ հեծյալ դիվիզիայի։

Հեծյալ կորպուսի շարքերում

Տաղինները թվի հունիսի քսան յերեքին ճ–րդ հեծյալ դիվիզիան կանգնել եր բանակային պահեստում, Վորոպաեվկա կայարանի մոտ։ Այդ ժամանակ մեր բանակի խորը թիկունքն անցավ դեներալ Մամոնտովի կորպուսը։

Հակառակորդը գրավեց Մեծ Իվանովկա գյուղը, իսկ նրա դիվիզիաներից մեկն արդեն շարժվում եր դեպի Կամիշին։ Հունիսի քսանչորսին սպիտակների հեծյալ դունդը թնդանոթներով ռմռնգալ վոլգային և ամբակոծեց նավերը։

Մեր դիվիզիային հրամայված եր թիկունքը մաքրել թշնամուց։ Արագ ընթացքով դուրս յեկանք թշնամուն ընդառաջ։ Հունիսի քսանհինգին գրավելով Դուբովկան, ճ–րդ դիվիզիան սպիտակների դունդը հետ շպրտեց Վոլգայից, գնաց նրա հետքերով և փոքր Իվանովկայի մոտ հանդիպեց Մամոնտովի գլխավոր ուժերին։ Այդտեղ մենք առաջին մարտն ընդունեցինք թշնամու հեղեղված հեծելազորի հետ։ Թուլլ չտալով դիպքեր գրավելու, սպիտակների կորպուսը գրոհեց մեզ վրա։ Թշնամու հեծելազորը ևս մրրիկի պես ընկավ մեզ վրա։ Մեր եսկադրոնները խառնվեցին ու սկսեցին հետ քաշվել։

Նահանջի ճանապարհին մի նահճային տղմուտ գետ կար։ Միակ վոլոկա կամուրջը մխացնում եր յերկու ամերը։ Կամուրջով վոչ առաջ գնալ կարելի յեր, վոչ հետ գնալ։ Մի ինչ վոր

սայլակ չուտ եր յեկել ու վակել ճանապարհը: Կամուրջի վրա խանգարչիություն ակսվեց: Մարտիկները ձիերով ուղղակի ընկնում եյին գետը, խրվում եյին տիղմի մեջ, աշխատելով լողալով մյուս ափ դուրս գալ:

Ախին մնաց սպասարկող անձնակազմի կողմից լքած թնդանոթը՝ արկերի արկղով: Թշնամին կրնակոխ վրա յեր հասնում: Ցավս մի բոպե՝ թնդանոթը կընկներ Թշնամու ձեռքը: Մեր խոկ արկերով նա կսկսի զնդակոծել մեզ:

Եսկադրոնի ավագ Պանկո Զոլոտարևիը ցած թռավ ձիուց, հետ վազեց կամուրջով, հասավ թնդանոթին և ուղեց հանել փականը: Ցերկար ժամանակ այդ նրան չեր հաջողվում: Վրա թռան հուսարները: Պանկոն հանեց նագանը, կրակեց բոլոր փամփուշտները, ընկավ: Նա սրի լինը հարված ստացավ:

Ուշքի գալով նա իրեն տեսավ կազակների շրջապատում, բայց անձնատուր լինել չեր ուզում: Սպառնալով դատարկ նագանով՝ Պանկո Զոլոտարևիը դուրս պրծավ ողակից և նետվեց ապատաժի տակ: Կազակները թողեցին նրան, կորած համարելով:

Իսկ նա սողալով ապատաժի տակ, լողաց դեպը և ուժասպառ, թաղվեց յեղեզնուտի մեջ, ափում: Այդտեղ մեր մարտիկները գտան նրան և բերին ինձ մոտ, վերքերը կապելու: Սակայն յեր Պանկոյի վրա նայելը— այնպես կատաղել եյին նրան կազակները:

Մամոնտովը մեր պարտությամբ ուրախանալու ժամանակ չունեցավ: Ողնության յեկավ 4-րդ հեծյալ դիվիզիան, և մենք ընդհանուր ուժերով սաստիկ ջարդ տվեցինք Մամոնտովի կորպուսին: Նա հարկադրված եր վերջ տալ մեր բանակի թիկունքում կատարած իր շարժմանը:

Այդ նույն որը, հունիսի քսանվեցին, բանակին տված հրամանով յերկու դիվիզիաները միացան՝ կազմելով Առաջին հեծյալ կորպուսը: Մենք մտանք Բուդյոնովյան վտառապանծ հեծելազորի շարքերը: Գրավելով 10-րդ բանակի տղ թևը՝ մենք նրա հետ միասին նահանջեցինք, յերբ Ցարիցինը հանձնվեց:

Նահանջի ճանապարհին մեր զորամասերը լրացվում և համալրվում եյին: Հեծելազորը թարմացնում եր իր ուժասպառ

յեղած ձիակազմը: Բավականաչափ լավ ձիեր ընկան մեր ձեռքը գերմանական զաղութներում:

Ինձ մի աքանչելի վոսկե-չիկապուն ձի բերին: Ճես անմեջապես սիրեցի նրան: Դա խելացի, հանդիստ, ուժեղ ձի էր: Նա լավ եր հասկանում ինձ՝ ասես կռահելով իմ յուրաքանչյուր ցանկությունը, և հաճախ եր փրկում ինձ կռվում: Դե, յես էլ նույն ձևով էլի հատուցում: Հոգ էլի տանում նրա մասին այնպես, ինչպես վոչ վոքի մասին էլ յանքում եմ: Վերջին պատառ հացը նրան էլի տալիս: Հաճախ նրա համար վարտակ ու կաթ էլի «զողանում»— մի բան, վոր յերբեք չեմ արել ինձ համար:

Զին յերեք անգամ վիրավորվեց: Ճես ինքս բժշկում էլի և խնամում, հանում էլի գնդակը, վերքերի վրա կոլոդիում էլի լցնում: Զին համբերատար կրում եր ցավը:

Մեր զրոհներից մեկի ժամանակ ձին ընկավ գնդացրային կրակի տակ: Զորս գնդակ դիպավ նրա կրծքին:

Ոչխար արցունքներ էլին թափվում մեռնող ձիու աչքերից: Ճես այնպես էլի արտասվում նրա համար, ինչպես լաց կլինեյի միայն ամենամոտ մարդու համար:

Ճնշելով և խեղդելով 10-րդ բանակի հետևազորին՝ Բշնամին անընդհատ շարժվում եր դեպի Կամիշին: Հասլիսի քաղաքին մեր զորքերը քաղաքը Թողին: Սպիտակները, հարվածը զարգացնելով հետապնդում էլին մեզ, դերեզով մեր հետևազորը: Ճեվ ահա այդ ժամանակ կրկին չափը կորցրած Բշնամու վրա ընկավ հեծյալ կորպուսի հարվածային խմբակը:

Այդ զրոհի ժամանակ մենք ամբողջովին վոչնչացրինք սպիտակների միացյալ լեհական դիվիզիայի յերկու գունդը՝ ավար ու դերիներ վերցնելով: Մյուս որը մեր հարվածային խումբը ջախջախեց ատամանական հեծյալ դիվիզիան: Հեծյալ կորպուսը հարված հարվածի հետևից եր հասցնում Բշնամուն: Ճեվ որեցոր այդ հարվածները ավելի խորտակիչ էլին դառնում:

Ծանր կռիվներն ու արշավանքները Մանիչի ափերից սկսած մինչև Ցարիցին և Կամիշին մեզ, առավորապես յիններիս համար խիստ դժվար էլին: Անկարգ պարտիզանական դնդերից մեր 6-րդ դիվիզիան աճեց, դառնալով հեծյալ կորպուսի ամուր մարտական միջուկը: Փառապանծ 4-րդ հեծելազորն հետ կողք-կողքի գնալով, մենք բուդյոնովցիներից սովորեցինք Բշնամուն խփել:

Կռիվներով և արշավանքներով յերկար ամիսներ ընթացքում յես սիրեցի իմ բրիգադը, իմ 32–րդ դիվիզը, իմ 2–րդ նահատակոնը, վորը չեյի լքում:

Այստեղ յես դառա իմ յերկրորդ տունը, բարեկամներին ու ընկերներին:

Մեր դիվիզիայում շատ կանայք կային: Գնդերի հետևից սայլերով գալիս եյին մարտիկների ընտանիքները՝ մեզ հետ միասին փախչելով հայրենի վայրերից: Կանայք սղնում եյին մարտիկներին՝ լվանում եյին սպիտակեղենը, կարկատում եյին, կարում: Մեր կոմբրիգ Վ. Ի. Կնիգայի կինը բրիգադի խորհրդանիշն եր:

Բայց դորաշարքում կանայք հազ ու կենաց եյին: Մեր հետևակդրոնում մենակ յես եյի: Ճիշ դա ինձ սմենևին չեր անհանդըստացնում: Ճես գիտեյի, վոր յերբ հարկավոր լինի, տղաները չեն թողնի, վոր յես նեղություն քաշեմ: Խարեկամության և ընկերության որենքներն ամուր կապում եյին մեզ կռիվներում և հանդստի ժամանակ:

Կռիվներից մեկի ժամանակ արկից սպանվեց իմ ձին, իսկ յես գլխի, կրծքի, ազդրի և մեջքի ծանր կոնտուզիա ստացա: Մի քանի որ յես անդրա կոճղի նման չեյի շարժվում, չեյի լսում, չեյի խոսում: Գիտակցությունս վերադարձավ միայն հիվանդանոցում պառկելուս հինգերորդ որը:

Մի ամբողջ ամիս յես չեյի վեր կենում մահճակալից: Վերջապես պառկելն անտանելի դարձավ: Այն միտքը, թե դունդը դուցե հարձակվում է, թե տղաներն առանց ինձ են քշում և խփում Քշնամուն, առանձում եր ինձ: Ձկարողացա դիմանալ: Ճեվ մեկ որ ծածուկ, կիսախուլ, կիսահամր ղրուքյամբ վախտ հիվանդանոցից: Գնա իմ դունդը, համոզեցի, վոր ինձ մի ձի տան և Թուլյատրեն շարքում տեղ դրավել:

Դեռևս հիվանդ, յես գնացի իմ հետևակդրոնի հետ: Ճեվ ահա այստեղ, հարազատ տղաների շրջապատում, մարտական պայմաններում յես սկսեցի արագորեն առողջանալ:

Այդ ժամանակ 10–րդ բանակը վերակառուցվելով ու ամրապնդվելով նորից հարձակման դիմեց: Հեծյալ կորպուսի հարվածների տակ սպիտակները դլորվում եյին դեպի Դոնի սիները: Այդտեղ, կազանսկի առանիցայի շրջանում, մենք ամբողջու-

թյամբ վոչնչացրինք գնդապետ Սամբլինի հեծյալ զորքերի խումբը: Միայն թշնամու խղճուկ մնացորդները կարողացան անցնել գետի մյուս կողմը:

Մեկ անգամ յերեկոյան կողմը ինչ վոր դյուղի մոտ մեր դունդը հանդիպեց սպիտակ հեծելազորային մի խոշոր զորամասի: Թշնամին հարվածը չընդունեց և փախուստի դիմեց: Հովտում, դյուղի ձախ կողմը, հասած արևածաղկի ամբողջ մի դաշտ կար: Յերեկոյան արևի տակ հրային ողակների նման վառվում էին նրանց կլոր փոխխնդրը:

Թևային հարվածից ազատվելու համար, սպիտակ հեծելազորը փորձեց թաղնվել արևածաղիկների մեջ, բայց այդտեղ նրանց շրջապատեցին և ամբողջովին վոչնչացրին մեր հակառակորդները: Դրանք Շկուրոյի դայլային դիվիզիայի մասերն էին: Շատ բայլիններից մի քանի հոգի միայն կարողացավ ճողոպրել դյուղը և անբևռւյթանալ լեռան հետևը:

Մեր հարձակման ամենայեռուն ժամանակ Մամոնտովի հեծելազորը յերկրորդ անգամ ճեղքեց կարմիր զորքերի ճակատը: Արագ հարձակումներով ավերում էր նա 8-րդ բանակի թիկունքը: Միաժամանակ գնդապետ Շկուրոն դրավեց Վորոնեժ քաղաքը: Հարավային Ցրոնամի հրամանատարությունը Մամոնտովի դեմ նետեց հեծյալ կորպուսը: Բայց այս անգամ Մամոնտովն արխուեյան չունեցավ հանդիպելու Բուդյոննու հեծելազորի հետ և շուտով նահանջեց Վորոնեժ ու միացավ գնդապետ Շկուրոյի հետ:

Հեծյալ կորպուսը պատրաստվում էր հարվածելու Վորոնեժը:

Սեպտեմբերի տասնյոթի գիշերը մեր առաջին բրիգադը գրավեց Խրենովոյե և Ռիկան դյուղերը Ոսման գետի աջ ցեցման վայրում: Դիվիզիայի գլխավոր ուժերը դանվում էին հետևում, Ռոժդեստվենսկում: Մեզնից աջ գտնվելին 4-րդ հեծյալ դիվիզիայի մասերը:

Յերկու որ մենք մանրակրկիտ կերպով հետախուզում էինք սպիտակների դասավորությունը, կարդի էինք բերում մեր,

ֆիլերը, զինավորումը։ Մենք գիտեյինք, վոր դժվարին և պատասխանատու խնդիր է սպասում մեզ՝ ջախջախել Շկուրոյի և Մամոնտովի միացյալ ուժերը և գրավել քաղաքը։

Գնդերին հանգիստ տալու համար, կորպուսի հրամանատարը հրամայեց ժամանակավորապես անցնել ինքնապաշտպանության։ Ինքը բնությունը դրան էր մղում։ Աշնանային մառախուղ էր կախվել դաշտերի ու գյուղերի վրա։ Հորդահոս անձրևը հանգիստ չէր տալիս վո՛չ ցերեկը, վո՛չ գիշերը։ Ճանապարհները ծածկվեցին լայնուն ցեխի վտակներով։ Այդպիսի պայմաններում հոգնած զորամասերը հեծյալ հերթի թողնել անհնարին էր։ Մանավանդ, վոր սկսվում էին ցրտերն ու քամիները։ Կարելի չեր յենթադրել, վոր այսոր–վաղը ճոնապարհները կամրանան։

Գեներալ Շկուրոն, վոր Վորոնեժի տակ չեզած սպիտակների բոլոր ուժերի հրամանատարն էր, վորոշեց մեզ ջախջախիչ հարված հասցնել։ Նա հեծյալ կորպուսի դեմ թողեց տասներկու հեծյալ դունդ, մեկ դունդ հետևակ, քսան երկու թնդանոթ, յերկու զրահագնացք և հարյուր քսան հինգ գնդացիր։

Սպիտակները, ինչպես յերևում է, չեյին կասկածում, վոր հաջողություն են ունենալու։ Բայց դեռ նախորյակին նրանց ձեռքը զցվեց Բուդյոննու կեղծ հրամանը՝ կորպուսը միանգամայն ուրիշ ուղղությամբ (Լիսկիի վրա) հարձակման տանելու մասին։ Գեներալ Շկուրոն հավատաց «բռնած» հրամանին և յենթադրեց մեզ հանկարծակիի բերել։

Վաղ առավոտյան սպիտակների հեծյալ մասսաները նետվեցին մեզ վրա։ Առաջին բրիգադի տեղամասը նետվեցին Տիրսկի դիվիզիայի չորս դունդը և Մամոնտովյան Դոնի յերկու դունդը։ Զսպասելով այդպիսի հարվածի՝ մենք չդիմացանք և հետ քաշվեցինք դեպի մյուս կողմը, համարյա դեմ առ դեմ գնդացրային կրակ բացելով կազակների վրա։

Այդ պահին հակառակորդի թևի վրա հարձակվեցին 4–րդ հեծյալ դիվիզիայի մասերը, իսկ շուտով հասավ նաև մեր յերկրորդ բրիգադը։ Սպիտակ գնդերը, ընկնելով ճակատի ու թևերի խաչաձև կրակի տակ, հետ շպրտվեցին, թողնելով հարյուրավոր սպանվածներ, վիրավորներ ու գերիներ։ Մենք գրավեցինք յոթ թնդանոթ՝ արկերի արկղներով և հիսուն գնդացիր։ Նույն-

ձիուն վիճակ ունեցան ավիտահներըը և ուրիշ ճակատամասերում։

Ցերեկոյան կողմը մենք դրավեցինք փոքրիկ գետակի յերկու թևերի վրա տեղավորված Ուսման գյուղը։ Գյուղի կենտրոնում, յեկեղեցու մոտ կանգնել եր դիվիզիայի շտաբը։ Մեր 32-րդ դիվիզն իր շտաբով դրավեց գյուղի առաջամասը, գետի մյուս կողմից։

Այն խրճիթի լուսամուտից, ուր տեղավորված եյի յես մարտիկների հետ, յերևում եր հողմաղացը, իսկ քիչ այն կողմը, դեպի Վորոնեժ՝ մի փոքրիկ անտառակ։ Ցերեկոյան կողմը մեր հակադրոնը (հերթապահ) խորը հետախուզություն կատարեց գնդի առաջամասում։ Մենք չրջեցինք մի քանի ազարակ և գիշերում հետքեր չգտնելով, հանգիստ վերադարձանք գյուղ՝ դիշերելու։ Մաքրեցինք ձիերին, ընթրեցինք։ Արդեն բոլորովին ուշ եր, յերբ յես պատրաստվեցի քնելու։

Ցնվ հանկարծ խլացուցիչ թնդանոթային գնդացիրները։ Մի քանի գնդակ, լուսամուտից ներս թռչելով, դիպան վառարանին։ Կավի կտորտանքը թափվեց հատակին։ Տղաները բակ նետվեցին։ Թռան ձիերը և սլացան դարպասից դուրս։

Կարողացավ դուրս թռչել նաև մեր կառապանը՝ սանիտարական լինելիքով։ Աբազորեն ամրացնելով ձիու փոկերը, յես թռա թամբին և նույնպես, սլացա փողոց։ Կրակոցների վորոտը գալիս եր հողմաղացից։ Թշնամու գնդացիրները մոտիկ տարածությունից խփում եյին գյուղին։

Ձավարի մնջ վատ դանդաղանելով՝ յես վտահեցի ձիուն։ Մի րոպեյից մենք գետի մոտ եյինք։ Առվակը ջուր, ճախիճ՝ փշալար ու կամուրջ։ Ձին ցատկեց, բայց անհաջող— վոտքը կպավ փշալարին։ Ընկնում եմ ձիու հետ միասին, ուժգին դիպչելով հետագրասյանը։

Ուշքի յեկա։ Փորձում եմ վեր կենալ, իսկ դլխավերևս արշևն կանգնած և ձին, ծուխած թամբով։ Տեսնում ձախ վոտքից արյուն և հոսում։ կաշին պոկվել եր։ Առաջին միտքս եր՝ վերքը կապել։ Ցնվ յես, մոռացած իմ ատացած չարվածը, զբաղվեցի ձիու վերքը փաթաթելով։ Մոտ թռան տղաները, ոգնեցին հեծնել։ Միասին սլացանք հավաքավայրը՝ բրիգադի շտաբը։

Ի՞նչ եր պատահել։ Մթությունից ոգտվելով՝ թշնամին սպանել եր մեր պահակներին, տղացել հողմաղացի մոտ և հա-

մարդս ճակատս առ ճակատ դյուղի վրա մրրկային կրակ բացել։ Բայց մեծ արդյունքի չհասավ։ Դևվիդիան ճակատից և կռվի մասավ։

Սոսկալի սրամարտ սկսվեց։ Ինչպես միշտ, յնս առանց սրի եյի ու հրացանի, ձեռքիս միայն նռնան։ Տեսնում եմ՝ հրևան եսկադրոնի հրամանատար Բորեցը հետիոտն վազվզում և յուրայիններին մեջ, սուրը թափահարելով։ Նրա ձին սպանվել եր, իսկ պահեստի ձին դեռ չեյին բերել։

Ցնս իսկույն մոտենցի, վոր պետք և ոչնել Բորեցին։

Հրամանատարի համար ձին դրոհի ժամանակ ավելի կարևոր և, քան ինձ։ Արագ մոտեցա նրան և տվեցի իմ ձին, իսկ ինքս բարձրացա սանիտարական լինեյկան, վորը գալիս եր մեր հետևից։

Առավոտյան կողմը Վորոնեժի դեմի արևելյան ասիը ծածկված եր սպիտակների դիակներով։

Մենք կանդնել եյինք մի վոչորիկ դյուղում։ Առաջը դևտ եր։ Բարձր, սեպ ափին մայրամուտի ցոլքերի մեջ ոտրդ յերևում են չենքերի, յեկեղեցիների ու այդինների ուրվագծերը- դա Վորոնեժն և։

Հակառակորդը նպատակավոր դիրք ունի։ Գնդակոծման լեռնային սպառում յուն։ Իսկ մենք պետք և քաղաքը դրավեյինք ճակատից, նախապես անցնելով դետը։

Ցնրնք որ մենք պատրաստվում եյինք վճռական հարվածին։ Բուդյոննին դիվիզիաների հրամանատարների հետ միասին ուսումնասիրում եր անցումի տեղերը։ Ճարտարապետական մասը լաստերի ու կամուրջի համար նյութեր եր պատրաստում։ Կոմիսարները զրույցներ եյին ունենում եսկադրոնների հետ։ Իսկ մարտիկները, ըստ սովորականի, մաքրվում եյին, կարկատում հագուստները և ուժ եյին հավաքում կռվից առաջ։

Հանդստի րոպեներին եսկադրոններում լսվում եյին հարմոշկայի ճվավ, խիրախ յերգեր, վոգորկալից պարեր։

Լուրս քանչորսի դիշերը եսկադրոններին հրաման տրվեց՝ «Վինել պատրաստ»։

Այդ նշանակում և՝ քնել առանց հանվելու, ձիերը թամբած պահել։

Լուսադեմին նոր հրաման՝ «Ձի հեծնել»։

Եհուդրոնն առանց աղմուկի դուրս չեկավ դյուղից։ Դեռ մութն էր։ Ձոր էր։

Թևթևակի ցուրտ էր։ Մենք կամացուկ առաջանում էինք դեպի դաշտը՝ բլուրների ու անտառակների հետևը ծածկվելով։

Ճանապարհին հանդիպում էին մեր լավ ծածկված հրահետները։ Քսան քիղոմետր, քառասուն դնդացիր սեփական և պաշտպանելին մեր անցումը դեռևից։

Վերջերում դիվիզիան դնում էր ուղիղ քաղաքի վրա։ 4-րդը դեռ նախորյակին դնացել էր շրջանցելու հյուսիսից։ Այն կողմից արդեն կռվի վորոտ էր լսվում։

Բայց ահա և դեսը։ Առջևում առավոտյան առաջին շողերի մեջ վարդագունող քաղաքի ծայրամասերն էին։ Գետի ափերն ու ափերին ընկած այդիները չեղյամով են ծածկված։

Զիները հանձնեցինք ձիաստրներին և հետիոտն շարքով նետվեցինք առաջ, դեպի անցման վայրերը՝ նախորոք պատրաստած լաստերը, կամ ուղղակի լող տալով ջրի միջով։ Գետի այն կողմը սոսկալի հրաձգություն էր։ Ցեղ այդ ժամանակ մրրկալից կրակով բռնկվեց մեր թիկունքը։ Թնդանոթներն ու դնդացիրները հարձակվողների դլուխների վրայով սկսեցին խփել աղ ափին ու քաղաքի բարձունքներին։

Ջրխում դնան ինչպես անցա։ Հիշում եմ ինձ արդեն լեռան վրա։ Նավապրոնները ափին խորտակելով սպիտակներին, ներս թափվեցին քաղաքի արևելյան ծայրամասերը։ Թրջված, սառչակալած, մենք դրավում էինք փողոց-փողոցե, թաղամաս-թաղամասե հետևից։ Այդ պահին 4-րդ հնձելակային դիվիզիան կռվով դրավեց քաղաքի հյուսիսային մասը, իսկ հարավային արվարձան մտավ 12-րդ հրաձգայինը։

Ջենքը ձեռներին մեզ ընդառաջ դուրս չեկան վորոնեժի բանվորները՝ բոլշևիկների դեկավարությամբ։ Նրանք խփեցին սպիտակների թիկունքին ու դրավեցին յերկաթուղային կայանը։ Ժամը վեցին մոտ քաղաքը մաքրված էր սպիտակներից։ Դերձներ և ավար վերցնելով՝ մեր մասերը թշնամուն քշեցին դեպի Դոն։ Թանդ արժեցավ այդ որը սպիտակներին։ Շտապելուց դեներալ Շկուրոն մեզ թողել էր իր շտաբային վագոնը և շատ-շատ ամեն տեսակի դույք։

Յերեկոյան կողմը մեր 6-րդ դիվիզիան, բերելով ձիաստր-

ներին, թնդանոթներն ու զնդացիրները, հանպատրաստից տեղավորվեց քաղաքում։ Ես մի տասնյակ ընկերների հետ ընկա ինչ-որ մի առանձնատուն։ Նրա տերերը փախել էին, մնացել էին սպասավորներն ու տնտեսուհին։ Սենյակներում կատարյալ խառնաշփոթություն էր տիրում։ Գահարաններն ու կամոդները բաց էին։ Անկողինները շուռ տված, բարձերն այս ու այն կողմ նետած։ Աշխատելով վերցնել ամենից թանգարժեք իրերը՝ տանտերերը մնացյալն ուղղակի նետել էին հատակին։

Տեղավորվում ենք, ով ինչպես կարող է։ Հագուստներս ենք չորացնում, տաքանում ենք։

Գետը դժվարությամբ անցնելու, ցրտի և մարտական որմա հետևանքով զզում եմ, որ ջերմ է սկսվում։ Ուղարկեցի բժշկի հետևից։

Իսկ մյուս որը կրկին ճիու վրա։ Արդեն կռիվներ են սկսվել Դոն գետի անցերում։

Ռոստովի գրավումը

Նոր տարին, հաղար լինը հարյուր քսան թվականը մեզ դիմավորեց Ռոստովից վոչ հեռու։ Հիշում եմ, կանգ էինք առել մի փոքրիկ ագարակում։ Մի քանի որվա հալչոցից հետո կրկին սառնամանիքներ էին սկսվել։ Առավոտյան վաղ հրաման ստացանք՝ առաջ շարժվել։

Ինչ-որ դյուղի մոտերքում հանդիպեցինք Թշնամու չղթային։ Գունդը դնում էր ձախ թևում։ Մեր ձախ թևի եսկադրոնները արդեն դյուղ էին մտնում, յերբ հանկարծ լեռան տակից դուրս յեկավ Թշնամու հեծելազորի սյունը։ Կատաղի դրոհով սպիտակները մեզ վրա էին թռչում։ Մեր մարտիկներից վոմանք սրդողեցին։ Շարքերում անհանգստություն առաջացավ։ Այդ բանը նկատեց Թշնամին և առավել մեծ թափով թռավ դրոհի։

Գունդը չդիմանալով կատաղի հարվածին, սկսեց նահանջել։ Սպիտակները պատրաստ էին հաղթանակ տոնելու։ Մի ինչ-որ մորուքավոր գնդապետ, վորը սլանում էր շեկ յերկարաչոչ ձիով, նկատեց ինձ։ Գնդապետն, բստ յերևույթին, ինձ հրամանատար ընդունեց։ Հետապնդեց։ Ես արդեն իմ դիմա-

վերևն զգում էլի նրա բարձրացրած սրի բերանը: Բայց այդ մոմենտին մենք մոտ սլացավ և նաղանի հարվածով ցած գլորեց դնդապետին:

Մինչ այդ դռնաղը չհովեց, դաղարեցրեց նահանջը և կրկին հարվածեց սպիտակներին: Սպիտակներն անակնկալից չփոթված կանգ առան, ապա հետ նետվեցին: Գյուղը մենք գրավեցինք: Այնտեղ մենք շատ գերիներ վերցրինք— նրանց հսկելու համար մի փոքրիկ ջոկատ թողեցինք, իսկ ինքներս շարժվեցինք դեպի առաջ, դեպի Ռոստով: Մի փոքրիկ հովտում յես յերկու վիրավոր կարմիր բանակային տեսա: Ինձ մոտ դեռ մի քանի հատ վիրակապ կար: Ընկերներից մեկին խնդրելով ձին պահել՝ ինքս գրաղվեցի նրանց վերքերը կապելով: Ամեն ինչ պատրաստ է: Այժմ հարկավոր է հիվանդներին հիվանդանոց փոխադրել: Տեսնում՝ ճանապարհով սայլ է գալիս: Կանգնեցնում եմ: Գանգում եմ, խոսը, վորպեսզի հիվանդների համար հանդիստ տեղ պատրաստեմ: Ցեխ հանկարծ, սյուրպրիզ՝ սայլի մեջ խոտով և թաղիքով ծածկված յերկու սպիտակ սպա, հրացանները կողքներին: Հարկ յեղավ «խնդրել» նրանց՝ տեղն ազատել վիրավորների համար, իսկ նրանց ուղարկել ուր հարկն է:

Սկսեց մթնել: Ցուրտը սաստկացավ: Կոխլներն ամրողջ դրծի վրա դալարեցին: Դա վերջին հանդիստն է Ռոստովից առաջ: Այստեղ մենք պետք է մտնենք քաղաքը: Դա ինձ առանձնապես ուրախացնում է: Ձի՞ վոր այդ նշանակում է, վոր մենք կրկին մտնում ենք հարազատ, մտերիմ վայրերը: Այժմ արդեն հեռու չէ Ստավրոպոլը և մեր Սերգիյեվսկը: Ի՞նչ է կատարվում տանը: Ցեխ համբերություն չունեմ սպասելու: Ուզում եմ շուտ-շուտ առաջ գնալ:

Դե, ահա և գնացինք: Հրաման՝ «Ջուրչ, չծխել, կամաց»:

Ցերկար գնացինք: Կամ դուցե ինձ միայն թվում էր, վոր յերկար ենք գնում: Ահա մենք քաղաքի սահմանումն ենք: Մեր գնդից մի ջոկատ առանձնանում է: Նրան հանձնարարվում է դրավել բանտը: Ցեխ փորձում եմ միանալ այդ խմբին, բայց, դժբախտաբար, այդ ինձ չի հաջողվում: Հարկադրված յեղա վերադառնալ իմ եսկադրոնը:

Մենք մտնում ենք մի ինչ վոր փողոց: Լուսա է: Գնում եմ եսկադրոնի առաջից: Հրամանատարի ոգնական Զոլոտարյովի,

եսկադրոնի ավազ Մոլոչկոյի հետ։ Հետաքրքրությամբ դիտում ենք մեզ համար նոր քաղաքը (դա քաղաքի ծայրամասերից մեկն է)։

Անսպասելի կերպով լռությունը խզվում է զնդացրի թընդյունից, արագ կրակոցից։ Գնդակները շաչեցին մեր գլուխների վերև։ Բայց ահա Զոլոտարյովը բռնում է դլուխը։ Հառաչ և աթձակում ուսերինովը՝ մեր դասակի հրամանատարը։ Գնդակը նրա թևին եր դիպել։ Ավազ Մոլոչկոյի ծնոտը փչրվեց։ Ջղաները չվոթվեցին։ Արդեն վիրավոր Զոլոտարևը հրաման և տալիս.

— Եսկադրոն, հե՛տ քաշվել։

Մենք արագորեն վերակառուցվում ենք։ Զոլոտարևը հրամանատարությունը հանձնում է ուրիշ ընկերոջ։ Յես վիրավորներին հավաքում եմ և նրանց հետ զնում վիրակապական կետը։ Մինչդեռ հրաձգությունն ուժեղանում է։ Գնդակների աստրափի տակ մենք պլանում ենք թիկունք, մի ինչ վոր աղարակ, ուր կանդ և առել մեր դումակը։ Կապեցի վիրավորների վերքերը, տաքացա ու հետ պլցա։

Այժմ առաջ անցնելը ավելի դժվար և։ Գնդակները թափվում են ամեն կողմից՝ լուսամուտներից, դարպասներից, ջերդակներից ու ցանկապատերից։ Հանկարծակիի յեկած թշնամին վերջին փորձերն և անում քաղաքը պահելու։

Ամբողջ դիշերը դանդաղ շարժվում ենք փողոցներով, բակերից դուրս գալով ու բռնելով թաղնված սպիտակ գվարդիականներին։ Հաճախ հանդիպում ենք ուրախ խնճույքների՝ այդպարոնայք սպաներն են տոնում Կրխատոսի ծնունդը՝ քաղաքի անկման մասին կասկած չունենալով։

Ավելի ու ավելի հաճախ են սկսում յերևալ բանվորների խմբակները։ Իմանալով քաղաքի վրա մեր կատարած հարձակման մասին՝ նրանք ընդառաջ են չտապում հեծելաբանակին։ Ողնում են մեզ՝ սպիտակիններին բռնելու, ճանապարհն են ցույց տալիս, մեր ուղեցույցներն են դառնում։ Նրանց ոգնությամբ մենք դտնում ենք դենիկինյան դինանոցը։ Դա մի մեծ քարե չենք և կիսանկուղային վանդակապատ լուսամուտներով։ Զինանոցի պահակախումբը փորձում և դիմադրել, բայց մեր զնդա-

ցերեկով և ուժգնորեն սպառնալիքի տակ հարկադրված է լինում գնալը վայր դնել: Մենք գրավում ենք գինանոցը:

Հունվարի լուսի առավոտը մենք դիմավորում ենք քաղաքի կենտրոնական թաղամասերում: Բանվորների բալմուԹյունները ցնծագին վողջունում են բուրժուականների դալուստը:

Մենամարտ սպայի հետ

Թոստովից հետո չարժվեցինք դեպի Կուբան:

Առաջին բրիգադն ընկեր Կնիգայի հրամանատարուԹյամբ և յերկրորդը՝ ընկեր Ապանասենկոյի հրամանատարուԹյամբ: Գընում էինք հարձակման Ուստլաբայի վրա: Ճերմակ-յերեք վերստ առանիցայից հետու, մենք տեսանք յերկայնացած ճակատ, բայց ճակատը չեր չարժվում տեղից: Մեկը բացականչեց՝ «Անճնատուբ են լինում»: Մեր առաջ գտնվում էին սպայական դնդըրը: Հնչեց հրաման՝ «Գրոհի»: Դնդացիրները դրեցին ու կրակ բացին: Ճեռ ձիս մոտ քշեցի եսկադրոնի հրամանատարին և ասում եմ նրան.

— Ընկերը հրամանատար, պետք է աչքի ընկնել և չատ արագ խլել:

— Գնա դնդացիրների մոտ, Թե չե ավար ցույց կտան քեզ, — ասաց հրամանատարը:

Ճեվ խոսափես, Թշնամին մեզ Թողեց առաջանալու բոլորովին մոտիկ և հանկարծ նետվեց գրոհի:

Հաղիվ էի յես ուշքի յեկել բոլոր այդ անակնկալներից, վոր կողքիս մի ապա հայտնվեց: Նա ուղեց սրի հարվածով ցած գլորել ինձ ձիուց, բայց ձին Թուիչք կատարեց և սպան վրիպեց: Մի քանի րոպե մենք պտույտ-պտույտ էինք գալիս նույն տեղում: Սպան ուզում եր ինձ կենդանի բռնել: Նա յերևի ինձ ընդունեց քաղղեկի կամ կոմիսարի տեղ: Ճարպիկ չարժումով նա սրի բերանով խփեց իմ մեջքին: Առանց ինձ կորցնելու, յես քաշեցի բրաունինգն ու առաջին իսկ դնդակով վայր տապալեցի սպային և վերցրի նրա դաշտույնն պայուսակը փաստաԹղԹերով: Բայց յերբ փորձեցի նստել ձին, աչքերս մթնեցին, ղողում էյի, վոր կոշիկներիս ու անդրավարտիկիս մեջ արյուն է լցվել:

Ձիու սանձից բռնած, յես գնացի մեր ձախ թևի կողմը, ուր մեր գնդացիրներն էին։

Ձախ թևի գնդացիրներն աշխատում էին անդադար, իսկ աջ թևում խմբավորվում եր Թշնամու զորմասը։ Այնտեղ հինգ գնդացրորդ էին սպանել։ Ցես ձին հանձնեցի ձիապահին, բարձրացա տաչանկայի վրա և նստեցի գնդացրի մոտ, վորպես յերկրորդ համար։ Այդ ամբողջ պատմությունը մի քանի րոպե տևեց։

Թշնամին վոչնչացվեց։ Դենիկինցիներից չատերը ջրախեղդ արվեցին Ուսա-Լարա գետում։ Հարուստ ավար ձեռք բերեցինք մենք։ Ընկերներն ինձ գիսակների մեջ էին վորոնում։ Նրանք տեսել էին, թե ինչպես հարձակվեցին ինձ վրա, ինչպես սպան նետվեց սրախողխող անելու ինձ, վոր մնացել էի Թշնամու թիկունքում։ Բնականաբար հասնելով՝ յես կարողացա հանձնել վերցրած դաշտային պայուսակը, հանդերձանքը և հենց այդ-տեղ, արյան կորուստից, ուշաթնաց յեղա։ Բայց յերեք-չորս րոպե առաջ, կազդուրվեցի և կրկին ձիու վրա, կրկին կըռվի դաշտում։

Վ. ԽՈՐՈՒԿՈՎ

ՄՈՐԱՔՈՒՑԻՐ ՎԱՐՈՒՆՑԻ ՑԵՐԵՐ ԿՑԱՆՔԸ

Վարվարա Ցեզորուշնայի ամուսնական կյանքի սկիզբը վոչ մի բանով չէր տարբերվում մյուս բանվորների կանանց կյանքից։

Դա կյանք եր ամուսնու, ընտանիքի համար։ Վարվարա Ցեզորուշնան պետք է հոգ տաներ յերեխաների, սպիտակեղենը լվանալու, ընթրիքների, ճաշերի մասին։ Ցեվ այդ կյանքի մասին խոսելիս Վարվարա Ցեզորուշնան ավելի շատ խոսում է ամուսնու և յերեխաների մասին, քան եր՝ ինքը կարծես ոչ-յություն չուներ։

Վարվարա Ցեզորուշնայի ամուսինը՝ Վասիլիյ Ցեոդորովիչ

Շաբրովը լավ տակառագործ էր։ Լավ վարպետության համար և տակառագործական արհեստանոցի տերերը գնահատում էին նրան։ Նա աշխատում էր Ատրախանում։

1902 թվին Շաբրովն սկսեց աշխատել Դաղստանում, սկզբում Միխյուխինի մոտ, իսկ յերբ տատրախանյան վաճառականները— ինյաբինցվները հաստատվեցին Պետրովսկում, նրանք Վասիլիյ Ֆեոդորովիչին իրենց մոտ տարան։ Սակայն, նա յերկար նստած չմնաց նույն տեղում։ Ճապոնական պատերազմի սկզբում հայրը պահանջեց, վոր կնոջ՝ Վարվարա Յեգորովնայի հետ միասին վերադառնա տուն, հայրենիք։ Հայրական կամքն որենք էր։

«Ինչե՞ն չգաս, անճնազիր չեմ տա և դեռ կպահանջեմ եռապով բերնեն»,— դրում էր հայրը։

Հարկ յեղավ հպատակվել։ Վասիլիյ Ֆեոդորովիչը մեկնեց հոր մոտ, հայրենիք, Ույազանի նահանգ, բայց այնտեղ յերկար չմնաց։ Կրկին վերադարձավ Պետրովսկ՝ կնոջը թողնելով Ծնողների մոտ։

Արդեն այն ժամանակ Վասիլիյ Ֆեոդորովիչը համարվում էր «հանրահռչակ»։ Նա կապ ուներ անվեզավ բանվորական խմբերի հետ և վոստիկանության կողմից հետևվածի տակ էր առնված։ Հարկադրված յեղավ ընկերների հետ փախչել Ատրախան։ Բայց վոստիկանությունը նրանց ճանապարհին էլ աչքաթող չարեց։ Հազիվ եկին Ատրախան հասել, վոր նրանց ղեմավորեցին վոստիկանության գործակալները ու մանրակրկիտ խուզարկության յենթարկեցին։ Տղաները կարողացան վորոշ փաստաթղթեր այրել և հաջողությամբ հասան Ատրախան։

Յեվ ահա Վասիլին դրում է դյուշ, կնոջը՝ «Վարյա, յեկ»։ Վարվարա Յեգորովնան առանց յերկար միաք անելու գալիս է Ատրախան, բայց ամուսնուն այնտեղ չի գտնում։ Ամուսինը հարկադրված է յեղել վոստիկանության սրատես աչքերից խուսա տալ Բաքու, և այնտեղից վոչ հեռու՝ Սալյանում, աշխատանքի մտնել։

Վարվարա Յեգորովնան գնում է այնտեղ։ Սկսում են բոլորով միասին ապրել՝ Վասիլիյ Ֆեոդորովիչը, Վարվարա Յեգորովնան և Գրիգորիյ ու Գյուտր վորդիները։ Շուտով Վասիլիյ Ֆեոդորովիչը հիվանդանում է և մեռնում։

Այսպես սկսվում է Վարվարա Ցեպորուխայի կյանքի յերկրորդ շրջանը: Հարկավոր եր դաստիարակել վորդիներին, նրբանց ճամրդ դարձնել: Վորդիները հասկացող տղաներ եյին: Մեծը, Գրիգորին, հաղիվ տասնհինգ տարեկան եր, բայց արդեն հասկանում եր քաղաքականությունից. քեռու և քեռորդու հետ դաղտնաբար անլեգալ խմբակներ ու ժողովներ եր այցելում:

Վարվարա Ցեպորուխան վոչինչ չդիտեր այդ մասին: Մեկ անգամ Գրիշայի հետ դժբախտություն պատահեց: Նա տուն ընկավ ծեծված ու արյունոտված: Իսկ թե ինչ եր պատահել նրա հետ, մայրն այդպես էլ իմանալ չկարողացավ:

Միայն դերմանական պատերազմի ժամանակ, յերբ ռազմաճակատ եր գնում, Գրիգորին խոստովանեց մորը, վոր վաղուց արդեն գրաղվում է քաղաքականությամբ և վոր այն անգամ հարձակվող կազակի ձին եր իրեն տրորել:

Վարվարա Ցեպորուխան տղաների հետ միասին ապրում եր Գորա-Գեորգիևսկում: Կրտսեր վորդին, Գյուրգին աշխատում եր Տաշևսկու դրծարանում, ժորպես տակառագործ: Նա կապեր եր հաստատել անլեգալ խմբակի հետ: Տասնյոթ թվին Գյուրգը դերնում է տանկական ռազմաճակատը: Նույն թվին ռազմաճակատում սպանվում է Գրիգորին:

Տասնյոթ թվի ձմեռը, յերբ դինվորները հեռանում եյին դիրքերից, լրիվ կազմով շարժվեց նաև Ղարսի 2-րդ դունդը, ժորտեղ ծառայում եր Գյուրգը: Զինվորներից շատերը սոսիալ-պոլցիներ եյին, և այժմ նրանք պետք է մի կերպ անցնեյին հայրենիք, Սոսիալ-պոլ: Նրանց հետ գնաց նաև Գյուրգ Շաբրովը:

Գյուրգ Շաբրովը Սոսիալ-պոլից Գորա-Գեորգիևսկ վերադարձավ միայն տասնութ թվի փետրվարին և անցավ հեղափոխական աշխատանքի:

Տասնութ թվի մարտին քաղաքն անսպասելի կերպով դրավեցին լեռներից հարձակված Իմամ Գոցինսկու բանդաները: Գեորգիևսկի հեղկոմը հանկարծակիի դալով, չհասավ կարգով նահերով մեկնեց Ասորախան: Բայց խորհրդային աշխատողներից ու մարտիկներից քչերը կարողացան մեկնել: Մեծամասնությու-

նը մնաց քաղաքում: Մնաց նաև Գյոտր Շարրուվը՝ թաղնվելով մոր մոտ:

Քաղաքում սկսվեցին թալաններ, սպանություններ ու հրդեհներ: Այդ Գոցինակու բանդաների նկին անորինություն էր տիրում քաղաքում: Այդ ժամանակ Բաղվից հայրենիք էր վերադառնում Թուրքեստանի դունդը: Ատրախանցիների և բալվեցիների ոչնչության հասած ջոկատների ոժանդակությամբ Գետրուվսկի բանվորները քշեցին Գոցինակուն:

Այդ որերին Գետրուվսկու բոլշևիկները շատ գործ ունեին: Գոցինակու բանդաները, նահանջելով ու վերակառուցվելով, նորից հարձակվեցին լեռներից, գրավեցին քաղաքի ծայրամասերն ու սպառնում էին կայարանին: Նրանք քաղաքին մոտենում էին ճիշտ այն րոպեին, երբ Թուրքեստանի դնդի եչելոնները հենց նոր միայն թողել էին այն: Թուրքեստանցիները իմանալով Գոցինակու հարձակման մասին, անմիջապես վերադարձան Գետրուվսկ: Գոցինակու առաջ հաղարանոց բանակը վերջնականապես ցրիվ տրվեց:

Այդ մարտական որերին Վարվարա Ցեզորուվնան հազվադեպ էր տեսնում վորդուն: Ցերը քաղաքի շրջակայքից վերջին բանդան քշեցին, Գյոտրը հոդնած տուն վերադարձավ:

— Ահա ինչ, մայրիկ,— ասաց նա,— յեթե ուզում ես ոչնչել մեզ, զրաղվիր սպանվածներով ու վիրավորներով:

Վարվարա Ցեզորուվնան, հավաքելով հարևանուհիներին՝ բանվորների կանանց ու մայրերին՝ աշխատանքի անցավ: Սպանվածներին հավաքեցին մի տեղ, լվացին նրանց: Դրամ էլին հավաքում թաղման համար, նվագախումբ և դրոշակներ էլին պատում:

Քաղաքը լռված ու ղողային կյանքով էր ապրում: Ամրհուրդն ստիպված էր պայքարել բանդիտիզմի և թալանների դեմ:

Գյոտր Շարրուվն իր ընկերների հետ այդ որերին շատ աշխատեց: Հաճախ կես գիշերին նա պարմանական նշանի վրա վեր էր թռչում անկողնից ու հրացանն առած վաղում հավաքակետը:

Բեվ ամեն անգամ սրտի տրոփով էր ճանապարհ դնում նրան Վարվարա Բեդրոսյանն:

Պետրովկը դեռ Գոցինսկու ապստամբությունից ուշքի չէր յկկել, վոր քաղաքի վրա նոր թշնամի հարձակվեց՝ անգլիական վթարման զնդապետ Ինչերախովը: Նա գալիս էր զրահապատ գնացքով, հեռաձիգ թնդանոթներով և հրետաձիգ նավերով: Պետրովսկի բոլշևիկները հինգ որ մարտնչում էին խորամանկ ու ճարպիկ թշնամու դեմ: Բայց թշնամու տեխնիկան մեր ուժերից լավն էր: Կարմիրները հարկադրված յեղան Պետրովսկը թողնել: Հալիվ էին բիչերախովականները քաղաք մտել, յերբ սկսվեց բոլշևիկների հետ դաժան տեռորը: Բոլորին, ովքեր զենքով էին, անմիջապես հակահեղափոխություն էին տանում: Տնտեսները թշնամիներին էին մատնում քաղաքում մնացած բոլշևիկներին:

Հոգնած ու անհանգստացած տուն վազեց Պյոտրը: Հրացանը թաղցրեց վառարանի ծխնելույզի մեջ: Ցաղաքը գրավել էին թշնամիները: Հարկավոր էր թաղնվել:

Թաղնվում էին ով վորտեղ կարող էր: Վոմանք թաղնվեցին գարնջրի տակառների մեջ ժիդուվլևյանի գործարանում, վոմանք ջերդակներում և նկուղներում: Թաղնվում էին վառարանի ծխնելույզներում, նպարանոցներում, շոգեմարաններում, քաղաքային ձկնարանի լաստերում: Հակահեղափոխությունը քաղաքում տեր էր դարձել: Ամեն որ առուցարանի մոտ գնդակահարվածների դիակներ էին գտնում: Մյուսների հետ բռնվեց նաև Պյոտրը: Հակահեղափոխության նկուղներում ձերբակալվածներին յերկար ու դաժանաբար ծեծում էին:

Նրան ընկերների հետ փակեցին բանտում: Հետո քաղաքը գրավեցին Թուրքերը և կենդանի մնացածները կարուզացան բանտից դուրս գալ: Բանտից դուրս յեկավ նաև Պյոտրը: Վարվարա Բեդրոսյանն ուրախությունից արտասվում էր. նա այլևս նրան կենդանի տեսնելու հույս չուներ:

Այս անգամ էլ Պյոտրը յերկար չմնաց մոր մոտ: Հալիվ էին Թուրքերը հաստատվել քաղաքում, վոր նորից սկսեցին բոլշևիկներին բռնել: Այն ժամանակ Պյոտր Շաբրովը մեկնեց Աստրախան: Բեվ այլևս չվերադարձավ: Միայն Զյորնի բլինովից նամակ ուղարկեց:

— «Մայրիկ,— դրում եր նա,— ինքն ուզում եմ մեղ ողնել, կամակերպիր մերոնց մայրերին ու կանանց և կապ ապահովեցիք կարմիր բանակի հետ»:

Ցնծ ահա Վարվարա Ցեդորովնայի համար սկսվեց կյանքի նոր, յերջորդ շրջանը: Կորցնելով ամուսնուն և յերկու վորդիներին՝ նա կյանքի նոր նպատակ դտավ:

Վարվարա Ցեդորովնան Պետրովսկում դարձավ փոքրիկ կենտրոն, վորի շուրջն ընդհատակյա լայն կապեր սկսվեցին: Այդ մոմենտից Վարվարա Ցեդերովնային ուղղակի «Մորաքույր Վարյա» եյին կանչում: Սաբորնի փողոցում գտնվող նրա կիսահետուղային բնակարանն սկսեցին Ասորախանից դաղտնի թերթեր ձդվել կուսակցության դիրեկտիվներով, հաճախ ուղիղ ընկեր Կիրովից: Մորաքույր Վարյայի միջոցով այդ թերթերը դնում եյին լեռները, ուր Բուլնակսկին ու Մախաչ-Դախտաղաևը թշնամու թիկունքում պարտիզանական ջոկատներ եյին հավաքում:

Պորտ-Պետրովսկը դարձավ բոլշևիկյան ընդհատակի կենտրոնը Դաղստանում:

Բաղաքից վոչ հեռու, խութերի հետևը, անապատային ավազուտ ցամաքամղվակի մոտ յերեկոները ձկնորսական նավակներ եյին կանգ առնում: Մարդիկ ափ եյին հանում ուտելանները ու ձուկը, դնում եյին դեպի խութերը, յերկաթուղային ավանի փոքրիկ անակների կողմը: Այդտեղ, փոքրիկ անակներից մեկում ապրում եր Պետրովսկ-Կավկազսկոյե կայարանի մենքնավարը: Ավազուտ ցամաքամղվակից նրա բնակարանն եյին գալիս ձկնորսների անվան տակ Ասորախանից ուղարկված մարդիկ, բերում եյին փողի կապուկներ, ընդհատակյա դրականություն, դիրեկտիվներ:

Ձերբևին ձկնորսական նավակները կես դիշերին անչյուկ մոտենալով ափին, նույնպես անչյուկ, աննկատելի հեռանում եյին ծովը, ջրի մեջ ծանր բեռ թողնելով: Առավոտյան ավանից կանայք, մորաքույր Վարյայի ընկերուհիները, ավիտակներեն զամբյուղներով ծովափ եյին գալիս:

Վերջացնելով լվացքը, նրանք ափիտակներեն հետ տանում եյին նաև դիշերը ձկնորսների թողած բեռը: Դա ծանր յերկաթյա տուփ եր, զոդած կափարիչով: Տուփը բաց եյին անում, հանում եյին մեջը յեղածն ու կրկին զոդում: Իսկ յերեկոյան

կանայք տուփը ապխտակեղենով ծածկած տանում էին նույն տեղը, ափսե։

Ասորեստանի «ծանրոցները» յուրայիններին միշտով միմյանց հանձնելով տանում էին մորաքույր Վարյայի բնակարանը։ Այդտեղից նրանք ուղարկվում էին Թեմիր-Յան-Շուրա։

Գաղաքում և հարևան Տարկի առուում դրա համար փորձված կապավորներ կային։ Նրանք առանում էին այդ ծանրոցները՝ դրամի ու դրականության կապոցները, իսկ յերբեմն էլ ղենք, և ձի հեծած՝ բարձունքներով գնում էին լեռները։

Գաստահում էր՝ մորաքույր Վարյայի մոտ գալիս էին հուսակցական աշխատողներ, որոնց պետք էր ուղևել Թաղնվելու համ անցնելու լեռներն աշխատանքի։

Մորաքույր Վարյայի մոտ յեկավ նաև ընդհատակյա աշխատողներին ոգնող մեքենավարը։ Նա հարկադրված էր վախչել խութերից։ Նա առաջադրանք էր առացել՝ չողեմեքենան և վագոնները հյուսիսային քարե պատնեշից վայր գլորել ծովախորշը։ Հարկավոր էր Բիչերախովյան նավերի ծով գնալու մուտքը փակել։ Բայց փորձը չհաջողվեց։ Դեպո վերադառնալ չէր կարելի։ Դեպոյի պետ Նազայցևին արդեն վաղուց հետևում էր կասկածելի մեքենավարին։ Ճիշ ահա ժամանակն էր Թաղնվելու հակահետախուզության աչքից։ Գիշերելով մորաքույր Վարյայի մոտ՝ նա մեկնեց Բաղու։

Աշխատանքը յեռում էր։ Ասորեստանի, Բաղվի և Դաղստանի քաղաքների մեջ անընդհատ կապ հաստատվեց։ Աճում և ամրանում էին ապագա Կարմիր բանակի ընդհատակյա ջոկատները։ Ընդարձակվում էր հուսակցական կազմակերպությունը։ Բայց տասնիններ Թվի գարնանը նոր հարված իջավ Դաղստանի բոլշևիկների վրա։ Սպիտակների հակահետախուզությունը համարյա ամբողջովին բռնեց ընդհատակյա ռազմական խորհուրդը՝ Թեմիր-Յան-Շուրայում։ Գնաց յոթ լավագույն մարտական ընկերներ անակնկալ կերպով բռնվեցին և նրանց հետ՝ ընկեր Բոյնակսկին։

Ազատ մնացածները փորձ արին պարտիղանական ջոկատներ հավաքել լեռներում և գրավել Թեմիր-Յան-Շուրան, բայց չըհաջողվեց։ Անհաջող անցավ նաև յերկրորդ փորձը՝ ազատել ձերբակալվածներին Գեստրովսկի բանտը փոխադրելիս։ Կաֆիր-

կումախ դյուղի մոտ գնացքի վրա կատարած հարձակումը հետ մղվեց: Կարմիրների ջոկատը պարտություն կրելով սկսեց նահանջել: Տասնինը թվի հունիսի յերեսունին ռազմա-շարժակային դատարանի վճռով Բուդյնակինն և Դոլգուշինն տասներկու ընկերների գնդակահարվեցին:

Քաղաքում ու լեռներում ընդհատակում աշխատելը դժվարացավ: Վտանգն ու ձախողումները սպառնում էին կազմակերպության ամեն քայլափոխում: Բայց կիսագրագետ մորաքույր Վարյան համբերատար ու համառորեն շարունակում էր իր դրծը:

Իր վողջ ուժերը տված լինելով բոլշևիկյան ընդհատակին՝ նա յերբեք չէր մհասկանում, մարդիկ եր հավաքում, շուրջը, «կապ» եր հաստատում:

Պետրովսկ կայարանում աշխատում եր յերկաթուղային կազմակերպությունը: Մորաքույր Վարյան կապվեց նրա հետ: Ընդհատակյա աշխատողների մեջ պրովակատորներ ապրեցին: Հակահետախուզությունը վարպետորեն կազմակերպության մեջ մտցրեց իր մարդուն՝ սպա Բրագինին («Հորիսին»): Այդ սպան մորաքույր ընդհատակյա կազմակերպության անդամներից մեկի նշանածը, տեղեկացավ այն բոլորի մասին, ինչ հարկավոր եր և հարմար մոմենտին բռնեց համարյա ամբողջ կազմակերպությունը: Ձերբակալվեցին քառասունհինգ մարդ. և նրանց մեջ՝ մորաքույր Վարյան: Առաջին անգամ նա ծանոթացավ դենիկինյան հակահետախուզության հետ: Այնտեղ նա հանդիպեց իր աշխատանքի ընկերներից շատերին: Մորաքույր Վարյան լավ և հիշում Ֆեդոսեևին և նրա կնոջը, ծնծված և արյունաշաղախ յեղած: Ծեծեցին և շատ ուրիշների: Մորաքույր Վարյային ձեռք չտվին, բայց սպառնացին.

— Սպասիր, պառավ, քեզ էլ կհասնի:

Հետո դատ յեղավ: Դատապարտեցին կախաղանի: Բայց այդ ժամանակ մորաքույր Վարյան հիվանդացավ տիֆով: Նրան դատարանի դահլիճից դուրս տարան զրկած: Ինչ յեղավ հետո— նա չի հիշում:

Հասավ սովետների իշխանության վերջը: Գարտիզանների ջոկատներն արդեն մոտենում էին Պետրովսկին: Կարմիր բանակը շարժվում եր Հյուսիսային Կովկասից՝ ճնշելով դենիկին-

նյան մնացորդներին։ Բայց Թվի մարտ ամսին դենիկինցիները կարմիր բանակի ճնշման տակ չդադրով նահանջեցին։ Բեռնում էին նավերը, վոչնչացնում էին արժեքավոր գույքը, պայթեցնում ռազմամթերքով վագոնները։ Չկարողանալով վերջացնել իրենց զոհերի հետ սեռած գաղտնատանը՝ դենիկինցիները Թողին քաղաքը։ Վերջապես կարմիր զորքերը քաղաք մտան։ Դրանից մի քանի ժամանակ առաջ, յերբ մորաքույր Վարյան պատված եր բանտային հիվանդանոցում, յեկան հակահետախուզականները, վորպեսզի նրան տանեն և վերջացնեն։ Բայց բժիշկը չդավեց, և ասաց, վոր նա արդեն մեռած է։

Մորաքույր Վարյան մնաց կենդանի։

ՑՆ. ՉԵՐԿԱՍՈՎԱ

ԳՈՒՑՐ-ՀԵՆԵԼԱԿԸ

— Յես բանվոր-տակառագործի աղջիկ եմ։ Մենք ինը յերեխա եյինք, վեցը տղա, յերեքը՝ աղջիկ։ Աղքատություն-ն ու Թշվառությունը թագավորում եյին մեր ընտանիքում։ Մեծ ղները ստիպված եյին մեզ մանկական հասակից աշխատանքի ուղարկել կալվածատերերի ու կուլահների մոտ։ Հինգ ամսվա համար մի վեդրո կորեկ— ահա վորքան եյի առանում յես։ Այդ ժամանակ յես ութ տարեկան եյի։

Տասներեք Թվին ինձ վարձով տվին Բատալբաշինսկայա ստանիցայում չարչի Յոմյակովի մոտ աշխատելու։ Նա ինձ ծեծում եր, իսկ տիրուհին հարկադրում եր ամբողջ դիշերներս կանգնել մահճակալի մոտ և դլուխը քորել, վորպեսզի հանգիստ քնի։ Ցես դաղտագողի դուրս եյի դալիս բակն ու դատնադին արտասվում։ Այդ նույն բակում ապրում եր բժիշկուհի Մուխինան— մի բարի պառավ։ Նա հաճախ տեսնում եր ինձ տանջանքներիդ յեն յենթարկում ինձ իմ կեղեքիչները և հոդով խղճում եր ինձ։ Վորոշելով ոդնել՝ նա ինձ տեղավորեց հիվանդանոցում, վորպես բանվորուհի։ Այնտեղ յես աշխատեցի մինչև տասնհինդ

Քիվը։ Դրանից հետո ծնողները լինձ տարան գյուղ՝ Ստավրոպոլի նահանգի Դերբետովկա։ Շուտով լինձ ամուսնացրին գյուղի բատրակներից մեկի հետ։ Ցավ չէ, և՛ իմ նշանածը չքավոր էլինէր, ուստի ստիպված էլինէք հարստանէքի համար կալվածատեր Պերևլերզևից փող պարտք վերցնել։ Ամուսնանալուց հետո սկսի դնայինք կալվածատիրոջ մոտ փողի փոխարեն աշխատէյինք։ Պերևլերզևի մոտ մենք աշխատեցինք մինչև տասնվեց Քիվը։

Շուտով ամուսնուս ռազմաճակատ տարան, իսկ ես հարկադրված էյի նորից վարձով աշխատանքի դնալ, արդեն վեց ամսական յերեխա չես հետ։ Տասնյոթ Քվի նոյեմբերին ռազմաճակատից վերադարձան իմ յերկու յեղբայրն ու լինձ վերցրին կալվածատիրոջ մոտից։

Այդ ժամանակ Մեդվեժինսկու շրջանում արդեն սպիտակ գվարդիականները տեր էյին դարձել և կռիվներ էյին դնում։ Վիրավորված կարմիր գվարդիականների մի մասը բերին մեր հիվանդանոցը՝ Դերբետովկա։ Ես այնտեղ աշխատանքի մոտ վոբսես դԲուԲյան քույր։ Բժիշկներն ու բժշկական անձնակազմը հրաժարվում էյին վիրավոր մարտիկներին առաջին ոգնուԲյուն ցույց տալ։ ՏասնուԲ Քվի մայիսին իմ չորս յեղբայրները կամավոր դնացին կարմիր գվարդիական 1-ին Վինոգելենսկի հեծելաջոկատը, իսկ յես մնացի հիվանդանոցում։

Իմ հայրը դատապարտվել եր Բատալ-Բաշինսկու բաժնի կողմից իշխան Զեպուրկինին սպանելու համար։ Այդ իշխան-կալվածատերը ծաղրի եր յենԲարկում յեկվոր-գյուղացիուԲյանը։ Տասը տարի հայրս անց եր կացրել բանտերում ու աքսորում և՝ հինգ Քվի հեղափոխուԲյան ժամանակ վախել եր։ Նա լավ եր հասկանում քաղաքական հարցերը։ Աշխատելով հիվանդանոցում՝ յես հաճախ զրուցում էյի նրա հետ։ Շարունակ հարցնում էյի՝ ի՞նչը և հասնելու մեր տանջանքների վերջը։ Փոքր հասակից իմ մեջ ատելուԲյուն եր բորբոքվում հանդեպ այն բոլորի, ինչ կրում էյինք մենք կուլակներից ու կալվածատերերից։

ՏասնուԲ Քվին մի ամառային որ յես հերԲապահ էյի հիվանդանոցում։ Գյուղով անցնում եր կարմիր գվարդիական ջոկատը։ Ջոկատի հրամանատարը մտավ հիվանդանոց ու հարցրեց

վիրավոր մարտիկներին, ո՛վ և նրանց թժիշկը: Նրանք ցույց տվեցին ինձ: Հրամանատարը ծիծաղեց: Ցես այնքան էլ պատկառելի տեսք չունեցի, տասնինը տարեկան էի: Նա սկսեց հարցնել վիրավոր մարտիկներին՝ արդյոք լա՞վ եմ խնամում, թե ոչ: Նրանք միաբերան հայտարարեցին՝ «Այո, սա մեր հավատարիմ ընկերն է: Նա իր բոլոր ուժերը տալիս է մեզ»: Ամբողջ կյանքումս անմոռաց հիշում եմ այդ խոսքերը:

Վերջացրի աշխատանքս հիվանդանոցում, տուն գնկա: Մայրը ինձ տվեց մեր գյուղական հեղկոմի կարգադրությունը՝ անմիջապես ներկայանալ հեղկոմ: Այնտեղ ինձ հայտնեցին, որ Ջոկատի հրամանատարի կարգադրությամբ պետք է ներկայանամ Ջոկատ և մտնեմ նրա շարքերը: Ցես չընկճվեցի, այլ, ընդհակառակը, տուն վերադարձա այնպես ուրախ, որ մայրս սկսեց ինձ հայհոյել.

— Ի՞նչ ես մտածում, ո՞ւմ ես թողնում յերեխայիդ,— և սկսեց լաց լինել: Բայց հայրս ասաց ինձ.

— Վոչինչ, աղջիկս, քանի յես կենդանի յեմ, կդաստիարակեմ իմ թոռանը:

Հենց այդ որն էլ տուն վերադարձան իմ յերկու յեղբայրները՝ ընկեր Շեյկոյի Ջոկատից: Նրանք յեկել էին կամավոր հավաքագրելու: Ցես վորոշեցի յեղբայրներիս հետ կամավոր գնալ Շեյկոյի Ջոկատը: Այդ Ջոկատի հրամանատարի ոդնականն իմ ամուսինն էր՝ Տիմոֆեյ Ստեպանովիչ Զ՝ բլատսկը: Այդպես, Ջոկատում կազմվեց հեծելակների մի ամբողջ ընտանեկան «ոդակ»՝ յես, ամուսինս և յորս յեղբայրս:

Ինձ համար ծանր էր յերեխային թողնելը: Գուցե ընդմիշտ էլի բաժանվում վորդուցս: Բայց ամենևին ցույց չէի տալիս, վորովհետև պիտեի, վոր դա անհրաժեշտ է հեղափոխության համար:

Հայրս, վոր շատ վիշտ էր կրել բանտում ու աքսորում, ճանապարհ դնելով մեզ՝ ասաց.

— Միայն զինված ուժով դուք կարող եք ձեր իրավունքը ձեռք բերել:

Ցես վորոշեցի ոդնել մարտիկներին Ֆրոնտում, առաջին ոդնությունն ցույց տալ կռվում, բուժել նրանց վերքերը:

Լինելով եսկադրոնում՝ յես մինչև մարտիկների հետ հետա-

խուզարկության ենթարկում: Սպիտակների դեմ մղած կռիվներին նույնպես անմիջական մասնակցություն են ունենում զենքը ձեռքին:

Ցերը կամաց-կամաց առնում, մարտիկների հետ միասին վրանատեղը նույնպես պատրաստում, որտեղ այնպես դժվար էր ձեռք բերել:

Ջոկատը կազմակերպելու մոմենտին մեր շարքերում մասնագետ-բժիշկներ ամենևին չկային ու նրանք կարմիր ջոկատներ չէին ղրկում:

Ամեն ինչ մենք ենթարկում էինք պատրաստում՝ մարտական պայմաններում: Մենք սահմանած էինք վոչ միայն ուսուցման ցույց տալ վիրավորներին, այլև խնամել նրանց մինչև առողջանալը, որովհետև մեղանում մինչև տասնիններ թիվը հիվանդացողներ չկային:

Ցրոնոում ծանր րոպեներ եղան լինում, բայց դեռ ինձ չեն կոքցնում: Մեկ անգամ հարկ լեղավ պայքարել մարտիկների մի մասին ընդդրկած պանիկայի դեմ:

Դա Պետրովակ գյուղի տակ տեղի ունեցած կռվի ժամանակ եր: Ցերկաթուղային թմբի մոտ սպիտակները ճեղքեցին մեր առաջավոր դիծը և մարտիկներն սկսեցին շտապ նահանջել: Ինձ հաջողվեց վախեցողների մի մասին հավաքել, կազմակերպել նրանց, որից հետո մենք կրակ բացինք հակառակորդի վրա: Մենք վոչ միայն կանգնեցրինք նրանց, այլև մի ընդացիր խլեցինք լինելյայտով: Այդ ամբողջը հանձնվեց 1-ին հեծելաջոկային դնդի հրամանատար ընկեր Կնիդային:

Պետրեչա գյուղի վրա սպիտակների կատարած անակնկալ հարձակման ժամանակ յես հարկադրված յեղա պաշտպանվել վիրավորներով հետ կալատա գնան անցնելիս: Իմ ձեռների վրա սպանվեց մարտիկներից մեկը, բայց և այնպես մյուսներին հաջողվեց բարեհաջող կերպով տանել:

Տասնյոթ վիրավոր մարտիկների հետ յերեկոյան հասա Վոնդելենակի ագարակները: Այդտեղ յես վիրավորների համար մեն-մենակ կազմակերպեցի ճնշող և յերկրորդ անգամ փաթաթեցի վերքերը: Ցերեք ժամվա հանգստից հետո դիշերը վիրավորների հետ գնացի առաջ, Դերբետովկա: Այնտեղ հասանք մենք առավոտյան ժամը չորսին: Իմ եսկադրոնի չորս վիրավոր

մարտիկներին տեղավորեցի հարազատներիս մոտ, իսկ մնացածներին՝ Դերբեսովկայի հեղկոմի շենքում, ուր բոլորին լավ ապաստարան և հանգիստ տրվեց։ Առավոտյան տեղական հեղկոմի միջոցով կազմակերպեցի անունդ ու սպիտակեղեն հավաքելու գործը։ Կերակրեցի, հագցրի բոլոր վիրավորներին և նրբանց ուղարկեցի հեռավոր կետը՝ Ռոզուվլի գյուղը։ Մարտիկներին ուղեկցեց իմ յեղբայրը։ Իսկ ինքս անմիջապես վերադարձա իմ մարտական դիծը։

Յերեք որից հետո, յերբ կռիվները հանդարտվեցին, յես ջոկատի հրամանատարի կարգադրությամբ մեկնեցի Ռոզուվլի, վիրավորների մոտ։ Այնտեղ լվացքատուն կազմակերպեցի։ Բոլոր հիվանդ ու վիրավոր մարտիկների մաղերը խուզեցի։ Վերափոխեցի սպասարկու անձնակազմը և, կարգ հաստատելով, վերադարձա իմ զորամասը։

Ատրախանյան տափաստաններում, ուր մոլեգնում էր սիֆը, յես նույնպես ակտիվ ոգնում էի հիվանդ ու վիրավոր մարտիկներին։

Տաննիները թվի ապրիլին Թշնամին շրջապատեց մեզ բոլոր կողմերից և կատաղի հարձակման դիմեց։ Մեր կողմից շատ վիրավորներ կային։

Դեռ առավոտյան յես ինձ վատ էի զգում։ Ժամը տասներկուսին վիրավորների վերքերը կպչում էին արդեն ծննդներիս վրա սողալով։ Շուտով ուշքս կորցրի։ Հիվանդացա տիֆով։

Առողջանալուց հետո վերադարձա իմ աշխատանքին։

Ռեմոնտնի գյուղը դրավելու համար մղված կռվում յես ստատիկ կոնտուզիա ստացա։ Նույնիսկ ժամանակավորապես կորցրի խոսելու ընդունակությունս։

Դոն գետի համար մղվող կռիվներում Վորոնեժի շրջանում, 34-րդ հեծելակային գնդի մասը յերկաթուղային կամուրջով տեղափոխվեց Թշնամու կողմը։ Սպիտակների ճնշման տակ մերոնք հետ նահանջեցին Դոնով, վորն արդեն սկսել էր սառույցով ծածկվել։ Մարտիկները գետն անցնում էին ձիերով, իսկ վիրավորներին գետն ընկան առանց ձիերի։ Նրանցից մեկը չէր կարողանում լողալ և կանգ առավ կամրջի տակ պատնեշի մոտ, գետի մեջտեղը։ Յես վոշոշեցի փրկել նրան։

Վերջացնելով վիրավոր մարտիկների ու դիվիզիայի կոմիսա-

րի վերջերը վաթսթելը՝ առնիտարական լինելիության վերցրի պարանը, նետվեցի կամուրջի վրա, վորի շուրջն արկեր էին պայթում, և պարանը կախեցի դետի մեջ յնղած մարտիկին։ Բայց նա պարանով վեր բարձրանալու ուժ չուներ, վորովհետև նրա առած ձեռքերն ու վոտները առատիկ վախտացել էին։ Այնուամենայնիվ, մեկ ուրիշ մարտիկի հետ ինձ հաջողվեց դուրս քաշել նրան սառցային ջրից։ Իսկույն նրա մարմինը չփնջել սպիրտով, մուշտակ հագցրի և ուղարկեցի Վորոնեժ։

Իմ ամբողջ աշխատանքը տեղի էր ունենում բացառապես առաջավոր դիրքերում։

Մեր մարտիկների հետ միասին ճիրով, փախչող դենիկինականների հետևից կրնկակոխ էես հասա Սեվ Ծովի ափը։

Մեր նախկին բրիգադի հրամանատար, իսկ ներկայումս յերեք մարտական շքանշանով պարգևատրված կորպուսի հրամանատար ընկեր Ապանասենկոն մեծ ուշադրություն էր ցուցաբերում դեպի մեզ և միշտ հոգում էր հիվանդանոցներն անհրաժեշտ բժշկական նյութերով մատակարարելու մասին։ Նա միշտ հոգա էր տանում վիրավոր ու հիվանդ կարմիր բանակայիններին մասին։

Լինելով չափազանց պահանջկոտ մարտական պայմաններում՝ նա հսկայական ժողովրդականություն էր վայելում մարտիկների մեջ։ Նրա կոչը՝ «Հեղափոխության զավակներ, առաջ», յուրաքանչյուրի համար որենք էր և անհապաղ կատարվում էր։

Մեր հեծելակային դնդի մարտիկներն, ինչով կարող էին, ողնում էին վիրավոր մարտիկներին և մեզ՝ սպասարկու անձնակազմին։ Ամեն տեսակ ճանապարհներով նրանք ձեռք էին բերում վիրակապական նյութեր և այն բոլորը, ինչ հարկավոր և վիրավորին առաջին ողնություն ցույց տալու համար։ Առանձնապես հոգատար էին Նիկոլինա Բալկա գյուղի մարտիկները և Նիկոլինա Բալկայի բնակչությունը։

Վ. ԳԼԱԶՆՈՎ

ՏՈՒԳԸ

Տասնյոթ թվի սեպտեմբերն էր։ Ռոստովում կարմիր գվարդիա էր կազմակերպվում։ Բոլշևիկները շարժվեցին դեպի զորանոցները և ֆաբրիկանները։ Բոլշևիկյան կոչերը զենքի էին հրավիրում։

Հիվանդանոցում էս դայակներին ու քույրերին կարդացի Ռոստովի «Մեր դրոշը» բոլշևիկյան լրագիրը՝ «Գրվեցեք բանվորական մարտական ջոկատներում, սովորեցեք և դինվեցեք։ Մենք դեռ ստիպված կլինենք մահացու կռիվ մղել կապիտալիզմի դեմ»...

Հիվանդասահուհի Նյուրան, հիշում եմ, հարցրեց ինձ.

— Դու կղնա՞ս, քույր Վարյա։

Ինձ, չգիտեմ ինչու, բոլորը քույր էին կոչում, թեպետ էս հասարակ սանիտարուհի էի։ Ձի՞ վոր էս չերբեք չէի սովորել։

Հայրս ու մայրս բատրակներ են, էս ինքս էլ՝ բատրակուհի։ Տասնվեց թվին, վորպես դինվորի կին, էկա Ռոստով և ծառայության մտա շրջանային հիվանդանոցում։

Ճես լավ էի աշխատում, բժիշկները դրվում էին, իսկ ստորին անձնակազմն ինձ հարգում եր այն պատճառով, վոր շատ էի կարդում։ Ճես Լենինի գրվածքներն էլ կարդացել էի։ Ինչպե՞ս կարելի էր այժմ չմտնել կարմիր գվարդիայի շարքերը։

Ճեվ ահա, տասնյոթ թվի նոյեմբերին, էրբ Ռոստովում սկսվեց քաղաքացիական կռիվը, էս ռազմաճակատ գնացի տրամվայի բանվորների մարտական ջոկատի հետ։ Տրամվայի բանվորների հետ էս առաջ էլ հանդիպում էի։ Հաճախ էի լինում նրանց ժողովներում։

Մենշևիկները չատ լին աշխատում, տրամվայի բանվորներին իրենց կողմը քաշել։

Մեկ անգամ, յերբ մենք խորհուրդներն էինք վերընտրում, տրամվայի դեպո յեկան բոլշևիկները։ Ժողովին շատ բանվորներ կային, բայց նախապահության մեջ պատահական մարդիկ էին ընտրվել։ Ժողովում յելույթ ունեցող բոլշևիկները դժվարին դրության մեջ էին։ Անբարյացակամ բացականչություններ յեղան։

Այդ մոմենտին դեպո յեկան մենշևիկներն ու եսերները՝ վասիլյևը, Գուրևիչը, Լակիերմանը։

Իրենց ազդմբով սկսեցին հանդես գալ համաձայնողականները։ Նրանց թվում էր, որ իրենք հաղթանակած կդնան, որ տրամվայի բանվորներն իրենց ձայները նրանց կտան...

Բայց յերբ Գուրևիչը բացականչեց՝ «Բանվորներն իրենք են հանցավոր անկարգությունների և քայքայման համար»,— նրան քիչ մնաց ամբիոնից ցած գլորեն։

Այդպես, մենշևիկներն իրենք իրենց համար փոս փորեցին։ Տրամվայի բանվորներն իրենց ձայները տվին բոլշևիկներին։ Տրամվայի դեպոյի այդ ջոկատի հետ ել հենց յես գնացի Ֆրոնտ։

Ֆրոնտում վոչ մի թժշկական ոգնություն չկար։ Ուստի ինձ հանձնարարվեց դայակների մեջ կամավորներ հավաքագրել։ Սկզբում միայն յերկու հոգի ցանկություն հայտնող յեղավ, իսկ հետո հինգ հոգի ևս միացան մեզ։ Իմ պատասխանատվությունը դեղորայքը պատրաստելն էր։ Դեղորայքը պիտի ստացվեր հիվանդանոցի դեղատնից։ Դեղատան վարիչն սկզբում վճռական կերպով հրաժարվեց դեղորայք տալ։ Նա միայն դնդակահարվելու սպառնալիքի տակ հպատակվեց և մենք հնարավորություն ունեցանք դեղատնից վերցնելու այն, ինչ հարկավոր էր ճակատում։

Ռուսաստվը մի քանի անգամ ձեռքից-ձեռք անցավ։ Բաղաք մտան անվճռական նավատորները, կալեդինականները նահանջեցին։ Յերբ հակահեղափոխական բանդաները հեռացան, կալեդինյան սպանների մի մասը մնաց Թիկունքում, որպեսզի կարողանա դիվերսիայում խուճապ ու կազմալուծում առաջ բերի։ Տանները ևս նրանք թողեցին մեր հիվանդանոցում։

կալեդինականները ժպտերին կանացի հազուստ հագցրին և տեղավորեցին ծննդաբերական բաժնում, կանանց մեջ։

«Կոլխիդա» նավի նավաստիները հիվանդանոց յեկան, իմանալու համար, սպիտակ սպաները չե՞ն թաքնվում արդյոք այդտեղ։ Սպաներին դուռն։ Նրանց հիվանդանոցից տարան ուղեկահարեցին։

Կալեդինի ժամանակ յես, դռնվելով ընդհատակում, թուղթիկներ էի տարածում և բոլշևիկյան ագիտացիա էի մղում։

Դժվար եր թուղթիկները շրջանային հիվանդանոցի կորպուսներում բաժանելը։ Ուժական անձնակազմն անկազմակերպ եր։ Մեծամասնությունը բոլշևիկների դեմ եր։

Կալեդինի անձնասպանությունից հետո կարմիրները կալեդինականներին Դոնից քշեցին։

Ներեք ամիս Դոնում հողհրդային իշխանություն եր տիրում, բայց տասնութ թվի ապրիլին յեկան ւլերմանացիները և դնեցրալ Կրասնովը։

Հիվանդանոցում, ուր աշխատում էի յես, կրասնովականները կանացի հիվանդությունների բաժանմունքի բոլոր դայակներին ու հիվանդապահուհիներին ձերբակալեցին։ Մեզ տարան Կազանյան սողոտայի վրա յեղած № 23 տունը։ Այնտեղ տեղավորված եր հակահետախուզությունը։ Ճես լավ դիտեմ հարցնինչումն է։

Մեր հիվանդանոցում մի վիրավոր քույր–բոլշևիկուհի յեր պառկած։ Նրա վերքերը թարախակալել էին, վորովհետև չեյին կապում և ընդհանրապես վոչ մի բժշկական ոգնություն ցույց չեյին տալիս։

Ի՞նչ անել։ Այն պալատում, ուր պառկած եր քույրը՝ բոլշևիկուհին, դայակների մեջ յերկու հոգի կային բոլշևիկներին համակրող։ Նրանք դիշերը վիրակապեր եյին դողանում և փաթաթում նրա վերքերը։

Առողջացրինք մենք մեր հիվանդին, բայց վոչ մի տեղ պնակ չեր կարող։ Վոչ մի փաստաթուղթ չուներ։

Ճես կուսակցական առաջադրանք ստացա՝ հիվանդանոցում նրա համար մեռած հիվանդի փաստաթուղթ ձեռք բերել։

Մի մեռած կնոջ փաստաթուղթ ձեռք բերեցինք։ Տարիքը չի համապատասխանում, բայց ինչ արած։ Ճերկու շաբաթ նա ապ-

բաց ինձ մոտ, բայց հետո այլևս վտանգավոր եր— պետք է հեռանար։ Հազցրի նրան իմ հագուստը, փաթաթեցի թաշկինակով, վրդովեցի քիչ կապածելի յերևա, և նա գնաց։ Ինչ յեղավ նա— չգիտեմ։

Այդ դրծով էլ մեզ ձերբակալեցին։ Ձերբազատեցինք, բժիշկների յերաշխավորությամբ, բոլոր դայակներին ազատեցին, բացի յերեքից, վոր մասնակցություն եյինք ունեցել այդ ընկերոջն ազատելու դործում։

Մեզ համար վոչ վոք չեր յերաշխավորում և մեզ մեծ դըժվարությամբ հաջողվեց ազատվել։

Դեռևս կալեդինի ժամանակ յես չուտով հեռացա հիվանդանոցից։ Ամբողջովին անցա ընդհատակյա աշխատանքի՝ վորպես պատասխանատու սուրհանդակ։

Ցես չրջում եյի ամբողջ չրջանում։ Գոչեր ու թռուցիկներ, չրջոմ ու վիատաթղթեր եյի տանում Ազով, Տագանրոգ, Սուլին, Նովոչերկասկ։ Տագանրոգ մեկնելիս յես գրականությունը կապում եյի վրաս, լավ փաթաթում բինոերով ու սրբիչներով, իսկ Նովորոսիյսկ գնալիս գնում եյի զամբյուղի մեջ։ Ինձ հետ միշտ արկղներ, զամբյուղներ, տոպրակներ կայինն— իբրև թե մթերքների յեմ գնում։ Ցես ինձ սպեկուլյանտկա եյի ձևացնում և հիվանդանոցից հեռանալիս բոլորին ասում եյի, վոր սպեկուլյացիայով եմ զբաղվելու։

Նշված տեղը հասնելով՝ յես ասում եյի պարոլը, ընկերը նույնպես պետի պատասխաններ սահմանված պարոլը։

Միշտ տարբեր ձևով եյի հաղնվում։ Ամեն մի առանիցա, ամեն մի դյուղ գնում եյի ուրիշ տեսակ հագնված։

Շատ դժվար եր Նովորոսիսկ գնալը։ Նախազգուշության համար յերբեք մարդատար վագոն չեյի նստում, այլ միշտ մեկնում եյի սպեկուլյանտի ձևով՝ ածխի վագոնում, կոտրոններին, բուֆերների վրա՝ տոպրակով։ Տոպրակի մեջ, թռուցիկների վրա հաց եյի լցնում, արևածաղիկ, հին կոշիկներ կամ եյի ուրիշ ինչ վոր հնոտի, տոպրակը կախում բուֆերից և գնում. այդպես ամբողջ ճանապարհը։

Նովորոսիսկում հայտի բնակարանը գտնվում եր Կրեպոստնայա գաստավայի հետևը, Մարֆուշայի մոտ (Կրեպոստնայա փողոց, նո. 23)։

Հիշում եմ, ինչպես առաջին անգամ այնտեղ գնացի։ Դուռը բաց արեց մի կին։ Ասում եմ պարոնը՝ Զեղ մոտ գարա՞ժ է վարձով տրվում ավտոմեքենայի համար»։

Կինը պատասխանում է՝ «Վոչ, վարձով չի տրվում, վորովհետև բակը փոքր է»։

Այն ժամանակ յես հարցնում եմ.

— Մարֆո՞ւշա։

— Այո,— պատասխանում է կինը։

Ճեռ մի քանի կանգ եյի առնում Մարֆուշայի մոտ և նրան հանձնում բոլոր կուսակցական հանձնարարությունները։

Այդպես աշխատում եյի յես նաև տասնիններ թվին։ Նովոռոսիսկից այն կողմը, լեռներում գտնվում եյին մեր պարտիզանները՝ կարմիր-կանաչները։ Նրանց ևս պետք եր տեղեկություններ հասցնել, կոչեր և այլն։

Մենք Մարֆուշայի հետ գնում եյինք այնտեղ կածաններով, լեռներով, ձորերով։ Մարֆուշան ճանաչում եր բոլոր պահակատեղերը, ուր մի քանի կանգնած եյին լինում մեր պահակները։

Մեկ անգամ մենք հանդիպեցինք ապիտակների ջոկատի։ Հարկադրված յեղանք վերադառնալ։

Հաղնվեցինք անճանաչելի դառնալու աստիճան, մի պատառ կնոջից խնդրեցինք նրա այծն իր յերկու ձագուկներով և տանք նրանց արածացնելու։ Ջամբյուղում հետներս վերցրել եյինք մեր ատելիքը— «պաշարը»՝ վերևից ընկյուզ եյինք լցրել, իսկ տակը փաստաթղթեր եյին։

Այծերը քշեցինք։

Այնպես սկսեցինք քշել նրանց, վոր այծերը վախենալով, սկսեցին փախչել՝ մենք հետևներից։ Այդպես, խաբելով, սպիտակներին, հաջողությամբ հասանք կարմիր-կանաչների մոտ և հանձնեցինք բոլորն, ինչ հարկավոր եր։

Ճեռ մեկնեցի Վավիլովկա՝ Տաղանրոգի մոտ։ Դա կոնսպիրատիվ բնակարանը տապալվելու ժամանակ եր, յերբ սպիտակները բռնեցին տպարանն ու ձերբակալեցին ընկերներից շատերին։

Մեր ընդհատակյա փաստաթղթերն ընկան հակահետախուզության։ Հարկավոր եր անմիջապես մեկնել, հայտնել այդ մասին բոլոր կազմակերպություններին։ Ընդհատակյա կոմիտե-

յի անդամները քոլորը մեկնեցին Վավիլովկա: Այնտեղ հայտի բնակարան կար, բայց այդը նրանք քոլորը հավաքվում են Վավիլովկա, այդ բնակարանն էլ և տապալվում: Ուստի նրանք դիշերը ցրտից դողում են հորանը:

Ռուստովի ընդհատակում մնացած ընկերներից մեկը (նրա ազգանունը չես հիշում) կանչեց ինձ և առաջադրանք տվեց՝ նամակ տանել Վավիլովկա: Ճես Վավիլովկա մեկնեցի մեծաքանակ աղ դնողի անվան տակ: Ճանապարհին, Վավիլովկայի մոտ ինձ կանգնեցրեց մի պառավ կին և հարցնում է.

— Դուք ո՞ւր եք դնում:

Ճես ասում եմ.

— Գնում եմ աղ դնելու:

Ուշադիր զննեց ինձ պառավն ու կամացուկ ասում է.

— Ճեքե դուք աղի չեք դնում, ապա ասեք ինձ, ինչ է այնտեղ դնալ չի կարելի:

— Ինչո՞ւ,— հարցնում եմ:

— Կաղակները Նաստյայի ամբողջ կուռքը քանդել են և այնտեղ դարան են սարքել:

Անհանդստացա յես, բայց ցույց չեմ տալիս.

— Իսկ ինչո՞ւ յեք ղուք կարծում, վոր յես այնտեղ եմ դնում:

— Ինձ ասացին, վոր յերեք Ռուստովից յեկող լինի, չիմացնեմ նրան Նաստյայի բնակարանը:

Պառավն ինձ տարավ իր տուն և ասում է.

— Նայեցեք, ահա նրանք նստած են այն սարի վրա, արտի մեջ: Այնտեղ քարե հորան կա, նրանք հորանում են: Ուտելիք տարեք նրանց:

Ջամբյուղում յեփած ձու դրեց, մածուն, հաց: Հաճարի արտով դնացի, վորպեսզի քարե հորանը մտնեմ: Մոդալով հասա հորանին:

— Ո՞վ և դալիս,— կանչեցրեց ինձ մի մարդ:

— Ճես...

— Դու ո՞վ ես:

— Ճես Վարյան եմ:

— Ապասիր: Տեղիցդ չշարժվես: Ճես խոկույն քեզ կհայտնեմ,— և դնաց:

Մի քանի րոպեյից հետո յես ընկերներիս մեջ էյի, վորոնք ախորժակով վոչնչացնում էյին պատառվի ուղարկած ուտելիքը:

★

Դենիկինի ժամանակ յես անցա սպիտակ Ֆրոնտը: Բոլշևիկյան ընդհատակյա կոմիտեն ինձ առաջադրանք եր տվել՝ անցնել Քշնամու Քիկունքը և պարզել սպիտակների տեխնիկական դինվածությունը: Տագանրոգի մոտ, Գավլովկայից վոչ հեռու, յես, սպիտակների գալուն սպասելով, ապրում էյի մի կալակուհու մոտ, վորին սպիտակները շատ մեծ տանջանքներ էյին պատճառել: Նրա յերեք տղան դնդակահարվել էյին, յերկու տղան գնացել էյին կարմիր բանակ, իսկ իրեն այնչափ էյին ծեծել, վոր ամբողջովին վերքերով եր ծածկված: Ինդրեցի Քուլլ տա գիշերել իր մոտ և ապրեցի յերկու որ, մինչև Գավլովկայից դենիկինականները յեկան ու գրավեցին այդ ագարակը:

Այն ժամանակ յես առաջ գնացի:

Ֆայլում եմ տատիստոտանով, անցորդները հարցնում են.

— Ո՞ւր ես գնում, մորաքույր: Գիտե՞ս վորտեղ են կարմիրները և վո՞ր կողմն են շարժվում սպիտակները:

Սաստիկ հայհոյում եմ և՛ նրանց, և՛ սրանց:

Այդպիսով յես հասա այնտեղ, վորտեղ գտնվում եր Քշնամու արտիլերիան: Գարդեցով նրանց ուժերը՝ հետ դարձա: Ճակատի հենց այդ մասում սկսվեց սպիտակների նահանջը: Այդտեղ ել յես մնացի: Գիշերելով դաշտում, հետևյալ որը հասա մինչև կարմիրների դիրքերը, բայց այնտեղ ինձ Քուլլ չըտվեցին: Ցես կանչեցի կոմիսարին և ասում եմ.

— Ինդրում եմ հրացանների տակ ինձ տարեք չտար:

Ցերկու կարմիր բանակային տվեցին ինձ, վորոնք ինձ տարան: Շտաբում դաղտնի բաժնում յես պատմեցի բոլորը և հայտնեցի ստացած տեղեկությունները:

★

Ֆաղաքացիական կռվում յես յերկու մասնագիտություն ունեյի՝ ընդհատակյա կոմսակցական սուրհանդակ էյի, իսկ յերբ կռվի մեջ էյի ընկնում, աշխատում էյի բժշկական գծով:

Բուժում էի հիվանդներին, վիրավորներին վերքերն էի վա-
ճառում։ Ցերբ սպիտակ բանդաններին վերջին մնացորդները
քշվեցին Դոնից, յես սկսեցի սովորել։

Այդպես էլ զնացի բժշկական դծով։

Այժմ յես վերհիշում եմ քաղաքացիական կռվի հեղափո-
խական մարտական որերը... Բայց չեմ ուզում վերհիշել, վոր
յես անդրադառնամ զինվորի կին էի, վոր ինձ ծեծում էին և՛ ան-
ըը, և՛ ուրյադնիկը, և պատահում եր՝ ամուսինս։

Այժմ յես աշխատում եմ Ռոստովում, վորպես մարզային
արդյունաբերական ապահովագրական դրամարկղի հիվանդանո-
ցի դերնկատորի ոգնական։

ՋՄԲՑՍԿՈՒ ԴՆԴԱԿԱՀԱՐՈՒԹՑՈՒՆԸ[1]

Տասնութ Թվի ոգոստոս ամիսը վերջանալու վրա էր։
Վլադիկավկազում վերջացավ դեռ հուլիսին սկսված
Թերեքի ժողովուրդների հորրորդ համագումարը։

Կազակական վերնախավերի հակահեղափոխական խռովու-
թյունն ընդհատեց համագումարը։

Թշնամիները ամբացան Մոզդոկում, վորտեղ դավաճանների՝
նահրների և մենշևիկների հետ միասին կազմակերպվեցին հա-
կահեղափոխական «կազակական–գյուղացիական» պետություն՝
մենշևիկ Գեորգի Բիչերախովի գլխավորությամբ։

Տասնութ Թվի ոգոստոսի տասնութի լուսադեմին բիչերա-
խովյան բանդաները զնդապետ Սոկոլովի հրամանատարությամբ
հարձակվեցին Վլադիկավկազի վրա ու գրավեցին այն։ Տասնե-
րեք որ կռիվ եր զնում քաղաքը գրավելու համար։ Սերդո Որ-
ջոնիկիձեյի՝ «Ռուսատատանի հարավի արտակարգ կոմիսարի»
զեկավարությամբ Վլադիկավկազի բանվորները, աշխատավոր

---

[1] Ընկերների հիշողություններով

լեռնականները, համազգեստների պատգամավորները կռվում էին սպիտակ բանդաների հետ: Վազելակավիկաղը կրկին դարձավ խորհրդային:

Համազգեստները վերջացավ այն ժամանակ, երբ ՈրՈնիկի-ձեն ու պատգամավորները վերադարձան ճակատից: Պատգամավորների մի մասը վերադարձավ իրենց առանիցաները: Գնում էին սպիտակ կաղակների դրաված տերիտորիայով՝ ելնելով առանիցայից դեպի Ջմեյակի առանիցան:

Վաղ առավոտյան մի քանի սայլ մոտեցան Ջմեյակի առանիցային:

Կամուրջին մոտենալով, պատգամավորներն սկսեցին ուշադիր նայել առանիցայի կողմը, որը գտնվում էր անմիջապես կամուրջի այն կողմը: Պայմանները խաղաղ էին թվում, տեղ-տեղ պատերի մոտ լեզած թմբերի վրա ծերունիներ ու պառավ կանայք կային նստած: Վոչ մի զինված ուժ չեր նկատվում:

Բայց հազիվ էին կամուրջն անցել, երբ յերկու կողմից մի քանի կաղակ յերևացին: Նրանք պահանջեցին, որպեսզի սայլերն ուղիղ ճանապարհից թեքվին դեպի առանիցայի վարչությունը, անցաթուղթ առանալու համար:

— Այստեղ առանց անցաթղթի ճանապարհ չկա,— հայտարարեցին կաղակները:

Գարզ եր, թակարդն էին ընկել: Ատելճանաբար բոլոր սայլերը հավաքվեցին յեկեղեցու հրապարակում, առանիցայի վարչության մոտ: Եկեղեցու դարպասի մոտ յերկու թնդանոթ եր դրված:

Ձոխ հագնված կազակությունը չարախնդում եր, յենթադրելով, որ արդեն հաղթանակ է տարել Ռորհրդային իշխանության վրա: Նրանք ինչ որ բացականչություններ էին անում խոշոր դումարներ թալանած բանդիտների մասին, ծաղրում էին «սովիդեպն» ու «կոմունան»:

Բայց ամբոխի մեջ պատահում էին և աղքատ հագնված կազակներ ու գյուղացիները, որոնք ցավելով ու վշտով էին նայում պատգամավորների վրա:

«Ի՞նչ անություններ» յերկար ժամանակ չկային: Ամբոխը խաղաղվեց, բայց չեր ցրվում, սպասելով, թե ի՛նչ և լինելու հետո:

Վերջապես ժամը մեկին առանիցայի վարչությունից դուրս եկավ ապան և հայտարարեց, որ անցաթղթեր կտրվեն միայն համապատասխան պատրամատվորներին: Դրա համար պատրամատվորները նախապես պետք է հանձնեն իրենց մանդատները: Վո-մանք դնացին մանդատները հանձնելու: Մի քանիսն ասում էին, որ մանդատները չպետք է հանձնել և ամենից լավն է ինքնիշխանով ազատվել:

Սայլերից մեկի վրա նստած էր գրիմ արած Պաշկովսկին՝ Տերսկի հանրապետության ժողկոմխորհի նախագահը՝ դրոշի բնեռով և ատրճանակավոր դվիսարկով: Նրա հետ միասին նըս-տած էր Աչյա Բլյումենտալը, տասնութ տարեկան մի աղջիկ: Համապատասխան ամենածանր աշխատանքն ընկած էր նրա ուս-րին: Նա պատրամատվորներին տեղավորում էր քնակարաննե-րում, ուտելիք էր պատում նրանց համար և հոգում էր ամեն բա-նի մասին:

Աչյան կիսլովոդսկում աշխատում էր տասնութ թվի սկըզ-բից: Նրան սիրում էին բոլորը, ոչ հետը գործ էր ունենում: Ցևռանդուն, կենսախինդ, նա կազմակերպում էր բանվորուհի-ներին, միշտ առաջինն էր ճակատ դնում և ամենավճռական տեղերում իրեն պահում էր համարձակ ու վճռական:

Այժմ ծանր, վճռական պայմաններում նրան ե՛լ ավելի աշ-խատություն սպին: Նրա առույգ խոսքն ու քնքուշ ժպիտը բարձրացնում էին ընկերների տրամադրությունը:

Առաջինը անցաթուղթ ստանալու գնաց Տյուլենյևը՝ կիսլո-վոդսկի խորհրդի նախագահը: Տեսնելով, որ նա յերկար ժա-մանակ չի դալիս և որ վոչ վոք դեռ անցաթուղթ չի ստացել, ընկերները սկսեցին անհանդստանալ: Համապատասխան բոլշևիկյան ֆրակցիայի տեխնիկական քարտուղարը վոչնչացրեց իր մոտ մնացած փաստաթղթերը՝ ֆրակցիայի անդամների ցուցակնե-րը, ֆինանսական-հաշվետվական փաստաթղթերը և այլն:

Հանկարծ ստանիցայի վարչությունից աղմուկ ու բացա-կանչություն լսվեցին: Զարախինդ բացականչություններ ու ծիծաղ եկին հնչում.

— Պաշկովսկի, Պաշկովսկի, ընկա՛ր, աղամնյակ: Ահա՛ նա:

Կազակների ու պատների խումբը շրջապատեց այն սայլը, որի վրա ատրճանակավոր դվիսարկով մարդը նստում էր. Ա-

նյա Բլյումենտալի հետ։ Գոկելով նրա դրության բեղերը, նրանք աղմուկով ու աղաղակներով նրան տարան վարչություն։

Մի քանի ժամանակ անց Պաշկովսկին և Տյուլենյեվը պահակների հսկողությամբ դուրս եկան վարչությունից։ Նրանց տարան ատաղձագործարան, որ նրանց գործադրեն հարկադրելու։

Հետո նորից հայտնվեց կաղակը և մի քանի մարդու ազդանշաններով կանչելով, ասաց.

— Գնանք Ալեքսանդրովսկ ատաղձագործարան։

Զորս կաղակի ուղեկցությամբ պատգամավորների մի մասը գնաց Նալչիկի ուղղությամբ։ Արդեն յերեկոյան ժամը տասն էր։ Խաղաղ ու տաք յեղանակ էր։ Լուսավորում էր լրիվ լուսինը։

Մարդիկ գնում էին դանդաղ, հոգնած, սոված։ Յերբեմն լսվում էին հեռավոր պայթյուններ— այդ կալակներն էին պայթեցնում յերկաթուղին։

Յերբ հավասարվեցինք յեգիպտացորենի դաշտին, կաղակներից մեկը ձեռքով աջ կողմը ցույց տալով, ասաց.

— Այստեղ նրանց գնդակահարեցին։

Բոլորը հասկացան, որ նա խոսում է ընկերների Պաշկովսկու և Տուլենյեվի մասին։ Բայց ոչ ոք ոչ մի խոսք չասաց։

Անցան յեգիպտացորենը, ապա լերկ տափաստանի մի մասը։ Մոտեցան յեգիպտացորենի մի ուրիշ դաշտի։

Կաղակները դոշեցին.

— Կանգնի՛ր։

Կանգ առան։ Կաղակները բարձրացրին հրացանները, ու բոլորը հասկացան, որ վերջը հասել է։

Այդ մոմենտին հնչեց Անյայի բարձր, հուզված ձայնը.

— Ընկերնե՛ր, սպասեցե՛ք, յես ձեզ բան պիտի ասեմ։

Կաղակները չբացականչեցին, ինչպես սովորաբար պատահում են՝ Միայն առանց «ընկերների»։ Դա վերլության հույս ներշնչեց։ Կաղակները չարունակում էին հրացանները պատրաստ բռնել և լուռ սպասում էին։

Անյան շնչասպառ եր լինում։ Հետո, ուրախանալով իրեն, ասաց.

— Բոլշևիկները բանդիտներ չեն, այլ ժողովրդական հա-մադրամարի պատգամավորներ, որը հարցերը վճռեց հոգուտ աշխատավորների շահերի: Աղքային թշնամանքը բորբոքում են դիտմամբ սպիտակ դեներալները... Դուք դիտե՞ք ովքեր են բոլշևիկները և ինչի՞ համար են նրանք պայքարում»:

Վո՞րտեղից եր վերցնում խոսքերն այդ աղջիկը: Նրա աչքերը վառվում էին, թվում եր, նա բոլմամարդ մխիթարում և դոնվում: Մնացյալ ընկերները լուռ էին: Լուռնի կանաչ-վուն լույսով լուսավորված նրանց դեմքերը մեռելային դունա-տություն ունեին: Կազակները լուռ էին առանց ընդհատե-լու:

— Դուք մեզ կսպանեք: Բայց դրանով ի՞նչ կստանաք,— հնչում եր Անյայի ձայնը:— Խորհրդային իշխանությունը, մի-անպես է, դոյություն և ունենալու և ի՛լ ավելի չի ամրապնդ-վելու: Միայն հավիտենական նախատինքն և լինելու ձեր խղճի վրա, որ դուք սպանեցիք նրանց, ով պայքարեց և մեռավ ձեր հակ աշխատավորական շահերի համար... Մենք ի՞նչ թշնամի չենք ձեզ: Ցես, ահա, դեռ բոլորովին չերիտասարդ եմ, նոր եմ միայն ապրել սկսում: Ցեթե կարող եք, կրակեցեք:

Այն ժամանակ կազակներից մեկն իջեցրեց հրացանը և դառ-նալով մյուսներին՝ ասաց.

— Ցես չեմ կրակի:

Մյուս կազակը դառնալով մյուսների կողմը, հռնչաց.

— Ցես ել չեմ կրակի:

Նրանք լուռ ցած իջեցրին հրացանները:

Այն ժամանակ պատգամավորներից մեկը՝ Դոլորկոն՝ դիմեց նրանց.

— Ընկերնե՛ր, բաց թողեք մեզ: Այստեղից չերեք վերստ վրա կայարդան է: Մենք կես ժամից այնտեղ կլինենք: Իսկ դուք կրակեցեք ոդում և վոչ վոք վոչինչ չի իմանա:

— Վոչ, մենք այդ անել չենք կարող,— ասաց կազակներից մեկը:— Մեզ կդնդակահարեն:

Կազակները շատ չվոխված դեմք ունեին: Ցերևում եր, վոր նրանք և՛ բոլշևիկներին էին ակտոստում, և՛ պատիակներից էին վախենում, և այդ ամբողջ գործը նրանց սրտովը չէ:

պատգամավորներին հետ տարան Ջմեյկ: Ճանապարհին նրանք շատ խոսեցին կազակների հետ:

Առաջին անգամ, հավանորեն, այդ կազակները լսեցին բոլշևիկյան ճշմարտությունը: Դոլորիկոն այնպես լավ և այնպես պարզ եր բացատրում: Կազակներն ուշադիր լսում էլին, հարցեր էլին տալիս, և, յերևում եր, վոր նրանք շատ են զարմացած: Ճերբ մոտեցան վարչության մուտքին, դռները լայն բաց էլին: Դռան մոտ պահակ եր կանգնած:

— Մենք չենք ուզում կրակել,— ասացին նրան կազակինները: Պահակը զարմանքով նայեց, չուռ յեկավ և ներս գնաց վարչություն: Մի քանի րոպեյից բոլորին ներս կանչեցին:

— Ինչո՞ւ դուք վերադարձաք,— հարցրեց գնդապետ Կիբիտովը կազակներին:

— Մենք չենք ուզում կրակել,— պատասխանեցին նրանք:

Կիբիտովը մորակով զայրացած խփեց կոշիկի ճակին և, լռելուց հետո, դուսպ ասաց.

— Դուք ազատ եք:

Կիբիտովը նշան արեց յերկու սպայի: Նրանք դուրս գնացին նրանց հետևից: Հետո նա դարձավ մնացած սպային և հարցրեց.

— Իսկ դուք ինչպե՞ս:

— Լսում ենք, պարոն գնդապետ,— պատասխանեց սպան: Մի քանի սպայի ազդանուն տալով՝ Կիբիտովը կազակներ ուղարկեց նրանց հետևից:

Բոլոր պատգամավորները կանգնած էլին սրտաբեկ, վրդովհետև հասկանում էլին, վոր այդ հետաձգումը գործը չի փոխում: Հանկարծ Բլումենտալը սեղմած բռունցքներով հարձակվեց Կիբիտովի վրա ու գոչեց.

— Տվեք մեզ Պաշկովսկու դիակը: Տվեք մեզ մեր ընկերներին:

Շատ ցավալի յեր նայել նրա դունատ դեմքին, նրա լարված, փխրուն, մատաղահաս կերպարանքին: Կիբիտովը քմծիծաղով ասաց, վոր ընկերները գտնվում են Ալեքսանդրովսկում:

— Ահա դուք կգնաք և այնտեղ կհանդիպեք նրանց...

Դրանից հետո նրանց բոլորին տարան հավևան փոքրիկ սենյակը: Մի ընդմիջման հետև սպիտակները յերկար ու համառուկ

խոսում էին ինչ վոր բանի մասին։ Վորոշ ժամանակից հետո երիտասարդները դուրս եկան ընկերների մոտ, նրանց ներկայացրին Ռոստովին, Նեյմանին և Բլումենտալին ու հայտարարեցին նրանց.

— Դուք կդնաք Ալեքսանդրովսկ հարցաքննության։

Մինչև Ալեքսանդրովսկ վոչ մեկը չհասավ. ոպանները ճանապարհին բոլորին ձերբակալեցին։

Ի

Ռ. ԿԱՐՏԱՇՈՎԱ

ՌՈՍՏՈՎՑԻՆ ԸՆԴՀԱՏՎԱԾ ԿՈՒՄ

նքնակալության տապալման լուրը Ռոստովում, Առամոլովի ծխախոտի գործարանում առաջվնց յերեկոյան կազմը։

Ընկերների հետ միասին յես վազեցի գործանոցները։ Այնտեղ բոլշևիկները զինվորներին սրդին հայտարարել էին հեղափոխության մասին, ցարական կառավարության տապալման մասին։

Բանվորները և մենք, բանվորուհիները, ամբողջ յերեկո խոսեցինք զինվորների հետ և կոչ արինք նրանց՝ մյուս որը միանալ մեր ցույցին։

Այդ որերին մեր գործարանում միտինգներ էին դնում։ Ճեղուչներ էին ունենում զանազան կուսակցությունների հռետորներ, նույնիսկ կադետները— նրանք էլ էին ճառարանում։

Հիշում եմ, առաջին խորհրդի ընտրությունները մեր գործարանում շատ բուռն էին։ Վոմանք ասում էին՝ պետք է ընտրել բոլշևիկներին, մյուսները բացականչում էին՝ մենշևիկներին։ Մենշևիկներն իրենց խայտառակ էին պահում՝ աղմուկ էին բարձրացնում, սուլում էին, անկարգություններ էին անում։

Ռոստով-Նախիջևանյան խորհրդում ընտրվեցին տասներկու բոլշևիկ, մենշևիկներ՝ ավելի։ Դա տասնյոթ թվի մարտին եր։

Հիմնական հարցը, վորի շուրջն այն ժամանակ խորհրդում լարված պայքար եր գնում, պատերազմի հարցն եր։

Մեզ հեռախոսով շարունակ խորհրդի արտակարգ նիստ էին հրավիրում։

Տասնյոթ թվի մայիսին Ռոստովում մեծ դեպքեր տեղի ունեցան։ Սև ամպեր էին շարժվում Դոնի վրա։

Տասնյոթ թվի մայիսի քսան վեցին կալեդինը հանդիսավոր պատրաստվեց առաջան։ Բոլշևիկները հարկադրված էին պայքարել կազակային հակահեղափոխության և ժամանակավոր կառավարության աղնուրայի՝ կոմիսար Զևելևի և մենշևիկներից ու էսերներից կազմված նրա չքախմբի դեմ։

Մենշևիկները հասկանում էին ինչ վտանգ է պալիս դրծարաններից ու զորանոցներից և պահանջում էին զինվորներին ռազմաճակատ ուղարկել։ Ներանք ասում էին.

— Պետք է զինվորներին հարկադրել կռիվ գնալու։

Մենշևիկների ճնշման տակ խորհուրդը վորոշում ընդունեց՝ 249-րդ գունդը ճակատ ուղարկել։ Բայց վոչ մեկը հակառակ չդուրս եկավ։ Տասնյոթ թվի ոգոստոսի տասնչորսին զինվորները բանվորների հետ միասին դուրս եկան ցույցի։

Ցերեկ սեպտեմբերի քսանվեցին Ֆաբրիկա-գործարանային կոմիտեների համաքաղաքային ժողովում կարմիր գվարդիայի պետն ընտրվեց բոլշևիկ, բանվորները մեծ բազմությամբ մտան բանվորական ջոկատները։ Ցես էլ գրվեցի ջոկատում։

Հոկտեմբերին յես մտա նոր բոլշևիկյան խորհրդի մեջ։

Դժվար և մռայլ նոյեմբերի քսանհինգի լույս քսանվեցի սոսկալի գիշերը, յերբ գեներալ Պոտոցկու սպիտակ ավազակները հարձակվեցին խորհրդի վրա և սպանեցին ընկեր Կունդին ու կաղբերյուկին։

Սդո մխիթարում բանվորները յերդվեցին վրեժ լուծել ընկերների մահվան համար։

— Կորչի կալեդինշչինան։ Կեցցե՛ խորհուրդը,— հնչում էր ամեն կողմից։

Մխիթարը ղեկավարում էին բոլշևիկները։

Ցորը աշնանը հեղկոմը կարմիր գվարդիայի վերակառուցում անցկացրեց։ Մենք այդ ժամանակ դիրքերում էինք՝ ատամնատանում, սպանդանոցի մոտ։ Մեզ մոտ յեկավ հեղկոմի պատգամավորը։ Մենք բոլորս հավաքվեցինք սպանդանոցի բակում և լսեցինք նրա հաղորդումը։

— Մեղ հարկավոր է, ընկերներ,— ասաց հեղկոմի ներկայացուցիչը,— այնպես ամրապնդել կարմիր դվարդիան, որ նա կարողանա պաշտպանել բանվոր դասակարգի իրավունքները ու ջախջախել կալեդինի գործերը, որոնք իրենց արյունոտ թաթերը պարզում են Ռոստովի վրա:

Հենց այդտեղ էլ տեղի էր ունենում բանվորների ոժանդակ խմբերի կազմակերպումը: Կարմիր դվարդիական ջոկատներն էլին դրվում վոչ միայն տղամարդիկ, այլև կանայք: Մեր դործարանի բանվորուհիներից չատերը մտան ջոկատները, վորպես սանիտարուհիներ, քույրեր:

Հիվանդ, վիրավոր զինվոր–ճակատայիններն էին թողնում էլին հիվանդանոցները և նույնպես մտնում կարմիր դվարդիայի շարքերը:

Մենք պաշտպանում էլինք Ռոստովը: Հակառակորդը դրավեց Նախիջևանի կիսակայարանը: Կռվի ժամանակ մենք՝ քույրերս ու սանիտարուհիներս՝ առաջավոր շարքերումն էլինք դրսնվում և մեր վիրավորներին դուրս էլինք բերում ուղղակի կրակի միջից: Մեր առաջին վիրակապման կետը դտնվում էր սպանդանոցում:

Ցերբ կռիվն սկսվեց, բանվորուհիները նետվեցին առաջավոր դիրքերը: Ձորս կողմը՝ վորտա, հրաձգություն, աղաղակներ, հառաչանք ու մահ: Առաջ ենք դնում: Մարտիկներն զգուշացնում են մեզ, ձայն են տալիս՝ «Գլուխներդ ցած պահեք, կռացեք»: Վերցնում ենք վիրավորներին, դնում ենք պատրաստակների վրա: Թշնամին, ըստ յերևույթին, մեզ նկատեց և սկսեց դնդակ տեղալ:

Վիրավորներին մենք փոխադրում էլինք առաջին պատահած տունը, վաթաթում էլինք վերքերը և ուղարկում դլխավոր կետը՝ սպանդանոց, իսկ հետո նրանց տեղավորում էլինք հիվանդանոցներում:

Կալեդինականների հետ ունեցած այդ կռիվներում մի քանի կուսակցական ընկերներ սպանվեցին: Ընկած հերոսներն թաղմանը Ցեկատերինոդարի կուսակցական կոմիտեն դործուղել էր մի ընկերոջ: Բայց Ցեկատերինոդարի դնացքն ուշացավ, յեկավ արդեն թաղումից հետո: Հիշում եմ, ինչպես պաշարված Ռոստովի մութ փողոցներով մենք Ցեկատերինոդարից յեկած ընկեր-

րոջ հետ գերեզմանատուն հասանք, վորպեսզի ընկած ընկերների գերեզմանների վրա յեկատերինոդարյան բոլշևիկների վերջին հրաժեշտի մակագրություններով ժապավենները դնենք:

Հուհվը վերջացավ: Այս անգամ մենք հաղթվեցինք, սպիտակները հաղթեցին: Մեզ մոտ, Ամոլովյան ծխախոտի գործարանային կոմիտեի յեկան մենշևիկները:

Ինձ և պրոֆմիությենական աշխատանքում յեղած մյուս ընկերներին նրանք չարախնդորեն հայտարարեցին.

— Կարող եք հեռանալ, մենք պրավում ենք ձեր տեղերը:

Մենք հեռացանք, բայց շարունակում էինք ընդհատակյա աշխատանքը ցեխերում: Մեր գործարանում բոլշևիկյան կազմակերպության մեջ տասներկու մարդ կար: Մենք հավաքվում էինք անլուսին:

Ձերբակալված և սպանված ընկերների ընտանիքները մնացել էին անխնամ: Մենք տնե-տուն ընկած, նվիրատվություն էինք հավաքում և տալիս այդ ընտանիքներին: Բանվորներն ավելի ու ավելի հեռանում էին մենշևիկներից: Մեկ անգամ մի մենշևիկ յեկավ մեր գործարանը: Մխինդ հավաքելով, նա սկսեց կարվից դուրս գալ.

— Պատերազմը պետք է շարունակել: Պատերազմը վերջացնենք, այն ժամանակ Սահմանադիր ժողով կընտրենք:

Բանվորներն սկսեցին դոշել.

— Մենշևիկ: Կորչի՛ր: Դուրս: Փա՛չ տուր նրան:

Հաղիվ դուրսն ազատեց:

Մեր գործարանը բոլշևիկորեն եր տրամադրված:

Տասնութ թվի վեսնովարին Ռոստովը կրկին դրավվեց կարմիրների կողմից:

Առաջին հերթին մենք— տերերից վերցրինք ֆաբրիկներն ու գործարանները, բանվորական հսկողություն սահմանեցինք, ամեն տեղ մեր մարդկանց դրինք: Մենք ամրապնդում էինք Խորհրդային իշխանությունը:

Մայիսին քաղաքը գրավեցին սպիտակները և գերմանացիները: Կրասնովն ամրացավ Ռոստովում: Մերոնք նահանջեցին: Մի մասը մնաց Բատայսկում, մնացյալներն անցան առաջ: Մեկ ամսից մերոնք թողեցին Բատայսկը:

Սպիտակ գվարդիականները Բատայսկը բանվորների արյու-

նավ ներկեցին. գնդակահարում էին, սրախողխող անում, կո-
տորում, կախ տալիս...

Ռոստովից նահանջելուց առաջ ինձ կանչեցին հեղկոմ և ա-
սացին.

— Մնա այստեղ, քո բնակարանը կլինի հայտի բնակարան:
Գալ կպահպանես:

Ես համաձայնվեցի: Աշխատանք շատ կար:

Առաջինն ինձ մոտ յեկավ մի ընկեր, Դոնի բյուրոյից:

Գործարանում անհանդիստ եր: Գործարանատերը, ոգովն-
չոյվ այն բանից, վոր այժմ իշխանությունն իր ձեռքումն է,
սկսեց հետացնել բանվորներին: Մենք գործադուլ արինք: Գոր-
ծարանատերը մեզ առաջարկեց բոլոր բանվորուհիներին թողնել
լրկեցրած աշխատավարձով: Մենք դրան համաձայնվեցինք: Գոր-
ծադուլային կոմիտե ընտրեցինք և խաղաղ գործադուլ ըն-
կըսեցինք: Այն ժամանակ գործարանատերը մեզ դուրս շպրտեց
գործարանից: Մենք գործարանների հետևը մնացինք տասներկու որ
և գործարանատիրոջը կրկին նույն պահանջները ներկայացրինք:
Մեզ հայտարարեցին, վոր արդեն բանվորներ են հավաքել, բայց
այդ բանվորներն ասում էին.

— Մենք չենք աշխատում, մենք մեխեր ենք գցում մեքե-
նաների մեջ: Անճնատուր մի յեղեք,— և մեզ էյին տալիս հա-
վաքած գրամները: Մեզ ոգնում էյին նույնպես և Մաքսար
գործարանի գործադուլ արած բանվորները:

Գործադուլի տասներեքերորդ որը մեր պահանջները բավա-
րարվեցին:

Այդ ժամանակ եր, վոր բոլշևիկների ազդեցության տակ
յեղած Մաքսիմովի գործարանը գործադուլ արեց:

Այդ գործարանի հետ մենք մեծ կապ ունեյինք: Ճերը վա-
րվել գործարան գործադուլ եր անում, մենք գրամ եյինք հա-
վաքում, գնում էյինք այնտեղ, կանչում. եյինք ղեկավարին,
տալիս եյինք փողն ու խոստանում մեր ոգնությունը:

— Միայն թե անճնատուր մի յեղեք, դիմացեք,— քաջա-
լուսում եյինք մենք բանվորներին:

Դենիկինչչինայի ժամանակ կուսակցությունն ինձ ուղարկեց
գյուղացիների մոտ՝ կոչեր բաժանելու: Հարկավոր եր տարա-
ձել դենիկինյան զորահավաքը:

Գյուղացու նման հագնվեցի ու գնացի Կոյալ և Կուլինովկա գյուղերը:

Թուրգիկները դրեցի պայուսակը, ծածկեցի տոպրակով, վերևից կարտոֆիլ լցրի, շաքարի վաթնեղներ դրեցի, իբրև թե նվերներ են տանում գյուղ:

Սովորաբար այսպես էր լինում. դառնալով գյուղում հարկավոր մարդուն՝ ասում էս պարոլը՝ «Ես «ԿՍ» ծխախոտ եմ բերել»: Նա ձեղ էր տուն և տանում: Այդ ժամանակ ավելում էր մեր համառեղ աշխատանքը: Գյուղացին ոգնում էր ինձ հայտնաբերել զորակոչի ենթակվածներին և գյուղացիների մեջ տարածել կոչերը: Գործը վերջանում էր նրանով, որ յես վերցնում էի ընկերների անձնագրերն ու վերադառնում: Ռոստովում մենք պատրաստում էինք հարկավոր փաստաթղթերը և յես կրկին նույն ձևով գրանք գյուղ էի տանում: Այդ փաստաթղթերով չերիտասարդությունը զորակոչի ենթակա չեր լինում:

Այսպես մենք «ոգնում» էինք Դոնիկինին դիմակոչ անելու:

Մեր տպարանը նախիջևանում տապալվելուց հետո, իմ բնակարանը բերեցին գրամեքենա, թուրգիկներ, զենք և ինձ մոտ ապագրեցին «Կազակներին» կոչը: Ընկերներ էին գալիս և յես այդ կոչերը հանձնում էի նրանց:

Բացի հայտ–բնակարանից, այժմ ինձ մոտ էր դառնում նաև ընդհատակյա տպարանը: Կոչերը տպագրում էր Սամբեյովը, վորը սպանվեց Գեղեզիկում:

Ամենից ծանրը դավաճանությունն էր...

Ցերբ մեր շարքերը պրովոկատոր էր թափանցում, շատ ընկերներ էին զոհվում:

Տաճինենը թվի վերջերում, յերբ կարմիր բանակը մոտենում էր Ռոստովին, կարմիր–հանաչներից մեզ մոտ յեկան վեց տղա՝ զենք և դրամ առանալու: Մենք նրանց զենք տվինք:

Կուսակցական կոմիտեն պահանջեց, վորպեսզի նրանք անհապաղ վերս դառնան, վորովհետև ձերբակալությունները Ռոստովում ուժեղացել էին:

Տղաները չլսեցին, մնացին Ռոստովում և գնացին կրկես: Իսկ նրանց հետևում էին:

Նրանց մասնում է պրովակատոր Աբրոսիմովը: Հուզմունքը դնում են նրանց բնակարանն ու բոլորին ձերբակալում:

Իմանալով, որ մեր տղաները ձերբակալված են, ես վազեցի մեր ընդհատակյա ընկերներից մեկի՝ Իոմանենկոյի մոտ. նա նույնպես ընդհատակյա հայտ ուներ: Պարզվեց, որ նախորյակին ապխտակ պվարդիականները ձերբակալել էին նաև Իոմանենկոյին:

Բոլոր ձերբակալվածները նստած էին հետախուզության: Ինձ հաջողվեր էր իմանալ, թե ո՛ր քննիչին են յուրաքանչյուր ընկերներ Մաքսիմովիչը և Իոմանենկոն: Ես գնացի հետախուզական բաժինը և կարողացա անձնական հանդիպում ունենալ Մաքսիմովիչի հետ: Դա արժեցավ յերկու հարյուր հիսուն հաղար ռուբլի: Մաքսիմովիչն ինձ ասաց, որ իրենք 8-րդ թաղամասի քննիչին են յուրաքանչյուր: Գնում եմ այնտեղ, քննիչի մոտ և սկսում եմ ձերբակալվածների համոզել, պնդում եմ, թե նրանք ճակատագրին են, պարզվատրված են Գեորգիևսկի խաչերով, այսպես յեկել են ժամանակավորապես, չեմ հասկանում ինչու յին ձերբակալել և հավատացած եմ, որ դա թյուրիմացություն է:

Թաշկինակով մաքրում եմ աչքերս ու աղաչում եմ քննիչին.

— Նրանց ինձ տվեք յերաշխավորությամբ:

Քննիչը համաձայնվում է և պահանջում է Իոմանենկոյի համար ութը միլիոն, իսկ Մաքսիմովիչի համար՝ տասներկու միլիոն: Նա ինձ, ի դեպ, հարց է տալիս.

— Իսկ դուք ովտեղի՞ց եք վերցնելու այդ դումարը:

— Ես տուն ունեմ, դրամ կդնեմ,— պատասխանեցի յես:— Գրամ կդնեմ բոլորը, ինչ ունեմ, բայց աղջիկաններիս յերաշխավորությամբ կվերցնեմ:

Իոմանենկոն և Մաքսիմովիչը հարազատներ ունեին, բայց նրանք հրաժարվեցին նրանցից:

Ես հեռացել, յերբ Իոմանենկոյին և Մաքսիմովիչին բանտ տարան: Գնացի նրանց հետևից: Պահակները փոքրիկ, թուլակազմ մարդիկ էին, լավ որ հրես, հրացանը վերցնես— պատրաստ է:

Բայց վոչ վոք չեր վճռում այդ անել:

Իոմանենկոյի համար դրամ մուծվեց, նրան կարողացանք

ազատել. Մաքսիմովիչի համար ալիսի նրա կինը դար, բայց նա չեկավ։ Մյուսներին ազատել չկարողացանք, որովհետև սկսվեց ապխտակաների եվակուացիան։ Վոչինչ անել չեր կարելի։ Ապխտակները հեռանալուց առաջ վոչնչացնում էին քաղաքացիաններին։

Մահապատժից առաջ չես մոռեցա բանտին և սկսեցի չըքշել լուսամուտի տակ։ Մաքսիմովիչն, ըստ յերևույթին, ինձ տեսավ, որովհետև ինձ հասան նրա խոսքերը.

— Մնաք բարև, մենք այլևս չենք հանդիպի, մենք արդեն դատապարտված ենք։

Առավոտյան չես իմացա, որ ընկերներին կախել են։ Մաքսիմովիչին կախել էին քաղաքում, Վոլոցկոյում՝ Նախիչևանում, 20-րդ գծի վրա, իսկ Բոնդարենկոյին՝ կայարանում։ Սևերնյովը կախված եր թատրոնի մոտ։

Մեռան ընկերները, չազրեցին մինչև մեր հաղթանակը։

★

Քառասուվ հունվարի ութին, յերեկոյան ժամը յոթին կաթվիր բանակը նորից մտավ Ռոստով։ Այժմ արդեն Խորհրդային իշխանությունը վերականգնվեց ընդմիշտ։

Ահա այդ ժամանակ եվ հենց չես տապալվեցի վորպես կազմակերպիչ։ Կոմիտեի կողմից ինձ առաջադրված եր դիմավորում կազմակերպել ընկեր Բուդյոննու հեծելազորին՝ յերթուղությամբ։ Մենք կարծում էինք նրանք կգան Տագանրոգի կողմից, այնինչ բուդյոննովյան զորքերը մտան Նախիչևանի ուղղությամբ— իմ յերթուղությունն անգործադրելի մնաց։

Ընկերներ Վորոշիլովը և Բուդյոննին չեղան մեր զորաբանակում։

Դժվար է հաղորդել այն վոգևորությունը, խանդավառությունը, վոր ընդգրկեց մեր բանվորական կոլեկտիվին այդ ցնծագին և վաղուց սպասվող հանդիպման ժամանակ։

Զ. ՊԱՏՐԻԿԵԵՎԱ

ՄԱՐՏԱԿԱՆ ՈՒՂԻՆ

Իշում եմ, ինչպես յես, տասնինները տարեկան մի աղջիկ, ընկա Շեհատերինոսլավի փողոցները, մեն-մենակ, քաղցած և առանց մի կոպեկ ունենալու դրպանումս։ Ճեռ վիախել եյի Նիկոլայեվից, ուր աշխատում եյի ծխախոտի գործարանում։ Բաղաքը գրաված գերմանացիներն աչ ու ձախ չնդունհարում եյին անզեն բանվորներին։ Այդ տասնութ թվի ամառն եր։

Բաղցն ինձ ավելի ու ավելի յեր տանջում։ Կենտրոնական փողոցներից մեկում յես կանգ առա մի մեծ հրուշակեղենի խանութի ցուցափեղկի առաջ։ Ինչե՛ր ասես չկային այնտեղ։ Տորթերի լեռներ, ամեն տեսակ թխվածքներ, կարմիր տուփերով շոկոլադ։ Թուքս կուլ տալով, յերկար կանգնել եյի ցուցափեղկի առաջ, ուժ չունենալով կտրվել այդ աքանչելի անուշեղենից։

— Ձի՛ք ցանկանում արդյոք վաստակ ունենալ,— հանկարծ լսեցի ականջիս տակ մի տղամարդու ձայն։ Իմ առաջ, ժպտերը դեմքին կանգնած եր սննդանոթի մի մարդ։ Դուրս յեկավ, վոր նա Ռուսաստանի հրուշակեղենի գործարանի համար բանվորներ հավաքագրող է։ Նկատելով իմ քաղցած տեսքը, նա խնդուն ըմբռնեց եր բանի եյությունը։ Իհարկե, յես ուրախությամբ համաձայնվեցի։

Հավիտենապես մնացել է հիշողության մեջ այդ գործարանը։ Ինձ տրվեց ամենածանր աշխատանքը՝ պատռել ծանր, յոթ փթանոց թմբուկը, վորի մեջ խանձվում եր կակաո,— մեծ, կլինամանափուչն հումաներ։ Դրանք բերում եյին Հարավային Ամերիկայից կամ Աֆրիկայից։ Տաժանակիր աշխատանք եր։ Առավոտից մինչև յերեկո ձեռներով պատռում եյին թմբուկը։ Ծռվում ու ոնքում եր մեջքս, պորտաթաղ եյի լինում։

Դիշերը քնելու պատկերս ու թևերս անդադար էին։ Ամենից տանջալիցն առավոտներն արթնանալն էր, երբ ուժգին զանգերն արթնացնում էին բանվորներին քախտերից ու գլուխ անիծյալ աշխատանքին։ Ամբողջ կյանքս մնացել էր։

★

Գեղյուրականները մոտեցան Դնեպրին և, կանգ առնելով դեմի մյուս ափին, հրետանային ծանր արկեր թափեցին Ճևկատերինոսլավի վրա։

Աշխատավոր բնակչությունը թաղնվեց նկուղներում, ամենից համաթձակները հրացան վերցրին։ Ռուսակաների դործարանը կանգ առավ։ Բանվորները վախան։

Քաղաքի ոստիկանությունը ժամ-ժամ սատկանում էր։ Թնդանոթները խփում էին բանվորական ծայրամասերին։ Ցորս կողմն ամեն ինչ վորոտում էր, ծխում, անջում... Մենք սարսափահար վախանք, ուր կարող էինք, միայն քիչ հետո նայինք կրակից։ Մենք տատնհինդ հոգի էինք։

Չեմ հիշում ինչպես դուրս յեկանք Ժուրավլյովկի ծայրամասն ու անցանք յերկաթուղային թումբը։ Այդտեղ ամբակոծությունը թույլ էր։ Ճանապարհին խորունկ ձորի հանդիպեցինք։ Տղամարդիկ՝ տատնչորս հոգին՝ հաղող իջան ցած ու բարձրացան հակադիր ափը, իսկ յես մնացի մենակ։ Կախվեցի ափի ժայռից, վոչ մի կերպ բարձրանալ չեմ կարողանում։ Ինչքան ուժ ունեմ, աղաղակում եմ ու լաց լինում, բայց աղմուկը չեն լսում, ավելի ու ավելի առաջ են վազում։ Ձեռներս թուլանում էին, ահա-ահա կգլորվեմ ձորը... Բարեբախտաբար, մոտակայքում մի խրճիթ կար, ուր մի ծեր գյուղացի յեր ապրում։ Ըստ յերևույթին, նա լսեց իմ աղաղակներն ու շտապեց ոգնության։

— Աղջիկս,— ասում է վերևից դողդոջուն ձայնով,— իմ վորդուն հենց հիմա սպիտակները գնդակահարեցին։ Ձեռքդ տուր, ոգնեմ։

Դուրս քաշեց ինձ ձորից և ցույց տվեց հետևն.

— Ձերոնք ահա այն կողմը վազեցին։ Փախիր չտեսով, քեզ չեն քեզ էլ կսպանեն։

Մի կտոր հաց տվեց ինձ ու հետ գնաց խրճիթը, իսկ յես

ակռեցի վախչել յերկաթգծով: Մխոյն մոտիկ գյուղում, վերջապես, հասա ընկերներիս: Նրանք արդեն սկսել էին անհանգստանալ իմ մասին և շատ ուրախացան, յերբ տեսան, վոր յես կենդանի յեմ ու անվնաս:

★

Այնուհետև մենք, բոլոր տառնհվնդ հրուշակագործներս, գնացինք վոտքով: Տղաներին ինչ վոր մի տեղ հաջողվեց գնեք ճեռք բերել:

— Վերադառնալ մենք չենք կարող,— ասաց մեր ավագը:— Հետևում՝ մահ և, իսկ առջևում՝ անորոշություն: Եկեք ուրեմն լավը վորոնենք— կենդանի մարդը միշտ կյանք և վորոնում: Մարտական ջոկատ կունենանք մենք: Զինվենք, տղայք, հասնենք գյուղ, այնտեղ էլ խմբակ կհավաքվի: Ուղիղ ճանապարհով չարժվենք արևելք և միանանք բոլշևիկներին:

Այդպես էլ վորոշեցինք:

Հասանք ինչ վոր փոքրիկ գյուղ հոգնած, քաղցած: Գյուղացիներից խնդրեցինք մի բան տան ուտելու: Մեզ հարցրին.

— Դուք բոլշևիկների՞ կողմն եք, թե՞ սպիտակների:

— Մենք բոլշևիկների կողմն ենք, փախչում ենք սպիտակներից:

Այն ժամանակ մեզ գյուղում կերակրեցին կարտոֆիլով ու հաղամբով: Գյուղացիները հաց չունեին:

Այդպես մենք շատ որեր գնում էինք, կերակրվելով գյուղերում: Գյուղացիները հաճախ հարցնում էին ինձ.

— Աղջի, ո՞ւր ես գնում դու դրանց հետ:

Ես առաջարկում էին մնալ իրենց մոտ: Բայց յես չեյի մնում, այլ իմ ջոկատի հետ գնում էի առաջ ու առաջ, դեպի արևելք:

Մինչ այդ. Եկատերինոսլավում մեկ իշխանություն փոխում էր մյուսին: Եկևաց բանդիտ-մարդասպան Մախնոն: Սպիտակ բանդաները վխտում էին վոչ միայն մեր հետևում, այլև առջևում: Մի քանի անգամ մենք ճեղքելով անցանք հակառակորդի փակոցները:

Մեկ անգամ հանդիպեցինք մեզ նման մի պարտիզանական

Լոկատի ու մյացանք նրանց և մյասին չարժվեցինք Դոնբաս։ Դրանք իմ հայրենակիցներն էին՝ լեհատերինոսլավցիներ։ Ջոկատը ղեկավարում էր մի հին բոլշևիկ՝ Ռուսաններն զործարանն էր վարպետ։ Տեսնելով, որ յես պատրաստ եմ ամեն տեսակի դրկանքների և պարտիզանական կյանքն ինձ համար սարսափելի չէ, նա սկսեց ինձ պատասխանատու հանձնարարություններ տալ։ Ամեն անդամ, յերբ մենք մոտենում էինք վերևի դյուղի, մեր հրամանատարն ուղարկում էր ինձ՝

— Գնա, աղջիկս ,այնտեղ, իմացիր ովքեր են։ Մեկին ըղդուշ յեղիր։

Յես գնում էի դյուղ, տեղեկանում էի ինչ հարկավոր էր և վերադառնում էի զեկուցումով։

Մեզ հաջողվեց դյուղացիներից ճիշտներ ստանալ մեզ համար։ Մեր ջոկատը դարձավ հնծյալ։ Մենք արդեն հարյուր հոգի էինք։ բոլոր դյուղերից, որտեղով անցնում էինք, դյուղացիներ էին միանում մեզ։ Յես էլ ձի ստացա, թեպետ ձի նստել չգիտեյի։ Սկզբում դժվար էր ձի նստել սովորելը, վոտներս ցավում էին։ Բայց յես, թեպետ և ձի նստել չգիտեյի, այնուամենայնիվ ձիուց վայր չեյի ընկնում։ Մարտիկները սիրում էին ինձ նրա համար, որ յես աշխատում էի տղամարդկանցից հետ չմնալ և խիստ հնծելակ էի դառնում։

Այն ժամանակ յես դեռ շրջազդեստ էի հագնում՝ լայն, դյուղական։ Տարօրինակ էր թվում յես երևի դյուղացիներին և դեղջկուհիներին. նրանք սովոր չեյին կին–մարտիկ տեսնելու։

Վոմանք ծիծաղում էին ինձ վրա, իսկ վոմանք ատում էին.

— Նրանց հետ մի գնա, կսպանեն քեզ։ Մնա այստեղ։ Դա աղամարդու դործ է, և վո՛չ կնոջ։

Յես նրանց վոչինչ չեմ ասում։ Թքանում եմ ձին և սլանում առաջ, հասնում ընկերներիս։

Մենք ճանապարհ էինք վորոնում Բուդյոննու մոտ հասնելու, վորի մասին լուրեր էին պատվում տափաստանում։ Գտնում էին, վոր նա բանվորների, չքավորների հետ է գնում և հնծյալ ջոկատներ է հավաքում Դենիկինի դեմ։

Հիշում եմ, ինչպես մենք անցանք Դոնի տափաստանները, խուսափելով սպիտակներից, ինչպես հասանք Հյուխայի կոմ-

կաս, ինչպես պատւոյտ եղինք գալիս Գլատովսկայա առանձնացքի՝ Բուդյոննոս հայրենիքի չուրջը, մինչև, վերջապես, գտանք Սեմյոն Միխայլովիչի Զոլատան ու մեացանք նրան։

★

Այն ժամանակ բուդյոնիականները դեռևս այնքան էլ կապմակերպված մասսա չէին ներկայացնում, հաշնված էին մի հնդով, տարբեր տեսակների ձիեր էին հնծած։ Ինչ վոր խլում էին հակառակորդից, նրանով էլ զուգվում էին, մեկայն նրանով էլ անվում։

Մեր մասում մեկայն յես էի կին՝ ծխախոտագործ, մանածագործ, հրուշակագործ։

Ինձ ավելին ամենավատ ձին։ Շատ անպետք ձի էր։ Գատահում եր, մեր Զոլատան առաջ է սլանում, իսկ յես բոլորից հետ եմ մնում։ Շատ վիրավորական եր դա ինձ համար։ Նկատեց այդ բանը Սեմյոն Միխայլովիչը, սկսեց տղաներին կշտամբել.

— Ի՛նչ, վորովհետև նա կին է, դրա համար էլ ամենից անպետք ձի՞ն եք տվել...

Կանչեց ինձ իր մոտ.

— Անունդ ի՞նչ է։

— Զինա։

— Թող նա այսորվանից լինի Զինովիյ։ Ցեվ նրան տվեք լավ, արագավազ ձի, վորպեսզի հետ չմնա, այլ առաջին շարքերում լինի։

Անմիջապես ինձ մի աքանչելի ձի տվին՝ սևաթույր, բարձրահասակ, հայտատ, լավ թամբած։ Հնծա յես սևաթույր ձին և այդ որվանից դարձա վոչ թե Զինա, այլ մարտիկ Զինովիյ։ Իմ լավն ընկերուհիները յերկու մասի բաժանեցին, կռճակներ կտրեցին, անդրավարտիկի նման մի բան ատացվեց, ձի նստելու համար հարմար։ Գաշտանոցական դույնի շինել տվեցին ինձ, վուշիս, յերկարաճիտ կոշիկներ։ Արտաքինից դարձա յերևելի հնծելուկ, մարտիկ՝ կռվի մեջ և դիմացի քույր՝ կռվից հետո։

Ինքը Բուդյոննին բոլորիս համար ամենից մոտիկ ընկերն եր։ Յես հաճախ եմ նրա հետ պրոհի գնացել։ Հաղիվ եր կը-

կաս, ինչպես պատւոյտ եղինք գալիս Գլատովսկայա առանձնացքի՝ Բուդյոննոս հայրենիքի չուրջը, մինչև, վերջապես, գտանք Սեմյոն Միխայլովիչի Զոլատան ու մեացանք նրան։

★

Այն ժամանակ բուդյոնիականները դեռևս այնքան էլ կապմակերպված մասսա չէին ներկայացնում, հաշնված էին մի հնդով, տարբեր տեսակների ձիեր էին հնծած։ Ինչ վոր խլում էին հակառակորդից, նրանով էլ զուգվում էին, մեկայն նրանով էլ անվում։

Մեր մասում մեկայն յես էի կին՝ ծխախոտագործ, մանածագործ, հրուշակագործ։

Ինձ ավելին ամենավատ ձին։ Շատ անպետք ձի էր։ Գատահում եր, մեր Զոլատան առաջ է սլանում, իսկ յես բոլորից հետ եմ մնում։ Շատ վիրավորական եր դա ինձ համար։ Նկատեց այդ բանը Սեմյոն Միխայլովիչը, սկսեց տղաներին կշտամբել.

— Ի՛նչ, վորովհետև նա կին է, դրա համար էլ ամենից անպետք ձի՞ն եք տվել...

Կանչեց ինձ իր մոտ.

— Անունդ ի՞նչ է։

— Զինա։

— Թող նա այսորվանից լինի Զինովիյ։ Ցեվ նրան տվեք լավ, արագավազ ձի, վորպեսզի հետ չմնա, այլ առաջին շարքերում լինի։

Անմիջապես ինձ մի աքանչելի ձի տվին՝ սևաթույր, բարձրահասակ, հայտատ, լավ թամբած։ Հնծա յես սևաթույր ձին և այդ որվանից դարձա վոչ թե Զինա, այլ մարտիկ Զինովիյ։ Իմ լավն ընկերուհիները յերկու մասի բաժանեցին, կռճակներ կտրեցին, անդրավարտիկի նման մի բան ատացվեց, ձի նստելու համար հարմար։ Գաշտանոցական դույնի շինել տվեցին ինձ, վուշիս, յերկարաճիտ կոշիկներ։ Արտաքինից դարձա յերևելի հնծելուկ, մարտիկ՝ կռվի մեջ և դիմացի քույր՝ կռվից հետո։

Ինքը Բուդյոննին բոլորիս համար ամենից մոտիկ ընկերն եր։ Յես հաճախ եմ նրա հետ պրոհի գնացել։ Հաղիվ եր կը-

ռիվն ավսլում, Սիմոն Միխայլովիչն առաջինն եր մերկացրած սրով թշնամու վրա սլանում։

★

Մեկ անգամ մենք հարձակում դործեցինք դենիկինականների կողմից դրավված Պլատովսկայա ստանիցայի վրա։ Նուլ, մութ դիշեր եր, ստանիցայի վարչության մոտ ազոտ լույս եր արձակում լապտերը։

Այն ժամանակ, երբ Ջոկատն անձայն մոտենում եր ստանիցայի վարչությանը, այնտեղից հանում եյին գնդակահարության տանելու ձերբակալված ուժը բոլշևիկի։ Բուդյոննին սուրը քաշելով առաջինը նետվեց դենիկինականների վրա, նրա հետևից՝ խիզախ կալմիկ Գորոդովիկովը։ Ուղևկցող պահակները մի քանիսն ընկան տեղն ու տեղը արյախողխող յեղած, մյուսները փախան զենքերը նետելով։ Ազատված մահապարտները խլելով դենիկինականների հրացանները՝ անմիջապես միացան մեզ։ Համառ կռիվ եր։ Սպիտակները հուսահատ պաշտպանվում եյին։ Միայն լուսադեմին մենք ստանիցան մաքրեցինք նրանցից։

Բուդյոննու ձեռքն ընկավ յերկու թնդանոթ, չորս գնդացիր, 300 հրացան, մինչև 20 հազար փամփուշտ և 150 թամբած ձի։ Այժմ մեր փոքրիկ Ջոկատը լավ զինված եր։

Ցերեկ որից հետո Պլատովսկայա ստանիցա յեկավ Նիկիֆորովի Ջոկատը՝ 300 հեռևակ և 60 հեծյալ մարտիկներ։ Ցերեկու հեծյալ Ջոկատները միանալով կազմեցին մեկ եսկադրոն, Բուդյոննու հրամանատարությամբ։ Դա արդեն այնպիսի ուժ եր, որը կարող եր չափվել սպիտակ դվարդիական Ջոկատների հետ և բաց կռվում, իսկ գլխավորը, նրա պաշտպանությամբ կարող եր ծավալվել Խորհրդային իշխանության կազմակերպման աշխատանքը տեղերում։ Ամբողջ Պլատովսկու շրջանը բաժանվեց դատակային, վաշտային և դումարտակային տեղամասերի։ Խորհրդային իշխանությունը պաշտպանել ցանկացողների թիվը շատ յեղավ։ Զինք չկար միայն։ Պլատովսկու շրջանում հավաղվեց մինչև յերեք հազար մարտիկ հավաքել։

Մոտենալով Կուբերլե ստանիցային՝ Բուդյոննու Ջոկատն

ընդհարվեց սպիտակներէ հետ։ Դենիկինյանները շպրտվեցին դեպի Սալ գետը։

Կուբանըլեյի շուրջը մինչև 20 հազար զօրքական եր կուտակվել իրենց իրերով։ Այստեղ Բուդյոննին իրեն միացրեց մյուս ջոկատների հեծելամասերը՝ կազմելով դիվիզիա՝ յերկու եսկադրոնից բաղկացած։ Մի առ ժամանակից հետո ջոկատն ել ավելի մեծանալով փոխվեց առաջին բանվորա-գյուղացիական հեծյալ գնդի։ Տասնութ թվի ոգոստոսի վերջին գնդում արդեն տասնմեկ եսկադրոն կար (ընդամենը 1500 սուսեր)։

Այսպես աճեց Բուդյոննու հեծելազորը։ Դիվիզիայից աճեց կորպուսի, իսկ հետո պրոլետարական Առաջին հեծելակային բանակի։ Մանիչ գետի վրա տեղի ունեցած կռիվներում Բուդյոննու հեծելազորը հերոսության հրաշքներ ցուցաբերեց։ Վարարումների ժամանակ հարկ յեղավ համարյա մինչև կոկորդը առուցային ջրում լողալով անցնել Մանիչը։ Անճամբ Բուդյոննու դիվիզիայով կարմիր հեծելազորը կռվով անցավ դեպը և սպիտակ զվարդիականներին առնչալի հարված հասցրեց։ Բուդյոննին, թեպետ և վիրավորվել եր, բայց և այնպես չթողեց կռիվը ղեկավարելը։ Կրակի տակ կատարած նման անցումն այնպիսի ազդեցություն ունեցավ սպիտակների վրա, վոր նրանք, չնայած թվական գերազանցությանը, խուճապահար լինելով փախան։

Սվատովո առանձնացում կարմիր հեծելազորը հսկայական ուժգնական ավար ձեռք բերեց՝ յերեք զրահագնացք, տասներկու զրծող չոգեքարշ, ահագին պարեն, հեռագրական դուլք և այլն։ Հետագա առաջխաղացման ժամանակ Դեբալցևո առանձնացյալ տակ 4-րդ հեծելակային դիվիզիան 6-րդի հետ միասին ամբողջովին ջախջախեց Մարկովսկու հուշակավոր դիվիզիան, վոր համարյա ամբողջությամբ սպաներից եր բաղկացած։ Այդ տասնինները թվի դեկտեմբերի քառասնին եր։ Նույն որն ել հենց 11-րդ հեծելակային դիվիզիան սրընթաց հարձակումով գրավից Նիկիտովկա առանիցան, վորտեղ ավելի քան յերեք հազար գերի վերցրեց, յերեք զրահագնացք և շատ այլ դուլք։

★

Այդ ծարիցինի տակ եր, Լիխոյում։

Մենք մտանք այդ ստանիցան յերկար արշավանքից հոգնած, քաղցած, տառապած։ Մի քանի մարտիկ, այդ թվում նաև յես, մտանք մի ունևոր գեղջկուհու տուն՝ և խնդրեցինք ուտելու բան տա մեզ։

— Իսկույն, յերեխաներս, հաց ու մածունով կկերակրեմ ձեզ,— սիրալիր ասաց տանտիրուհին։— Իսկույն իջնեմ նկուղը։

Մենք նստեցինք սեղանի մոտ, սպասում ենք։

Հանկարծ վառարանի կողմից դնդակներ վորոտացին մեզ վրա։ Խառնաշփոթություն բարձրացավ։ Մենք նետվեցինք զանազան կողմեր, վորը դեպի դուռը, վորը դեպի լուսամուտը։

Վախից սթափվելով՝ մենք հետ թռանք դեպի տունը, շրջապատեցինք և, կրակ բացելով, ներս մտանք։

Լուսամուտից տեսա, վոր վառարանի հետևից մի մարդ դուրս թռավ։ Նա բարձրացավ տանիքի տակ և ուղեց այնտեղից փախչել այդին։ Ճես կրակեցի նազանից և նա, վիրավորվելով, տանիքի տակից ցած գլորվեց ինձնից մի քանի քայլ վրա։

— Սրիկա՛,— բացականչեցի յես։— Նետի՛ր նազանը։

Նա հնազանդ նետեց։ Դուրս եկավ, վոր նա «հյուրասիրի» տանտիրուհու վորդին է, ոպիտակ սպա։

Նրան հարցաքննեցինք սպիտակների դասավորության մասին՝ Լիխոյի շրջանում։

Իսկ սիրալիր տանտիրուհին յերկար ժամանակ դուրս չեր գալիս նկուղից։ Ել չեմ հիշում, հանեցինք մենք նրան այնտեղից, թե այնպես ել թողինք։

★

Մեր 11-րդ դիվիզիան ամրապնդ ճիերով մտնում եր սպիտակների ամրոցին՝ Ռոստովին։

Ամպամած, մառախլապատ որ եր։ Մեր դիմաց կանգնած եր Գեորգիյեվսկի գունդը, բաղկացած բացառապես Գեորգիյեվսկի խաչերով պարգևատրված սպաներից. Ի՞նչ մարդասպաններ եյին։

Ճերը մենք ընդհարվեցինք նրանց հետ, նրանք սաստիկ դիմադրություն ցույց տվեցին։ Այն ժամանակ մենք ձիերից իջանք, մերկացրինք սրերն ու հետիոտն գրոհի դնացինք ազնվականների վորդիների դեմ։

Նպատակը ձեռքից չես մոտ սպանների բազմության մեջ և յոթ փամփուշտն էլ արձակելով մի քանի մարդ վայր գլորեցի։ Մի ինչ վոր վախեցած սպա ձեռները վեր բարձրացրեց։ Ճես թող նրա մոտ և պոկեցի ուսադիրներն ու օրդենը։ Գեորգիյևսկի խաչի բոլորքն եմալապատ եր, իսկ ներսը, վոսկյա փոնի վրա՝ Գեորգի-Բազմահաղթի պատկերը, վորը ձիու սմբակներով սրսրում և վիշապին։

Զղխեմ, ո՛ւմ եր պատկերացնում այն վիշապը, վորին սրսրում եր Գեորգի-Բազմահաղթը։ Գուցե սպիտակներն ուղում եյին ահա այդպես էլ մեզ սրսրել, բայց հակառակը դուրս էկավ։

Ռոստովի տակ մենք շատ թնդանոթներ ու հրացան գրավեցինք։ Փառահե՛ղ հաղթանակ եր։

Իմ ձեռքն ընկավ մի «մաքսիմ» ձեռքի գնդացիր։ Գնդացիրը կապեցի թամբին և այնուհետև մինչ հետո եյի տանում։ Հենց վոր կռիվն սկսվում եր, ձիուց իջնում եյի ու սպիտակ սրիկաների վրա գնդակի տարափ տեղում։

Ընկերներն ինձ լավ կրակել սովորեցրին։ Ճես կատարելապես տիրապետեցի հրացանից, նաղանից և գնդացրից կրակելու արվեստին։

Ռոստովը գրավելիս կլիմենա Ճեֆրեմովիչ Վորոշիլովն ամբողջ ֆրոնտի հրամանատարն եր և նրա հետ միասին առաջավոր դիրքերումն եր գտնվում Սեմյոն Միխայլովիչը։

Ռոստովը մենք գրավեցինք քսան թվի հունվարի ութին։

Սպիտակները հանկարծակիի բերվեցին։ Սպաներն գրոնում եյին փողոցներում ու հարբեցողություն անում դիննեռներում։ Մենք հանկարծակի նետվեցինք նրանց վրա, ինչպես արծիվներ։

Շատ եր ուրախացնում ինձ այդ հաղթանակը։ Իմ ձին ամբողջովին դարդարված եր սպայական ուսադիրներով— չես պոկում եյի դրանք, վորքան կարող եյի և կապում ձիուս պոչից, բաշից։ Այդպես եյին վարվում նաև մյուս բուդյոննիականները։

ները։ Զվարճալի տեսք ունեին վոսկյա և արծաթյա ուսադիր-ներով զարդարված մեր մարտական ձիերը։

Ռոստովում մեզ սքանչելի կերակրեցին։ Աղդարնակչությունը դիմավորեց ցնծագին։ Այն բնակարանի տանտիրուհին, վորտեղ կանգ եյի առել յես, տեղական մի բանվորուհի, շարունակ հարց ու փորձ եր անում.

— Շա՞տ եք դուք։ Ովքա՞ր եք մնալու Ռոստովում... Սպիտակներին մի քողեք հետ դան, նրանք մեզ կտանջեն։

Ես նրան ասացի.

— Սև ծով ու Ազովի ծով— ահա ուր կքշենք մենք նրանց։

— Մողներ ունե՞ս դու,— շարունակից հարցնել ինձ տանտիրուհին։

— Ես կատարյալ վորբ եմ և չեմ հիշում իմ ծնողներին,— պատասխանում եմ յես։— Բայց դուք իզուր եք ինձ խղճում։ Դժվար է մեր աշխատանքը, բայց հետագայում լավ կլինի։

Տանտիրուհուն իմ խոսքերը դուր յեկան։

★

Բուդյոննու հեծելազորի անունն սկսեց դղրդալ ընդարձակ տափաստաններում՝ Սալից մինչև Դոն և Կուբան։

Հնարավո՞ր է արդյոք հաչվել մեր բոլոր կռիվները։ Հիշում եմ մի քանի դվխավորները։

Ջմեռը խորը ձյունի մեջ սոսկալի կռիվ տեղի ունեցավ Բատայսկի մոտ։ Բատայսկ կայարանին մենք մոտեցանք ցերեկը։ Այնտեղ այդ ժամանակ շտաբ բռնում եյին վագոնները՝ սպիտակները խուճապով եվակուացիայի եյին յենթարկվում։ Մենք դինամիտ եյինք ստացել՝ յերկաթգիծը պայթեցնելու համար։ Ես վերցրի դինամիտն ու գնացի դեպի յերկաթգիծը։ Իմ հետևից մի քանի կարմիր բանակայիններ են գալիս։ Մի դյուղացի հանդիպեց ինձ ու կանգնեցրեց.

— Մի՛ գնա, աղջիկ, այստեղ սասոիկ կռիվ կա։

— Ջեռի, յես պիտի տուն գնամ։

Հասա նշանակված տեղը և դինամիտը դրեցի հոճերի տակ։ Մեր տղաները մոտ եյին և անարգել պայթեցրին յերկաթգիծը։ Այսպես կտրվեց դենիկինյանների նահանջի ճանապարհը։

Այն ժամանակ նրանք թնդանոթային կրակ բաց արին—արկերը ծածկեցին ամբողջ բատարյակը, բայց մենք մոտեցանք նրանց, խփեցինք սպիտակներին ու ջախջախեցինք նրանց: Մեր ձեռքը հարուստ ավար ընկավ՝ բազմաթիվ վագոններ, եշելոններ հագուստով ու թնդանոթներով: Սպիտակներին ջախջախելով, մենք առաջ անցանք:

Այդ հաշտավայրը բաղկացած էր Դոնեցկինի հետ բատարյակի մոտ:

Հիշում եմ մեկ ուրիշ եպիզոդ: Հյուսիսային ճակատում կռիվներից մեկի ժամանակ մի խումբ դոնեցկիններ սրերով նետվեցին ընկերը Ողլինի վրա և սկսեցին հարվածել նրան: Ծանր վիրավորվելով՝ նա ընկավ ձնով լցված փոսի մեջ: Շուրջը բորբոքված կռիվ էր: Ողլինի հետ յեղած մոտ քսան մարտիկները, նույն թվում և ես, փորձում էինք ազատել մեր կոմիսարին: Մենք նետվում էինք նրա կողմը, բայց անցնել չէինք կարողանում: Սպիտակները թվով գերազանցում էին մեզ:

Այդ ժամանակ մեզ ողնության հասավ Սեմյոն Մեխայլովիչն իր եսկադրոնով: Իսկ նրա հետևից էլ մենք դնացինք գրոհի: Սպիտակները ցաք ու ցրիվ վազան: Նետվեցինք մենք Ողլինի մոտ. նա պառկած էր համարյա անշարժ՝ արյունաքամ լինելով: Մենք վերցրինք նրան մեզ հետ:

Ճերը արդեն Հյուսիսային Կովկասն ազատվել էր և դոնեցկինյան քաղաքությունը վոռնեժակ էր, ուված լայն ասիսատանեներում, արևմուտքում նոր ճակատ բռնկվեց: Լեհական հյասթակները հարձակվեցին Կիեվի վրա: Զկարողացանք մենք հանդրսանալ Բատարյակի, Բելի Գլինայի, Ճեղոքլիցկու մոտ, Մանեչում յեղած սաք կռիվներից հետո: Բուդյոննովյան հեծելազորն ուղարկվեց արևմուտք:

Ինչ կավ որ, արշավել, ուրեմն արշավել:

Վորոշիլովն ու Բուդյոննին հակայական մխրճող դասակարգին: Հեղափոխության հազարավոր հեծյալներ հավաքվեցին բաց դաշտում: Վորոշիլովը և նրանից հետո Բուդյոննին հայտարարեցին մեզ, վոր հազար քանի կիլոմետր դժվարին ճանա-

պարհ և սպասում մեզ կովկասյան տափաստաններից մինչև հեթյովյան դաշտերը։ Հուսակցությունը և Գորհրդային իշխանությունն ուղարկում են մեզ պաշտպանելու հայրենի յերկիրը և Ուկրաինայից ու Բելոռուսիայից դուրս քշելու լեհական պանները։

— Տալիս ես վարշավան,— վորոտալից բացականչությամբ պատասխանեցին բոլոր մարտիկները։

Ցնծում եր իմ սիրտը, վոր այդպես սրընթաց սլանում ենք մենք վոչնչացնելու լեհական սպիտակ դվարդիականությունը։

Արագորեն հասանք մենք լեհական ռազմաճակատը։ Գնում եյինք մեր ձիերով։

Առաջին կռիվն ընդունեցինք Պոդբերիչչե ավանում։ Այստեղ մեզ լեհերն սկսեցին դնդակոծել։ Նրանց կրակն այնքան ուժգին եր, վոր մեր մարտիկներից չատերը վիրավորվեցին։

Ես նստել եյի գնդացրային տաչանկայի վրա, վորպես յերկրորդ համար և գնդացրային ժապավենն եյի տալիս։ Ցերբ առաջին համարն սպանվեց, ես ձիերն առաջ քշեցի, դարձրի տաչանկան ու սկսեցի ինքս կրակել գնդացրից։ Սոխալված եյի մենակ աշխատել յերկուսի փոխարեն։ Տաչանկայի հատակում ընկած եր մեռած գնդացրորդը։ Կողքովս ձիերով սլանում եյին ընկերները, առաջ եյին թռչում.

— Ջնվ՛լ նրանց, քնվ՛լ նրանց։ Ուռա՛։

Կատալարում եմ յերեք ձին, աշխատում եմ հետ չմնալ մյուսներից։ Հետո դարձնում եմ տաչանկան, բռնում եմ գնդացրի կոթն ու կրկին կրակում, կրակում։

Իսկ սպանվածների ու վիրավորների թիվն արդեն չատ է։ Ջորս կողմը ցանած արտեր են՝ խիտ, բարձր վարսակ և կանեփ, իսկ հեռվում՝ փոքրիկ անտառակ է։

Մեր խաղաղ դաշտերի վրա, մտածում եմ, արիկա սպիտակ պաներ են սողացել։ Ցեվ յես հասկացա, վոր դա նույն այն կովի չարունակությունն է, վորը մենք ունեյինք հարյավային ճակատում, և վոր Թշնամուն պետք է վոչնչացնել, ինչ գնով էլ ուզում է լինի։

Ցերբ մենք Թշնամուն ջախջախեցինք, իմա՝ տաչանկայից ու գնացի վիրավորներին հավաքելու և վերքերը փաթաթելու։

Սպանված զնդացրորդին տարա դյուղ և այնտեղ մենք նրան հանդիսավոր կերպով, յերաժշտությամբ թաղեցինք։

Ներկրորդ որն ինձ կանչեցին շտաբ։ Գնդի հրամանատարը ջերմագին շնորհակալություն հայտնեց ու ոեղմեց ձեռքս.

— Նրա համար, վոր կռվի ժամանակ, յերբ զնդացրորդն սպանվեց, դու չչփոթվեցիր և փոխարինեցիր նրան մինչև կռվի վերջը։

Գովեցին ինձ նաև շարքային մարտիկները.

— Հերոս է մեր Զինա Պատրիկեյեվնան։ Մահից չի վախենում։

Ճիշտ այն ժամանակ ամաչում էի խոսք ասել ընկերներին ու չփոթվում էի, և այնպես ուրախ էի, վոր աչքերս արցունքով էին լցվում։

Ա՛յ քեզ և հերոսուհի։

★

Բուդյոննու հեծելազորը հարձակման զնաց սպիտակ լեհերի վրա, պատռեցինք մենք լեհական ճակատը և դուրս յեկանք Զերվոննոյե ավանը, խորը թիկունքում։

Ճիշտ համարվում էի և՛ մարտիկ, և՛ քույր։ Ճերբ հարկավոր է, հրացանը ձեռքիս առած եմ սլանում, յերբ հարկավոր է, պայուսակից հանում եմ բինտերն ու վիրակապերը։

Կռիվ յեղավ Զերվոննիի տակ։ Մեր շղթան պատվեց բլրի տակ, հարմար տեղում, զնդացիրներով։ Ինձ զնդացրի մոտ նրսել էր զնդացրորդ Պետկան։ Ճիշտ առաջին համարն էի, նրա մեծը։ Հենց յես թեքվում էի, նա սկսում էր կրակել և ամբողջ ժամանակ կռվի ամենատաք րոպեին զնդացրային ժապավենների պահաս զգացվեց։ Ճիշտ իմ ձորը, նստեցի ձիս ու սլացա զուդմակը՝ փամփուշտի։ Ճանապարհը վտանգավոր էր. տեսնում են լեհերը սլացող ձիավորին և սկսում թնդանոթային կրակ բացել։ Սակայն զնդակն առայժմ կամ չի հասնում, կամ անցնում է։

Հանկարծ արկը պայթեց համարյա ձիու սմբակների տակ։ Ճանապարհը հողով ծածկվեց։ Ձին ծառս յեղավ, հե-

ու կանգ առավ ուժասպառ, դողդոջ։ Ես հանգստացրի նրան ու սլացա առաջ։ Վերջապես, հասա դամակին, վերցրի վեց ժապավեն, կապեցի վրաս ու հետ սլացա։

Լեհական զնդակները սուլում են, չորս կողմից արկեր են թափվում։ Սրտիս վրա ծանրություն եմ զգում։ Գրչատուփս բանակը վորչափ էլ աշխատում է վռնդել թշնամուն, բայց և այնպես պաներն ուժեղ են, ամուր կռվում են մեզ հետ։

Հետ սլացա և զնդացրի մոտ դրավեցի տեղս։

— Դե, Գեակա,— ասում եմ,— մի չռայլիր վամփուշտները։ Մենք դեռ մեծ գործ ունենք առաջներում։

Այժմ միայն զգացի, վոր վիրավորվել եմ։ Թշնամու զրնդակը ծակել-անցել եր թևիս փափուկ մասը։ Բայց այնպիսի բորբոքում ակնթարթ եր, վոր չես այդ անմիջապես էլ նկատել։ Մեր կողքին չեղած նշանաձիգը՝ մի չինացի՝ կապեց թևս և չես կրկին սկսեցի զնդակոծել թշնամուն։

Կանգնեցրինք մենք լեհերի հարձակումը և հետ քշեցինք նրանց։

— Տալի՛ս ես Վարշավան,— գոչում են հեծելակները։

Նահանջող չլյախտան ծածկվեց անտառի հետևը, Ջերմոննյե ավանից վոչ հեռու։ Մենք սլացանք առաջ և անցանք նրանց թիկունքը։

Կրկին կատաղի կռիվ սկսվեց։ Արդեն դիշեր եր՝ պայծառ, տաք դիշեր։ Գնդացիրը քաշեցի թմբի վերևը և կրակ բացեցի թշնամու վրա։ Բայց վամփուշտը վերջանում եր։ Այդ ժամանակ նռնակի փչրանքով թևիս վիրավորվեցի կրծքից։ Առաջին ակնթարթին չես նույնիսկ ցավ չզգացի։

Այդ ժամանակ մերոնք փոքր ինչ հետ քաշվեցին և չես մնացի մենակ, ձիով։ Տեսնում եմ, լեհական պատն, սուրը մերկացրած, սլանում է ինձ վրա, նրա հետևից՝ մի հեծյալ։ Զլմանալով, վոր բոլորովին մենակ եմ մնացել, վճռականությամբ լի, չես ընդառաջ սլացա։ Ուզում եյի խլել նրանից պայուսակը՝ պլանով ու փաստաթղթերով։

Սպան ընդհատ մոտեցավ ինձ և սուրը ճոճեց։ Ես ժամանակին գլուխս թեքեցի ձիու բաշին, այնպես, վոր նա կպրծեց միայն իմ ձիու ականջը։ Ուզում եմ նագանում մնացել եր վերջին վամփուշտը։

Ցեխ լլկակեցի և սպասին ձիուց վայր դլորեցի: Լեհացին քնկած ձիու սմբակները տակ: Այն ժամանակ յես սլացա նրա համհարդի վրա, դաստարիկ նռդանը դրեցի նրա կրծքին և նա ձեռները վեր բարձրացրեց: Լեհացուն կենդանի բռնեցի: Դաստարիկ նռդանի փողի տակ սպասած, գերուն տարա դնդի շտաբը:

Ահա ինչ ևր դրել «Կարմիր հավաներխտա» թերթը 1920 թվի հոկտեմբեր 19-ի համարում.

— «Հերոսուհի-քույրը:

Հեծելակային դրոհի ժամանակ Զերվոննոյե ավանի մոտ, յերբ մեր ձախ թևը հետ եր մղված թշնամու կողմից, 61-րդ հեծելաշղթի քույրը Չինաիդա Պատրիկեյեվնան առաջ և գնում, և մենակ հետևում լեհացիների ղորաստյանի վրա, բացականչելով «ուռա»:

Իր արիությամբ և հերոսությամբ նա իր հետևից տարավ սմբակը դունդը, վորը վճռական հարձակման անցավ: Դրությունը վերականգնված եր: Քույրը Չինաիդան շատ և առաջ անցնում և չուռալ գնում և սարսափահար փախչող թշնամու ղորաստյանի մոտ:

Այդ խոկ ժամանակ, վոչ մի գենք չունենալով, նա գերի յե վերցնում մի գինվորի:

Ընկերը Պատրիկեյեվնան կոմունիստական հուսակցության անդամ և, սմբակը ժամանակ գտնելով և ռազմաճակատում: Իր վարքագծով նա արժանացել և կարմիր բանակայիններին սիրուն և հարգանքին: Հարձակման ժամանակ նա միշտ բոլորից առաջ և լինում, հետ քաշվելիս՝ վերջինն և հետանում»:

Ցերբ լեհական ռազմաճակատ յեկած ընկեր Կալինինը 61-րդ և 62-րդ գնդերին կարմիր դրոշակներ հանձնեց, յեր կանգնած եյի նրա, Վորոշիլովի և Բուդյոննու կողքին: Այդ տեղի ունեցավ ծիտոմիրի մոտ, լեհական ճակատը սլատռելուց հետո: Աքանչելի ամառային յեղանակ եր, շորս կողմը կանաչով եր ծածկված: Հանդիսավոր ժամ եր դա: Բոլոր մարտիկները շարք եյին կազմել ռազմանակալի առաջ, վորն վրա կանգնել եր Կալինինը: Ճառը վերջացնելուց հետո նա դրոշակը հանձնեց Բուդյոննուն, խոկ Բուդյոննին տվեց դիվիզիայի հրամանատարին, այժմ մահացած Մորոզովին:

Իմ աչքի առաջ ապանվեց 62-րդ հեծելազնդի հրամանատար ընկեր Իվանովը: Նա չափազանց քաջ և խիզախ մարդ եր:

Մեկ անգամ մենք կռվի եյինք բռնվել լեհերի հետ: Իվանովը հրամայեց պահպել, և բոլոր մարտիկները պահպեցին դնդակները: Չնայած լեհերը գնդակոծում եյին մեզ ծանր թնդանոթներից, ինքը հրամանատարը կանգնած եր հասակով մեկ, ըստ յերեւույթին ուզում եր պարզել, վո՞րտեղից են խփում թնդանոթները:

Ճես շղթայի մեջ պահպած եյի նրա կողքին և ամբողջ ժամանակ խնդրում եյի.

— Ընկեր Իվանով, պահպեցեք: Սրկերը մեզանից շատ մատ են պակաս:

— Վոչինչ,— ասում եր հրամանատարը:— Ինձ դնդակ չի դիպչի:

Հանկարծ տեսնեմ՝ մոտիկ պակաս սրկը, թանձր փոշի բարձրացավ և մեր մարտական ընկեր Իվանովն ընկավ:

Տղաները բարձրացան, ակսեցին հետ քաշվել: Ճես նետվեցի հրամանատարի մոտ:

— Ընկեր Իվանով, ձեզ ի՞նչ պատահեց:

— Զինա, ասում է նա,— յես մեռնում եմ:

Բարձրացրի նրա գլուխը: Տեսնեմ, նրա պոկված թևը կախված է միայն հագուստի թևից: Ճեվ ամբողջովին ալլանդակված է— մի վոտքը բոլորովին պոկված է, մյուս վոտքի ոսկրերն է պոկված, կողքից ցցված է յերկաթի փշրանքը:

— Գուլյ,— չչնջում է հրամանատարը,— Զինա, յես մեռնում եմ:

Ճեվ սկսեց կապտել:

Կռվի ամենաբորբոքուն ժամանակն է: Մերոնք քաշվում են, լեհերը՝ վրա յեն գալիս, իսկ յես մնացել եմ պաշտում, մեռնողի հետ, և չեմ կարողանում թողնել նրան, ափսոսում եմ կըռվի դաշտում թողնել մարտական հրամանատարին:

Փոքր ինչ մի կողմ սողացի, ձին բերի: Սուրհանդակի ողնուԹյամբ Իվանովին դրի ինձյակայի վրա և չնայած ուժեղ կըրակին, դուրս տարա նրան կրակից:

Մտահայքում մի փոքրիկ դյուզ կար, և չես չտապում երբ չուտով նրան այնտեղ հասցնել: կանգ առա առաջին իսկ հյուղակի առաջ, բայց Իվանովն արդեն մեռնում էր:

— Ձինա, նամակ գրիք իմ ընտանիքին, վոր չես ծանր վիրավորված եմ և մեռնում եմ,— հազիվ կարողացավ ասել մահից առաջ և ավելացրեց.

— Հաղորդեցնիք հրամանատարին— նրանց ինդանոթին ամրացրած և յեկեղեցու մոտ յեղած բարձրության վրա... Թող գնդակոծեն այդ կետը...

Ցավ անմիջապես մեռավ:

Ծանր էր այդպիսի հրամանատար կորցնելը:

*

Նովգորոդ–Վոլինսկու մոտ 61–րդ հեծելազնդի եսկադրոնը հետախուզության գնաց: Եսկադրոնի հետ գնացի նաև յես:

Նովգորոդ–Վոլինսկուն չհասած՝ մենք հանդիպեցինք լեհական մի պահակախմբի: Լեհացիներն սկսեցին կրակել:

Մենք չորս հոգի էինք, վոր առաջ էինք անցել: Ցերեքը հետ սլացան մեր հետևից յեկող պահեստի զորասյունին հայտնելու, վոր Թշնամին մոտ է, իսկ յես մնացի մենակ և դուրս յեկա լեհական ապային հանդեպ:

Ամեհի յերիվարով մոտ թռչելով՝ նա հրացանի փողն ուղղեց ինձ.

— Շան ծնունդ... Իջիր...

Ճար չկար, իջա:

— Մենք չատ ենք,— ասում եմ պայծառամիտյալ պանին:— Բոլորին կոտորել չեք կարող:

Նա կանացի ձայն լսելով հայհոյեց:

Իջեցրեց փողը, նշան առնելով փորիս, ու կրակեց: Ցես ընկա, արյունաքամ լինելով: Վերքս ծանր էր: Մոտեցան մեքոնք, վերցրին ինձ, վոր ընկած էի մեռածի նման, և լինելյալի վրա դնելով՝ տարան Բերդիչև: Զնայած լեհերը խիստ ամրացրել էին Նովգորոդ–Վոլինսկը, բայց բուդյոննիականները խախտեցին նրանց և վերցրին քաղաքը:

Ծանր է վերհիշել այդ եսկիզդը։ Վաղջ կյանքումս այդ մասին չարաղուջ հիշողություն է մնացել։

Ցերեկ շաբաթ պատահած մնացի շարժական հիվանդանոցում։ Փոքր ինչ կազդուրվելով, կրկին անցա շարքերը։ Կրկին ականից յերթալին դաժան կյանքը։

Դուբնոյի տակ, հնամենի բերդի մոտ, ուժեղ կռիվ տեղի ունեցավ։ Մենք հարձակվեցինք Լվովի վրա, նետվում էինք Գալիցիա, վորպեսզի այն մաքրենք բուրժուական ապականությունից։ Կռվի ժամանակ սպանվեց եսկադրոնի հրամանատարը։ Այն ժամանակ յես ինքս եսկադրոնը տարա դլուխ։

— Տղե՛րք, իմ հետևի՛ց,— և բոլորը միաժամանակ նետվեցին լեհերի վրա։

Անակնկալություն սրամտորեն ականեց։ Դուբնոն դրավվեց։ Լուսադեմին եր։

Այդպես յես դարձա եսկադրոնի հրամանատարի ոդնական։

Դուբնոյի տակ յես յերրորդ անդամ վիրավորվեցի ձեռքից, բայց մնացի շարքում և շարունակում էի վիրավոր ընկերների վերքերը փաթաթել։

Այդ բոլորը յես սխրագործություն չեմի համարում։ Ճիշտ պատրաստ եմի կյանքս տալու Խորհրդային իշխանության համար։

Բայց յես շատ ուրախ եմի լսել իմ մարտական ընկերների խոսքերը, յերբ քանի թվին լեհական ճակատում ինձ կուսակցության մեջ եմին ընդունում.

— Պատրիկեյեվնան դործով ապացուցել է, վոր արժանի յե Լենինի կուսակցության շարքերում դտնվելուն,— ասում էին նրանք։

Կարմիր հեծելազորի հարձակումները շարունակվում էին։ Լեհերն ավելի ու ավելի հետ էին դլորվում դեպի Հարավ։

Լվովին չհասած՝ մենք կանդ առանք և մոտ քաշեցինք մեր բոլոր ուժերը։ Ճակատը դտնվում եր մեզանից մեկ ու կես վերստի վրա։

Մենք կանդնել էինք կամուրջի վրա և սեսնում էինք, թե ինչպես եվակուացիայի յեն յենթարկվում վախեցած լեհերը։ Ուրախությունը պարուրում եր մեր սրտերը, մենք հավատացած էինք, վոր Լվովն արդեն խորհրդային է։ Սակայն դիշերն անս-

պատկի կերպով հրաման ստացվեց հետ նահանջել Լվովից։ Վերջինէ անել չեր կարելի, ամրապնդած յեղանք ճիւերը հետ դարձնել։

Դրանով եւ մեզ համար լիհական պատերազմը վերջացավ։

★

Բուդյոննու հեծելազորը Գալիցիայից նետվեց Ղրիմի ճակատը— բարոն Վրանգելի դեմ։ Արագորեն հարաւ եկին ազատում մեր մարտական ճիւերը։ Նոր մարտեր եկին սպասում մեզ, նոր ռազմապներ ու վտանգներ։

Այդ ամանի մոտ անգլ ունեցած կռւում հերոսի մահով ընկավ դիվիզիայի նշանաւոր հրամանատար Ֆեոդոր Մաքսիմովիչ Մորոզովը։ Նա բատրակ եր, Սալսկի տափաստանից, Բուդյոննու ընկերը, քաջ ու անվախ մի մարդ։ Նա մեն-մենակ կռւում եր վրանգելյան տանկի դեմ՝ աշխատելով դնդակահարել տանկիստին։

Մենք Մորոզովի հետևից նետվեցինք հրացաններով, նռնաններով ու ռումբերով, բայց հրամանատարն արդեն ընկած եր մեռած— սպիտակ դնդացիրը սպանել եր նրան։ Թշնամուց խլելով Մորոզովի մարմինը՝ մենք անցանք դրոհի և լավ հաշիվ մաքրեցինք մեր հրամանատարի համար՝ շատ սպիտակներ պատկեցին տավրիկյան դաշտերում։

Մորոզովի հետ նույն որն իսկ սպանվեց դիվիզիայի մարտական կոմիսարը՝ Դոնի կազակ Բախտուրովը, մի ուրախ ընկեր։ Նրա գրած վոտանավորները տովորում և յերգում եր ամբողջ դիվիզիան։

Ահա Բախտուրովի յերգերից մեկը.

Հեծելազորն և քաջ ու անվեհեր,
Ահա լեռներից դաժան ու մթին
Սլացիկ թռչում ընդարձակ դաշտեր՝
Ջախջախի բուրժուա թշնամուն վերջին

Ահեղ կռչ արեց Բուդյոննին խիզախ.
«Ե՛յ, քաջ ընկերներ, հառաջ բոլորով,
Ե՛յ, քաջ տղաներ ուրախ ու անվախ,
Թշնամու վրա դնանք մենք չուռով»։

Հեծելազորն է թափում ահա մեր—
Դուրսկ թշնամուն խնայել չկա՛ր
Մ՛յ դուք, ցարական սարուսկ-դահիճներ,
Հապա փորձ արեք, մոտ յեկեք հապա՛ր

Թշնամիներին վերջ կտանք շուտով
Ցեվ կապրենք ազատ ու անկախ կյանքով։
Կյանքներս ամբողջ կտանք մեր գործին
Փառք Բուդյոննովյան հեծելազորին։

Ցերը վերջապես Վրանգելը շպրտվեց Սեվ ծովը և քաղաքացիական կռիվը վերջացավ, Ցեկատերինոսլավում կայացավ մեր կարմիր բանակային համագումարը։ Համագումարը հանդիսավոր և ցնծագին անցավ։ Ընկեր Վորոշիլովը հեծելականների առաջ հանդես յեկավ մեծ ճառով, վորի մեջ չնորհակալություն հայտնեց նրանց կուսակցության անունից։

Այնտեղ յես կարմիր դրոշի չքանչան ստացա։ Ընկեր Բուդյոննին չքանչանն ինքն ամրացրեց իմ կրծքին։

— Դե, Զինովիյ,— ասաց Բուդյոննին,— պահպանիր այս պատվանշանը վորպես մեր հաղթանակների հպարտություն։

Ցեվ համբուրեց ինձ։

Իսկ Վորոշիլովը, ցույց տալով ինձ, ասաց.

— Ահա մեր հերոսուհին։ Մեզ հետ միասին, ձի հնծած, նա կրեց բոլոր դժվարությունները. և հասավ հաղթանակի. նա մշտական մասնակիցն է յեղել Առաջին հեծելական հեծելազորի մեծ արշավանքներին։

Նա հիմա էլ հիշում է ինձ։

Ցերթե խոսելու չնորհք ունենայի, յես այն մեծ պահին կղիմեյի Կլիմենտ Ցեֆրեմովիչին, Սեմյոն Միխայլովիչին և բոլոր ներկա զոնվողներին ու այսպես կասեյի.

«Մի քանի տարի առաջ յես, Զինաիդա Պատրիկեյեվա, ընկա այս քաղաքը վորպես մի դժբախտ վորբ, քաղցած, պատառատուն, կարիքից տառապած։ Այստեղից յես սկսեցի իմ մարտական ճանապարհը։ Հիմա այս խոր քաղաքում յես ապրում եմ կյանքիս ամենացնծագին, ամենաերջանիկ րոպեն»։

Բայց յես հուզված եյի ու չփոթվեցի։ Ցեվ յերբ Բուդյոննին սեղմեց ձեռքս, յես խոսքեր չունեյի, վորպեսզի պատասխանեյի նրան։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

էջ

Զ. Որոնթիկիձե—Մարտական որեր 5
Լ. Աբրոսիմովակայա—Կանինա Գե 31
Տ. Ռեզակովա—Կովկասի լեռներում 59
Լ. Անջիևսկայա—Մայրը 84
Ցերիտասարդ հերոսներ 100
Ա. Սոլոդուբ—«Հարսնացուն» 106
Ա. Շևչենկո—Ջինվորուհի 112
Լ. Աբրոսիմովսկայա—«Այլոշկան» 119
Մարուսյա 135
Ա. Իսրայել—Շատրուկովա 141
Ի. Կոնոնենկո—Վեցը 151
Ե. Գոնչարովսկայա—Պատանեկության 162
Գ. Վիշնյակովա—«Յոլկրային բարաք» 171
Ա. Մելնիչենկո—Ընդհատակյա հերոսներ 181
Մ. Շևչկո—Սլխատակներին դնդանում 197
Տ. Սոկոլովա—Նատաշով 201
Ս. Կալաբևկովա—Անցած դնացածից 210
Ֆ. Մակուշենկովա—Ցեղեզնուտում 214
Մ. Մելնիչկո—Ի՞նչ երջանկություն է, որ այդ չի կրկնվի 218
Վ. Մաստյուշինա—«Գուշակուհի» 221
Ա. Դյաժենցևա—Շկուրոյի հանձնարում 228
Լ. Արբուզինսկայա—Տատյանա Սոլոմախա 239
Լեռներն ատելին բոլշևիկուհին 280
Ժ. Բոգինա—Պարտիզանուհին 293
Ժ. Ոլենովա—Լեռների կինը 297
Ա. Կուչին—Ջեչենուհի Ֆատիմատը 299
Ցև. Լիսովենովա—Ալյոր 307
Վ. Դյուբին—Ծյոկլուշան դնդապետուհի 313
Ցև. Կուզնեցովա—Կին հեծելազորայինը 325
Վ. Կորոլկով—Մորաքույրը վարիայի երեք կյանքը 344
Ցև. Զերկասովա—Փուլը հեծելակը 353
Վ. Գլազկովա—Փուլերերը 358
Ջոկատային դնդակահարությունը 365
Ֆ. Կարաշևիչ—Ռոստովյան ընդհատակում 371
Զ. Գաբրիելովա—Մարտական ուղին 379

Թարգմ.
Վ. Պողոսյան յեվ
Արշ. Ծեր-Հովհաննիսյան
Պատմվածքները՝
Արմո Հարենց յեվ
Ս. Բաղդասարյան
Ծեխ-խմբագիր
Մ. Ալթունյան
Ըբբագրիչ
Վ. Ավագյան

Женщина
в гражданской войне

Армгиз, Ереван, 1940

Վ/Ծ 2740 Հրատ. 5325.
Պատվեր 614. Տիրաժ 4000.
Հանձնված ի արտադրության 2/IX 1940 թ.
Տպագրված ի տպագրութ. 12/XI 1940 թ.

Հայպետհրատի տպարան, Ծեբևան, Լենինի 65

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0013734

ЦЕНА
11
12553